

*«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիր*



Ծրագիրը ֆինանսավորվում է  
Եվրոպական միության կողմից



**«ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՅԻԱ» ՀԿ**

**ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ  
ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ՝  
ՄԻՋԱԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ**

# Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	6
ԳՈՐԾԱԴԻՐ ԱՍՓՈՓՈՒՄ.....	9
Քրեական արդարադատության իրականացում .....	9
Ճշմարտության որոնման գործընթաց .....	10
Փոխհատուցման ծրագրեր .....	11
Համակարգային բարեփոխումներ.....	12
ՀՀ-ում անցումային արդարադատության մեխանիզմների ներդրման հնարավորությունը ..	12
ԳԼՈՒԽ 1. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ .....	13
1.1 Ի՞նչ է անցումային արդարադատությունը.....	13
1.2 Որո՞նք են անցումային արդարադատության մեխանիզմները.....	14
1.2.1 Քրեական արդարադատություն.....	15
1.2.2 Ճշմարտության որոնման գործընթաց .....	17
1.2.3 Փոխհատուցման ծրագրեր .....	19
1.2.4 Համակարգային բարեփոխումներ.....	21
ԳԼՈՒԽ 2. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԻՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ .....	25
2.1. Հայաստանն անկախացումից մինչ թավշյա հեղափոխություն .....	26
2.1.1 Իրավական և քաղաքական գործոններ. ընդհանուր պատկեր .....	26
2.1.2 Տնտեսական և սոցիալական գործոններ .....	36
2.2. Թավշյա հեղափոխությունը և ՀՀ-ում անցումային արդարադատության կիրառման նախադրյալները ու դրսևորման փորձերը.....	40
2.2.1 Քրեական արդարադատություն.....	41
2.2.2 Ճշմարտության որոնման գործընթաց .....	42
2.2.3 Փոխհատուցման ծրագրեր .....	43
2.2.4 Լյուստրացիա .....	44
2.3 ՀՀ-ում անցումային արդարադատության հնարավոր կիրառմանն ուղղված առաջարկություններ.....	45
2.3.1. Կիրառման ժամանակահատվածը.....	45
2.3.2. Կիրառման գործերի շրջանակը.....	46
2.3.3. Կիրառման մեխանիզմները.....	46
2.3.4. Իրականացման գործընթաց.....	50
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ .....	51

ԳԼՈՒԽ 1. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ .....51

1.1. Անցումային արդարադատության մեխանիզմները և գործիքները հետխորհրդային երկրներում.....51

- 1.1.1. Լիտվայի Հանրապետություն.....52
- 1.1.2. Լատվիայի Հանրապետություն .....57
- 1.1.3. Էստոնիայի Հանրապետություն .....62
- 1.1.4. Վրաստան.....66
- 1.1.5. Ուկրաինա .....70

1.2. Անցումային արդարադատության մեխանիզմները և գործիքները Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրներում.....77

- 1.2.1. Գերմանիայի Դաշնային Հանրապետություն .....77
- 1.2.2. Իսպանիայի Թագավորություն .....87
- 1.2.3. Պորտուգալիայի Հանրապետություն .....90
- 1.2.4. Չեխիայի Հանրապետություն.....94
- 1.2.5. Հունգարիա .....101
- 1.2.6. Լեհաստանի Հանրապետություն .....104
- 1.2.7. Ռումինիա.....109
- 1.2.8. Ալբանիայի Հանրապետություն .....113
- 1.2.9. Նախկին Հարավսլավիայի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետություն ...118
- 1.2.10. Սերբիայի Հանրապետություն .....122
- 1.2.11. Բոսնիա Եվ Հերցեգովինա .....124
- 1.2.12. Խորվաթիայի Հանրապետություն.....131
- 1.2.13. Կոսովոյի Հանրապետություն.....133
- 1.2.14. Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետություն.....136

ԳԼՈՒԽ 2. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՄԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ .....141

2.1. Անցումային արդարադատության մեխանիզմները և գործիքները Հարավային Ամերիկայում .....141

- 2.1.1. Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն.....141
- 2.1.2. Չիլիի Հանրապետություն.....148
- 2.1.3. Կոլումբիայի Հանրապետություն .....152

2.2. Անցումային արդարադատության մեխանիզմները և գործիքները Հյուսիսային Ամերիկայում .....158

- 2.2.1. Գվատեմալայի Հանրապետություն.....158

ԳԼՈՒԽ 3. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՖՐԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ .....	164
3.1. Անցումային արդարադատության մեխանիզմները և գործիքները Աֆրիկայում.....	166
3.1.1. Ուզանդայի Հանրապետություն .....	166
3.1.2. Քենիայի Հանրապետություն .....	171
3.1.3. Մալիի Հանրապետություն.....	176
3.1.4. Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն.....	180
3.1.5. Եգիպտոսի Արաբական Թագավորություն .....	185
3.1.6. Թունիսի Հանրապետություն .....	190
3.1.7. Լիբիական Պետություն .....	196
3.1.8. Հարավաֆրիկյան Հանրապետություն .....	201
3.2. Անցումային արդարադատության մեխանիզմները և գործիքները ասիական երկրներում.....	207
3.2.1. Նեպալի Դաշնային Դեմոկրատական Հանրապետություն.....	207
3.2.2. Ինդոնեզիայի Հանրապետություն.....	211
3.2.3. Իրաքի Հանրապետություն.....	219
3.2.4. Կամբոջայի Թագավորություն .....	221
ՀԱՎԵԼՎԱԾ 2. «ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ՝ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԱՍՓՈՓԱԹԵՐԹ .....	225
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԻՆՖՈԳՐԱՖԻԿԱՆԵՐ .....	230

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն իր գործունեության պահից իրականացնելով իրավապաշտպան գործունեություն և նպաստելով բարեփոխումների իրականացմանը հանրային տարբեր ոլորտներում, նախաձեռնել է սույն զեկույցի մշակումը և հրապարակումը:

Զեկույցի հիմնական նպատակն է՝ ներկայացնել անցումային արդարադատության էությունը, դրա կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում, առկա միջազգային փորձը՝ տարբեր երկրներում հաջողված և անհաջող օրինակներով հանդերձ, կիրառված գործիքները, մեխանիզմները և ինստիտուտները, ինչպես նաև համեմատական-վերլուծական եղանակով վեր հանելու Հայաստանում անցումային արդարադատության իրականացման դեպքում նվազագույն ռիսկերով կիրառելի արդյունավետ մոդելը:

Սույն զեկույցում ներկայացված հետազոտությունն իրականացվել է «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորում է Եվրոպական Միության կողմից և իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (ղեկավար կազմակերպություն), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Հայաստանի համայնքների միության, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՄԻՎԻՏՍՍ» ՀԿ-ի, «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի, ինչպես նաև «Ազորա Սենթրալ Յուրըփ» չեխական ՀԿ-ի համատեղ կոնսորցիումով: Զեկույցի բովանդակության համար պատասխանատու է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ը և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետը:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1991 թվականի սեպտեմբերի 21-ին Հայաստանում տեղի ունեցած անկախության հանրաքվեի արդյունքները վկայում էին, որ հասարակությունը միտված էր մերժելու նախկին խորհրդային իշխանության վարած քաղաքականությունը և ունենալու ժողովրդավարական արժեքների վրա կառուցվող անկախ պետականություն, որն ապահովելու էր ընդհանուր բարեկեցություն և քաղաքացիական համերաշխություն:

Անկախության շրջանում տիրող հասարակական տրամադրությունն ու սպասելիքը հետագայում ամրագրվեց 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրությամբ՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն սահմանելով:

Հայաստանի Հանրապետության պատմությունը վկայում է, որ շուրջ 25 տարվա ընթացքում հասարակական կյանքում բավարար չափով չեն իրականացվել այնպիսի հիմնարար բարեփոխումներ, որոնք ուղղված կլինեին ընդհանուր բարեկեցության և քաղաքացիական համերաշխության մթնոլորտի, յուրաքանչյուրի կողմից ժողովրդավարական արժեքները հարգելուն և պահպանելուն, երկրում իրավունքի գերակայության հաստատմանը:

Այդ ընթացքում ավելի շատ շեշտադրում է կատարվել օրենսդրական-նորմատիվային մակարդակով մարդու հիմնարար իրավունքները պաշտպանող և արդարադատության հնարավոր հասանելիությունը երաշխավորող իրավական համակարգի ստեղծման, քան թե հասարակական կյանքի տարբեր ոլորտներում խորքային և շոշափելի բարեփոխումների իրականացման վրա: Միաժամանակ հարց է ծագում, թե արդյո՞ք միայն իրավական նորմերի փոփոխությունն ինքնին հանգեցնում է շոշափելի տնտեսական, սոցիալական, իրավական կամ քաղաքական փոփոխությունների: Պատասխանը միանշանակ չէ, սակայն Հայաստանում ցուցանիշները փաստում են, որ միայն իրավական նորմերով անձանց իրավունքներն ու ազատություններն ամրագրելը դեռևս բավարար չէ: Անհրաժեշտ է ներպետական իրավական համակարգով նախատեսել այնպիսի իրավական մեխանիզմներ և երաշխիքներ, որոնք կբացառեն մարդու իրավունքների խախտման յուրաքանչյուր դեպք: Այնինչ, Հայաստանի անկախացումից մինչև այսօր տեղի են ունեցել մարդու իրավունքների զանգվածային խախտումներ: Նշյալ խախտումները արձանագրվել են միջազգային և ազգային մի շարք զեկույցներով, որոնցում մշտապես արտացոլվել են Հայաստանի հասարակական կյանքում տեղի ունեցած իրավական-քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացների հետևանքով գրանցված մարդու իրավունքների զանգվածային խախտումների մասին փաստեր: Այդ փաստերի ուսումնասիրությունն ապացուցում է, որ «կեղեքված հասարակություն»

հասկացության մի շարք բնութագրիչներ վերաբերելի կարող են լինել նաև Հայաստանի հասարակությանը, և դրանք, որպես այդպիսին, ոչ միայն ռազմական բախումների, այլև քվադր-ժողովրդավարության պայմաններում հասարակական կյանքում տիրող բացասական գործոնների հետևանք կարող են հանդիսանալ:

Հասարակական կյանքում գոյություն ունեցող բացասական երևույթների նկատմամբ զանգվածային անհանդուրժողականությունը 2018 թվականի մարտ-ապրիլ ամիսներին հանգեցրեց ոչ բռնի, թավշյա հեղափոխության իրականացմանը:

Հարկ է նշել, որ երկրի ներսում տիրող վերջին քաղաքական զարգացումներին զուգահեռ, հետհեղափոխական շրջանում իշխող քաղաքական ուժը քաղաքական կամք է դրսևորել և ԱԺ ընտրություններին ժամանակ հրապարակած իր նախընտրական ծրագրով նախատեսել է երկրում ներդնելու անցումային արդարադատության համակարգ՝ ակնկալելով ապագայում բացառել մարդու իրավունքների խախտումների կրկնության հավանականությունը, կոռուպցիայից և մոնոպոլիզացիայից տնտեսական միջավայր ունենալը, վերականգնելու հանրության վստահությունն արդարադատության և դատական իշխանության նկատմամբ և երկրում հաստատել հասարակական համերաշխության մթնոլորտ:

Սույն զեկույցում պատասխան է տրվում այնպիսի հարցերին, թե՛

- ի՞նչ է անցումային արդարադատությունը և որո՞նք են դրա կիրառման մեխանիզմները,
- ինչպիսի՞ նախադրյալներ են անհրաժեշտ երկրում անցումային արդարադատության մեխանիզմների կիրառման համար,
- արդյո՞ք ՀՀ-ում անհրաժեշտ է ներդնել անցումային արդարադատության իրականացման մեխանիզմների համակարգ՝ հաշվի առնելով երկրի հասարակական կյանքում անկախացումից հետո մինչ այսօր տեղի ունեցած տնտեսական, սոցիալական, քաղաքական և իրավական գործընթացները:

Այնուհետև, ուսումնասիրվել են միջազգային փորձի հաջողված և ձախողված օրինակներ և դրանց հիման վրա ներկայացվում են Հայաստանում անցումային արդարադատության կիրառման մեխանիզմների վերաբերյալ առաջարկություններ:

Ի լրումն, ուսումնասիրված միջազգային փորձը վկայում է այն մասին, որ երկրում անցումային արդարադատության կիրառմանն ուղղված ջանքերը հիմնականում հաջողությամբ չեն պսակվում, եթե այն իրականացվել է անցումային արդարադատության համակարգ ձևավորվելու վերաբերյալ ակնհայտ և անկեղծ պատրաստակամության բացակայությամբ, առանց հանրությանը այդ մասին նախապես իրազեկելու, առանց այդ գործընթացում շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, ինչպես նաև առանց կիրառվող մեխանիզմների մասին

հանրային լայն իրազեկմամբ: «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն գիտակցելով երկրի իրավական համակարգում խորքային բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը, անկախ դատական համակարգ ունենալու կարևորությունը, ինստիտուցիոնալ հակակոռուպցիոն պայքար ծավալելու հրամայականը, ինչպես նաև նկատի ունենալով հետհեղափոխական շրջանում քաղաքական իշխանության կողմից Հայաստանում արմատական բարեփոխումներ իրականացնելու հանձնառությունը, նախաձեռնել է սույն զեկույցի պատրաստումը՝ նպատակ ունենալով հասարակության լայն շերտերին և հանրային իշխանությանը ներկայացնելու անցումային արդարադատության իրականացման միջազգային փորձը, դրա կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում և Հայաստանում անցումային արդարադատության իրականացման դեպքում հնարավորինս քիչ ռիսկերով կիրառելի արդյունավետ մոդելը:



## ԳՈՐԾԱԴԻՐ ԱՍՓՈՓՈՒՄ

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն նախաձեռնել է «Անցումային արդարադատության կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո» զեկույցի մշակումն ու հրապարակումը: Չեկույցում ներկայացված է անցումային արդարադատության էությունը, կիրառման մեխանիզմները, դրանց ներդրման անհրաժեշտությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո: Չեկույցում ներկայացված են նաև տարբեր երկրներում իրականացված անցումային արդարադատության հաջողված և անհաջող փորձերը, որոնցից Հայաստանը կարող է դասեր քաղել մինչև անցումային արդարադատության իրականացման վերաբերյալ վերջնական քաղաքական որոշման ընդունումը: Չեկույցում անցումային արդարադատության իրականացման միջազգային լավագույն պրակտիկան ներկայացված է՝ հիմք ընդունելով Միավորված ազգերի կազմակերպության «Անցումային արդարադատության վերաբերյալ» ուղեցույցը: Ըստ այդմ՝ զեկույցում ներկայացված է անցումային արդարադատության իրականացման հետևյալ չորս հիմնական մեխանիզմները՝

- քրեական արդարադատության իրականացում,
- ճշմարտության որոնման գործընթաց,
- փոխհատուցման ծրագրեր,
- համակարգային բարեփոխումներ:

### **Քրեական արդարադատության իրականացում**

Քրեական արդարադատության իրականացումը անցումային արդարադատության իրականացման կարևորագույն մեխանիզմներից մեկն է: Անցումային արդարադատություն իրականացրած երկրներից Գերմանիան և Ճապոնիան առաջիններից էին, որտեղ ստեղծվեցին միջազգային քրեական տրիբունալներ:<sup>1</sup> Հետագայում այս պրակտիկան լայն տարածում գտավ նաև Հարավսլավիայում և Ռուանդայում, որտեղ նույնպես ստեղծվեցին միջազգային տրիբունալներ:<sup>2</sup>

<sup>1</sup>Տե՛ս The Influence of the Nuremberg Trial on International Criminal Law, հասանելի է՝ <https://www.roberthjackson.org>:

<sup>2</sup>Տե՛ս The Future of International Criminal Justice, Philippe Sands, Cambridge University Press, 2003, էջ 31:

Միջազգային տրիբունալներից գատ՝ ընդունված է նաև հիբրիդային դատարանների ստեղծումը, որոնց լավագույն օրինակները Կամբոջայում և Սիեռա Լեոնեում են:<sup>3</sup>

Միջազգային հանրությունը արժևորելով միջազգային դատարանների և տրիբունալների կարևորությունը, 1998 թվականին Հռոմում ստորագրեց Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը, որի հիման վրա ստեղծվեց Միջազգային քրեական դատարանը:<sup>4</sup> Այն 2002 թվականին պաշտոնապես սկսեց գործունեություն ծավալել, երբ 60 պետություն վավերացրեց դատարանի կանոնադրությունը: Բացի միջազգային տրիբունալներից՝ անցումային արդարադատություն իրականացնող երկրները որոշ դեպքերում արդարադատություն են իրականացնում նաև իրենց իսկ ներպետական դատական ասյաններում:

Հարկ է նշել, որ միջազգային դատարանները և տրիբունալները քրեական պատասխանատվության են ենթարկում ոչ թե պետություններին, այլ անհատներին, ովքեր մեղադրվում են այնպիսի հանցագործությունների կատարման համար, որոնք վտանգում են ողջ մարդկության անվտանգությունը:

#### **Ճշմարտության որոնման գործընթաց**

Ճշմարտության որոնման գործընթացներն օգնում են հավաքագրել փաստեր և դրանց միջոցով օժանդակել իրավապահ մարմիններին հետաքննել նախկինում կատարված հանցագործությունները և բացահայտել նախկինում կատարված հանցագործությունների վերաբերյալ պատմական ճշմարտությունը: Ճշմարտության որոնման գործընթացը հիմնականում իրականացվում է ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովների կողմից՝ որպես վերականգնողական արդարադատության եղանակ: Հարկ է նշել, որ 30-ից ավել նմանատիպ կառույցներ արդեն իսկ հիմնադրվել են աշխարհի տարբեր երկրներում:

Այդպիսի կառույցներ ունենալու առավելությունն այն է, որ վերջիններս իրականացնում են փաստահավաք գործունեություն մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ, պահպանում են ձեռք բերված ապացույցները, բացահայտում են մեղավորներին, առաջարկում են հատուցման եղանակներ տուժողներին և նախաձեռնում են համակարգային բարեփոխումների իրականացում: Հիշյալ կառույցները կարող են նաև ծառայել որպես հարթակ տուժողներից ստանալու իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ ստեղծություններ, բարձրաձայնելու ճշմարտությունը, ինչպես նաև հանրությանը ընձեռել հնարավորություն հանրային բանավեճերի միջոցով լուծումներ տալ նախկինում առաջացած խնդիրներին:

<sup>3</sup>St' u White, Jamison G., Nowhere to run, Nowhere to hide: Augusto Pinochet, Universal Jurisdiction, the ICC, and a Wake-up Call for the Former Heads of State, 1999 and Scharf, Michael P., Results of the Rome Conference for an International Court, 1998:

<sup>4</sup>St' u The Future of International Criminal Justice, Philippe Sands, Cambridge University Press, 2003, էջ 31:

## **Փոխհատուցման ծրագրեր**

Փոխհատուցումները դասակարգվում են մի քանի չափանիշների հիման վրա: Դրանք կարող են լինել նյութական (դրամական) և ոչ նյութական: Փոխհատուցման (reparation) ծրագրերն են՝ նախնական վիճակի վերականգնում, կոմպենսացիա, ռեաբիլիտացիա, սաստիսֆակցիա, կրկնման բացառման երաշխիքների տրամադրում:

**Նախնական վիճակի վերականգնման օրինակներից են՝** անձնական ազատության իրավունքի վերականգնումը, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի և բարի համբավի անձեռնմխելիության, քաղաքացիության իրավունքի և այլ իրավունքների վերականգնումը, սեփական բնակության վայր վերադառնալը, աշխատանքում վերականգնվելը, գույքի վերադարձը և այլն: Կարևոր է նաև պետությունից գողացված ակտիվների վերականգնումը և դրանց օգտագործումը հանրօգուտ նպատակներով՝ սոցիալական, կրթական, առողջապահական և այլ ոլորտներում՝ հատուկ այդ նպատակով պետության կողմից ստեղծված հիմնադրամների միջոցով: **Կոմպենսացիան՝ ֆինանսական փոխհատուցումն է,** որը պետք է տրամադրվի տնտեսապես չափելի վնասի դեպքում և համահունչ լինի վերջինիս: Այն կարող է ծագել նյութական կամ բարոյական վնասից, բաց թողնված օգուտից, ներառյալ՝ կրթական, աշխատանքային և սոցիալական օգուտները: Ֆինանսական փոխհատուցումները կարող են լինել ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ՝ ուղղված որևէ կոնկրետ խմբի: Կոմպենսացիայի տրամադրման եղանակներ են՝ միանվագ փոխհատուցումները, կենսաթոշակների տրամադրումը, որոշակի երաշխիքների սահմանումը և այլն:

**Ռեաբիլիտացիան** ներառում է բժշկական և հոգեբանական խնամքը, ինչպես նաև իրավական և սոցիալական ծառայությունները: **Սաստիսֆակցիան** ներառում է միջոցառումների լայն շրջանակ, ներառյալ՝ փաստերը ստուգելը և ճշմարտության լիարժեք և հրապարակային բացահայտումը (որն իրականացվում է որպես առանձին մեխանիզմ՝ ճշմարտության հանձնաժողովների միջոցով), գոհերի արժանապատվությունը, հեղինակությունը և իրավունքները վերականգնող դատական ակտերի կայացումը (որն իրականացվում է որպես առանձին մեխանիզմ՝ քրեական արդարադատության միջոցով), անհետ կորած անձանց որոնումը, մարդու իրավունքների ուսուցումները և խորհրդանշական միջոցների օգտագործումը:

**Կրկնման բացառման երաշխիքների տրամադրումը** կիրառվող համակարգային բարեփոխումներին զուգահեռ իրականացվող գործընթաց է, որը նպատակ է հետապնդում ռազմական և անվտանգության ուժերում, դատական համակարգում, հանրային

ծառայություններում, դատական ակտերի հարկադիր կատարման մարմիններում բացառել նախկինում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումները:

### **Համակարգային բարեփոխումներ**

Համակարգային բարեփոխումներն իրականացվում են, որպեսզի ստեղծվեն երաշխիքներ՝ նախկինում կատարված հանցագործություններն այլևս չկրկնվելու մասին: Համակարգային բարեփոխումներ ասելիս հիմնականում նկատի ունենք լյուստրացիան (մաքրագործում) և վեթիինգը (քաղաքական գործիչների գտում): Համակարգային բարեփոխումներին գուցահեռ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և առանձին անհատների գործադրած ջանքերը նույնպես մեծ կարևորություն ունեն արդյունավետ անցումային արդարադատության իրականացման ժամանակ: Լյուստրացիան ծագել է լատիներեն *lustratio* բառից (*Lustra* - մաքրագործում գոհաբերության՝ մատաղ անելու միջոցով), որն օրենսդրական սահմանափակում է և գործարկվում է իշխանափոխությունից հետո՝ նախկին իշխանության կողմնակիցների իրավունքների սահմանափակման նպատակով: Ակնկալվում է, որ լյուստրացիայի իրականացումը նոր իշխանությանը լեզիտիմություն է հաղորդում՝ կտրուկ տարանջատելով իր գործունեությունը նախորդ՝ հանցագործ կամ հակաօրինական իշխանության գործունեությունից:

Վեթիինգը (պետական և քաղաքական գործիչների գտում) գործընթաց է, որի ընթացքում իրականացվում են հետաքննություններ են՝ պարզելու, թե արդյո՞ք պետական պաշտոններ զբաղեցնող անձինք, ովքեր մեղադրվում են մարդու իրավունքների խախտումների, կոռուպցիայի և այլ հանցագործությունների մեջ, իրենց գործունեությունն իրականացնելիս չարաշահել են իրենց պաշտոնական դիրքը, թե՞ ոչ: Վեթիինգի թիրախում կարող են լինել ոստիկանության, քրեակատարողական հիմնարկների, ազգային անվտանգության ծառայությունների, բանակի, ռազմական համակարգի և դատական ոլորտի պաշտոնյաները: Փորձը ցույց է տալիս, որ վեթիինգ կարող է իրականացվել նաև քաղաքացիական ծառայության համակարգում:

### **ՀՀ-ում անցումային արդարադատության մեխանիզմների ներդրման հնարավորությունը**

Ձեկույցում առաջարկությունները ներկայացվել են՝ հաշվի առնելով երկրում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունը, ինչպես նաև հետհեղափոխական շրջանում իշխող քաղաքական ուժի դրսևորած քաղաքական կամքը՝ ներդնելու անցումային արդարադատության այն մեխանիզմները, որոնք կբացառեն կոռուպացված և մոնոպոլիզացված տնտեսական

միջավայր ունենալու ռիսկերը և կվերականգնեն վստահությունը արդարադատության և դատական իշխանության նկատմամբ:

## ԳԼՈՒԽ 1. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

### 1.1 Ի՞նչ է անցումային արդարադատությունը

Անցումային «արդարադատություն» եզրույթում **«արդարադատություն»** բառը վերցվել է չակերտների մեջ՝ շփոթություն չառաջացնելու համար, քանի որ այդ բառը չի օգտագործվում նույն իմաստով, ինչ Սահմանադրության 162-րդ հոդվածում նշված «արդարադատություն» բառը: Նախ, «անցումայինը» շեշտադրում է ոչ ժողովրդավարական, բռնատիրական կառավարումից ժողովրդավարական համակարգին անցնելու հանգամանքը: Իսկ «արդարադատություն» բառն այստեղ ավելի լայն նշանակություն ունի, քան Սահմանադրության՝ վերը նշված հոդվածում ամրագրված բառը, քանի որ նեղ իմաստով արդարադատություն իրականացնում են բացառապես դատարանները, իսկ դատարանների կողմից իրականացվող արդարադատությունը չի կարող լինել «անցումային»: Այստեղ «արդարադատությունն» ավելի ճիշտ է հասկանալ որպես ոչ ժողովրդավարական կառավարումից ժողովրդավարական համակարգին անցնելու ընթացքում արդարության վերականգնմանն ուղղված գործունեություն՝ ինչպես դատարանների կողմից դասական արդարադատության իրականացման, այնպես էլ օրենքով սահմանված այլ գործիքների օգտագործման միջոցով (մեկը մյուսին չի բացառում, մեծ մասամբ զուգորդվում են): Իսկ այդ գործընթացն արդարացվում է նրանով, որ.

- ժողովրդավարական իշխանությունը պետք է գնահատական տա նախկիններին, որպեսզի նաև երաշխավորի, որ ներկա և գալիք իշխանությունները չեն կրկնելու նախկին իշխանությունների կառավարման ձևը.
- տեղի է ունենում հասարակական առողջացում, հաստատվում է համերաշխություն և ծնվում է առաջ գնալու հույս.
- վերականգնվում է վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ<sup>5</sup>:

<sup>5</sup> Վերոհիշյալ սահմանումը տվել է Անցումային արդարադատության հարցերով միջազգային փորձագետ Արման Զրվանդյանն իր ֆեյսբուկյան էջում հրապարակման միջոցով: Տե՛ս հետևյալ հղմամբ <https://www.facebook.com/zet.arman/posts/10156032465163208>:

Պետք է նշել, որ անցումային արդարադատությունը փոփոխությունների համակարգ է, գաղափարախոսություն, որը ռեպրեսիվ, պատերազմական, կոռումպացված, տնտեսական, սոցիալական, իրավական և քաղաքական ասպեկտների թույլ զարգացվածություն և օլիգարխիկ կառավարում ունեցող երկրներին հնարավորություն է տալիս դառնալ ժողովրդավար և մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները երաշխավորող, այլ ոչ թե՛ նշյալ սկզբունքները միայն օրենսդրորեն ամրագրող երկրներ: Մինևույն ժամանակ, անցումային արդարադատությունը նաև մեխանիզմների ամբողջություն է, որոնց համալիր կիրառմամբ հնարավոր է իրականացնել անաչառ արդարադատություն, բացահայտել ճշմարտությունը, վերականգնել տուժողների խախտված իրավունքները և հասնել հանրային համերաշխության և խաղաղության մթնոլորտի հաստատմանը:

Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառման ակունքները կարելի է փնտրել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակահատվածում՝ Եվրոպայում, երբ Գերմանիայում մեկնարկեցին Նյուրմբերգյան դատավարությունը և ապանացիստական զանազան ծրագրերը, ինչպես նաև Ճապոնիայում՝ ճապոնացի զինվորականների վերաբերյալ Տոկիոյի դատավարությունը: Այն առավել տարածում է գտել ավելի ուշ՝ 1980-ական և վաղ 1990-ական թվականներին Հարավային Ամերիկայում և Արևելյան Եվրոպայում:

## 1.2 Որո՞նք են անցումային արդարադատության մեխանիզմները

Անցումային արդարադատության մեխանիզմների ներկայացումը կարող է իրականացվել տարբեր մեթոդներով, սակայն, հիմք ընդունելով անցումային արդարադատության վերաբերյալ ուսումնասիրությունները, այն հարկավոր է իրականացնել չորս հիմնական մեխանիզմներով՝

- 1) քրեական արդարադատություն (ներառյալ՝ *Ad hoc* (իրավիճակային) և հիբրիդային քրեական դատարանների ստեղծում և համաներման մասին օրինագծերի անցկացում),
- 2) ճշմարտության որոնման գործընթաց (ճշմարտության հանձնաժողովների ստեղծում),
- 3) փոխհատուցման ծրագրեր (ներառյալ՝ հիշողության պահպանման ջանքերի՝ խորհրդանշական միջոցների կիրառում),<sup>6</sup>

<sup>6</sup> Սույն զեկույցում խորհրդանշական միջոցների կիրառումը՝ հուշարձաններ, հիշատակի միջոցներ և այլն, դիտվում են որպես անցումային արդարադատության փոխհատուցման գործիք, մինչդեռ որոշ աղբյուրներում դրանք զուգահեռ են ներկայացվում ճշմարտության հանձնաժողովների կամ փոխհատուցումների հետ:

#### 4) համակարգային բարեփոխումներ, այդ թվում՝ լուստրացիա և վեթինգ:

Որոշ դասակարգումների համաձայն՝ անցումային արդարադատության ուրույն գործիք է դիտվում նաև **գենդերային արդարադատությունը**, սակայն նշյալը սույն ուսումնասիրության առարկա չէ: Բացի դրանից՝ համակարգային բարեփոխումների մաս է կազմում **հասարակական ակտիվիզմը**, այն է՝ քաղաքացիական հասարակության կողմից գործադրված ջանքերը՝ երկրում անցումային արդարադատության իրականացման ուղղությամբ: Սույն զեկույցում հասարակական ակտիվիզմը դիտվում է որպես համակարգային բարեփոխումների ջանքերի մեխանիզմ:

##### 1.2.1 Քրեական արդարադատություն

Քրեական արդարադատության իրականացումը ներառում է **միջազգային հանցագործությունների քննությունը մինչդասական և դատական վարույթներում**: Նշված միջազգային հանցագործություններն են՝ ցեղասպանությունը, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները՝ պատերազմական հանցագործությունները և ագրեսիան: Քրեական արդարադատության իրականացումը նպաստում է օրենքի գերակայության սկզբունքի ամրապնդմանը՝ հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցով, որով ձևավորվում է անպատժելիության մթնոլորտի վերացման պրակտիկա:<sup>7</sup>

Քրեական արդարադատությունն իրականացվել է հետևյալ 3 եղանակներով՝

- *Ad hoc* միջազգային քրեական տրիբունալների և հիբրիդային դատարանների միջոցով:
- Ունիվերսալ իրավասություն ունեցող Միջազգային քրեական դատարանի (The International Criminal Court (ICC) միջոցով:
- Ներպետական դատական համակարգի միջոցով:

*Ad hoc* միջազգային քրեական տրիբունալների առաջին օրինակները **Գերմանիայի Նյուրմբերգ քաղաքում Միջազգային ռազմական տրիբունալի** (International Military Tribunal (IMT) ստեղծումն էր՝ Ֆրանսիայի, Խորհրդային միության, Միացյալ Թագավորության և Միացյալ Նահանգների կողմից, ինչպես նաև **Ճապոնիայի Տոկիո քաղաքում Հեռավոր Արևելքի համար Միջազգային ռազմական տրիբունալի** (Military Tribunal for the Far East (IMTFE) ստեղծումն էր՝ ԱՄՆ բանակի գեներալ Դուգլաս Մաքարթուրի հրամանով: Դրանց հաջորդում են **նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալը** (The International Criminal Tribunal for the former Yugoslavia (ICTY) և իր քույր դատարանը՝ **Ռուանդայի միջազգային քրեական**

<sup>7</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի հոդվածը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/our-work/transitional-justice-issues/criminal-justice>:

**տրիբունալը** (The International Criminal Tribunal for the Rwanda (ICTR)՝ ստեղծված ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի կողմից:

Նշյալներին հաջորդում են **հիբրիդային դատարանները**, որոնք ստեղծվել են հետևյալ երկրներում՝ **Սիեռա Լեոնեյի հատուկ դատարանը** (Special Court for Sierra Leon (SCSL), **Արևելյան Թիմորի ծանր հանցագործությունների հատուկ կոլեգիան** (Special Panels of the Dili District Court, also called the East Timor Tribunal), **Կամբոջիայի դատարանների արտակարգ պալատները** (Extraordinary Chambers in the Courts of Cambodia՝ Khmer Rouge Tribunal), **Բոսնիա-Հերցեգովինայի դատարանի Պատերազմական հանցագործությունների պալատը** (The Court of Bosnia and Herzegovina, War Crimes Chamber), **64-րդ Կանոնակարգ Պալատները Կոսովոյի դատարանում** (Regulation 64 Panels in the Courts of Kosovo) և վերջին տասնամյակում ստեղծված **Լիբանանի հատուկ դատարանը** (Special Tribunal for Lebanon (STL) ու **Արտակարգ Աֆրիկյան Պալատները** (Extraordinary African Chambers): Այս դատարանները կազմված են ինչպես տեղացի, այնպես էլ արտասահմանացի դատավորներից: Նման դատարանների նպատակն արդարադատություն իրականացնելն է, ինչին պատրաստ չէ տվյալ երկրի դատական համակարգը՝ քաղաքական կամքի կամ ներուժի բացակայության պատճառով: Բացի դրանից, հիբրիդային դատարանների նպատակներից է միջազգային իրավական փորձի և հմտությունների փոխանցման միջոցով պետության դատական համակարգի ներքին կարողությունների զարգացումն ու ամրապնդումը:

Ինչպես ցույց է տալիս միջազգային պրակտիկան, *ad hoc* և հիբրիդային տրիբունալների մոդելին հավանություն է տրվում այն ժամանակ, երբ ներպետական դատարաններն ի վիճակի չեն լինում անաչառ քննություն իրականացնել: Չնայած այն հանգամանքին, որ *ad hoc* և հիբրիդային քրեական տրիբունալները բավականին արդյունավետ են գործում, պետք է փաստել, որ դրանք կարող են բավականին թանկ արժենալ: Ավելին, գրեթե անհնար է, որ այս դատարանները պատասխանատվության ենթարկեն բոլոր մեղավորներին: Այդ իսկ պատճառով նման դատարաններին դիմելիս անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ հասարակության սպասելիքները և հնարավոր արդյունքները, որոնք կարելի է ստանալ նմանատիպ տրիբունալներից:

**Միջազգային քրեական դատարանը** հիմնադրվել է 1998 թվականին Հռոմում ստորագրված կանոնադրության հիման վրա: Այն միջազգային հանցագործություններ կատարած անձանց անպատժելիությանը վերջ տվող առաջին մշտական հիմունքներով գործող միջազգային քրեական դատարանն է: Այն հիմնադրվել է ցեղասպանության, պատերազմական հանցագործությունների, մարդկության դեմ հանցագործությունների և ագրեսիայի



կազմակերպիչներին քրեական հետապնդման և պատասխանատվության ենթարկելու համար, երբ պետությունները հնարավորություն չունեն կամ չեն ցանկանում այդ ամենը իրագործել:<sup>8</sup>

Հաճախակի քրեական արդարադատության իրականացման գործընթացը համակցվում է նաև **համաներումների մասին օրենսդրության ընդունմամբ**, որը հիմնականում տարածվում է նախկինում ոչ իրավաչափ կերպով դատապարտված անձանց նկատմամբ, օրինակ, քաղաքական բանտարկյալների:

### 1.2.2 **Ճշմարտության որոնման գործընթաց**

Ճշմարտության որոնման գործընթացներն օգնում են հասարակություններին ուսումնասիրել անցյալում կատարված հանցագործությունները և կանխարգելել դրանց կրկնությունը ապագայում: Հիմնականում իրականացվում են **ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովների** կողմից՝ որպես վերականգնողական արդարադատության եղանակ: Հարկ է նշել, որ 30-ից ավել նմանատիպ կառույցներ հիմնադրվել են **Արգենտինայում, Բանգլադեշում, Բոլիվիայում, Բրազիլիայում, Չադում, Կոլումբիայում, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում, Չիլիում, Չեխիայում, Էքվադորում, Էլ Սալվադորում, Ֆիջիում, Գամբիայում, Գերմանիայում, Գանայում, Հայիթիում, Քենյայում, Լիբերիայում, Մաուրիթիան կղզիներում, Պերուում, Մարոկկոյում, Նեպալում, Նիգերիայում, Պանամայում, Պարագվայում, Լեհաստանում, Ֆիլիպիններում, Գվատեմալայում, Ռուանդայում, Սիերա-Լիոնեում, Սոդոմոնյան կղզիներում, Հարավային Աֆրիկայում, Հարավային Կորեայում, Շրի Լանկայում, Արևելյան Թիմորում, Տոգոյում, Թունիսում, Ուգանդայում, Ուկրաինայում, Ուրուգվայում, ԱՄՆ-ում, Հարվասլավիայում:Որպես միջազգային փորձի լավագույն օրինակ նշվում է **Հարավ-Աֆրիկյան Ճշմարտության և Հաշտեցման հանձնաժողովը**:**

Ճշմարտության որոնումը բխում է **ճշմարտության իրավունքից**, որի համաձայն, *«Յուրաքանչյուր անձ, ով ենթարկվել է վայրագությունների, ունի անքակտելի իրավունք իմանալ, թե ով է պատասխանատու դրա համար, յուրաքանչյուր ընտանիք, որի անդամներն անհետացել են, ունի իրավունք պարզել վերջիններիս ճակատագիրը և գտնվելու վայրը: Յուրաքանչյուր հասարակություն, որտեղ տեղի են ունեցել այդ հանցագործությունները, ունի իրավունք սովորել իր պատմությունն՝ առանց ստի կամ ժխտման»<sup>10</sup>*: ՄԱԿ-ն իր զեկույցում ճշմարտության հանձնաժողովները բնութագրում է որպես *«պաշտոնական, ժամանակավոր, արտադատական*


<sup>8</sup>Տե՛ս Understanding the International Criminal Court տե՛ս հետևյալ հղմամբ՝ [www.icc-cpi.int/iccdocs/pids/publications/uicceng.pdf](http://www.icc-cpi.int/iccdocs/pids/publications/uicceng.pdf), էջ 3:

<sup>9</sup>Ճշմարտության հանձնաժողովների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է սույն հղմամբ՝ <https://www.britannica.com/topic/truth-commission>:

<sup>10</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի վերլուծությունը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/gallery-items/right-truth>:


փաստահավաք մարմիններ, որոնք հետաքննություն են իրականացնում անցյալում տեղի ունեցած մարդու իրավունքների կամ մարդասիրական իրավունքի նորմերի խախտումների կապակցությամբ»<sup>11</sup> Այդպիսի կառույցներ ունենալու առավելությունն այն է, վերջիններս իրականացնում են փաստահավաք գործունեություն մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ, պահպանում են ձեռք բերված ապացույցները, բացահայտում են մեղավորներին, առաջարկում են հատուցման եղանակներ տուժողներին և նախաձեռնում են համակարգային բարեփոխումների իրականացում: Հիշյալ կառույցները կարող են նաև ծառայել որպես հարթակ տուժողներից ստանալու իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ տեղեկություններ, բարձրաձայնելու ճշմարտությունը, ինչպես նաև հանրությանը ընձեռել հնարավորություն հանրային բանավեճի միջոցով լուծումներ տալ նախկինում առաջացած խնդիրներին:

ՄԱԿ-ի զեկույցն անդրադարձ է կատարել նաև ճշմարտության հանձնաժողովների գործունեության վրա հնարավոր ազդեցություն ունեցող դրական և բացասական գործոններին: Այդ առումով բացասական գործոնները անհրաժեշտ է դիտարկել որպես ռիսկային և զերծ մնալ դրանցից՝ Հայաստանում նմանատիպ հանձնաժողովներ հիմնադրելու դեպքում:<sup>12</sup>



<sup>11</sup> Տե՛ս «Օրենքի գերակայությունը և անցումային արդարադատությունը կոնֆլիկտային և հետ-կոնֆլիկտային հասարակություններում. Գլխավոր քարտուղարի զեկույց, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ, էջ 17, հասանելի է՝ <https://www.un.org/ruleoflaw/files/2004%20report.pdf>

<sup>12</sup>Տե՛ս նույն տեղում



### 1.2.3 Փոխհատուցման ծրագրեր

Փոխհատուցումները դասակարգվում են մի քանի չափանիշների հիման վրա: Դրանք կարող են լինել դրամական-նյութական և ոչ նյութական: Փոխհատուցման (reparation) ծրագրերը ներառում են՝

- նախնական իրավիճակի վերականգնում,
- կոմպենսացիա,
- ռեաբիլիտացիա,
- սատիսֆակցիա,
- կրկնման բացառման երաշխիքների տրամադրում:<sup>13</sup>

*Նախնական իրավիճակի վերականգնման* օրինակներից են անձնական ազատության իրավունքի վերականգնումը, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի և բարի համբավի

<sup>13</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների զերագույն հանձնակատարի զեկույցը տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.reparationlaw.com/reparations/what\\_is\\_reparation\\_law.php#one](http://www.reparationlaw.com/reparations/what_is_reparation_law.php#one):

անձեռնմխելիության, քաղաքացիության իրավունքի և այլ իրավունքների վերականգնումը, սեփական բնակության վայր վերադառնալը, աշխատանքում վերականգնվելը, գույքի վերադարձը և այլն: Կարևոր է նաև պետությունից **գողացված ակտիվների վերականգնումը և դրանց օգտագործումը հանրօգուտ նպատակներով՝ սոցիալական, կրթական, առողջապահական և այլ ոլորտներում՝ հատուկ այդ նպատակով պետության կողմից ստեղծված հիմնադրամների միջոցով:**

**Կոմպենսացիան** ֆինանսական փոխհատուցումն է, որը պետք է տրամադրվի տնտեսապես չափելի վնասի դեպքում և համահունչ լինի վերջինիս: Այն կարող է ծագել նյութական կամ բարոյական վնասից, բաց թողնված օգուտից, ներառյալ՝ կրթական, աշխատանքային և սոցիալական օգուտները: Ֆինանսական փոխհատուցումները կարող են լինել ինչպես **անհատական**, այնպես էլ՝ **կոլեկտիվ**՝ ուղղված որևէ կոնկրետ խմբի:<sup>14</sup> Կոմպենսացիայի տրամադրման եղանակներ են՝ **միանվագ փոխհատուցումները, կենսաթոշակների տրամադրումը, որոշակի երաշխիքների սահմանումը և այլն:**

**Ռեաբիլիտացիան** ներառում է բժշկական և հոգեբանական խնամքը, ինչպես նաև իրավական և սոցիալական ծառայություններ:

**Սատիսֆակցիան** ներառում է միջոցառումների լայն շրջանակ, ներառյալ՝ փաստերը ստուգելը և ճշմարտության լիարժեք և հրապարակային բացահայտումը (որն իրականացվում է որպես առանձին մեխանիզմ՝ ճշմարտության հանձնաժողովների միջոցով), գոհերի արժանապատվությունը, հեղինակությունը և իրավունքները վերականգնող դատական ակտերի կայացումը (որն իրականացվում է որպես առանձին մեխանիզմ՝ քրեական արդարադատության միջոցով), անհետ կորած անձանց որոնումը, մարդու իրավունքների ուսուցումները և **խորհրդանշական միջոցների օգտագործումը:** Վերջինս, ինչպես վերը նշվեց, թեև հաճախ նաև դասակարգվում է որպես անցումային արդարադատության ինքնուրույն գործիք, սակայն փոխհատուցման և վերականգնման իրավունքի հիմնարար սկզբունքների համաձայն՝ դրանք դասակարգվում են որպես **փոխհատուցման տեսակ:** Խորհրդանշական միջոցների օգտագործումը ենթադրում է քայլերի իրականացում՝ ուղղված հանրային հիշողության պահպանմանը՝ հետագայում դրանց կրկնությունը կանխելու նպատակով, և կարող են արտահայտվել հետևյալ տեսքով.

- **հրապարակային ներողությունների հայցում,**
- **հիշատակի և տոն օրերի սահմանում,**
- **հուշակոթողների և թանգարանի կառուցում և ցուցադրությունների կազմակերպում:**

<sup>14</sup> «Փոխհատուցումները տեսականում և գործնականում», “Reparations in Theory and Practice, International Center for Transitional Justice”, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Global-Reparations-Practice-2007-English.pdf>:

Օրինակ, Եվրոպական Խորհրդարանի «Եվրոպական խղճի և տոտալիտարիզմի մասին բանաձև»-ը օգոստոսի 23-ը սահմանել է որպես **Եվրոպայի ավտորիտար ռեժիմների գոհերի հիշատակի օր**:<sup>15</sup> Որպես լավագույն փորձ հաճախ մատնանշվում է **Չիլիի՝ Հիշողության և մարդու իրավունքների թանգարանի կառուցմամբ**:<sup>16</sup>

*Կրկնման արգելքի երաշխիքների տրամադրումը* կիրառվող համակարգային բարեփոխումներին զուգահեռ իրականացվող գործընթաց է, որը որպես կանոն իրականացվում է ռազմական և անվտանգության ուժերում, դատական համակարգում, հանրային ծառայություններում, դատական ակտերի հարկադիր կատարման մարմիններում և այլ պետական մարմիններում:

Միաժամանակ պետք է նշել, որ փոխհատուցումների տրամադրման բարդություններ կարող են առաջանալ պետական բյուջեի ռեսուրսների սահմանափակ լինելու պատճառով, ինչպես նաև փոխհատուցում ստացող անձանց կոնկրետ շրջանակի որոշման և փոխհատուցում տրամադրելու վերջնական չափանիշների սահմանման գործընթացում:

#### 1.2.4 Համակարգային բարեփոխումներ

Համակարգային բարեփոխումներն իրականացվում են, որպեսզի ստեղծվեն երաշխիքներ՝ անցյալում կատարված իրավախախտումների կրկնությունը բացառելու վերաբերյալ: Համակարգային բարեփոխումներ ասելիս հիմնականում նկատի ունենք **լյուստրացիան և վեթիինգը**: Սույն գեկույցում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և անհատների կողմից անցումային արդարադատության իրականացմանն ուղղված ջանքերը դիտվում են որպես համակարգային բարեփոխումներին աջակցող մեխանիզմ:

**Լյուստրացիան**<sup>17</sup> ծագել է լատիներեն lustratio բառից (Lustra - մաքրագործում գոհաբերության՝ մատաղ անելու միջոցով), որն օրենսդրական սահմանափակման տեսակ է և նպատակ է հետապնդում սահմանափակել նախկին իշխանությունների օրոք կոռուպցիայի, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների խախտման մեջ մեղադրվող անձանց մասնակցությունը քաղաքական գործընթացներում և այդպիսի անձանց համար ստեղծում է

<sup>15</sup>Տե՛ս «Եվրոպական խղճի և տոտալիտարիզմի մասին բանաձև», Եվրոպական խորհրդարան, ընդունված՝ 2009թ.-ի ապրիլի 2-ին:

<sup>16</sup> Տե՛ս <https://www.ictj.org/gallery-items/memory>

<sup>17</sup> Որպես լյուստրացիա բառի հայերեն թարգմանություններ օգտագործվում են քաղաքական մաքրագործումը, գաղտնագերծումը, լուսահայտումը: Որոշ լրատվամիջոցներում կիրառվել է նաև մաքրագերծում: Այս տարբերակը, սակայն, սխալ է, քանզի մաքրագերծել նշանակում է մաքրությունից զրկել:

օրենսդրական արգելքներ՝ պաշտոններ զբաղեցնել պետական մարմիններում:<sup>18</sup> Ակնկալվում է, որ լուստրացիայի իրականացումը նոր իշխանությանը լեգիտիմություն է տալիս՝ կտրուկ տարանջատելով իր գործունեությունը նախորդ՝ հանցագործ կամ հակաօրինական իշխանության գործունեությունից<sup>19</sup>:

Լյուստրացիան նոր երևույթ չէ: Հիշատակման են արժանի «Ստալինյան մաքրագործումները», դենացիֆիկացիան (ապագայնամուլացում) Արևմտյան Եվրոպայում, «Խրուշչովյան դեստալինիզացիան»: Լյուստրացիան «վճռական ձևեր» է ունեցել նաև 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին **Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի հետկոմունիստական երկրներում** (օրինակ՝ **Գերմանիա, Լեհաստան, Չեխիա, Հունգարիա, Ռումինիա, Ալբանիա, Լիտվա, Լատվիա, Էստոնիա, Ուկրաինա, Վրաստան**)՝ նախկին խորհրդային ռեժիմի հետ կապ ունեցող անձանց՝ պետական, կուսակցական պաշտոնյաներին, հատուկ ծառայությունների գործակալներին պետական ծառայությունից և ուժային ու իրավապահ կառույցներից, կրթական համակարգից հեռու պահելով:<sup>20</sup>

**Ուկրաինայում**, բացի հիշյալ գործողություններից, լյուստրացիա եղել է նաև Ուկրաինայի նախկին նախագահ Վիկտոր Յանուկովիչի օրոք՝ 2010 թվականի փետրվարի 25-ից մինչև 2014 թվականի փետրվարի 22-ն ընկած ժամանակահատվածում (2014 թվականի Ուկրաինական հեղափոխությունը) աշխատած այն քաղաքացիական ծառայողների նկատմամբ, ովքեր աշխատել են 1 տարուց ավել և «իրենց սեփական համաձայնությամբ պաշտոնաթող չեն եղել»: Լյուստրացիայի միջոցով այդ քաղծառայողներին ազատել են պետական և հանրային պաշտոններից:<sup>21</sup>

2017թ-ի հունիսի կեսերին **Վրաստանի** քաղաքական ազդեցիկ ուժերից մեկը՝ Լեյբորիստական (աշխատավորական) կուսակցությունը հայտարարեց երկրում լյուստրացիա անցկացնելու և մեծամասնական կարգով ընտրված պատգամավորների «սև ցուցակ» կազմելու, և ապա՝ այն աշխարհի ֆինանսական հաստատություններին ուղարկելու որոշման մասին: Խոսքը վերաբերում էր այն պատգամավորներին, որոնք վերջին 25 տարվա ընթացքում

<sup>18</sup>Տե՛ս «*Люстрация как основание ограничения избирательного права*», Ларин, Александр Александрович, Теория и практика общественного развития 4 (2014):

<sup>19</sup>Տե՛ս «*Lustration*», Eric Brahm, Beyond Intractability.org, հունիս 2004:

<sup>20</sup>Տե՛ս *Люстрация в Центральной и Восточной Европе*, Бойцова В., Бойцова Л. «Правозащитник» № 3, 1999, Roman David, "Lustration Laws in Action: The Motives and Evaluation of Lustration Policy in the Czech Republic and Poland (1989—2001), *Law & Social Inquiry* 28(2):387-439 էջեր, (2003), <http://sites.google.com/site/roman328/home/LSIpaper.pdf?attredirects=0>:

<sup>21</sup>Տե՛ս «Lustration law faces sabotage, legal hurdles»: Kyiv Post, 23 հոկտեմբեր, 2014:

միաժամանակ քաղաքական և բիզնես գործունեություն են ծավալել և մանդատներն օգտագործել են բյուջեից գումարներ վերցնելու համար:<sup>22</sup>

**Վեթօինգը**<sup>23</sup> գործընթաց է, որի ժամանակ հետաքննություններ են անցկացվում՝ պարզելու համար, թե՛ արդյո՞ք պետական պաշտոններ զբաղեցնող անձիք, պաշտոն զբաղեցնելիս չարաշահել են իրենց պաշտոնական դիրքը, թե՛ ոչ: Վեթօինգի հիմնական նպատակն է՝ մաքրել պետական կառավարման համակարգը հակաօրինական վարքագիծ դրսևորած հանրային իշխանության ծառայողներից: Վեթօինգի թիրախում կարող են լինել դատական, իրավապահ մարմինների, ազգային անվտանգության ծառայությունների, բանակի, և այլ կառույցների պաշտոնյաներ:<sup>24</sup> Փորձը ցույց է տալիս, որ վեթօինգ կարող է իրականացվել նաև **քաղաքացիական ծառայությունում**: Վեթօինգ իրականացնելիս պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝

- հետաքննվող անձանց տեղեկություն տրամադրելու և մեղադրանքներին պատասխանելու հնարավորությունը,
- հետաքննվող անձանց աշխատանքից հեռացնելու արգելքը՝ կապված քաղաքական, կուսակցական դիրքորոշումներ արտահայտելու հետ,
- վեթօինգ իրականացնող մարմնի վարչական կամ քվադր-դատական բնույթը,
- հասարակության իրազեկվածությունը վեթօինգն իրականացնող մարմնի վերաբերյալ՝ այն ստեղծելու առաջին իսկ օրերից,<sup>25</sup>
- վեթօինգ իրականացնող մարմնի գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը,
- վեթօինգ իրականացնող մարմնի անկախությունը և աշխատողների աշխատանքի ընդունման չափորոշիչները և մրցութային կարգը,
- ներքին ընթացակարգերի ընդունումը, որոնք հնարավորություն կտան վեթօինգ իրականացնող մարմնին տեղեկություններ հավաքագրել քաղաքացիական հասարակությունից,
- որոշումներ ընդունելու չափորոշիչների սահմանումը,
- մեդիայի և քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովումը,

<sup>22</sup>Տե՛ս «Լեյբորիստները մեծամասնական պատգամավորների սև ցուցակ կկազմեն», Նորիկ Գասպարյան: 15/06/2017: Ալիք, համացանցային լրատվամիջոց:

<sup>23</sup> Վեթօինգ տերմինի հայերեն թարգմանությունն առկա չէ, սակայն բովանդակային իմաստով այն նշանակում է քաղաքական գործիչների (այդ թվում՝ ոստիկանության, քրեակատարողական հիմնարկների, ազգային անվտանգության ծառայությունների, բանակի, ռազմական համակարգի և դատական ոլորտի պաշտոնյաների) զտում:

<sup>24</sup>Արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ\\_Book\\_JusticeMosaics\\_2017.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ_Book_JusticeMosaics_2017.pdf), էջեր 14-15:

<sup>25</sup>Արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ\\_Book\\_JusticeMosaics\\_2017.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ_Book_JusticeMosaics_2017.pdf), 54-55 էջեր:

- այն կազմակերպությունների և բաժինների նկատմամբ վերահսկողության իրականացումը, որոնց գործունեության վերաբերյալ առավել մեծ թվով բողոքներ են ստացվել,
- հանրային իշխանության ծառայողների ճշգրիտ ցանկերի նախապես հրապարակումը,
- արդյունավետ հանրային հաղորդակցության ապահովումը,
- հանրությանը, Ազգային ժողովին կանոնավոր կերպով հաշվետվության ներկայացումը,
- վեթիինգ իրականացնող մարմնի աշխատողների բարձր մասնագիտական պատրաստվածությունը, անաչառությունը և բարեխղճությունը:

Համակարգային բարեփոխումներից խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև **հասարակական ակտիվիզմին**: Մասնավորապես, մի շարք երկրներում հասարակական կազմակերպությունները մեծ դերակատարում են ունեցել անցումային արդարադատության իրականացման համար՝ ճշմարտության որոնման և այլ մեխանիզմների կիրառման հարցում: Օրինակ, **Թունիսում** անցումային արդարադատության իրականացման նպատակով հասարակական կազմակերպությունները ստեղծել են կոալիցիա, որն աջակցել է կառավարությանը «Անցումային արդարադատության մասին» օրենքի մշակմանը և կիրառմանը՝ ցուցաբերելով փորձագիտական օժանդակություն և իրականացնելով հանրային մոնիթորինգ: Բացի դրանից՝ քաղհասարակության կազմակերպությունները հանրության շրջանում անցումային արդարադատության վերաբերյալ քարոզարշավներ են իրականացրել՝ բարձրացնելով այդ գործընթացի վերաբերյալ հանրային իրազեկվածության աստիճանը:

Միջազգային փորձը ցույց է տալիս նաև, որ արդյունավետ անցումային արդարադատության համակարգ ձևավորվելու համար կարևոր է ակնհայտ և անկեղծ պատրաստակամությունը, որի մասին նախապես ծանուցվում է հասարակությունը, հակառակ դեպքում անցումային արդարադատության իրականացմանն ուղղված ջանքերը դժվար թե հաջողություն ունենան, և միջազգային աջակցությունը նույնպես արդյունավետ չի կարող լինել:



## ԳԼՈՒԽ 2. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Իրավաչափորեն հարց է առաջանում, թե ի՞նչ նախադրյալների կամ հանգամանքների պարագայում կարող է խոսք լինել **անցումային արդարադատության մեխանիզմների կիրառման անհրաժեշտության մասին**: Միացյալ ազգերի կազմակերպությունը (այսուհետ՝ ՄԱԿ) անցումային արդարադատության անհրաժեշտության կարիք ունեցող երկրները բնութագրում է որպես «**պատերազմից կեղեքված հասարակություններ**», որտեղ տեղի են ունեցել լայնամասշտաբ հանցագործություններ և դրանց հետևանքով կան տուժածներ: Համաձայն ՄԱԿ-ի բնութագրման՝ այդպիսի երկրներում.

- պետական իստիտուտները գտնվում են կաթվածահար վիճակում,
- պետական ռեսուրսները հիմնականում ոչնչացված են նախորդ ռեժիմների գանգվածային, ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով,
- առկա է սոցիալական շերտավորում,
- պետական անվտանգությունը քայքայված վիճակում է,
- բացակայում է բարեփոխումներ իրականացնելու քաղաքական կամքը,
- դատական համակարգը գործադիր իշխանության կցորդն է,
- գործադիր իշխանության հիմնական լծակները աշխատում են թիրախավորված անձանց և նրանց տնտեսությունների պահպանման ուղղությամբ,
- բացակայում է հասարակության վստահությունը պետական մարմինների հանդեպ,
- պետական մարմինները տարրական հարգանք չեն դրսևորում մարդու իրավունքների հանդեպ:<sup>26</sup>

ՄԱԿ-ի վերոնշյալ չափանիշները թույլ են տալիս կատարելու կարևոր հարցադրում. **արդյո՞ք ՀՀ-ն հանդիսանում է «պատերազմից կեղեքված հասարակություն ունեցող պետություն»:**

Չնայած Արցախի չկարգավորված հակամարտության գոյությանը, այն ավելի շատ արտաքին մարտահրավեր է և անցումային արդարադատությունը, այս մասով վերաբերելի չէ:

Ինչ վերաբերվում է երկրում քաղաքացիական պատերազմի առկայությանը կամ բացակայությանը, պետք է փաստել, որ ՀՀ-ում 2008 թվականի նախագահական

<sup>26</sup>Տե՛ս UN Security Council: “The rule of law and transitional justice in conflict and post-conflict societies” Report of the Secretary General no. S2004/616, dated 23 օգոստոս 2004 (the “UN report”), էջ 3:

ընտրություններին հաջորդող մարտիմեկյան բախումներն<sup>27</sup>, ըստ էության, քաղաքացիական անհնազանդության դրսևորումներ էին, որոնք շատ կարճ տևեցին և չվերաճեցին քաղաքացիական պատերազմի: Իսկ 2018 թվականի ապրիլին տեղի ունեցած Թավշյա հեղափոխությունը ևս աչքի ընկավ իր խաղաղ բնույթով: Հետևաբար, վերոնշյալ գործոնների համադրմամբ, կարող ենք փաստել, որ **Հայաստանի Հանրապետությունը «պատերազմից կեղեքված հասարակություն» ունեցող պետություն չէ:**

Սակայն արդարացիորեն ևս մեկ հարց է ծագում. **արդյո՞ք «կեղեքված հասարակություն» կարող է ունենալ միայն պատերազմող պետությունը:** Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է անդրադարձ կատարել ՄԱԿ-ի կողմից «կեղեքված հասարակություն ունեցող պետություն» եզրույթը բնութագրող հատկանիշներին: Թեև պատերազմի գործոնն էական նշանակություն չունի Հայաստանի դեպքում, սակայն, ստորև թվարկած գործոնները փաստում են, որ հասարակությանը կարելի է կեղեքված բնորոշումը տալ:

## 2.1. Հայաստանն անկախացումից մինչ թավշյա հեղափոխություն

### 2.1.1 Իրավական և քաղաքական գործոններ. ընդհանուր պատկեր

Հայաստանում անկախությունից ի վեր ընդունվել են մի շարք օրենքներ և ստանձնվել միջազգային պարտավորություններ՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանը, սակայն 2008 թվականի մարտիմեկյան իրադարձությունները և խաղաղ ցույցերի ժամանակ մարդկանց նկատմամբ կիրառվող ոչ իրավաչափ և բռնի գործողությունները, դատական համակարգում նեպոտիզմի և պատրոնաժի դրսևորումները, քրեակատարողական հիմնարկներում առկա խախտումները, ընտրակեղծիքները, կոռուպցիայի բարձր մակարդակը, և մի շարք այլ գործընթացներ վկայում են այն մասին, որ մարդու իրավունքների խախտման և ազատությունների ոտնահարման դեպքերն ունեցել են զանգվածային և կրկնվող բնույթ:

Այսպես, **Freedom House**-ի ժողովրդավարության գնահատմանն ուղղված **«Ազգերն անցումային շրջանում»** 7 բալանոց ռեգրեսիվ սանդղակի համաձայն՝ Հայաստանը 2003թ-ին գրանցել է 4.92 միավոր, իսկ 2018թ-ին՝ 5.43: Միավորի հաշվարկման համար հիմք են հետևյալ գործոնները՝ պետական ժողովրդավարական կառավարումը, տեղական ժողովրդավարական ինքնակառավարումը, ընտրական գործընթացները, անկախ մեդիան, քաղաքացիական

<sup>27</sup> Լրագիր օրաթերթի կողմից պատրաստած տեսանյութը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.youtube.com/watch?time\\_continue=2&v=nuHUQ3K7Bxs](https://www.youtube.com/watch?time_continue=2&v=nuHUQ3K7Bxs):

հասարակությունը, դատական համակարգի անկախությունը և կոռուպցիան:<sup>28</sup> Բացի դրանից, **Freedom House**-ի մեկ այլ՝ **«Ազատությունն աշխարհում»** համաթիվը երկրները դասակարգում է ըստ քաղաքական իրավունքների (ընտրական գործընթաց, քաղաքական բազմակարծություն և կառավարության մասնակցություն ու գործելաձև) և քաղաքացիական ազատությունների (խոսքի և կրոնի ազատություն, միավորումների ազատության իրավունք, օրենքի գերակայություն և անձնական ինքնավարություն) 7 բալանոց ռեգրեսիվ սանդղակում, որտեղ Հայաստանը թե՛ 1992թ.-ին, թե՛ 2017թ.-ին ըստ ցուցիչների հանրագումարի գրանցել է 4.5 միավոր, որը համարժեք է «Մասնակի ազատ» ցուցանիշին:<sup>29</sup>

**«Բերթելսմանի փոխակերպման համաթիվ»** **«Քաղաքական փոխակերպում» ցուցիչի համաձայն՝** երկրները դասակարգվում են 5 աստիճանով՝ կոնսոլիդացված ժողովրդավարությունից (democracy in consolidation) մինչև ծանր միահեծանություն (hard-line autocracy): Հայաստանը 2006 թվականից մինչև 2018 թվականը դասակարգված է 4-րդ աստիճանում՝ որպես **չափավոր միահեծանություն (moderate autocracy)**<sup>30</sup>: Բացի այդ, Բերթելսմանի հիմնադրամի կողմից վերջերս մշակված մեկ այլ՝ **«Կառավարման համաթիվ»** համաձայն՝ երկրները դասակարգվում են ըստ առաջնորդների՝ քաղաքական կառավարման 5 աստիճանով՝ «շատ լավ»-ից մինչև «ձախողված»՝ նվազման սանդղակով: Հայաստանը 2017թ. դասակարգվել է 4-րդ աստիճանում՝ որպես թույլ:<sup>31</sup>

Հայաստանում գրեթե բոլոր ոլորտներում առկա է կոռուպցիայի բարձր մակարդակ: Այսպես, **Transparency International**-ի **«Կոռուպցիայի ընկալման համաթիվ»** համաձայն՝ 100 բալանոց պրոգրեսիվ սանդղակում 2012թ.-ին Հայաստանի միավորը կազմել է 34, իսկ 2017թ.-ին՝ 35: Նշյալի արդյունքում Հայաստանը 180 երկրների շարքում այդ տարիներին զբաղեցրել է համապատասխանաբար՝ 105 և 107-րդ հորիզոնականները: Բացի այդ, նույն կազմակերպության **«Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր»**-ի համաձայն, որն ուսումնասիրում է կոռուպցիայի նկատմամբ հանրության վերաբերմունքը և կոռուպցիոն երևույթների հետ նրանց առչության աստիճանը, Հայաստանը գրանցել է Եվրոպայի և Արևելյան Ասիայի 42 պետությունների շրջանում վատագույն արդյունքներից մեկը՝ համապատասխանելով «Բարձր ռիսկայնություն» ցուցիչ: Հարկ է նաև հավելել, որ **«Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր»**-ի

<sup>28</sup> Ֆրիդոմ Հաուս-ի կղմից կազմված “Nations in Transit” 2003 և 2018 զեկույցները , հասանելի են հետևյալ հղմամբ՝ <https://freedomhouse.org/report/nations-transit/2003/armenia>, <https://freedomhouse.org/report/nations-transit/2018/armenia>:


<sup>29</sup>“Freedom in the World Index”, Freedom House, 1992, 2017, տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://freedomhouse.org/report/freedom-world/2018/armenia>:

<sup>30</sup>“The Transformation Index”, Bertelsmann Stiftung, տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.bti-project.org/en/data/rankings/status-index/>:

<sup>31</sup> “Governance Index”, Bertelsmann Stiftung, տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.bti-project.org/en/data/rankings/governance-index/>:

շրջանակներում «Որքանո՞վ են կոռուպցիայի մեջ ներքաշված» հարցի պատասխանն ունեցել է Գծապատկեր 1-ում արտացոլված արդյունքը:

Գծապատկեր 1 [https://www.transparency.org/news/feature/corruption\\_perceptions\\_index\\_2017](https://www.transparency.org/news/feature/corruption_perceptions_index_2017)



«Կոռուպցիայի մակարդակը կրճատելու ուղղությամբ իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերը որքա՞ն արդյունավետ եք համարում» հարցին ի պատասխան՝ հարցվածների 65%-ը գնահատել է **անարդյունավետ կամ շատ անարդյունավետ**՝ այդ ցուցանիշով **118** երկրների շարքում զբաղեցնելով **116-րդ հորիզոնականը**: Հարցվածների **63%-ը անարդյունավետ կամ շատ անարդյունավետ** է դիտարկել նաև շարքային քաղաքացու ներգրավվումը կոռուպցիայի դեմ պայքարում որևէ բան փոխելու հարցում: Կոռուպցիայի մասին ազդարարումը ընդունելի լինելու և այդ մասին ազդարարելու վերաբերյալ հարցվածների պատրաստակամության հարցում Հայաստանը զբաղեցրել է 81 երկրների շրջանակում 81-րդ հորիզոնականը:<sup>32</sup>

Բացի այդ, հարկ է նշել, որ անկյունաքարային խնդիրների շարքին է դասվում գողացված ակտիվների վերադարձը, քանի որ առկա ֆինանսական վերլուծությունների արդյունքում պարզ է դառնում, որ 2003-2012թթ ընթացքում ՀՀ-ից ապօրինի ֆինանսական հոսքերի ծավալը կազմում է 7 միլիարդ 499 միլիոն ԱՄՆ դոլար:<sup>33</sup>

<sup>32</sup> Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր (Global Corruption Barometer), Transparency International, 2016:

<sup>33</sup> «Անօրինական ֆինանսական հոսքերը զարգացող երկրներից: 2003-2012», Dev Kar և Joseph Spanjers, Global Financial Integrity, 2014թ. դեկտեմբեր, հասանելի է՝ <https://www.gfintegrity.org/wp-content/uploads/2014/12/Illicit-Financial-Flows-from-Developing-Countries-2003-2012.pdf> :

## ա) Քաղաքական իրավունքներ, ընտրական գործընթաց

1995թ.-ի պառլամենտական ընտրություններից սկսած Հայաստանում տեղի ունեցած բոլոր ընտրություններն էլ գուգորդված են եղել զանգվածային խախտումներով: Այդ մասին են վկայում մի շարք միջազգային և ազգային մակարդակներում հրապարակված զեկույցները և արված հայտարարությունները: Մասնավորապես, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը մշտադիտարկման է ենթարկել Հայաստանում տեղի ունեցած գրեթե բոլոր ընտրությունները: Ստորև մեջբերումներ կներկայացնենք Հայաստանում երեք տարբեր իշխանությունների օրոք անցկացված ընտրությունների վերաբերյալ հրապարակված զեկույցներից. առաջին մեջբերումը վերաբերվում է 1996թ. սեպտեմբերի 22 -ի նախագահական ընտրություններին.

*«Ստորագրած ընտրողների թվի և ստացված քվեաթերթիկների և պաշտոնական արդյունքներով ընտրողների համարանիշների (coupons) միջև անհամապատասխանություններն այլ իրավախախտումների հետ միասին նպաստում են ընդհանուր ընտրական համակարգի նկատմամբ վստահության պակասին: Առաջին շրջանի արդյունքները նույնիսկ կարող են հարցականի տակ դրվել՝ մինչ անհամապատասխանությունների և անկանոնությունների խորը վերանայումը և գնահատումը: Չնայած ընտրական օրենսգրքում որոշ բարեփոխումներին՝ ընտրախախտումների քանակը և հաճախականությունը ստվեր են նետում ընտրությունների վրա:»<sup>34</sup>*

Ընտրակեղծիքներից անմասն չեն մնացել նաև 2008թ. փետրվարի 19-ի ընտրությունները. «Ժողովրդավարական ընտրությունների համար էական չափանիշների նկատմամբ ցուցաբերվեց անբավարար հարգանք և արժեզրվեց ամբողջ ընտրական գործընթացը: Մասնավորապես, քվեների հաշվարկում իհայտ եկան հաշվետվության և թափանցիկության թերություններ, իսկ բողոքների և բողոքարկման ընթացակարգերը լիովին արդյունավետ չէին: ԿԸՀ-ն և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային խորհուրդը (ՀՌԱԽ) չեն ապահովել, որպեսզի լրատվամիջոցները համապատասխանեն իրենց պարտավորություններին, և լրատվամիջոցների կողմնակալությունն ակներև է եղել: Ակնառու են եղել ահաբեկման դեպքեր և գործընթացը մանիպուլյացիայի ենթարկելու փորձեր, և իշխանությունները ադեկվատ կերպով

<sup>34</sup>Վերջնական զեկույց, Նախագահական Ընտրություն, 1996թ. սեպտեմբերի 22, Presidential Election, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (OSCE/ODIHR (Office for Democratic Institutions and Human Rights), 24-ը հոկտեմբերի, 1996թ., հասանելի է՝ <https://www.osce.org/odihr/elections/armenia/14149?download=true>:

չեն արձագանքել ընտրությունների օրը և դրանցից հետո հայտնված այս խնդիրներին: Որոշ տեղամասային ընտրական հանձնաժողովներ (ՏԸՀ) չեն ցանկացել գրանցել պաշտոնական բողոքներ: Քվեների հաշվարկը գնահատվել է որպես «վատ» կամ «շատ վատ» այցելած ընտրատեղամասերի մոտ 16 տոկոսում: Դիտորդներն արձանագրել են հակասություններ քվեաթերթիկների վավերության որոշման մեջ, դժկամություն նշված քվեաթերթիկները ցույց տալու գործում, մի թեկնածուի քվեաթերթիկների վերագրում մեկ այլ թեկնածուին, արձանագրությունների ստորագրում մինչև հաշվարկի ավարտը, չլրացված արձանագրությունների ստորագրում, արձանագրությունների մեջ տվյալների փոփոխում, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով արձանագրությունների հանրային ցուցադրման ձախողման դեպքեր»:<sup>35</sup>

Պատկերը բացասական է նույնիսկ 2017թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ. «Չնայած այն հանգամանքին, որ իրավական դաշտում իրականացվել են ողջունելի բարեփոխումներ և նոր տեխնոլոգիաներ են ներդրվել՝ նվազեցնելու ընտրական խախտումների դեպքերը, ընտրությունները ստվերվեցին ընտրակաշառքների և հանրային ծառայողների ու մասնավոր ընկերությունների աշխատողների վրա ճնշումների մասին արժանահավատ տեղեկություններով: Դա նպաստեց հանրության կողմից ընտրությունների նկատմամբ ընդհանուր վստահության ու հավատի բացակայությանը: Ընդհանուր առմամբ, ընտրության օրը հանգիստ էր և խաղաղ, սակայն արձանագրվեցին կազմակերպչական խնդիրներ և գործընթացին անհարկի միջամտություններ՝ հիմնականում կուսակցությունների ներկայացուցիչների կողմից»:

«Գլխավոր դատախազը աշխատանքային խումբ է ստեղծել ընտրախախտումների մասին հաղորդումները հետաքննելու համար: Մինչև ընտրությունների օրը աշխատանքային խումբը դիտարկել է ընտրակաշառքի և ընտրական իրավունքի իրացմանը խոչընդոտելու հետ կապված մոտ 220 գործ՝ մեծամասամբ ՁԼՄ աղբյուրներից ստացված: Դրանցից 58-ը, այդ թվում՝ ընտրակաշառքին առնչվող 38 դեպք, ուղարկվել են ոստիկանություն հետազոտության: Բոլոր գործերը մերժվել են ապացույցների անբավարար լինելու հիմքով: Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանը դիտարկել է իր թեժ գծի միջոցով գրավոր կամ ՁԼՄ հրապարակումներից ստացված 148 հաղորդում՝ հիմնականում կապված քարոզարշավի

<sup>35</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Դիտորդական առաքելություն Վերջնական գեկույց (Election Observation Mission Final Report), 2008թ. փետրվարի 19, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (OSCE/ODIHR (Office for Democratic Institutions and Human Rights), Վարչակազմ, 30-ը մայիսի, 2008թ. <https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/32115?download=true>:

խախտումների հետ, որոնցից 5-ը ուղարկել է իրավապահ մարմիններին, որոնք էլ դեպքերի մեծ մասում չեն գտել բավարար ապացույցներ՝ գործին ընթացք տալու համար:»<sup>36</sup>

«Ընտրատեղամասի անձնակազմը պետք է ապահովի, որ քվեատուփերը նախքան քվեարկությունը լինեն դատարկ և կնքված, իսկ բոլոր չօգտագործված քվեաթերթիկներն արձանագրվեն և պահվեն ապահով տեղում՝ դրանց տեղափոխման և պահպանման ժամանակ<sup>37</sup>: Այս և մի շարք այլ միջազգային պահանջներ խախտվել են:»<sup>38</sup>

Հարկ է նշել, որ ընտրախախտումներ արձանագրվել են ոչ միայն պետական մակարդակներում, այլև՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: Այդ կապացույթամբ Եվրոպայի Խորհրդի Տեղական և ռեգիոնալ իշխանությունների կոնգրեսը զեկույցներ է ներկայացրել Երևան քաղաքի և այլ համայնքների ավագանիների ընտրությունների վերաբերյալ, մասնավորապես.

«Վերահսկվող քվեարկության» ընդհանուր մթնոլորտը, որը փաստարկվում էր տարածված քվեների գնման մեղադրանքներով և վարչական ռեսուրսների օգտագործման չարաշահումներով, ինչպես նաև ընտրությունների օրերին ընտրատեղամասերի մոտ անձանց կուտակումներով, հետագա ժողովրդական կոնսոլիդացումների կոչ են անում: Այս խնդիրներին պետք է լուրջ լուծումներ տրվեն իշխանությունների կողմից, որը կուժեղացնի վերջիններիս ընտրական օրենսդրության խախտումները ժամանակին և պատշաճ կերպով քննելու և պատասխանատվության ենթարկելու կարողությունները՝ ընտրությունների և ընդհանրապես տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վստահության բարձրացման նպատակով:»<sup>39</sup>

## **բ). Քաղաքացիական իրավունքների խախտումներ**

Բազմաթիվ միջազգային և ազգային ձևաչափերի կողմից նաև հատկորոշվել են մարդու իրավունքների զանգվածային խախտումների, հավաքների ազատության սահմանափակումների, կամայական ազատազրկումների, խոշտանգումների, լրագրողների և իրավապաշտպանների նկատմամբ կիրառվող սպառնալիքների խնդիրների մասին:

<sup>36</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Դիտորդական առաքելություն Վերջնական զեկույց (Election Observation Mission Final Report), 2017թ. ապրիլի 2, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (OSCE/ODIHR (Office for Democratic Institutions and Human Rights), Վարշավա, 10-ը հուլիսի, 2017թ. տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/333491?download=true>:

<sup>37</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, 2010թ., 73, Վենետիկի հանձնաժողով, 2002թ., Բացատրական զեկույց, պարբ. 33:

<sup>38</sup> 2012 թվականին կայացած խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ վերջնական զեկույցը հասանելի է՝ <https://www.osce.org/hy/odihr/elections/90333?download=true>, էջ 3, 7:

<sup>39</sup> Տե՛ս «Information report on the elections to the Council of Elders of the City of Yerevan, Armenia (14 May 2017)», The Congress of Local and Regional Authorities, CoE, CPL33(2017)04, 20 September 2017:

Այսպես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն մարտիմեկյան իրադարձությունների վերաբերյալ 2012 թվականին արձանագրել է հետևյալ խախտումները.

«5. Մարդու իրավունքների կոմիտեն իր մտահոգությունն է հայտնում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ցուցաբերած զգուշավորության կապակցությամբ, որը ցուցաբերվել է վերջինիս կողմից մարդու իրավունքների մշտադիտարկում, աջակցություն և պաշտպանություն իրականացնելիս:

12. Մարդու իրավունքների կոմիտեն մտահոգված է մարտիմեկյան իրադարձությունների ժամանակ ոստիկանների կիրառած անհամաչափ ուժի կապակցությամբ:

13. Կոմիտեն մտահոգություններ է հայտնում ոստիկանական մարմինների կողմից կիրառվող անհամաչափ ուժի դեպքերը՝ հետաքննության չենթարկելու դեպքերի վերաբերյալ:

15. Կոմիտեն մտահոգություններ է հայտնում նաև ՀՀ զինված ուժերում խաղաղ ժամանակ տեղի ունեցող սպանությունների կապակցությամբ և նաև շեշտադրում այն փաստը, որ զինվորները հրամանատարների կողմից ենթարկվում են ոչ պատշաճ վերաբերմունքի:

19. Կոմիտեն նաև իր մտահոգություններն է հայտնում համատարած դարձած կալանավորման դեպքերի վերաբերյալ, ընդգծելով, որ կալանավորները ազատությունից զրկվելիս տեղյակ չեն լինում իրենց տարրական իրավունքների մասին: Կոմիտեն խորը ավստասանք է հայտնում, որ կալանքի մեջ գտնվող անձինք հաճախ զրկված են լինում իրավաբանի կամ բժշկի հետ տեսակցություն ունենալու իրավունքից: Հաճախակի են դեպքերը, երբ անձինք հնարավորություն չեն ունենում կալանավորման վերաբերյալ տեղյակ պահել իրենց ընտրած անձանց և նրանք դատարանում պատշաճ ներկայանալու իրավունքից են զրկված լինում:

21. Կոմիտեն իր մտահոգություններն է հայտնում դատական համակարգի անկախ չլինելու վերաբերյալ: Դատավորների ընտրության մեխանիզմները, դատավորներին քաղաքական ճնշման ենթարկելը նույնպես մտահոգություններ է առաջացնում:

22. Կոմիտեն իր մտահոգությունն է հայտնում ՀՀ պետական համակարգում առկա կոռուպցիայի բարձր աստիճանի վերաբերյալ, որը համատարած բնույթ է կրում ինչպես ՀՀ դատարաններում, այնպես էլ ոստիկանական համակարգում: Սրա հետևանքով ժողովուրդը կորցնում է վստահությունը դատական համակարգի նկատմամբ:

26. Կոմիտեն իր մտահոգությունն է հայտնում լրագրողների և իրավապաշտպանների հասցեին հնչեցվող սպառնալիքների վերաբերյալ»:<sup>40</sup>

<sup>40</sup> Միացյալ ազգերի կազմակերպության, մարդու իրավունքների կոմիտեի զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CCPR/C/ARM/CO/2&Lang=En](https://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CCPR/C/ARM/CO/2&Lang=En):



2010 թվականի դեկտեմբերի 23-ին ՄԱԿ-ի Իրավապաշտպանների իրավիճակի վերաբերյալ Հատուկ զեկուցողը ևս մարտիմեկյան դեպքերի կապակցությամբ 2010 թվականին շեշտադրել է, որ «Մարտի 1-ի դեպքերի բացահայտման գործընթացը մեծամասամբ կրում էր քաղաքական բնույթ, այդ իսկ պատճառով էլ չհաջողվեց համագործակցություն իրականացնել պետական մարմինների, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և անհատների միջև: Այլ մարտահրավերների մեջ պետք է հիշատակել հավաքների ազատության իրավունքի սահմանափակումները խոսքի ազատության սահմանափակումները և մարդու իրավունքների պաշտպանների դեմ ուղղված սպառնալիքները:»<sup>41</sup>

Բացի այդ, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի Կամայական ազատագրկումների դեմ պայքարի Աշխատանքային խումբը ևս արձանագրել է մի շարք խախտումներ՝ իր 2010 թվականին հրապարակած զեկույցում. «93. Ազատությունից կամայականորեն զրկվելու հիմնախնդիրը ՀՀ-ում հիմնականում ասոցացվում է դատական և դատախազական համակարգերի անկախության բացակայության հետ: Շատ դատավորներ մտավախություն ունեն, որ իրենք տարբեր տեսակի պատժամիջոցների կարող են ենթարկվել, եթե որոշակի նրբություն պարունակող գործերով արդարացման դատավճիռներ ընդունեն: Մինչ օրս չի արձանագրվել մի դեպք, երբ դատավորը պատասխանատվության ենթարկվի անձին ապօրինի կերպով ազատությունից զրկվելու համար: Համենայնդեպս, դեպքեր են արձանագրվել, երբ դատավորը կարգապահական պատասխանատվության է ենթարկվել արդարացնող դատավճիռ ընդունելու պատճառով: Վերոշարադրվածը ի ցույց է դնում այն հանգամանքը, որ դատավորները գտնվում են դատախազների անմիջական ազդեցության ներքո: 96. Աշխատանքային խումբը մտահոգություններ է արտահայտել, որ դատարանները և իրավապահ մարմինները բավականին թույլ են կոռուպցիայի դեմ պայքարի տեսանկյունից և հաճախ են մտնում կոռուպցիոն բնույթ կրող գործարքների մեջ: Դատավորները և իրավապահ մարմինների աշխատողները չեն դիտարկվում որպես անկախ մարմիններ՝ շարքային քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների աչքերում: 97. Արդար դատաքննության իրավունքի խախտումները զանգվածային բնույթ են կրում և խեղաթյուրում են դատարանների կերպարը՝ որպես անկախ մարմիններ: Արդարադատության իրականացման անաչառության վերաբերյալ ձևավորված հանրային կարծիքը շատ ցածր մակարդակի վրա է գտնվում: Աշխատանքային խումբը վերահաստատում է ազատությունից զրկված անձանց համար մրցակցային դատավարության ապահովման կարևորությունը և կոչ է

<sup>41</sup>Sté u Report of the Special Rapporteur on the situation of human rights defenders, Margaret Sekaggya, UN Human Rights Council, 23 December 2010, <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G10/179/19/PDF/G1017919.pdf?OpenElement>, էջ 2, պար. 1:

անում ՀՀ դատարաններին պաշտպանել և հարգել կողմերի հավասարության, անմեղության կանխավարկածի, պաշտպան ունենալու և խոշտանգումներից զերծ մնալու իրավունքների պահպանման անհրաժեշտությունը: 95. Աշխատանքային խումբն իր մտավախություն է հայտնում բանակում, ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում և սահմանապահ գործունեություն իրականացնող մարմինների անձնակազմում տեղի ունեցող մարդու իրավունքների զանգվածային խախտումների վերաբերյալ: Ձերբակալված, կալանավայրում գտնվող և պատիժ կրող անձանց նկատմամբ ցուցաբերվող ոչ մարդկային վերաբերմունքը պետք է արգելվի: Կալանավորված անձանց իրավունքների խախտումները մեծամասամբ տեղի են ունենում ոստիկանական ստորաբաժանումներում: Աշխատանքային խումբը ՀՀ կառավարությանը կոչ է անում հարգել իր ստանձնած միջազգային պարտավորությունները՝ հիշեցնելով, որ ՀՀ-ն անդամակցում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիային, ուստի կառավարությունը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկի, որպեսզի քաղաքացիները պաշտպանված լինեն այդպիսի վերաբերմունքից, երբ նրանք հետախուզվում, ձերբակալվում կամ կալանավորվում են: Երկրի ներպետական օրենսդրությանը համապատասխան՝ անպատժելիությունը պետք է արդյունավետ կերպով կանխարգելվի և պատժվի:»<sup>42</sup>

**ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեն** մտահոգություններ է հայտնել ոստիկանական ուժերի կողմից ցուցարարների դեմ կիրառվող բռնությունների վերաբերյալ նաև 2017 թվականին հրապարակված իր զեկույցում. «Այս երևույթը հատկապես լայնամասշտաբ էր «Էլեկտրիկ Երևան» սոցիալական շարժման ժամանակ, երբ ոստիկանությունը ապօրինի կերպով կալանավորել էր 237 ցուցարարի: Նմանատիպ իրավիճակ էր տիրում նաև 2016 թվականին, երբ ռազմական խումբը գրավել էր ոստիկանական բաժանմունքը: Այս ընթացքում քաղաքացիները զանգվածաբար բերման էին ենթարկվում ոստիկանական բաժանմունքներ, որտեղ խախտվում էին նրանց ամենատարրական իրավունքները, օրինակ, իրավաբանի հետ տեսակցություն ունենալու, առաջադրված մեղադրանքի վերաբերյալ պատշաճ տեղեկացվելու և այլ հիմնարար իրավունքներ»<sup>43</sup>:

**Freedom House**-ի կողմից մեկ այլ՝ 2017 թվականին հրապարակված «**Մեդիայի ազատությունը**» զեկույցի ՀՀ-ին վերաբերվող առաջին և վերջին հրապարակումների վերլուծությունից պարզ է դառնում, որ Հայաստանը 0-100 բալանոց սանդղակում 2002 և 2017

<sup>42</sup> Միացյալ Ազգերի Կազմակերպության Կամայական ձերբակալությունների հարցերով աշխատանքային խմբի զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G11/108/49/PDF/G1110849.pdf?OpenElement>, 93-98 պար:

<sup>43</sup> Concluding observations, UN, Committee against Torture, 2017, CAT/C/ARM/CO/4, para 20., հասանելի է [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CAT/C/ARM/CO/4&Lang=En](https://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CAT/C/ARM/CO/4&Lang=En)

թվականներին գրանցել է համապատասխանաբար 60 և 63 միավոր, որը համապատասխանում է երկրների դասակարգման 3-րդ ամենաբացասական ցուցանիշին՝ **Ոչ ազատ:**<sup>44</sup>

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի «**Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՋԼՄ-ների իրավունքների խախտումների մասին**» 2017 թվականի տարեկան զեկույցի համաձայն՝ «2017թ. Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների և դրանց նախորդող քարոզարշավների ընթացքում արձանագրված բռնությունների ու խոչընդոտների 29 դեպքից միայն 7-ի առնչությամբ է քրեական գործ հարուցվել, որոնցից 5-ը կարճվել է «հանցակազմի բացակայության» ձևական հիմնավորմամբ, և միայն 2-ն է հասել դատարան: Նույն անարդյունավետ և ձևական մոտեցումն է նկատվում նաև լրագրողների դեմ լայնածավալ բռնություններին վերաբերող երկու քրեական գործերի՝ 2015 թվականի հունիսի 23-ին Երևանի Բաղրամյան պողոտայում (#ElectricYerevan) և 2016թ. հուլիսի 29-ի լույս 30-ը մայրաքաղաքի Խորենացի փողոցում և Սարի թաղում տեղի ունեցած իրադարձությունների նախաքննությունում: Այդ գործերի շրջանակներում ներկայացված մեղադրանքների քանակը (համապատասխանաբար՝ 4 մեղադրանքի շրջանակներում՝ 21 տուժած լրագրողներ ու օպերատորներ, 9 մեղադրանքի շրջանակներում՝ 21 տուժող) վկայում է, որ ձեռնարկված միջոցները ամեննին համարժեք չեն այդ օրերին ՋԼՄ-ների ներկայացուցիչների նկատմամբ բռնությունների ծավալներին:»<sup>45</sup>

**Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի կողմից ընդունված «Ժողովրդավարական ինստիտուտների գործառույթը Հայաստանում»** թիվ 1609 բանաձևում ևս անդրադարձ կա ՋԼՄ-ների ոլորտում տիրող իրավիճակին: Այսպես, նշված է. «Թեև գոյություն ունի բազմակարծիք ու անկախ տպագիր մամուլ, իշխանությունների կողմից էլեկտրոնային լրատվամիջոցների և նրանց գործունեությունը կարգավորող մարմինների նկատմամբ իրականացվող վերահսկողության ընթացիկ մակարդակը, ինչպես նաև՝ իսկապես անկախ ու բազմակարծություն ապահովող հանրային հեռարձակողի բացակայությունը, խոչընդոտում են լրատվամիջոցների դաշտում բազմակարծության ձևավորմանը և խորացնում քաղաքական համակարգի նկատմամբ հանրության վստահության պակասի խնդիրը»<sup>46</sup>:

«Մելտեքս» ՄՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության» գործով («Ա1+»-ի գործ) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն էլ վճռել է, որ

<sup>44</sup>“Freedom in the Press Index”, Freedom House, 2002, 2017, հասանելի է՝ <https://freedomhouse.org/report/freedom-press/2017/armenia>:

<sup>45</sup>«Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՋԼՄ-ների իրավունքների խախտումների մասին» Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի 2017 թվականի տարեկան զեկույց : Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://www.aravot.am/2018/01/18/931908/>:

<sup>46</sup>«Ժողովրդավարական ինստիտուտների գործառույթը Հայաստանում» թիվ 1609 բանաձև, Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողով, 2008թ., 6.5 կետ:

խախտվել է հեռուստաընկերության՝ տեղեկություններ և գաղափարներ տարածելու ազատության իրավունքը»<sup>47</sup>

Լրագրողների գործունեության սահմանափակումների վերաբերյալ բարձրաձայնել են նաև Լրագրողների պաշտպանության կոմիտեն<sup>48</sup>, «Արտիկլ 19, Քաղաքացիական սովիդարության պլատֆորմը<sup>49</sup> և այլն: Իսկ թե՛ լրագրողների հարցերով, թե՛ առհասարակ երկրում տիրող մարդու իրավունքների խախտումների մասին մշտապես բարձրաձայնել է Human Rights Watch-ը<sup>50</sup>, Amnesty International-ը<sup>51</sup>, ԱՄՆ պետական դեպարտամենտի Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոն<sup>52</sup>, Եվրոպայի Խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն<sup>53</sup>, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը<sup>54</sup> և այլ կառույցներ:

## 2.1.2 Տնտեսական և սոցիալական գործոններ

Ըստ Համաշխարհային բանկի և ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ անկախության 26 տարիների (1991-2016թթ.) ընթացքում Հայաստանում գործազրկության միջին մակարդակը կազմել է 21,7%: Գործազրկության ամենաբարձր ցուցանիշ եղել է 2001 թվականին՝ 35,9%, իսկ

<sup>47</sup> «Մեկտեքս» ՄՊԸ-ն և Մեարոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության» գործ, ՄԻԵԴ, 17 հունիսի, 2008, Գործ no. 32283/04.

<sup>48</sup> Committee to Protect Journalists, հոդվածը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://cpj.org/europe/armenia/>

<sup>49</sup> Civic solidarity platform, հոդվածը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://civicsolidarity.org/page/about-us>:

<sup>50</sup> Human Rights Watch, հոդվածը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.hrw.org/world-report/2018/country-chapters/armenia>:

<sup>51</sup> Amnesty International-ի վերլուծությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.amnesty.org/en/countries/europe-and-central-asia/armenia/report-armenia/>:

<sup>52</sup> “Reports on Human Rights Practices, Armenia, Bureau of democracy, human rights and labor”, U.S. Department of State, հասանելի է՝ <https://www.state.gov/documents/organization/277381.pdf> <https://www.state.gov/documents/organization/186536.pdf>:

<sup>53</sup> “Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT)”, Council of Europe, Strasbourg, 22 November 2016, CPT/Inf (2016) 31, հասանելի է <https://www.coe.int/en/web/cpt/-/council-of-europe-anti-torture-committee-publishes-report-on-armen-3>:

<sup>54</sup> ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների և հետընտրական զարգացումների վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցը տես հետևյալ հղմամբ՝ [http://www.ombuds.am/publications/special\\_reports.html?page=3](http://www.ombuds.am/publications/special_reports.html?page=3):

ամենացածրը՝ 2013 թվականին՝ 16,2%: Վերջին 5 տարիների ընթացքում ԱՊՀ անդամ երկրների շարքում Հայաստանն ունեցել է գործազրկության ամենաբարձր մակարդակը:<sup>55</sup>

Մինչդեռ, որոշ զեկույցների համաձայն, վերջին տարիներին գործազրկության մակարդակը շարունակաբար աճում է: Նշվում է նաև, որ հանրապետությունում սոցիալ-տնտեսական վիճակից բխող հետևանքներից առաջնայինն արտագաղթն է: 2011-2015 թվականներին Հայաստանի մշտական բնակչությունն, ըստ պաշտոնական վիճակագրության, պակասել է 22,8 հազարով: Այս ընթացքում ամեն տարի միջինը 40 հազար ՀՀ քաղաքացի հատել է երկրի սահմանը և չի վերադարձել:<sup>56</sup>

Բացի այդ, երկրում առկա է բավականին բարձր **ոչ ֆորմալ կամ թաքնված զբաղվածություն**, որն ուղղակիորեն փոխկապակցված է ստվերային շրջանառության բարձր մակարդակի հետ: Նման պարագայում չի ավելանում ՀՀ պետական բյուջեի եկամտային մասը, ինչով պայմանավորված հնարավոր չէ ապահովել նաև ծախսային մասի աճ, ինչն էական նշանակություն ունի երկրում տիրող սոցիալական խնդիրների լուծման համար:<sup>57</sup>

ՀՀ-ում անկախությունից հետո թեև ներդրվել է տնտեսական ազատ շուկայական կացութաձևը, սակայն իրականում ձեռնարկատերերը բախվել են մի շարք խնդիրների՝ կոռուպցիայի բարձր մակարդակ հարկային և մաքսային մարմիններում, մենաշնորհային և գերիշխող դիրքերով պայմանավորված տնտեսական ոչ առողջ մրցակցություն:

Այսպես, Համաշխարհային տնտեսական ֆորումի «Համաշխարհային մրցունակության» համաթվի համաձայն՝ Հայաստանը 2017 թվականին 135 երկրների շարքում զբաղեցրել է 70-րդ հորիզոնականը՝ գրանցելով 59.9 միավոր 100 բալանոց պրոգրեսիվ աղյուսակում, իսկ 2009 թվականին զբաղեցրել է 134 երկրների շրջանում 93-րդ հորիզոնականը: Թեև նշյալ վարկանիշային դասակարգման մեջ Հայաստանն, ընդհանուր առմամբ, վատ դիրք չի զբաղեցնում, սակայն զեկույցը նշում է կոռուպցիան գործարարությամբ զբաղվելու ամենամեծ խոչընդոտը, որին հաջորդում են ֆինանսավորման հասանելիությունը և հարկային կարգավորումները<sup>58</sup>:

<sup>55</sup> International Labour Organization, ILOSTAT database, հասանելի է <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS?locations=AM>, ՀՀ վիճակագրական կոմիտե, ԵՄՏՄ վիճակագրության բաժին:

<sup>56</sup>Տնտեսական վիճակը Հայաստանում. հնարավորություններ և մարտահրավերներ, Կոմպաս Կենտրոն, Հայաստան, Փետրվար 2017, հասանելի է <http://library.fes.de/pdf-files/bueros/georgien/13247.pdf>:

<sup>57</sup> Մանրամասն տե՛ս <https://ampop.am/unemployment-in-armenia/>:

<sup>58</sup> Global Competitiveness Report 2008-2009, KLAUS SCHWAB, World Economic Forum, MICHAEL E. PORTER, Harvard University, Geneva, Switzerland 2008, հասանելի է [http://www3.weforum.org/docs/WEF\\_GlobalCompetitivenessReport\\_2008-09.pdf](http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2008-09.pdf), Global Competitiveness Report 2018, KLAUS SCHWAB, World Economic Forum, հասանելի է <http://www3.weforum.org/docs/GCR2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2018.pdf>:

Համաշխարհային բանկի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից իրականացված «2013 թվականի գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության» հարցման համաձայն՝ «Ընկերությունների առջև ծառայած հիմնական խոչընդոտների թվում են ֆինանսավորման հասանելիությունը, հարկային վարչարարությունը և քաղաքական անկայունությունը: Հայաստանի տնտեսությունում մենաշնորհների թիվն ավելի շատ է, քան տարածաշրջանի այլ երկրներում: Շուկաներում կենտրոնացման մակարդակը բարձր է, և տարածաշրջանի այլ երկրների միջին 6 տոկոսի համեմատ՝ Հայաստանի շուկաներում մենաշնորհները կազմում են 19 տոկոս: Ավելին՝ հարցման մեջ ընդգրկված շուկաների 60 տոկոսն օլիգոպոլիկ կամ մենաշնորհային կառուցվածք ունի»:<sup>59</sup>

«Բերթելսմանի փոխակերպման համաթվի» «Տնտեսական փոխակերպում» ցուցիչի համաձայն՝ երկրները դասակարգվում են 5 աստիճանով՝ զարգացած շուկայական տնտեսությունից (developed market economy) մինչև զարգացման ամենացածր մակարդակում գտնվող շուկայական տնտեսություն (rudimentary market economy): ՀՀ-ին վերաբերող հրապարակումների վերլուծությունից պարզ է դառնում, որ Հայաստանը, 2006 թվականից մինչև 2018 թվականը դասակարգվել է 3-րդ աստիճանում՝ որպես ֆունկցիոնալ թերություններով շուկայական տնտեսություն (market economy with functional flaws)<sup>60</sup>:

Համաշխարհային բանկի խմբի կողմից իրականացվող «Գործարարությամբ զբաղվելու ոլորի նություն» ցուցիչով 190 երկրների շարքում Հայաստանը 2006թ-ին զբաղեցրել է 46-րդ, իսկ 2019թ-ին՝ 41-րդ հորիզոնականը: Թեև Հայաստանը լավ ցուցանիշ է արձանագրել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բիզնեսի ստեղծումը, գույքի գրանցումը և պայմանագրերի կիրարկումը, այն հետ է մնում շինարարական թույլտվությունների, սնանկության ճանաչման և էլեկտրաէներգիայի ոլորտներում՝ գրանցած ցուցանիշների մասով:<sup>61</sup>

Կանադական think tank Fraser Institute-ի «Աշխարհի տնտեսական ազատություն» սանդղակի, որը հաշվի է առնում հարկերի դրույքաչափերը, գնաճի դրույքաչափերը, դատական իշխանության անկախության աստիճանը, ներկրման ծախսերը և կարգավորվող գները, ՀՀ-ին վերաբերող առաջին և վերջին՝ 2004 և 2016 թվականներին կատարված հրապարակումների

<sup>59</sup>Armenia - BEEPS at a glance 2013 (Armenian). BEEPS at a glance. Kisunko, Gregory; Ponomariov, Branco Leonidov. 2014. WashingtonWorld Bank Groupavailable at: <http://documents.worldbank.org/curated/en/699591468218377943/Armenia-BEEPS-at-a-glance-2013>, <https://168.am/2013/11/27/303897.html> .

<sup>60</sup>“The Transformation Index”, Bertelsmann Stiftung, հասանելի է՝ <https://www.bti-project.org/en/data/rankings/status-index/>:

<sup>61</sup> “Doing Business 2019”, A World Bank Group Flagship Report, հասանելի է՝ [http://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB2019-report\\_web-version.pdf](http://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB2019-report_web-version.pdf):

վերլուծությունից պարզ է դառնում, որ Հայաստանը համապատասխան **130 երկրների** շարքերում զբաղեցրել է **36-րդ** և **162 երկրներից 29-րդ հորիզոնականը**:<sup>62</sup>

Վաշինգտոնյան **think tank Heritage հիմնադրամի և Wall Street ամսագրի «Տնտեսական ազատության համաթվի»** համաձայն, որի հիմքում ընկած են 4 հետևյալ խմբերի գործոնները՝ օրենքի գերակայություն, կառավարության կառուցվածք (Government Size - հարկային բեռ և այլն), կարգավորումների արդյունավետություն և բաց շուկայական հարաբերություններ, երկրներին դասում է 5 աստիճանի՝ «ազատ»-ից մինչև «ճնշված»: Հայաստանը 1996 թվականին դասվել է որպես ճնշված, իսկ 2018 թվականին՝ որպես «չափավոր ազատ» (3-րդ աստիճան):<sup>63</sup>

**Ամփոփելով** նշենք, որ մշտապես կեղծվող ընտրությունները<sup>64</sup>, համակարգային կոռուպցիան՝ որպես զանգվածային երևույթ քաղաքական, կրթական, վարչական մակարդակներում<sup>65</sup>, ժողովրդավարական հասարակություն կառուցելու փորձերի ձախողումները, արդարադատության իրականացման ընտրովի բնույթը և անկախ դատական իշխանություն ձևավորելու ձախողումը, մարդու արժանապատիվ գոյությունն ապահովելու համար նվազագույն կենսական պայմանների<sup>66</sup> բացակայությունը, բարեփոխումներ իրականացնելու քաղաքական կամքի բացակայությունը, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի բացակայությունը, ֆինանսական միջոցների ոչ իրավաչափ օգտագործումը՝ ապօրինի հարստացման և երկրից ակտիվների ապօրինի կերպով դուրս բերման հետևանքով, իրենց հերթին պատճառ են հանդիսացել, որպեսզի հասարակությունը կորցնի վստահությունը պետության և երկրի քաղաքական իշխանությունների նկատմամբ:

**Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ ներկայումս Հայաստանի հասարակական կյանքում առկա է «կեղեքված հասարակություն» հասկացությունը բնորոշող մի շարք բնութագրիչներ, որոնք, որպես այդպիսին, ոչ թե պատերազմի, այլ հասարակական կյանքում**

<sup>62</sup> “Economic Freedom of the World”, Fraser Institute, Canada, <https://www.fraserinstitute.org/economic-freedom/map?geozone=world&year=2016&page=map>:

<sup>63</sup> Տե՛ս Index of Economic Freedom, Heritage Foundation, Wall Street Journal, հասանելի է՝ <https://www.heritage.org/index/heatmap>:

<sup>64</sup> Մանրամասն տես՝ <https://www.a1plus.am/18755.html>, <http://iravaban.net/27067.html>, <http://iravaban.net/203364.html>, <http://iravaban.net/201783.html>, <http://iravaban.net/201784.html>, <http://iravaban.net/175593.html>, <http://iravaban.net/161016.html>:

<sup>65</sup> Տե՛ս <http://iravaban.net/89615.html>, <https://transparency.am/hy/priorities/anti-corruption>: «Կոռուպցիան և հակակոռուպցիոն պայքարը Հայաստանում. ընդհանուր իրավիճակի նկարագիր», Թրանսփարենսի Ինթերնեշնլ, հեղինակներ՝ Ուիլքերզ Ս., Հոկտանյան Վ., 2013, հասանելի է՝ <http://goo.gl/wtrLNz>, էջեր 8-9: «Կոռուպցիայի բնույթը ՀՀ-ում, դրա հասարակական ընկալումները և ազդեցությունը մարդկային զարգացման վրա», Թադևոսյան Ա., Երևան, 2009, հասանելի է՝ <http://goo.gl/h4iP1B>, էջեր 12-13, «Ուսանողների ընկալումը բուհական համակարգում կոռուպցիայի մասին», Ասլանյան Լ., Գյումրիի Գ., Գրիգորյան Ա., Խաչատրյան Ս., Հասասյան Ա., Երևան, 2010, հասանելի է՝ <http://goo.gl/ZRQszz>, էջեր 12-13:

<sup>66</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/poverty\\_2017\\_a\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf), Աղքատության ցուցանիշները՝ <https://ampop.am/poverty-in-armenia/>:

տիրող վերոնշյալ բացասական գործոնների հետևանք են, և այդ առումով երկրում գոյություն ունեցող իրավիճակը կարող է համապատասխանել ՄԱԿ-ի կողմից «կեղեքված հասարակություն ունեցող պետություն» եզրույթը բնութագրող հատկանիշներին:

## 2.2. Թավշյա հեղափոխությունը և ՀՀ-ում անցումային արդարադատության կիրառման նախադրյալները ու դրսևորման փորձերը

Թավշյա հեղափոխությունը ոչ բռնի, խաղաղ գործողություններով ուղեկցված ցույցեր, երթեր, քաղաքացիական անհնազանդության զանգվածային դրսևորումներն էին Հայաստանում, որոնց առաջին ակնառու քաղաքական արդյունքներից մեկը եղավ 2018 թվականի ապրիլի 23-ին երկրի վարչապետ Սերժ Սարգսյանի հրաժարականը, իսկ երկրորդը՝ նույն թվականի մայիսի 8-ին Ազգային ժողովի կողմից «ժողովրդի թեկնածու» Նիկոլ Փաշինյանին ՀՀ վարչապետի պաշտոնում ընտրելը: Հեղափոխության առաջին փուլում (2018 թվականի ապրիլի 13 - մայիսի 8) բողոքի գործողություններն ուղղված էին Հայաստանի Հանրապետության վարչապետ Սերժ Սարգսյանի պաշտոնավարման երրորդ ժամկետի դադարեցմանը, որն այդ փուլի սկզբում՝ առաջին տասնօրյակում չհաջողվեց: Շարժումը սկսեց «Իմ քայլը» և «Մերժիր Մերժին» նախաձեռնություններով: Սերժ Սարգսյանի հրաժարականից հետո ցույցերի և բողոքի մյուս գործողությունների պահանջը դարձավ իշխանությունից Հայաստանի հանրապետական կուսակցության հեռացումը և վարչապետի պաշտոնում Նիկոլ Փաշինյանի ընտրությունը:

Հայաստանի համար այս ժամանակաշրջանում անցումային արդարադատության արդյունավետ իրականացման համար մեծ դեր կունենան հանրությունը, այդ թվում մեղիա դաշտը և հասարակական կազմակերպությունները՝ ակտիվ համագործակցելով իշխանությունների հետ՝ վերջիններիս կողմից բարձր քաղաքական կամքի դրսևորման արդյունքում: Սույն գործընթացը անվերապահորեն ենթադրում է սպասվելիք բարեփոխումների վերաբերյալ իրազեկման լայն քարոզարշավների կազմակերպումը հանրության համար: Միաժամանակ հիմնվելով միջազգային փորձի վրա, պետք է փաստել, որ անցումային արդարադատության իրականացումը չպետք է լինի ժամանակավրեպ, և դրա մեկնարկման դեպքում այն պետք է հաջորդի երկրում տեղի ունեցած թավշյա հեղափոխությանը: Պետք է փաստել, որ հեղափոխական շարժման և հետհեղափոխական հայաստանյան իրադարձությունների ժամանակահատվածում և՛ զանգվածային լրատվության միջոցները, և՛ քաղաքացիական հասարակության ինստիտուտները օպերատիվ կերպով հանրությանն իրազեկելու ակտիվ աշխատանքներ էին տանում: Այսինքն, ՀՀ-ում առկա են որոշ նախադրյալներ, որպեսզի դիտարկվի անցումային արդարադատության այնպիսի



մեխանիզմների ներդրման հնարավորությունը, որոնք կբացառեն կոռումպացված և մոնոպոլիզացված տնտեսական միջավայր ստեղծելու ռիսկերը, նվազագույնի կհասցնեն ստվերային շրջանառությունը, կնպաստեն անկախ դատական համակարգի ձևավորմանը և իրավունքի գերակայությանը, գողացված ակտիվների ՀՀ վերադարձմանը՝ երկրում առաջնային համարվող պաշտպանության, սոցիալական, առողջապահության, մշակութային և կրթության ոլորտների ինդիքների լուծման նպատակով:

Մյուս կողմից անհրաժեշտ է ընդգծել, որ թոփշբային փոփոխությունների իրականացումը ևս կարող է ծանր հետևանքներ ունենալ պետական մարմինների օրգանիկ գործունեության վրա: Անցումային արդարադատությունը հենց հավասարակշռում է արդարության նպատակով ներդրված բոլոր ինստիտուտների գոյությունը:<sup>67</sup>

Հարկ է նկատել, որ նորանկախ Հայաստանի պատմության մեջ անցումային արդարադատության որոշակի բաղադրիչներ կիրառվել են նաև նախկինում, սակայն այդ ինստիտուտի անվանումը չի դրվել շրջանառության մեջ: Այսպես 1994 թվականին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց «Բռնադատվածների մասին» օրենքը, որը որոշակի փոխհատուցումներ էր նախատեսում Խորհրդային Միության տարիներին քաղաքական հետապնդումների ենթարկված անձանց համար: Ստորև ներկայացվում է անցումային արդարադատության չորս հիմնական մեխանիզմների ներդրման հնարավորությունը ՀՀ-ում:

### 2.2.1 Քրեական արդարադատություն

Հարկ է նկատել, որ ՀՀ նոր իշխանությունների կողմից անցումային արդարադատություն իրականացնելու առաջին քայլերից մեկն է հանդիսանում ՀՀ Ազգային ժողովի կողմից Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի՝ նշանավորմամբ իրականացված համաներումը: Համաներումը տարածվեց 6500 շահառուի վրա:<sup>68</sup>

**«Էրեբունի-Երեվանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին»** օրենքի հողված 2-ում նշվում են համաներման կիրառման շրջանակները: Ըստ այդմ, համաներում հայտարարելու արդյունքում պատժից ազատվեցին առավելագույնը չորս տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձինք, այն անձինք, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չէր

<sup>67</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի վերլուծությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Global-Transitional-Justice-2009-English.pdf>:

<sup>68</sup> Հղումը հասանելի է՝ <https://www.panorama.am/am/news/2018/11/05/%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%B4-%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D6%84/2028943>

կիրառվել, կամ պատժի կրումը հետաձգվել էր, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների դատապարտված անձինք, համաներում հայտարարելու արդյունքում պատժից ազատվեցին առավելագույնը վեց տարի ժամկետով ազատագրված անձինք՝

- 1) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամները,
- 2) օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հղի կանայք,
- 3) օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ երեք կամ ավելի անչափահաս երեխա ունեցող անձինք,
- 4) օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձինք,
- 5) 60 տարին լրացած անձինք:

Համաներում հայտարարելու արդյունքում պատժից ազատվեցին նաև 2016 թվականի հուլիսի 17-ից հուլիսի 31-ը Հայաստանի Հանրապետության ոստիկանության պարեկապահակետային ծառայության գնդի տարածքում հանցագործություն կատարած, վերջիններիս հետ հանցակցած, այդ նպատակով հանցափորձ կամ հանցագործության նախապատրաստություն, հարակից տարածքներում դրանց հետ առնչություն ունեցող հանցագործություն կատարած, ինչպես նաև 2015 թվականի ապրիլի 24-ին զանգվածային անկարգությունների նախապատրաստության համար մեղադրվող անձինք: Օրենքը արգելք է սահմանում նշյալ անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցել, հարուցված քրեական հետապնդման դեպքում դադարեցնել քրեական հետապնդումը կամ նրանց պատժից ազատել, եթե դրա դեմ չեն առարկում պատանդառված և (կամ) ֆիզիկական վնաս կրած տուժողները:

Այս կետը չի տարածվում այդ իրադարձությունների ընթացքում կատարված այն արարքների նկատմամբ, որոնք անմիջականորեն հանգեցրել են մարդու մահվան:<sup>69</sup>

Համաներում հայտարարելու վերաբերյալ օրենքը առաջին քայլն է հանդիսանում անցամային արդարադատություն իրականացնելու գործընթացը մեկնարկելիս:

## 2.2.2 Ճշմարտության որոնման գործընթաց

Ա) 1990-ականների սկզբներին ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծվել է «Ռեպրեսիայից տուժած անձանց արդարացնելու և փոխհատուցում տալու հայտերի քննարկման» **հանձնաժողով**, որը պահանջել էր ԽՍՀՄ պետական անվտանգության կոմիտեից, ներքին գործերի նախարարությունից և այլ մարմիններից (այդ թվում՝ միութենական) արխիվային գործերը և ուսումնասիրության արդյունքներով կազմել **եզրակացություն**, ինչն արդեն բավարար իրավական հիմք էր համարվում անձին արդարացված համարելու համար:

<sup>69</sup> Տես՝ «Էրեբունի-Երեվանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՕ-414-Ն օրենք, ընդունված՝ 01.11.2018թ., հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126291>:

Բ) ՀՀ ԱԺ-ում ստեղծվել է «Մարտի 1-ի» հանձնաժողով, որը, սակայն 2009 թվականին ՀՀ ԱԺ ներկայացրած իր 138 էջից բաղկացած եզրակացությամբ չի պատասխանել այն հարցին, թե ո՞վքեր են իրականում պատասխանատվություն կրում մարտիմեկյան դեպքերի ժամանակ 10 անձանց սպանությունների համար:<sup>70</sup>

Գ) «ԵԼՔ» դաշինքի 2017 թվականի նախընտրական ծրագրում ամրագրված էր «Ճշմարտության հանձնաժողովի ստեղծում, որը կքննի Երրորդ հանրապետության քաղաքական հնչեղություն ունեցող բոլոր աղմկոտ գործերը (Հոկտեմբերի 27, Մարտի 1, ՊՊԾ գնդի գրավում, քաղաքական սպանություններ), այդ գործերով կայացված դատավճիռները և քրեադատավարական այլ որոշումները և խորհրդարանին կներկայացնի առաջարկներ, որոնց կատարումը պետք է նպաստի հանրային համերաշխության հաստատմանը:<sup>71</sup>

### 2.2.3 Փոխհատուցման ծրագրեր

Ա) Դեռևս 1994թ-ին ընդունվել և գործում է «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածի համաձայն, «Բռնադատված է համարվում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող նախկին ԽՍՀՄ այն քաղաքացին, քաղաքացիություն չունեցող անձը կամ օտարերկրյա քաղաքացին, որը խորհրդային կարգերի ժամանակաշրջանում (սկսած 1920 թվականի նոյեմբերի 29-ից) նախկին ԽՍՀՄ-ի տարածքում քաղաքական շարժառիթներով՝

*ա) դատապարտվել է 1961 թվականի ՀՍՄՄ քրեական օրենսգրքի նախկին խմբագրությամբ 65, 67, 69, ինչպես նաև 206/1 հոդվածներով կամ 1927 թվականի ՀՍՄՄ քրեական օրենսգրքի նույն բովանդակությամբ հոդվածներով կամ նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածներով, քաղաքական այլախոհությունը ճնշելու կամ սահմանափակելու նպատակ հետապնդող այլ հոդվածներով և հետագայում արդարացվել է.*

*բ) քրեական պատասխանատվության է ենթարկվել արտադատարանական կարգով.*

*գ) անօրինական կարգով ենթարկվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցների.*

*դ) արտաքսվել է նախկին ԽՍՀՄ տարածքից կամ զրկվել քաղաքացիությունից.*

*ե) արքտրվել կամ արտաքսվել է որպես բռնադատվածի ընտանիքի անդամ:<sup>72</sup>*

Նշյալ օրենքով մի շարք փոխհատուցման տեսակներ են նախատեսված բռնադատվածների համար, այդ թվում՝

- քաղաքացիության վերականգնում,

<sup>70</sup> Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://www.azatutyun.am/a/1823954.html>:

<sup>71</sup> Տեղեկատվությունը

հասանելի է՝

<https://brightarmenia.am/gallery/files/693%20YELO%20dashinki%20cragir.pdf>:

<sup>72</sup> «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 14.06.1994 թ. Ն.Ն-1062-Ի, Հոդված 1

- զինվորական, զիտական և այլ կոչումների ու աստիճանների վերականգնում,
- կենսաթոշակների հատկացում,
- բնակարանային անհատական շինարարության նպատակով սեփականության իրավունքով հողատարածքի հատկացում, որը տրամադրվում է նաև բռնադատվածի առաջին հերթի ժառանգին՝ վերջինիս մահացած լինելու դեպքում,
- շինարարության անցկացման նպատակով արտոնյալ պայմաններով երկարաժամկետ վարկի հատկացում, որը տրամադրվում է նաև բռնադատվածի առաջին հերթի ժառանգին՝ վերջինիս մահացած լինելու դեպքում, և որի համար նախատեսված գումարը սահմանված է ՀՀ պետական բյուջեում առանձին տողով,
- ՀՀ պետական և հանրային բնակարանային ֆոնդի տների բնակարանների սեփականաշնորհման հետ կապված փաստաթղթերի ձևակերպման նպատակով գանձվող վարձից ազատում,
- Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման ընթացքում հավելյալ սերտիֆիկատի իրավունքի տրամադրում,
- Բռնադատվածի սեփականությունը հանդիսացող բռնագրավված գույքի, նրա կողմից վճարված տուգանքի կամ պատիժը կրելու ընթացքում չստացած աշխատավարձի դիմաց միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի տասներկուապատիկ չափով:

Բ) ՀՀ ԱԺ «ԵԼՔ» խմբակցության պատգամավորներ Լենա Նազարյանն ու Ալեն Սիմոնյանը հանդես են եկել օրենսդրական նախաձեռնություններով, որոնցից՝

- **առաջինը 2008-ի մարտի 1-ի և 2-ի արյունալի բախումների ժամանակ մահացած զոհերի ընտանիքների հատուցմանն է վերաբերում,**
- **երկրորդով նախատեսվում է փոխհատուցում տրամադրել 2016 թվականի հուլիսին ոստիկանության ՊՊԾ գնդի գրավման ժամանակ զոհված ոստիկանների ընտանիքներին:**

#### 2.2.4 Լյուստրացիա

Ա) Կոմունիստական ռեժիմի թուլացումից (1988-1989) և տապալումից (1990-1991) հետո Հայաստանում լյուստրացիա անցկացնելու փորձեր են եղել: Ուշագրավ է, մասնավորապես, 2016 թվականին ՀՀ Ազգային Ժողովի խմբակցություններից մեկի՝

«Ժառանգության» կողմից «Գաղտնագերծման մասին» ՀՀ օրենքի նախագիծը<sup>73</sup> ԱԺ-ի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնելու փորձը: Նախագծի հեղինակն էր պատգամավոր Զարուհի Փոստանջյանը, և դրա նպատակն էր գաղտնագերծել մինչև 1991 թվականի սեպտեմբերի 21-ի Հայաստանի անկախության հանրաքվեն ԽՍՀՄ պետական անվտանգության կոմիտեի (ԿԴԵ), ինչպես նաև հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կամ այլ երկրների հատուկ ծառայությունների հետ բացահայտ կամ գաղտնի հիմունքներով աշխատած կամ համագործակցած անձանց: Սակայն «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության առաջարկած այս նախագիծն առաջացրեց ՀՀ քաղաքական իշխող ուժերի և նույնիսկ գիտական վերնախավի մի մեծ հատվածի բուռն քննադատություն:

### **2.3 ՀՀ-ում անցումային արդարադատության հնարավոր կիրառմանն ուղղված առաջարկություններ**

Հայաստանի Հանրապետությունում անցումային արդարադատության իրականացման դեպքում այն պետք է բխի Հայաստանի ներպետական միջավայրից: Անցումային արդարադատությունը Սահմանադրությամբ սահմանված նպատակներին հասնելու միջոց է, որին հնարավոր չէ հասնել այլ կոնվենցիոնալ համակարգերի միջոցով, և դրա կիրառման շրջանակները պետք է հստակ ուրվագծվեն Սահմանադրության ընձեռած հնարավորությունների և երկրի կոնվենցիոն պարտավորությունների շրջանակներում: Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության ժամանակ անհրաժեշտ է ՄԻԵԴ խորհրդատվություններից ակտիվորեն օգտվելու պրակտիկա ձևավորել:

#### **2.3.1. Կիրառման ժամանակահատվածը.**

Անցումային արդարադատության կիրառման ժամանակահատված անհրաժեշտ է սահմանել 1991-2018թթ.-ը՝ մինչև թավշյա հեղափոխությունը ընկած ժամանակահատվածը:

<sup>73</sup>

### **2.3.2. Կիրառման գործերի շրջանակը.**

Անցումային արդարադատության կիրառման ենթակա գործերի շրջանակում անհրաժեշտ է ներառել

Ա) հասարակությունից և պետությունից թալանված գումարների վերաբերյալ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը, այդ թվում գերակա հանրային շահի պատճառաբանությամբ հասարակության և պետության կարիքների համար անձանց սեփականության օտարման վերաբերյալ,

Բ) համապետական ընտրություններում և հանրաքվեներում տեղ գտած զանգվածային ընտրախախտումների վերաբերյալ գործերը, դրանից ածանցյալ գործերը. օրինակ՝ 2008թ.-ի մարտի 1-ի վերաբերյալ,

Գ) կյանքի իրավունքի, խոշտանգումներից զերծ լինելու իրավունքի նկատմամբ ոտնձգությունների վերաբերյալ գործերը:

### **2.3.3. Կիրառման մեխանիզմները.**

#### **ա) Քրեական արդարադատություն**

1. ՀՀ-ում քրեական արդարադատությունը պետք է իրականացվի բացառապես գործող արդարադատության համակարգի միջոցով և անցումային արդարադատության կիրառվող մեխանիզմները պետք է ոչ թե այլընտրանք հանդիսանան գործող համակարգին, այլն փոխլրացնող և աջակցող ֆունկցիա ունենան:
2. Անհրաժեշտ է քննարկել մասնագիտացված դատարանների (օրինակ՝ Կոռուպցիոն հանցագործություններ քննող մասնագիտացված դատարանի, որը կքննի հասարակությունից և պետությունից թալանված գումարների վերաբերյալ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը, ինչպես նաև անկախ հակակոռուպցիոն ունիվերսալ մասնագիտացված մարմնի (օպերատիվ հետախուզություն, հետաքննություն, նախաքննություն իրականացնելու գործառնություններով օժտված) ստեղծման նպատակահարմարության հարցը:
3. Անհրաժեշտ է քննարկել օրենքի ընդունման միջոցով կապիտալի ամնիստիա (մեղքի ընդունման գործարք) կիրառելու և ներպետական մակարդակում գործարք առաջարկելու հարցը կոռուպցիոն հանցագործությունների հետևանքով ապօրինի հարստացածներին՝ առաջնորդվելով և՛ իրավական, և՛ քաղաքական գործընթացներով:
4. Անհրաժեշտ է սահմանել (ավարտված, կասեցված) քրեական գործերի վերանայման և նոր քրեական գործերի հարուցման իրավական հիմքերը:

5. Անհրաժեշտ է անցումային արդարադատության մեխանիզմները ներդնելուց հետո քննարկման առարկա դարձնել անցումային արդարադատության շրջանակներում դատապարտված նախկին հանրային իշխանության ներկայացուցիչների նկատմամբ համաներում տարածելու վերաբերյալ հարցը:

**բ) Ճշմարտության որոնման գործընթաց**

1. Քննարկել «Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովի (Հանձնաժողով) մասին» ՀՀ օրենք ընդունելու նպատակահարմարությունը, որը կիրականացնի սույն զեկույցում առաջարկվող ժամանակահատվածը և գործերի շրջանակը ընդգրկող գործերի արձանագրում, իրականության վեր հանում և ճշմարտության բացահայտում՝ բացառապես փաստագրման եղանակով: Արդյունքում կիրառարակի ինչպես ոլորտային, այնպես էլ ավարտական զեկույցներ, կառաջարկի փոխհատուցումների տրամադրման մեխանիզմներ, ձեռնամուխ կլինի համերաշխության հաստատմանը՝ իրավախախտների և տուժածների հաշտեցմամբ՝ նպաստելով երկրում հանրային համերաշխության մթնոլորտի ձևավորմանը:
2. Օրենքով նախատեսել Հանձնաժողովի անդամների ընտրության հստակ բարաեխղճության չափանիշներ՝ ամրագրելով, որ այդ գործընթացում երաշխավորվելու են մրցակցության և մասնակցության սկզբունքները և ապահովվելու է հանրային համախոհությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը:
3. Օրենքով ստեղծել հասարակական մշտադիտարկման մարմին՝ կազմված մասնագիտացված ՔՀԿ-ներից և անկախ փորձագետներից, որը կիրականացնի Հանձնաժողովի գործունեության ամբողջ ընթացքի հասարակական մշտադիտարկումը՝ ներառելով Հանձնաժողովի ստեղծման, գործունեության իրականացման, որոշումների կայացման և գործունեության ամփոփման գործընթացը:
4. Հանձնաժողովի գործունեության արդյունավետության երաշխավորման նպատակով Օրենքի մշակման փուլից սկսած միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ միջոցներ ձեռնարկել Հանձնաժողովին իր գործունեության համար անհրաժեշտ միջոցներով ապահովելու համար, այդ թվում՝ մարդկային (փորձագիտական) և ֆինանսական ռեսուրսներ ներգրավելով:

**գ) Փոխհատուցման ծրագրեր**

1. Օրենքով նախատեսել փոխհատուցումներ ստանալու համար հիմքեր, այդ թվում տուժողների հստակ շրջանակ՝ ներառելով առանձին անհատների և խմբերի:

2. Կախված տուժողների թիրախային խմբերից՝ նախատեսել փոխհատուցման ծրագրեր, որոնք կներառեն.
  - Նախնական իրավիճակի վերականգնում՝ անձնական ազատության իրավունքի վերականգնում, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի և բարի համբավի անձեռնմխելիության, քաղաքացիության իրավունքի և այլ իրավունքների վերականգնում, սեփական բնակության վայր վերադառնալ, աշխատանքում վերականգնվել, գույքի վերադարձ:
  - կոմպենսացիա՝ ֆինանսական կամ համարժեք նյութական փոխհատուցումներ,
  - ռեաբիլիտացիա՝ անվճար բժշկական, հոգեբանական և այլ վերականգնողական ծառայություններից օգտվելու հնարավորություն:
3. Փոխհատուցումների տրամադրումը դիտարկել որպես համալիր իրականացվող միջոցառումներ և յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի առանձին տողով միջոցներ հատկացնել հիշյալ անձանց կամ խմբերին փոխհատուցում տրամադրելու համար՝ հաշվի առնելով նաև տվյալ տարվա պետական բյուջեի միջոցների հատկացման հնարավորությունը:
4. Խորհրդանշական միջոցներ կիրառել՝ հրապարակային ներողությունների հայցման, հիշատակի օրերի սահմանման, հուշակոթողների և թանգարանի կառուցման, ցուցադրությունների կազմակերպման և այլ միջոցների տեսքով:
5. Կարևոր է նաև կոռուպցիոն հանցագործությունների կատարման միջոցով պետությունից թալանված ակտիվների վերականգնումը և դրանց օգտագործումը հանրօգուտ նպատակներով՝ սոցիալական, կրթական, առողջապահական և այլ ոլորտներում՝ հատուկ այդ նպատակով պետության կողմից ստեղծված հիմնադրամների միջոցով:

**դ) Համակարգային բարեփոխումներ**

1. Քննարկել «Վերթինգային հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք ընդունելու նպատակահարմարությունը՝ նախկինում ոչ բարեխիղճ վարքագիծ դրսևորած պաշտոնյաներին հանրային իշխանությունից (դատական, իրավապահ մարմիններ և այլն) հեռացնելու գործընթաց իրականացնելու համար՝
  - Օրենքով վերթինգ իրականացնելու հիմքը սահմանել իրավիճակային մոտեցումն ու բարեխղճությունը՝ (մասնագիտական կոմպետենցիա+էթիկա+հաշվետվողականություն)-կոռուպցիա՝ երաշխավորելով անհատական իրավունքների պաշտպանությունը,



- օրենքով վերթինգային հանձնաժողովի կողմից քննվող գործերի ընթացքում պետք է կիրառվի անմեղության կանխավարկածը և, համապատասխանաբար, ապացուցման բեռը պետք է կրի վերթինգային մարմինը,
  - օրենքով նախատեսել վերթինգային հանձնաժողովի անդամների ընտրության հստակ բարեխղճության չափանիշներ՝ ամրագրելով, որ այդ գործընթացում երաշխավորվելու են մրցակցության և մասնակցության սկզբունքները և ապահովվելու է հանրային համախոհությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը,
  - օրենքով ստեղծել հասարակական մշտադիտարկման մարմին՝ կազմված մասնագիտացված ՔՀԿ-ներից և անկախ փորձագետներից, որը կիրականացնի վերթինգային մարմնի գործունեության ամբողջ ընթացքի հասարակական մշտադիտարկումը՝ ներառելով դրա ստեղծման, գործունեության իրականացման, որոշումների կայացման և գործունեության ամփոփման գործընթացը:
  - Հակակոռուպցիոն անկախ ունիվերսալ մասնագիտացված մարմնի ստեղծման դեպքում վերթինգային հանձնաժողովի լիազորությունները վերապահել վերջինիս:
2. Արդարադատության ոլորտում իրականացնել համակարգային բարեփոխումներ՝ օրենսդրական, կադրային և այլ ուղղություններով:
  3. Իրականացնել հակակոռուպցիոն համակարգային բարեփոխումներ, ստեղծել հակակոռուպցիոն անկախ ունիվերսալ մասնագիտացված մարմին, որը կզբաղվի կոռուպցիոն գործերի նախաքննությամբ, կոռուպցիայի կանխարգելմամբ, այդ թվում՝ թալանված ակտիվների վերադարձման ուղղությամբ, ինչպես նաև հակակոռուպցիոն կրթությամբ:
  4. Քննարկել Միջազգային քրեական դատարանին անդամակցելու նպատակահարմարությունը: Այս առաջարկությունը բխում է ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններից: Մասնավորապես Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով» Հայաստանի Հանրապետությունը հանձնառություն է ստանձնել վավերացնել 1998 թվականին Հռոմում ստորագրված կանոնադրությունը, այդպիսով իր անդամակցությունը ամրագրելով Միջազգային քրեական դատարանին:
  5. Քաղաքացիական հասարակական կազմակերպությունների (ՔՀԿ) կողմից ստեղծել անցումային արդարադատության կոալիցիա, կամ գործող և զարգացած ՔՀԿ-ների կոալիցիայի կազմում ստեղծել անցումային արդարադատության հարցերով զբաղվող

ՔՀԿ-ների մասնագիտացված հանձնաժողով: Հիշյալ Կոալիցիան/հանձնաժողովը անցումային արդարադատության իրականացման գործընթացում աջակցություն կցուցաբերի կառավարությանը՝ մշակելու անցումային արդարադատության շրջանակներում ընդունվելիք իրավական ակտերի նախագծեր, մշտադիտարկման կենթարկի ճշմարտության և վեթիխզային մարմինների գործունեությունը և կիրականացնի անցումային արդարադատության վերաբերյալ հանրային իրազեկման քարոզարշավներ:

#### **2.3.4. Իրականացման գործընթաց.**

Ա) ՀՀ կառավարության կամ ՀՀ Ազգային Ժողովի կողմից ՀՀ-ում անցումային արդարադատության իրականացման հայեցակարգի նախագծի պատրաստում՝ ներառյալ իրականացման ժամկետները, կիրառման ժամանակահատվածը, կիրառման գործերի շրջանակը, կիրառման մեխանիզմները, հանրային վերասկողության մեխանիզմները ու իրականացման ճանապարհային քարտեզը:

Բ) Հայեցակարգի նախագծի հանրային, քաղաքական և մասնագիտական քննարկումների կազմակերպում, որի արդյունքում քաղաքական և հանրային համախոհության հիման վրա վերջնական փաստաթղթի պատրաստում:

Գ) ՀՀ կառավարության կամ ՀՀ Ազգային Ժողովի կողմից ՀՀ-ում անցումային արդարադատության իրականացման հայեցակարգի հաստատում, որի հիման վրա ՀՀ Ազգային Ժողովի կողմից հայեցակարգից բխող համապատասխան օրենքների ընդունում:

Դ) Անցումային արդարադատության մեխանիզմների իրականացում և հանրային համերաշխության հաստատում:

Ե) Մշտադիտարկում և գնահատում:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

### ԳԼՈՒԽ 1. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

#### 1.1. Անցումային արդարադատության մեխանիզմները և գործիքները հետխորհրդային երկրներում

Անցումային արդարադատության հիմնական մեխանիզմները ներդրվել են հետխորհրդային երկրներում, Արևելյան և Արևմտյան Եվրոպայի երկրներում: Նշյալ գործընթացում Եվրոպայի մաս կազմող երկրները ավելի մեծ քաղաքական կամք են դրսևորել, քան հետխորհրդային երկրները, որոնք զիջում էին պատրաստակամության դրսևորմամբ: Վերոնշյալ երկրներում անկախության ձեռքբերումից հետո շարունակում էին տեղի ունենալ մարդու իրավունքների զանգվածային ռոտահարումներ, իսկ իշխանության կողմից նախաձեռնած ռեժիմի փոքր փոփոխություններն, ընդհանուր առմամբ, թույլ էին տալիս կոմունիստական վերնախավերին շարունակաբար վերարտադրվել:<sup>74</sup>

Թեև «անցումային արդարադատություն» եզրույթը բխում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակներից (Նյուրմբերգյան դատավարություններից), բայց եզրույթի կիրառումը նոր թափ է հավաքել 1980-ականներին Խորհրդային Միության փլուզման կապակցությամբ:<sup>75</sup>

Կոմունիստական ժամանակներից քաղաքական փակ արժեհամակարգ ժառանգություն ստացած հասարակություններում անցումային արդարադատությունը նպատակ ունի բարեփոխումներ իրականացնել տարբեր լյուստրացիոն և նախապես պլանավորված, որոշակի սցենարներով համաձայնեցված ծրագրերի ընդունման, կոմունիստական քաղաքականության հետապնդման, գաղտնի արխիվների հրապարակման և այլ միջոցների ներգործությամբ:

Ստորև կանդրադառնանք հետխորհրդային, Արևելյան և Արևմտյան Եվրոպայի յուրաքանչյուր երկրում կիրառված մեխանիզմին և գործիքներին առանձին-առանձին:

<sup>74</sup>Տե՛ս Լավինիա Ստանի հետևյալ աշխատությունը՝ “Transitional Justice in Eastern Europe and the former Soviet Union: Reckoning with the communist past”, Lavinia Stan, 2009թ., էջ 1-5: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.crcpress.com/Transitional-Justice-in-Eastern-Europe-and-the-former-Soviet-Union-Reckoning/Stan/p/book/9780415590419#googlePreviewContainer>:

<sup>75</sup>Տե՛ս Լավինիա Ստանի հետևյալ աշխատությունը՝ “Determinants of Post-Communist Transitional Justice: An Overview”, 2014թ., էջ 17: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.mtholyoke.edu/sites/default/files/global/docs/Stan%20paper.pdf>:

### 1.1.1. Լիտվայի Հանրապետություն

Լիտվայում, Լատվիայում, Էստոնիայում խորհրդային ճնշումների դեմ հաճախ էին իրականացվում հասարակական ընդվզումներ: Որոշ հանգամանքներով պայմանավորված՝ անցումային արդարադատության ներդրումը Լիտվայում ավելի վաղ է սկսվել: Անցումային արդարադատության հիմնական գործիքների ներդրումը պայմանավորված էր հասարակական բարձր իրավագիտակցությամբ, կոմունիստական ռեժիմի զոհերի, անձանց սեփականության վերականգնման անհրաժեշտությամբ, ազգային փոքրամասնությունների իրավունքների խախտումների մասին բարձրաձայնմամբ:

#### 1. Քրեական արդարադատություն

**Կոմունիստական հանցագործությունների գնահատման վերաբերյալ ստեղծվեց Վիլնյուսի միջազգային հանրային տրիբունալը**, որը 2000թ-ի հունիսից մինչև սեպտեմբեր նիստեր էր հրավիրում:<sup>76</sup> Միանշանակ կարող ենք փաստել, որ վերջինիս կազմավորումը հետխորհրդային կոմունիստական երկրներում անցումային արդարադատության ձևավորման համար կարևոր գաղափարական քայլ էր: Լիտվայի, Լատվիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների (այսուհետ՝ ԱՄՆ) Սլովակիայի, Հունգարիայի, Ալբանիայի, Ուկրաինայի, Բուլղարիայի, Էստոնիայի փորձագետների շնորհիվ դատարանը հաստատեց, որ 1941-1953թթ.. երկրում տիրող կոմունիստական ռեժիմի պատճառով Լիտվայում շուրջ 132,000 մարդ է մահացել, այդ թվում՝ 50.000 կին և 39,000 երեխան, որոնցից 29,000-ը մահացել է սովից, հիվանդությունից, ցրտից և ծանր աշխատանքից: 1940-1957թթ.. ընթացքում 1000 մարդ է մահապատժի ենթարկվել, և ավելի քան 20,000 մարդ սպանվել է խորհրդային զինված ուժերին<sup>77</sup> դիմադրություն ցույց տալու ժամանակ 1944-1953թթ-ի ընթացքում: Կոմունիստական ռեպրեսիայի դեմ Լիտվայից 444,200 մարդ փախուստի է դիմել դեպի Արևմուտք՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում: Այս տրիբունալն էր, որ առաջին անգամ հաստատեց, որ բնակչության ընդհանուր կորուստները կազմել են 780,922 մարդ կամ 3 միլիոն ընդհանուր բնակչության շուրջ մեկ քառորդը:

Քրեական արդարադատության իրականացման օրինակ է, երբ 1991թ. հուլիսի 31-ին Մեդինյանայի սահմանային հենակետում Ռիգայից ժամանած ռուսական ոստիկանության հատուկ ուժերի կողմից տեղի ունեցավ յոթ զինվորականների սպանություն:

<sup>76</sup>Տե՛ս “Transitional Justice in a Post-Soviet Nation: The case of Lithuania” աշխատությունը, էջ 4: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://old.cipas.gov.tw/igpa.nat.gov.tw/public/Attachment/782810245671.pdf>:

<sup>77</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.globalsecurity.org/military/world/war/lithuanian-soviet.htm>:

Մարդասպաններից մի քանիսի ինքնությունը Լիտվայի դատարանը հրապարակայնորեն ճանաչեց: Հետագայում այս գործով ներգրավվեցին նաև Ռուսաստանը, Բելառուսը և հետխորհրդային մի շարք այլ հանրապետություններ: Արդյունքում Մոսկվայից ժամանած ռուս կոմունիստներից միայն երկու բարձրաստիճան պաշտոնյա դատապարտվեց հենց Լիտվայում:<sup>78</sup>

## 2. Հշմարտության որոնման գործընթաց

Լիտվայում **Նացիստների և խորհրդային օկուպացիոն ռեժիմների հանցագործությունների գնահատման նպատակով միջազգային հանձնաժողովի** ստեղծմամբ 1998-2007թթ. սկսվեցին հանցագործությունների մասսայական բացահայտումները: Այն ստեղծվել էր Լիտվայի նախագահի կողմից և դրանց անդամակցում էին մասնագետներ և հետազոտողներ Լիտվայից, Իսրայելից, Միացյալ Թագավորությունից, Գերմանիայից և Միացյալ Նահանգների հրեական համայնքից: Հանձնաժողովի նպատակներից էր աջակցել պատմական արդարության հաստատմանը, հատկապես ցեղասպանության և Հոլոքոստի հետ կապված: Այդ նպատակով 2000թ-ին ընդունվեցին Միջազգային հանձնաժողովների կանոնակարգերը՝ Լիտվայում նացիստների և խորհրդային օկուպացիոն ռեժիմների հանցագործությունների գնահատման համար:

1988թ-ի հուլիսին Սահուդիսի ժողովրդավարական շարժման կողմից ստեղծվեց **Ստալինիզմի հանցագործությունների հետաքննության հանձնաժողովը:**

1992թ-ին Լիտվայում ստեղծվեց Ցեղասպանության հարցերով պետական կենտրոնը: 1997թ-ին ընդունվեց «Ցեղասպանության հետազոտման և Լիտվայի բնակչության դիմադրության կենտրոնի մասին» օրենքը, որի արդյունքում Ցեղասպանության հարցերով պետական կենտրոնը 1998թ-ին վերակազմավորվեց Լիտվայի ներկայիս **Ցեղասպանության և դիմադրության հետազոտությունների կենտրոնի:**<sup>79</sup>

## 3. Փոխհատուցման ծրագրեր

1990թ-ին ընդունվեց «Օկուպացիոն ռեժիմին դիմակայելու համար բռնված անձանց վերականգնման մասին» օրենքը<sup>80</sup>, 1991թ-ին՝ «Քաղաքացիների սեփականության իրավունքի

<sup>78</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.globalsecurity.org/military/world/war/lithuanian-soviet.htm>:

<sup>79</sup>Տե՛ս “Transitional Justice in a Post-Soviet Nation: The case of Lithuania” աշխատությունը, էջ 4: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://old.cipas.gov.tw/igpa.nat.gov.tw/public/Attachment/782810245671.pdf>:

<sup>80</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/personal-rehabilitation/lithuania\\_rehabilitation\\_1990.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/personal-rehabilitation/lithuania_rehabilitation_1990.pdf):

վերականգնման մասին» անշարժ գույքի օրենքը,<sup>81</sup> 1997թ-ին՝ «Լիտվայի Հանրապետության ժողովրդի, որը զոհեր է տվել 1939-1990թթ., իրավական կարգավիճակի» մասին, «Լիտվայի Հանրապետության քաղաքացիների անշարժ գույքային իրավունքների վերականգնման մասին» և «Զինված դիմադրության մասնակիցներին պետական աջակցություն տրամադրելու մասին» օրենքները, 1998թ-ին՝ «1940-1990թթ. դիմադրության ժամանակ տուժած ընտանիքներին պետական աջակցության մասին» օրենքը:

Հարկ է ընդգծել, որ 1994թ-ին Լիտվայի կառավարությունն ընդունեց օրենք, որը հատուկ պետական **կենսաթոշակների տեսքով փոխհատուցման** տրամադրում է նախատեսել իրավախախտման զոհերի հետևյալ 9 դասակարգերի համար՝

- 1991թ-ի հունվարի 11-13-ը տեղի ունեցած դեպքերում մասամբ կամ ամբողջովին հաշմանդամ դարձած անձինք,
- նախկին քաղբանտարկյալներ և աքսորյալ անձինք,
- 1940-1990թթ. դիմադրության շարժման մասնակիցներ,
- երկրորդ համաշխարհային պատերազմի համակենտրոնացման ճամբարներից տուժածներ,
- հակաիշխանական կոալիցիայի մաս կազմող պետությունների բանակներում ծառայած անձինք,
- Չեռնոբիլի աղետի մասնակիցներ,
- 1991-1945 թվականներին Խորհրդային զինված ուժերում ծառայություն մատուցելու հետևանքով հաշմանդամ դարձած անձինք,
- Աֆղանստանում զինծառայության ուղարկված անձինք,
- 1941 թվականի հունվարի 10-ին ԽՍՀՄ-ի և նացիստական Գերմանիայի միջև բնակչության փոխանակման վերաբերյալ ձեռքբերված համաձայնությամբ փոխանակված անձինք:

Այսպիսով, որպեսզի զոհը օգտվեր խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից, անխուսափելիորեն անհրաժեշտ էր դասակարգել տուժած անձանց:

Պետական կենսաթոշակներ հատկացվել են նաև այն անձանց ընտանիքներին, ովքեր սպանվել էին 1991թ.-ի հունվարին ռուսական զորքերի՝ Վիլնյուսի հեռուստակայանի հարձակման հետևանքով:

Կենսաթոշակների չափը կախված էր նշյալ կատեգորիաներից որևէ մեկին պատկանելուց: Կենսաթոշակը հաշվարկելիս կապ ուներ նաև անաշխատունակության

---

<sup>81</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝  
[http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/restitution-property/lithuania\\_restitution\\_property\\_1997.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/restitution-property/lithuania_restitution_property_1997.pdf)

աստիճանը: Միջին պետական փոխհատուցումները տատանվում էին հիմնական պետական կենսաթոշակի մինչև ութսունապատիկի չափով, որն ընթացիկ փոխարժեքով կազմում էր մոտ 530 ԱՄՆ դոլար, որն այդ ժամանակ միջին աշխատավարձից մի փոքր ցածր էր:

Բացի այդ, փոխհատուցումների վերաբերյալ Լիտվայի սահմանադրական դատարանն ընդունել է հետևյալ որոշումները.

- 1994թ-ին ընդունված որոշում քաղաքացիների՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման մասին:
- 1994թ-ին ընդունված որոշում քաղաքացիների՝ բնակելի տների նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման մասին,
- 2003թ-ին ընդունված որոշում՝ սեփականության իրավունքի վերականգնման մասին,
- 2004թ-ին ընդունված որոշում՝ միանվագ նպաստների վճարման կարգի վերաբերյալ,
- 2005թ-ին ընդունված որոշում՝ անշարժ գույքի վարձավճարների վճարման ժամկետների երկարաձգման մասին որոշում:

2000թ-ին ընդունվեց նաև «ԽՍՀՄ-ի կողմից ճնշվելու հետևանքով պատճառված վնասի հատուցման մասին» օրենքը<sup>82</sup>:

Հարկ է նշել, որ փոխհատուցումների տրամադրման գործընթացին ուղղված օրենսդրական բարեփոխումներն այն առաջին քայլերն էին, որոնք սոցիալական յուրաքանչյուր խմբի համար նախատեսում էին հատուցումներ և խախտված իրավունքների վերականգնում:

Այս մոտեցումն ինքնին արտահայտում է Լիտվայի պետական գործիչների քաղաքական կամքը հատուցումների գործընթացում, քանի որ փոխհատուցումներն առաջնահերթ դիտելը հանգեցնում է քաղաքացիների ներգրավման բարձրացմանը, իրավաչափ և կոռուպցիայից զերծ տնտեսական գործունեություն իրականացնելուն:

#### **Հրապարակային ներողության հայցում**

Լիտվայի նախագահ Ալգիդրաս Բրազաուսկասը հրապարակային ներողություն հայցեց հրեա ժողովրդից:<sup>83</sup>

#### **4. Համակարգային բարեփոխումներ**

##### **Լյուստրացիա**

---

<sup>82</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/compensations/lithuania\\_compensation\\_damages.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/compensations/lithuania_compensation_damages.pdf):

<sup>83</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/public-apologies/lithuania\\_Brazauskas\\_apologies\\_1995.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/public-apologies/lithuania_Brazauskas_apologies_1995.pdf):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) 2004թ.-ին *Միդարբասը և Ղզիաուտասն ընդդեմ Լիտվայի Հանրապետության* գործով կայացրել է որոշում, որով հաստատել է, որ ՊԱԿ<sup>84</sup>-ի (ԿԴԵ) աշխատակիցների գործունեությունը հակասում է Լիտվայի սահմանադրությամբ երաշխավորված սկզբունքներին և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ Կոնվենցիա):<sup>85</sup> Այս որոշումը բացառիկ նշանակություն ունեցավ Լիտվայի Հանրապետությունում, քանի որ սա լուստրացիայի դասական օրինակ էր, **երբ պետական ճնշում գործադրող ապարատում՝ այն էլ ՊԱԿ-ում, երկար տարիների փորձ ունեցող աշխատողներին համակարգից հեռացրեցին՝ մատնանշելով նրանց կատարած իրավախախտումները:** Այս որոշմամբ ՄԻԵԴ-ն արդեն ցույց է տվել, թե որքան ռեալ կարող է գործել անցումային արդարադատության այս գործիքը:

Լիտվայում լուստրացիան գործել է երեք օրենքի մշակման և ընդունման արդյունքում.

- 1991թ-ին ընդունված ՊԱԿ աշխատակիցներին և տեղեկատվություն տիրապետող այլ անձանց Կառավարությունից հեռացնելու մասին N°418 դեկրետ և 1998թ-ին ընդունված օրենք՝ նախկին ՊԱԿ-ի աշխատակիցների սահմանափակման վերաբերյալ.
  - 1999թ-ին ընդունված օրենքը «ԽՍՀՄ պետական անվտանգության կոմիտեի և այս կազմակերպության աշխատակազմի ընթացիկ գործունեության գնահատման» մասին և օրենքը «Նախկին ԽՍՀՄ-ի հատուկ ծառայությունների հետ զաղտնի համագործակցության թույլտվություն ստացած անձանց գրանցման, խոստովանման և պաշտպանության մասին» օրենքը.
- 2010թ-ին ընդունված օրենք, որը թույլ էր տալիս հրապարակել ՊԱԿ-ին վերաբերող փաստաթղթերը:

*Լյուստրացիան իրականացվում էր հետևյալ կերպով.*
- Ռազմավարական կարևորագույն ինստիտուտներում նման անձանց պաշտոնավարման արգելք՝ ուղղված պետական անվտանգության ապահովմանը,
- ՊԱԿ-ի հետ նախկինում զաղտնի կերպով համագործակցած և այդ մասին խոստովանած ավելի քան 1500 անձանց ինքնության բացահայտում և պաշտպանություն օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից՝ վերջիններիս նկատմամբ շանտաժ և մանիպուլյացիա իրականացնելու դեպքերի վեր հանում, որի արդյունքում խոչընդոտվեց

<sup>84</sup>Սույն զեկույցում ՊԱԿ՝ Պետական անվտանգության կոմիտե, ռուսերեն անվանումը՝ Комитет государственной безопасности, հավապումը՝ ԿԴԵ:

<sup>85</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/case-law/Chamber%20judgment%20Sidabras%20and%20Dziautas%20v.%20Lithuania%20%2027.07.04.pdf>:



նախկին ՊԱԿ-ի ողջ ցանցի օգտագործումը, և զգալիորեն նվազեցին նրանց կողմից նախկին գործընկերների հետ շփման մեջ մտնելու ռիսկերը.

- հասարակությանը իրազեկում՝ ՊԱԿ համակարգի և գործելաոճի մասին, մասնավորապես, օրենսդրական փոփոխությունների արդյունքում Ցեղասպանության և դիմադրության հետազոտական կենտրոնի կողմից առկա բոլոր ՊԱԿ փաստաթղթերի հրապարակում:

### 1.1.2. Լատվիայի Հանրապետություն

#### 1. Քրեական արդարադատություն

Պետք է նշել, որ Լատվիայում ավելի սեղմ ժամկետներում տեղի ունեցան անցումային արդարադատության մաս կազմող քրեական արդարադատության կամ արդարադատության ինստիտուտների ներդրումն ու գործընթացների իրականացումը: Դա պայմանավորված էր ակտիվ քաղաքացիների կողմից նախորդ քաղաքական ռեժիմի մեղավորների մասին բարձրաձայնելով, նրանց մատնացույց անելով: Նշյալը վերաբերում է նրանց, ովքեր դիկտատորներ էին կամ ռազմական ղեկավարներ, բանակային և կուսակցական խմբեր, տոտալիտար կամ ավտորիտար ռեժիմի արժեհամակարգը կրող պետական պաշտոնյաներ, ինչպես նաև զինձառայողներ, ոստիկանության ծառայողներ: Մեկ այլ պատճառ է այն, որ Լատվիայում գլխավոր դատախազի ռազմավարությունը և դատարանի որոշումները նմանատիպ պատմական հանցագործությունների առումով առանձնահատուկ տարբերվում էին Լիտվայի և Էստոնիայի ներքին դատարանների կայացրած որոշումներից, թեև օրենսդրական բարեփոխումները երեք երկրներում էլ գրեթե նույնն էին:<sup>86</sup> Անցումային արդարադատություն իրականացնելիս լատվիացի դատավորները և դատախազները նպատակ ունեին կոմունիստներին, նախկին պաշտոնատար անձանց և պատերազմի վետերաններին զրկել պետական պաշտոններ զբաղեցնելու հնարավորությունից: Այդ իսկ պատճառով Լատվիայում անցումային արդարադատությունը իրականացվել է հիմնականում քրեական արդարադատության միջոցով:

<sup>86</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.tandfonline.com/eprint/kGCVEM9b3PH6KWVtXcvb/full> :

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Լատվիայում կիրառվել են վերստուգման և վերսկսման գործընթացներ, որոնք անցումային արդարադատության մինչ օրս հաճախակի կիրառվող մեխանիզմներ են համարվում:<sup>87</sup>Վերստուգման գործընթացը համալիր ստուգողական, փնտրողական գործողությունների շարք է, որի արդյունքում հաստատվում է կատարված ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու փաստը: Այնուհետև, այս գործընթացին հաջորդում է նախկինում հավաքագրված տեղեկատվության հիման վրա ընթացք չստացած վարույթների վերաբացման գործընթացը: Այսպես, Լատվիայում անկախությունից անմիջապես հետո՝ 1991թ.-ին Գերագույն խորհուրդը հանձնարարեց արդարադատության նախարարին ուսումնասիրել խորհրդային մի շարք քաղաքական կառույցների, պետական կազմակերպությունների անօրինական գործունեությունը: 1991թ. սեպտեմբերի 10-ին Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց այդ կազմակերպությունների լուծարման մասին՝ ճանաչելով դրանք որպես հակասահմանադրական:<sup>88</sup>

## 3. Փոխհատուցումներ

Լատվիայի պետական մարմինների կողմից կիրառվող անցումային արդարադատության գործիքների մաս կազմող հատուցումները բաժանված էին երեք կատեգորիայի: Հետաքրքրական է, որ յուրաքանչյուր մեխանիզմի կիրառումը հիմք է դրել նոր օրենքի ստեղծման, որով սահմանվել են խորհրդային շրջանում անձանց խախտված իրավունքները: **Օրինակ, 1940թ. հետո քաղաքացիներից վերցված և պետականացված գույքը համապատասխան սեփականատերերին վերադարձի մասին իրավական ակտեր ընդունվեցին:**<sup>89</sup>

Փոխհատուցման կատեգորիաները հետևյալն էին.

### **Վերականգնողական փոխհատուցում**

Այն ենթադրում էր գույքի վերադարձ և իրավունքների վերականգնում: Այս իրավունքների վերականգնման շրջանակում 1991թ. հոկտեմբերի 30-ին ընդունվել են «Իրավատերերին անշարժ գույքի վերադարձի» (the Law on the Return of Real Estate to the Legitimate

<sup>87</sup>Տե՛ս՝ Kritz, The Dilemmas of Transitional Justice (above n. 52), p. xxiv; UN Secretary-General, The Rule of Law and Transitional Justice (above n. 29), para 52:

<sup>88</sup>Տե՛ս՝ “TRANSITIONAL JUSTICE MECHANISMS APPLIED BY LATVIA IN ITS TRANSITION FROM COMMUNIST REGIME”, INGA ŠVARCA, 2012թ., էջ 74: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/rs/bitstream/10086/22214/1/HJlaw0400000590.pdf> :

<sup>89</sup>Տե՛ս՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/restitutionproperty/latvia\\_land\\_restitution\\_1992.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/restitutionproperty/latvia_land_restitution_1992.pdf) :

Owners) և «Լատվիայի Հանրապետությունում անշարժ գույքի ապապետականացման մասին» օրենքները (the Law on Denationalisation of Real Estate in the Republic of Latvia):<sup>90</sup> Առաջին օրենքը երաշխավորեց, որ 1940-1980թթ. վերջի դրությամբ պետության կողմից վերցված և առանց փոխհատուցման մնացած անշարժ գույքը վերադարձվեր նախկին սեփականատերերին կամ նրանց իրավահաջորդներին: Երկրորդ օրենքը սահմանեց դենացիոնալիզացիայի<sup>91</sup> և ապապետականացման պայմանները և կարգը, փոխհատուցման ձևերը և առկա վարձակալների սոցիալական երաշխիքները:

### **Ռեաբիլիտացիայի տեսքով փոխհատուցում**

Այն վերաբերում էր ԽՍՀՄ փլուզումից առաջ կոմունիստական տոտալիտար ռեժիմի ժամանակ քաղաքական ճնշման ենթարկված անձանց վերականգնման հարցերին: 1988թ.-ի նոյեմբերի 2-ին Լատվիայի Սովետական սոցիալիստական հանրապետության (այսուհետ՝ ՍՍՀ) նախարարների խորհուրդը որոշում<sup>92</sup> ընդունեց 1949թ. Լատվիայի ՍՍՀ քաղաքացիների վարչական վտարման մասին, որի արդյունքում սկսվեցին գործողություններ իրականացվել վտարված անձանց վերաբնակեցման ուղղությամբ: Այնուհետև, ընդունվեցին օրենքներ, որոնց համաձայն, ՊԱԿ-ի կողմից քաղաքական ճնշումների ենթարկված անձանց հետ համագործակցության հաստատումը, ինչպես նաև քաղաքական, իրավական և բարոյական տեսանկյունից իրավունքների վերականգնումը կհանգեցներ սոցիալական համերաշխության:

### **Կոմունիստական**

«Կոմունիստական և նացիստական ռեժիմի կողմից քաղաքական բռնաճնշումների ենթարկված անձանց կարգավիճակի մասին» օրենքի համաձայն՝ քաղաքական ռեպրեսիայի ենթարկված անձինք իրավունք ունեն կորցրած գույքի փոխհատուցում պահանջել:<sup>93</sup>

Այնուհետև, մասնավորեցնում է, որ այդ փոխհատուցումը պետք է լինի դրամական տեսքով և ունենա ֆինանսական արժեք: Սակայն հետագայում կոմպենսացիան ենթարկվեց փոփոխությունների: Այս ձևով փոխհատուցման տրամադրումը լայն իմաստ ստացավ: Այն

---

<sup>90</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունում՝ “TRANSITIONAL JUSTICE MECHANISMS APPLIED BY LATVIA IN ITS TRANSITION FROM COMMUNIST REGIME”, INGA ŠVARCA, 2012թ., էջ 80: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/rs/bitstream/10086/22214/1/HJlaw040000590.pdf> :

<sup>91</sup>Դենացիոնալիզացիան թարգմանաբար նշանակում է ապագայնացում՝ ազգային բնույթից, առանձնահատկություններից զրկելու գործընթացը, ազգայնացրած գույքը նախկին սեփականատերերին վերադարձնելը:

<sup>92</sup>Տե՛ս “TRANSITIONAL JUSTICE MECHANISMS APPLIED BY LATVIA IN ITS TRANSITION FROM COMMUNIST REGIME”, INGA ŠVARCA, 2012թ., էջ 81: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/rs/bitstream/10086/22214/1/HJlaw040000590.pdf> :

<sup>93</sup>Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած հետևյալ որոշումը՝ ECtHR, Kononov v. Latvia, [GC] Judgment (above n. 91), para. 38:

ընկալվեց որպես ցանկացած տնտեսական գնահատելի վնասի համար համապատասխան փոխհատուցում, որը համաչափ և համապարփակ է անձի նկատմամբ իրականացված խախտմանը: Բացի այդ, յուրաքանչյուր գործի հանգամանքներ հաշվի են առնվում լրացուցիչ: Նման վնասը ներառում է ֆիզիկական կամ հոգեկան վնաս, կորցրած հնարավորություններ, նյութական վնասներ, բարոյական վնաս, իրավական, բժշկական, հոգեբանական և սոցիալական ծառայությունների արժեք ներառող վնասներ:

### **Նորհրդանշական միջոցների կիրառում**

Վերոնշյալի ներքո հասկանում ենք հուշարձանների, թանգարանների, հիշատակման օրերի ամրագրման և առհասարակ հասարակության ուշադրությունը գրավող տարբեր եղանակներով ռեպրեսիվ ռեժիմի դեմ պայքարի և խախտված իրավունքների բարձրաձայնումը: Այսպես, 2009թ. ապրիլի 2-ին **Եվրոպական պառլամենտը ընդունեց Եվրոպական խղճի և տոտալիտարիզմի մասին բանաձև, որով օգոստոսի 23-ը սահմանվեց որպես Եվրոպայի ավտորիտար ռեժիմների գոհերի հիշատակի օր:** Լատվիան ընդունել է օգոստոսի 23-ը որպես հիշատակի օր և անդամակցում է «Եվրոպական համերաշխության և հիշատակման միջազգային ցանց» կազմակերպությանը:

«Կոմունիստական և նացիստական ռեժիմի կողմից քաղաքական բռնաճնշումների ենթարկված անձանց կարգավիճակի մասին» օրենքի ընդունմամբ՝ **պետությունը պարտավոր էր քաղաքական ճնշման ենթարկված անձանց մասին ճակատագրական պատմական հետազոտություններ իրականացնել:**

1993թ. ստեղծվեց **Լատվիայի օկուպացիայի թանգարանը**, որը հենց նախկին գործող ռեժիմը ամբողջապես դատապարտող հուշահամալիր էր: Հենց այս թանգարանում իրականացված հետազոտությունների միջոցով բացահայտվեցին տուժած լատվիացիների ինքնությունները:

## **4. Համակարգային բարեփոխումներ**

### **Լյուստրացիա**

Առհասարակ լյուստրացիան լայնորեն կիրառված մեխանիզմ էր հետխորհրդային երկրներում: 1991թ.-ին անկախության ձեռքբերումից հետո լյուստրացիան Լատվիայի կողմից կիրառված անցումային արդարադատության առաջին գործիքներից էր:<sup>94</sup> Այն հիմնականում

<sup>94</sup>Տե՛ս “TRANSITIONAL JUSTICE MECHANISMS APPLIED BY LATVIA IN ITS TRANSITION FROM COMMUNIST REGIME”, INGA ŠVARCA, 2012թ., էջ 73: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/rs/bitstream/10086/22214/1/HJlaw0400000590.pdf> :

դրսևորվել է Կոմունիստական կուսակցությանը և Լատվիայի ՊԱԿ-ին իրենց գործունեությունն իրականացնելու արգելքով: Լատվիայում լուստրացիան կիրառվել է կոնկրետ օրենքներով՝ ուղղված կոմունիստներին, ՊԱԿ-ի գործակալներին և նրանց կողմնակիցների մեկուսացմանը՝ նոր իշխանությունում:

1991թ. օգոստոսի 24-ին Լատվիայի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Լատվիայում ՊԱԿ-ի լուծարման մասին՝<sup>95</sup> հայտարարելով ՊԱԿ-ի և նրա տարածքային ստորաբաժանումների, ներառյալ՝ ՊԱԿ-ի Լատվիայի քրեական գործերով կենտրոնական մասնաճյուղի գործունեությունը Լատվիայի ժողովրդի շահերին դեմ լինելու մասին:

«Պաշտամենտական ընտրություններ անցկացնելու մասին» օրենքի 5-րդ մասի և «Քաղաքային խորհրդի, համայնքի ավագանու և ընտրատարածքային ընտրությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «Լատվիայի ՊԱԿ-ի նախկին աշխատակիցներին արգելվեցին Լատվիայի խորհրդարանական և համայնքային ընտրություններին մասնակցել»<sup>96</sup>: Օրինակ, Լատվիայի Խորհրդային սահմանապահ զորքերի նախկին սպա Ջոնիս Ադամսոնսի 2002թ.-ին արգելվեց առաջադրվել պատգամավորի թեկնածու խորհրդարանական ընտրությունների ժամանակ, քանի որ նրա նախկին պաշտոնը ազգային դատարանների կողմից որակվել էր որպես ՊԱԿ-ում զբաղեցված պաշտոն:<sup>97</sup> Մեկ այլ ցայտուն օրինակ է 1998թ.-ին Լատվիայի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից Տատյանա Յդենկայի խորհրդարանական ընտրություններին թեկնածություն դնելը օրենսդրական պահանջներին հակասող որակելը, քանի որ 1991թ.-ի հունվարի 13-ից հետո նա ակտիվ մասնակցություն էր ունեցել Կոմունիստական կուսակցության գործունեությանը:<sup>98</sup>

### Վեթիկնգ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անցումային շրջանում մի շարք երկրներ էին ընդօրինակել վեթիկնգի մեխանիզմը: Լատվիայում այս գործընթացը սկսվեց անմիջապես անկախության հռչակումից հետո: 1991թ.-ի օգոստոսի 23-ին Լատվիայի Գերագույն

<sup>95</sup>Տե՛ս «TRANSITIONAL JUSTICE MECHANISMS APPLIED BY LATVIA IN ITS TRANSITION FROM COMMUNIST REGIME», INGA ŠVARCA, 2012թ., էջ 74: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/rs/bitstream/10086/22214/1/HJlaw0400000590.pdf> :

<sup>96</sup>Տե՛ս «TRANSITIONAL JUSTICE MECHANISMS APPLIED BY LATVIA IN ITS TRANSITION FROM COMMUNIST REGIME», INGA ŠVARCA, 2012թ., էջ 74: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/rs/bitstream/10086/22214/1/HJlaw0400000590.pdf> :

<sup>97</sup>Տե՛ս «Ineta Ziemele, E.U. Network of Independent Experts of Fundamental Rights, Report on the Situation of Fundamental Rights in Latvia in 2003 (CFR-CDF.repLV.2003, January 2004)» զեկույցը, էջ 26:

<sup>98</sup>Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետևյալ որոշումը՝ «Ždanoka v. Latvia, Appl. No. 58278/00, [GC] Judgment of 16 March 2006; ECtHR, Ždanoka v. Latvia, Appl. No. 58278/00, Judgment of 17 June 2004» :

խորհուրդը որոշում<sup>99</sup> է կայացրել, որով **հակասահմանադրական է ճանաչել Լատվիայի կոմունիստական կուսակցության (CPL) և Խորհրդային Միության Կոմկուսի տարածաշրջանային մասնաճյուղի (CPSU) գործունեությունը**: 1991 թ.-ի օգոստոսի 24-ին Գերագույն խորհուրդն ընդունեց «Որոշակի քաղաքական և հասարակական կազմակերպությունների վերացման» մասին որոշում, որով **դադարեցվեց Կոմունիստական կուսակցության և այն բոլոր կառույցների գործունեությունը, որոնք առնչվում էին Լատվիայի ՍՄՀ-ին**, մասնավորապես, անմիջապես դադարեցվեցին «Աշխատանքային ժողովուրդների միջազգային ճակատ», «Աշխատանքային հավաքականների միասնական խորհուրդ», «Պատերազմի և աշխատանքի վետերանների կազմակերպություն» և «Երիտասարդ կոմունիստական լիգա» կառույցների գործունեությունը:<sup>100</sup> Այսպես քաղաքական այս ուժերում գործող քաղաքական գործիչները դադարեցրին իրենց գործունեությունը:

### **Արգելքների սահմանում**

Լատվիայում **արգելքների սահմանումը օրենսդրական էր բացառապես հիմք ընդունելով՝ արդյո՞ք տվյալ անձը կազմել է խորհրդային ճնշող ռեժիմի մաս, թե՞ ոչ**: Այդպես անձնավորված տարբերակումների հիմքով մի շարք անձանց, խմբավորումներին, կազմակերպություններին, հատկապես՝ ՊԱԿ-ի նախկին աշխատակիցներին, քաղաքական էլիտայի անդամներին մասսայական **արգելվեց դառնալ դատավորներ, մասնակցել կարևորագույն ընտրություններին, զբաղեցնել քաղաքացիական ծառայողի պաշտոններ**:<sup>101</sup>

#### **1.1.3. Էստոնիայի Հանրապետություն**

Խորհրդային կառավարման ժամանակ իշխանությունը մոնոպոլիզացրել էր Էստոնիան: Որպեսզի խորհրդային իշխանությունները չկորցնեին իրենց տոտալիտար կառավարումը, նրանք ամեն կերպ ջանում էին կաթվածահար անել մի կողմից քաղաքացիների իրավագիտակցությունը, մյուս կողմից՝ Էստոնական քաղաքական, պետական և հասարակական գործիչների ակտիվ գործունեությունը: Էստոնիայում խորհրդային համակարգի

<sup>99</sup>Տե՛ս “TRANSITIONAL JUSTICE MECHANISMS APPLIED BY LATVIA IN ITS TRANSITION FROM COMMUNIST REGIME”, INGA ŠVARCA, 2012թ., էջ 74: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/rs/bitstream/10086/22214/1/HJlaw0400000590.pdf>:

<sup>100</sup>Տե՛ս “TRANSITIONAL JUSTICE MECHANISMS APPLIED BY LATVIA IN ITS TRANSITION FROM COMMUNIST REGIME”, INGA ŠVARCA, 2012թ., էջ 74: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/rs/bitstream/10086/22214/1/HJlaw0400000590.pdf>:

<sup>101</sup>Տե՛ս “Law on Judiciary, likums “Par Tiesu varu”” օրենքը՝ ստորագրված 1992թ. դեկտեմբերի 15-ին, ուժի մեջ է մտել 1993թ. հունվարի 1-ին:

վիճակներն անմիջապես հետևեց անցումային շրջանը: Հենց այս շրջանում Էստոնիայում առաջացավ նոր անկախ էլիտան, որը սկսեց կոչերով և հայտարարություններով հանդես գալ և քաջալերել քաղաքացիներին վերականգնել մոռացված հիշողությունը և բարձրաձայնել նախկին ռեժիմը դատապարտելու և մերժելու մասին: Փաստացի սկսելով խորհրդանշական միջոցների կիրառմամբ՝ Էստոնիայի նոր իշխանությունը դեռևս հասավ հասարակական լայն զանգվածների աջակցությանը, որը խթանեց անցումային արդարադատության մեխանիզմների արագ ներդրմանը:

## 1. Քրեական արդարադատություն

1992թ-ին ընդունվեց «Էստոնիայի ճնշումների քաղաքականության քննության պետական հանձնաժողովի հիմնադրման մասին»<sup>102</sup>(Estonian State Commission on Examination of the Policies of Repression, ESCEPR) որոշումը, որով սահմանվեց, որ վերջնական նպատակը գիտական հետազոտություն իրականացնելն է և օկուպացիոն ռեժիմների ժամանակ տեղի ունեցած բոլոր կորուստների և վնասների ուսումնասիրումը:

Միայն տասներկու տարիների հետաքննական աշխատանքից հետո ESCEPR-ը կարողացավ հրատարակել ուսումնասիրություն, որը ներառում էր տեղեկատվություն ութ փաստաթղթի մասին: Փաստաթղթերը հիմնվում են Էստոնիայում պահպանված արխիվային նյութերի վրա: 1994թ-ից մինչև 2002թ. ESCEPR-ը հրապարակել է թվով 20 գիտական փաստաթուղթ, որը գնահատում էր և ամփոփում Խորհրդային Միության բանակում մահացած Էստոնիայի Հանրապետության քաղաքացիների թիվը:<sup>103</sup> Ճնշումների քաղաքականությունն ուսումնասիրելով՝ Էստոնիայում տուժած անձանց և զոհերի ընտանիքների վերաբերյալ դատական գործընթացների ժամանակ հիմք էին ընդունվում այդ փաստաթղթերը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2006թ. հունվարի 17-ին և 24-ին կայացրել է երկու որոշում,<sup>104</sup> որոնցով Էստոնիայի ներքին դատարանների կայացրած՝ մարդկության դեմ հանցագործությունների վերաբերյալ որոշումները թողել է անփոփոխ՝ հավելելով, որ դրանք իրականացվել են բռնի ճնշումների կիրառմամբ:

<sup>102</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/content/estonia> :

<sup>103</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ “Estonian State Commission on Examination of the Policies of Repression, the White Book, losses inflicted on Estonian nation by occupation regimes, 1940-1991“, 2005թ., էջ 7: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.riigikogu.ee/wpcms/wp-content/uploads/2015/02/TheWhiteBook.pdf> :

<sup>104</sup>Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած “KOLK AND KISLYIY v. ESTONIA” որոշումը, 2006թ. հունվարի 17: Որոշումը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/case-law/estonia\\_kolk\\_2006.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/case-law/estonia_kolk_2006.pdf),

“PENART v. ESTONIA” որոշումը, 2006թ. հունվարի 24 : Որոշումը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/case-law/estonia\\_penart\\_2004.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/case-law/estonia_penart_2004.pdf):

## 5. Ճշմարտության որոնման գործընթաց

1998թ-ին ընդունվեց «Մարդու դեմ ուղղված հանցագործությունների ուսումնասիրման Էստոնիայի միջազգային հանձնաժողով ստեղծելու մասին» (Estonian International Commission for Investigation of Crimes Against Humanity) որոշումը, որի համաձայն, նախագահ Լեննարտ Մերին հիմնադրեց նշյալ ճշմարտության հանձնաժողովը:<sup>105</sup> Այն ուսումնասիրել է Էստոնիայի բնակչության նկատմամբ կատարված հանցագործությունները գերմանական և խորհրդային ուժերի բախումների ժամանակ՝ հետազոտելով ցեղասպանությունների համար սահմանվող հանցագործությունների բնույթը, մարդասիրության դեմ իրականացվող այլ հանցագործությունները և պատերազմական հանցագործությունների մասին 1998թ-ի Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը:

## 2. Փոխհատուցումներ

Օրենսդրության միջոցով փոխհատուցումներ նշանակելու գործընթացը ստեղծել է ունեցել Էստոնիայում 1990-2008 թվականներին:<sup>106</sup> Այսպես.

- 1990թ-ին ընդունվեց «Խորհրդային Ռուսաստանի քրեական օրենսգրքով քաղաքական հանցագործությունների համար դատապարտված բոլոր անձանց վերականգնելու» մասին հրամանագիրը,
- 1991թ-ին ընդունվեցին «Սեփականության բարեփոխումների սկզբունքների» և «Սեփականության բարեփոխումների իրականացման» մասին օրենքները,
- 1992թ-ին ընդունվեց «Դատապարտված և չդատապարտված անձանց իրավունքների վերականգնման մասին» օրենքը,
- ընդունվեցին քաղաքական հանցագործությունների համար դատապարտված բոլոր անձանց խախտված իրավունքների վերականգնման մասին այլ իրավական ակտեր:<sup>107</sup>

### Խորհրդանշական միջոցների կիրառում

Անցումային արդարադատության իրականացման գործընթացում Էստոնիայում հուշարձանների և թանգարանների ընդգրկումը բավականին տարածված էր: 2008թ-ին ընդունվեց «Հիշողության ինստիտուտի ստեղծման մասին» օրենքը (Law creating the Memory

<sup>105</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.historycommission.ee/>: Հանձնաժողովի Էստոներեն անվանումը՝ Inimsusvastaste kuritegude uurimise Eesti Rahvusvaheline Komisjon:

<sup>106</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ “Transitional Justice and Memory in the EU. Estonia: Transitional Justice and Memory in the EU. Legislation. Web. 1 Dec. 2015”:

<sup>107</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/content/estonia:>



Institute): Էստոնիայի պատմական հիշողության ինստիտուտը (թանգարանը)<sup>108</sup> խորհրդային ռեժիմի ընթացքում մի շարք էստոնացիների խախտված իրավունքների մասին է պատմում: 2017թ. այն միավորվեց նոր կազմակերպության՝ Յունիտաս հիմնադրամի հետ, որն իրականացնում է հակաիրավական ռեժիմների վերաբերյալ ակադեմիական համալիր հետազոտություններ և դրանց իրազեկման բարձրագույն միջոցով խոսում մեղավորների պատասխանատվության մասին: Նոր կազմակերպությունը շարունակում է Էստոնիայի պատմական հիշողության ինստիտուտի անվանումը կրել:

### **Հրապարակային պաշտոնական ներողությունների հայցում**

2005թ-ին ընդունվեց «Հրապարակային պաշտոնական ներողության մասին» ակտը, և նույն թվականին Էստոնիայի վարչապետ Անդրուս Անսիպր Կլուգայում ելույթ ունեցավ և նշեց. «Ես չափազանց ցավում եմ, որ հրեական ժողովրդի այս համակարգված ոչնչացումը զգացվել է նաև Էստոնիայի հրեաների նկատմամբ: Էստոնիայի կառավարությունները դատապարտել են մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, և մենք կշարունակենք դա անել, ինչպես մյուս ժողովրդավարական պետությունները: Էստոնիայի Հանրապետության կառավարությունը պաշտոնական հայտարարություն է տարածել, որտեղ ցավում է, որ մարդկության դեմ հանցագործությունների կատարմանը մասնակցել են նաև Էստոնիայի Հանրապետության քաղաքացիներ՝ օկուպացիոն ուժերի հետ համագործակցությամբ: Այս մարդասպանները պետք է պատասխանեն իրենց հանցագործությունների համար որպես անհատ, ուստի Էստոնիայի կառավարությունը շարունակում է անել ամեն հնարավորը՝ բացահայտելու այդ հանցագործությունները»:

### **3. Համակարգային բարեփոխումներ**

#### **Լյուստրացիա**

1995թ-ին Էստոնիայում պաշտոնապես ընդունվեց «Լյուստրացիայի մասին» օրենքը, որն ուներ հետևյալ բացատրական ենթատեքստը. «Սա օրենք է այն անձանց բացահայտման և գրանցման մասին, ովքեր աշխատել են Էստոնիան գրաված երկրների անվտանգության մաս կազմող կազմակերպությունների, հակահետախուզական կազմակերպությունների կամ զինված ուժերի հետ»: Այս օրենքը նաև խրախուսում էր, որ այդ անձինք խոստովանեն իրենց նախկին կարգավիճակը:

<sup>108</sup>Տե՛ս «The Estonian Institute of Historical, Shaheed, Fareeda. Report of the Special Rapporteur in the Field of Cultural Rights and Memorialization Processes. (Human Rights Council: United Nations General Assembly, 2014)» զեկույցը, 6-10 էջեր:

1992թ. «Խղճի խոստովանման կարգի վերաբերյալ» ակտն ընդունվեց: Այն սահմանում էր, որ, հիմք ընդունելով Էստոնիայի Հանրապետության սահմանադրության իրականացման ակտը, նախագահը, Ռիժիգոկուն (Էստոնիայի խորհրդարանը)<sup>109</sup> կամ տեղական իշխանության խորհրդի ընտրություններում առաջադրվող թեկնածուն կամ այն անձը, ով հավակնում է վարչապետի, նախարարի, գերագույն դատարանում արդարադատություն իրականացնող դեկավարի և դատավորի, Էստոնիայի բանկի նախագահի, պաշտպանության հրամանատարի կամ պաշտպանության ուժերի գլխավոր հրամանատարի ցանկացած այլ ընտրովի կամ նշանակվող պաշտոնի, ապա պարտավոր է գրավոր խոստում տալ: Խոստման բովանդակությունը հետևյալն է՝

*«Երդվում եմ, որ ես չեմ իրականացրել ծառայություն այն երկրների անվտանգության կամ զինված ուժերի հետախուզական կամ հակահետախուզական մարմիններում, որոնք գրավել են Էստոնիան կամ մասնակցել են Էստոնիայի քաղաքացիների հալածանքներին իրենց անհարգալից վերաբերմունքի կամ քաղաքական համոզմունքների կամ սոցիալական դասի պատճառով կամ քանի որ եղել են Էստոնիայի Հանրապետության քաղաքացիական ծառայության կամ պաշտպանության ուժերի կազմում»:<sup>110</sup>*

Ինչպես տեսնում ենք ակտում օգտագործվող տերմինները ցույց են տալիս, որ ռեպրեսիվ ռեժիմի ներկայացուցիչները հալածանքները ոչ թե պետության դեմ են իրականացրել, այլ քաղաքացիների: Սա խոսում է Էստոնիայում հասարակական բարձր իրավագիտակցության մասին: Դա է պատճառը, որ մի շարք գործընթացներ՝ կապված անցումային արդարադատության գործիքների միաժամանակյա կիրարկման հետ, միահյուսված են եղել, մեկը մյուսի հետ փոխկապակցված և անմիջապես իմպլեմենտացվող: Ինչպես նաև ակնհայտ է, որ ակտը շատ լայն է սահմանում անձանց շրջանակը, ովքեր են համարվում հանցագործներ: Ակտի համաձայն՝ զինված ուժերի կամ զինված ուժերի հետախուզական կամ հակահետախուզական ծառայության օպերատորները, որոնք մարդու իրավունքների կոպտագույն խախտումներ են թույլ տվել, այն անձիք են, ովքեր հավաքագրվել են այդ ծառայությունների կողմից, գիտակցաբար և կամավոր կերպով համագործակցել են դրանց հետ:

#### **1.1.4. Վրաստան**

Վրաստանում անցումային արդարադատության մեխանիզմներին դիմելու անհրաժեշտությունը պայմանավորված էր 2003թ. նոյեմբերին երկրում տեղի ունեցած հեղափոխությամբ, քանի որ 2004-2012թթ. մասսայական իրավախախտումներ էին

<sup>109</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.riigikogu.ee/?lang=en> :

<sup>110</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.riigiteataja.ee/en/eli/520052014002/consolide> :

արձանագրվել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Սակայն, պետական պաշտոնյաների կողմից Վրաստանում անցումային արդարադատության ծրագրի համար միասնական կամ հետևողական աջակցություն չի եղել,<sup>111</sup> և ներկայումս կառավարությունը չունի անցումային արդարադատության իրատեսական տեսլական:

## 1. Քրեական արդարադատություն

2014թ. ԱՄՆ Պետդեպարտամենտի Վրաստանի վերաբերյալ զեկույցի<sup>112</sup> համաձայն՝ 2012թ-ից ի վեր դատախազության մարմինները մեղադրեցին առնվազն 45 միջին և բարձր մակարդակի նախկին պաշտոնատար անձանց: Այդ պաշտոնյաների շարքում էին Սահակաշվիլին, ընդդիմադիր կուսակցության գլխավոր քարտուղար Մերաբիշվիլին, ՄԱԿ-ի դիտորդական առաքելության ներկայացուցիչները, ներքին գործերի նախկին նախարարները, պաշտպանության, արդարադատության և առողջապահության նախկին նախարարները, Թբիլիսիի նախկին քաղաքապետը և այլն: Նրանք մեղադրվել են տարբեր հանցագործությունների, այդ թվում՝ արդարադատության իրականացման խոչընդոտման, պետական միջոցների յուրացման, փողերի լվացման, շորթման, ապօրինի և գաղտնի կերպով անձնական կյանքի գաղտնիության միջամտության և պաշտոնական լիազորությունների չարաշահումների համար: Այդ գործերից 15-ով ներգրավված բարձրաստիճան պաշտոնյաներից 4-ը մեղադրվում էին խոշտանգումների կամ այլ ֆիզիկական բռնության համար:<sup>113</sup>

Վրաստանում անձնական կյանքի գաղտնիության ապօրինի և գաղտնի կերպով միջամտությունները խիստ արտահայտված բնույթ էր կրում:2012թ. խորհրդարանական ընտրություններից անմիջապես հետո Վրաստանի ներքին գործերի նախարարությունը ցույց տվեց, որ հայտնաբերել է մինչև 2007թ. կատարված բազմաթիվ քաղաքական գործիչների, լրագրողների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, քաղաքացիների հանդիպումների և քննարկումների շուրջ 26.000 ձայնային և վիզուալ ձայնագրություններ: Ձայնագրությունները ներառում էին մասնավոր կյանքի տեսագրություններ, որի արդյունքում ձերբակալվեցին և մեղադրվեցին ներքին գործերի նախարարության 12 աշխատակից:

<sup>111</sup>Տե՛ս Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հետևյալ հղմամբ՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ\\_Report\\_GeorgiaTI\\_2017\\_EN.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ_Report_GeorgiaTI_2017_EN.pdf), էջեր 6-8 :

<sup>112</sup>Տե՛ս “US State Department, “2014 Human Rights Reports: Georgia,” 2015, զեկույցը հետևյալ հղմամբ՝ [www.state.gov/j/drl/rls/hrrpt/2014/eur/236526.htm](http://www.state.gov/j/drl/rls/hrrpt/2014/eur/236526.htm) :

<sup>113</sup>Տե՛ս “US State Department, “2014 Human Rights Reports: Georgia,” 2015, զեկույցը հետևյալ հղմամբ՝ [www.state.gov/j/drl/rls/hrrpt/2014/eur/236526.htm](http://www.state.gov/j/drl/rls/hrrpt/2014/eur/236526.htm) :

## 2. **Ճշմարտության որոնման գործընթաց**

Վրաստանի խորհրդարանի մարդու իրավունքների և քաղաքացիական ինտեգրման հանձնաժողովը ստեղծեց **հատուկ աշխատանքային խումբ՝ քաղաքական բանտարկված անձանց կամ քաղաքական հետապնդումների ենթարկված անձանց հարցերի քննարկման համար**: Հանձնաժողովում ներգրավված էին ՀԿ-ների ներկայացուցիչներ, որոնք ներկայացրել են քաղբանտարկյալների անուններ: Առաջարկներ ստանալուց հետո աշխատանքային խումբը քննարկել և ներկայացրել է քաղբանտարկյալների ցանկ:

Այնուհետև, Վրաստանում 2012թ. խորհրդարանական ընտրություններից հետո նոր կառավարությունը նախագիծ էր պատրաստել երեք տարի ժամկետով **«Արդարադատության ոլորտում չարաշահումների մասին պետական ժամանակավոր հանձնաժողով»**<sup>114</sup> ստեղծելու մասին: Հանձնաժողովի գործունեության նպատակն էր վերականգնել օրենքը և արդարությունը հազարավոր վրացիների, օտարերկրացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց համար, ովքեր գտնվում էին անօրինական հետապնդման և/կամ անարդարացի դատապարտվել էին: Այս օրինագծի վերաբերյալ կարծիք է ներկայացվել, որ *«ոչ դատական մարմնի կողմից արդարադատության չարաշահման հնարավոր դեպքերի զանգվածային քննությունը»* հարցեր է առաջացնում իշխանությունների տարանջատման և դատական համակարգի անկախության վերաբերյալ: Հանձնաժողովը վրացական իշխանություններին խորհուրդ տվեց, որ այդ որոշման նախագծում հստակեցվի և սահմանվի, որ վերաբացվող քրեական գործերի քննությունը պետք է վերապահվի դատական իշխանությունը: Մի շարք պատգամավորներ նշում էին, որ արդյունքում կկանգնեն հատուցումներ իրականացնելու մասսայական գործընթացի առաջ, որի համար պետությունը ֆինանսական ռեսուրսներ չունի:

### **Համաներում**

Իշխանության եկած նոր պետական պաշտոնյաների դեմ բողոքներ ներկայացնողների թիվը գնալով շատանում էր այն պատճառով, որ նրանք քաղաքական դրդապատճառներով նախկինում դատապարտվել էին: Այնուամենայնիվ, առաջին հայացքից պարզ չէր, թե որ դատապարտումներն էին օրինական, և որոնք՝ ապօրինի, քանի որ մեղադրական դատավճիռներից շատերում մանրամասները բացակայում էին: Այսինքն, առկա չէին բավարար հիմքեր դատավճիռների վերանայման համար:

---

<sup>114</sup>Տե՛ս “Draft Law Submitted to Joint Opinion of the COE Venice Commission for expertise by and the Ministry Directorate for Justice and Human Dignity of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe on the Draft Law on the Temporary State Commission on Miscarriages of Justice of Georgia, Opinion No. 728/2013 (adopted 17 June 2013)” որոշումը՝ ընդունված 2013թ. հունիսի 17-ին:

«Համաներման մասին» օրենքի ընդունման վերջնական որոշումը քաղաքական էր, քանի որ Սասկաշվիլիին մեկ տարի էր մնացել՝ որպես նախագահ պաշտոնավարելու համար և քիչ հավանական էր նախագահի կողմից ներում շնորհել նրանց, ովքեր ձերբակալվել էին նախքան նրա իշխանության ստանձնելը: 2012թ. դեկտեմբերին կայանալիք ընտրություններից երկու ամիս առաջ **խորհրդարանը որոշում ընդունեց 190 մարդու որակել «քաղաքական հիմքերով բանտարկված անձինք» և 4 հոգու՝ որպես «քաղաքական ենթատեքստով հալածված անձինք»:** Խորհրդարանը որոշեց իրավական միջոցներ ձեռնարկել նրանց ազատագրկման տեսքով պատասխանատվությունից և ցանկացած տուգանքից ազատելու համար: Բացի այդ, 2012թ. դեկտեմբերի 28-ին նոր իշխող կոալիցիան լայն համաներում հայտարարեց վրացական բանտերում պահվողներին անմարդկային վերաբերմունքի արժանացնելու մասին: Ներումը հանգեցրեց բանտերում անձանց թվի զգալի նվազմանը, մասնավորապես՝ բանտարկյալների թիվը 2013թ-ին կազմեց 9,093 բանտարկյալ, այն դեպքում, երբ 2011թ-ին հաշվվում էր 24,114 բանտարկյալ:<sup>115</sup>

### 3. Փոխհատուցումներ

#### *Ռեարխիտացիա*

Վրացական կառավարությունը սահմանափակ միջոցներ է ձեռնարկել խախտված իրավունքներ ունեցող և ռեժիմի գոհ համարվող անձանց հասցված վնասները հատուցելու համար: Կառավարությունը հիմնականում վերականգնողական ծրագրեր է իրականացրել, այդ թվում՝ հոգեբանական ծառայությունների մատուցում բանտային բնակչության համար: Օրինակ, Վրաստանի արդարադատության նախարարությունը ստեղծել էր **Հանցագործությունների կանխարգելման կենտրոն՝ օգնելու բանտարկյալների վերաինտեգրմանը և վերականգնմանը:** Ոմանք կարծում էին, որ կենտրոնը ավելի արդյունավետ կլիներ, եթե այն գործեր միջգերատեսչական ծրագրի հիման վրա, այլ ոչ թե մեկ կառույցի՝ արդարադատության նախարարության կառուցվածքում: Ամեն դեպքում ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խոշտանգումների գոհերը վերականգնողական գործընթացների այլ ձևերի կարիք ունեն, որոնք տարբեր են մյուս բանտարկյալների կարիքից, և քիչ հավանական է, որ դրանք բավարարվեն ընդհանուր վերականգնողական ծառայություններով:

#### *Գույքային վնասների հատուցում և խախտումների վերականգնում*

---

<sup>115</sup>Տե՛ս “Institute for Criminal Policy Research, “World Prison Brief: Georgia,” հետազոտությունը: Հետազոտությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [www.prisonstudies.org/country/georgia](http://www.prisonstudies.org/country/georgia) (accessed 15 Aug. 2016):

Գույքի հետ կապված իրավախախտումների հատուցումներ նախատեսելն առաջին հերթին դրսևորվել է դատախազական համակարգում, երբ ստեղծվեց **Հողի վերականգնման հատուկ վարչություն**: 2015թ. մայիսին կառավարությունը որոշում ընդունեց, որով հայտարարեց, որ **քաղաքացիներից անօրինական ձևով վերցված գույքը պետք է վերադարձվի, եթե այն դեռևս գտնվում է պետության տիրապետության ներքո**:<sup>116</sup> Այս որոշման արդյունքում 9 ամսվա ընթացքում քննված 21 գործի արդյունքում 24 տուժողից անօրինական ձևով վերցված գույքը փոխհատուցվել է: Ներկայումս Վրաստանում հողային հարցերով զբաղվող ոչ մի հանձնաժողով չկա, որը կզբաղվեր գույքային վնասների հատուցմամբ, ինչպես նաև չի գործում որևէ դատարան, որը վարույթ կսկսեր իրավախախտների դեմ:<sup>117</sup>

### **Հրապարակային պաշտոնական ներողությունների հայցում**

Վրաստանում թեև սկսվել էին քաղբանտարկյալներին ազատություն շնորհելու գործընթացներ, այնուամենայնիվ, նշյալը չէր տարածվում բոլորի վրա: Հետագայում որոշ քաղբանտարկյալներ հաղորդեցին, որ ազատագրվման մեջ գտնվելու ժամանակ նամակներ են ստացել արդարադատության նախարարությունից՝ ներողություն խնդրելու բովանդակությամբ: Ոչ քաղաքական բնույթի հանցագործությունների համար ապօրինի դատապարտված անձինք ստացան պետական մարմինների կողմից ներողությունների հայցում:

## **4. Համակարգային բարեփոխումներ**

Քանի որ Վրաստանում անցումային արդարադատության կիրառումը եղել է միայն մասնակի, ուստի ոչ բոլոր տարրերն են կիրառվել, այդ թվում՝ լյուստրացիան, վեթինգը և այլ սահմանափակումները:

### **1.1.5. Ուկրաինա**

Ուկրաինայում անցումային արդարադատության մեխանիզմների ներդրումը որոշ առանձնահատկություններ ունեին, քանի որ ներհասարակական իրադարձությունները տեղի էին ունեցել բավականին բարդ զարգացումներով, մասնավորապես, Կիևի Մայդան

<sup>116</sup>Տե՛ս հետևյալ հրամանը՝ “Order of the Minister of Georgia No. 62, February 13, 2015 (in Georgian)”: Հրամանը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://matsne.gov.ge/ka/document/view/2728207> :

<sup>117</sup>Տե՛ս Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հետևյալ հղմամբ՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ\\_Report\\_GeorgiaTJ\\_2017\\_EN.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ_Report_GeorgiaTJ_2017_EN.pdf), էջ 13, պարբերություն 2:

հրապարակում կենտրոնացած զանգվածային ապստամբությունը ստիպեց նախագահ Վիկտոր Յանուկովիչին պաշտոնը վայր դնել:

## 1. Քրեական արդարադատություն

Ուկրաինայում արմատական բարեփոխումների անցկացնելու քաղաքական կամք դրսևորելուց հետո կառավարությունը սկսեց դատական համակարգի զանգվածային փոփոխությունները: «Ուկրաինայի դատական համակարգում վստահության վերականգնման մասին» (Law "On Restoration of Trust in the Judicial Power in Ukraine") նոր օրենքն ուժի մեջ մտավ 2014թ. ապրիլի 11-ին:<sup>118</sup> Օրենքով կրճատվեցին դատարաններում աշխատակազմի մի շարք մանդատներ:

Սկսվեց դատական իշխանության կողմից կայացված ակտերի վերանայման գործընթաց, որի արդյունքում պարզվեց, որ մի շարք դատավորներ ընդդիմության նկատմամբ հետապնդումներ իրականացնելու և/կամ ընտրությունների արդյունքների կեղծման վերաբերյալ գործերով որոշումները կայացրել են՝ պայմանավորված քաղաքական ենթատեքստով:

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Նախորդ ռեժիմի ոչ իրավաչափ վարքագծի ուսումնասիրությունն անցկացվեց Ուկրաինայի խորհրդարանի կողմից ստեղծված **Հատուկ ժամանակավոր հանձնաժողովի (Special Temporary Commission)** կողմից, որը բաղկացած էր խորհրդարանի կողմից նշանակված 5 անդամից, գերագույն դատարանի կողմից նշանակված 5 անդամից և նորաստեղծ կառավարության կողմից հիմնադրված Հակակոռուպցիոն քաղաքականության հանրային պաշտպանի կողմից նշանակված 5 անդամից: Սահմանվեցին նաև սահմանափակումներ, թե ովքեր կարող են նշանակվել նշյալ հանձնաժողովի անդամ, օրինակ՝ արգելք կար վերջին տասնամյակում իրավապահ մարմիններում ծառայող անձանց համար:<sup>119</sup>

Մինևույն ժամանակ, հատուկ խորհրդարանական հանձնաժողով է ստեղծվել ոստիկանության կողմից Մայդանում ցուցարարների դեմ կատարված հանցագործությունների

<sup>118</sup>Տե՛ս «Ուկրաինայի դատական համակարգում վստահության վերականգնման մասին» օրենքը, որը ուժի մեջ է մտել 2014թ. ապրիլի 11-ին: Օրենքը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://zakon.rada.gov.ua/rada/annot/en/1188-18/sp:java-:max25> :

<sup>119</sup>Տե՛ս հետևյալ գեկույցը՝ "J.A. Kazlas, ICTJ briefing, "Corruption, Impunity and Current Reforms in Ukraine" Assessment Report", 2014թ. օգոստոս, էջ 12: Զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014\\_0.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014_0.pdf) :

քննության համար: Այս գործառույթը հատկապես վերապահվեց «Բերկուտ» անվանմամբ ոստիկանության հատուկ ստորաբաժանումներին:<sup>120</sup>

### 3. Փոխհատուցումներ

#### Հատուցումներ

Մեկ այլ նախաձեռնություն, որն արժանի է հիշատակման, Յանուկովիչի և նրա աջակիցների կողմից գողացված և արտասահմանյան ֆինանսական գոտիներում թաքցված միլիարդավոր դոլարների վերականգնելու գործընթացն էր: 2014թ-ի ապրիլի 29-30-ը Լոնդոնում Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի «Գողացված ակտիվների վերականգնման նախաձեռնության» շրջանակներում կազմակերպվել էր «Ակտիվների վերականգնման» Ուկրաինայի ֆորումը, որը միտված էր Ուկրաինայի կողմից գործնական քայլերի իրականացմանը և միջազգային կառույցների հետ<sup>121</sup>ակտիվ համագործակցությանը: Միջազգային իրավաբանների թիմի կողմից թեմայի վերաբերյալ պատրաստվեցին փորձագիտական նյութեր, որոնք տրամադրվեցին Ուկրաինայի վարչապետին ու արդարադատության նախարարին:

#### Խորհրդանշական միջոցների կիրառում

Կոմունիստական կարգերի տապալումից հետո Ուկրաինայում խորհրդանշական միջոցների կիրառումը դրսևորվեց նախ արխիվները հրապարակային դարձնելով: Մասնավորապես, 2008-2010թթ.. Ուկրաինայի արխիվների անվտանգության ծառայության տնօրեն Վլադիմիր Վյարրովիչը ՊԱԿ-ի արխիվները բացեց հանրության համար: Սկսվեց հանցագործ վարչակարգին զոհ դարձած անձանց ցուցակագրումը և տեղեկությունների հավաքագրումը: Այնուհետև, 2014թ. փետրվարի «Եվրամայդան» անվամբ հայտնի հեղափոխությունից հետո՝ 2014թ. մարտի 25-ին, կառավարությունը նշանակեց Վլադիմիր Վյարրովիչին Ուկրաինայի Ազգային հիշողության ինստիտուտի<sup>122</sup>տնօրեն՝ նպատակ հետապնդելով շարունակելու և առավել զարգացնելու 2008թ. սկսված ազգային հիշողության

<sup>120</sup>Տե՛ս հետևյալ զեկույցը՝ “J.A. Kazlas, ICTJ briefing, “Corruption, Impunity and Current Reforms in Ukraine” Assessment Report”, 2014թ. օգոստոս, էջ 13: Զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014\\_0.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014_0.pdf) :

<sup>121</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [www.reuters.com/article/2014/04/27/us-ukraine-crisis-assetsidUSBREA3Q0SD20140427](http://www.reuters.com/article/2014/04/27/us-ukraine-crisis-assetsidUSBREA3Q0SD20140427) :

<sup>122</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.revolvy.com/page/Ukrainian-Institute-of-National-Remembrance> :



արխիվացման գործընթացը:<sup>123</sup>Մի շարք մասնագիտացված ՀԿ-ներ ևս միացան զոհերի ցուցմունքների հավաքագրմանը և արխիվացմանը:<sup>124</sup>

#### **4. Համակարգային բարեփոխումներ**

##### **Լյուստրացիա**

Ուկրաինայում անցումային արդարադատության իրականացման առաջին քայլերից մեկը դատական իշխանության զանգվածային փոփոխություններն էին: Այսպես, ընդունվեց «Ուկրաինայի դատական համակարգում վստահության վերականգնման մասին» օրենքը, որի արդյունքում դատական համակարգում տեղի ունեցան մի շարք կրճատումներ և նախկին ռեժիմից մնացած մի շարք աշխատակիցներ ազատվեցին:

Ավելին, Ուկրաինայի կառավարությունն ընդունեց բանաձև, որով աշխատանքից ազատվեցին երկրի սահմանադրական դատարանների 5 դատավոր: Նշյալ բանաձևով նաև կոչ էր արվում երկրի նախագահին և Դատավորների միավորմանը՝ համակարգից հեռացնել գերագույն դատարանի 18 դատավորներից 12-ին:<sup>125</sup> Նաև ամրագրված էր, որ դատական համակարգից բոլոր զտված անձինք հետագայում իրավունք չունենին վերարտադրվել իրենց պաշտոններում, ինչպես նաև պաշտոններ զբաղեցնել խորհրդարանում և գործադիր մարմնի ստորաբաժանումներում:

Լյուստրացիայի գործընթացը Ուկրաինայում ընթացել է այլ երկրներում նմանատիպ փորձի ուսումնասիրմամբ, մասնավորապես՝ Կիևում «Բաց դիալոգ» հիմնադրամի կողմից այլ հետկոմունիստական երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել է խորհրդաժողով, որի ընթացքում քննարկվել են նշյալ երկրներում տարբեր տեսակի լյուստրացիոն դրսևորումները:<sup>126</sup>

##### **Այլ մարմինների ստեղծում**

Ինչպես վերը նշվեց, նոր կառավարության կողմից ստեղծվել է Հակակոռուպցիոն քաղաքականության հանրային պաշտպանի գրասենյակը (The Public Defender of Anti-Corruption

<sup>123</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.cdvr.org.ua/content/new-director-ukrainian-national-memory-institute-historical-memory-policy-safeguard-against-repeating-crimes-past> :

<sup>124</sup>Տե՛ս հետևյալ զեկույցը՝ J.A. Kazlas, ICTJ briefing, “Corruption, Impunity and Current Reforms in Ukraine” Assessment Report”, 2014թ. օգոստոս, էջ 14: Զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014\\_0.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014_0.pdf) :

<sup>125</sup>Տե՛ս հետևյալ զեկույցը՝ J.A. Kazlas, ICTJ briefing, “Corruption, Impunity and Current Reforms in Ukraine” Assessment Report”, 2014թ. օգոստոս, էջ 12: Զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014\\_0.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014_0.pdf) :

<sup>126</sup>Տե՛ս “Open Dialog Foundation held a conference on Lustration in Ukraine” անվանմամբ համաժողովը: Այն հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://en.odfoundation.eu/a/3290.open-dialog-foundation-held-a-conference-on-lustration-in-ukraine> :

Policy), որը տրամադրում էր կոռուպցիոն բնույթի դեպքերի և բողոքների մասին տեղեկություններ Հակակոռուպցիոն բյուրոյին (the Anti-Corruption Bureau), որն էլ դրա հիման վրա տվյալների բազա էր ստեղծում:

Ուկրաինայի ներքին գործերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) փորձում էր կիրառել քաղաքականությունների իրականացման նոր հայեցակարգ, որը ծառայելու է քաղաքացիների իրավունքների պաշտպանության ամրապնդմանը: Նախարարությունը հաշվի էր առնում այլ երկրներում նմանատիպ քաղաքականությունների մշակման միջազգային փորձի արդյունքները, և այս տեսանկյունից Ուկրաինայի համար հիմք է եղել Մեծ Բրիտանիայի փորձը:<sup>127</sup> Այնուհետև, Նախարարությունը ստեղծեց **Մարդու իրավունքների խորհրդատվական խորհուրդը (Human Rights Advisory Council)** <sup>128</sup>, որը ամսական կտրվածքով 1 անգամ հանդիպում էր ունենում: Նրա նպատակն էր մարդու իրավունքների պաշտպանությանն աջակցելը և նախարարության կառուցվածքային և հայեցակարգային բարեփոխումներն իրականություն դարձնելը: Խորհրդում ընդգրկված էին Ուկրաինայի քրեակատարողական հիմնարկներից, մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից, քաղաքացիական հասարակության և նախարարության ներկայացուցիչներից:<sup>129</sup>

### **Քաղաքացիական հասարակության ներգործությունը**

**2001թ. սկսած**<sup>130</sup> քաղաքացիական հասարակությունը Ուկրաինայում շատ ակտիվ էր՝ ի դեմս համայնքային կազմակերպությունների, եկեղեցիների, ակումբների և անկախ լրատվամիջոցների: Թե՛ Նարնջագույն հեղափոխության ժամանակ, թե՛ Մայդանում, քաղաքացիական հասարակության կողմից ձևավորվեցին դաշինքներ, ինչպես նաև աշխատանքային խմբեր: Ըստ էության, դրանք ոչ թե ուղղակի քննադատություններ էին հնչեցնում, այլ կատարում էին իրենց աշխատանքը կառավարության ուղիղ հանձնարարությամբ՝ միտված քաղաքացիների կողմից բարձրաձայնված հարցերի և հասարակության համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը: Հենց

<sup>127</sup>Տե՛ս հետևյալ զեկույցը՝ “J.A. Kazlas, ICTJ briefing, “Corruption, Impunity and Current Reforms in Ukraine” Assessment Report”, 2014թ. օգոստոս, էջ 13: Զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014\\_0.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014_0.pdf) :

<sup>128</sup>Տե՛ս հետևյալ զեկույցը՝ “J.A. Kazlas, ICTJ briefing, “Corruption, Impunity and Current Reforms in Ukraine” Assessment Report”, 2014թ. օգոստոս, էջ 13: Զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014\\_0.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014_0.pdf) :

<sup>129</sup>Տե՛ս հետևյալ զեկույցը՝ “J.A. Kazlas, ICTJ briefing, “Corruption, Impunity and Current Reforms in Ukraine” Assessment Report”, 2014թ. օգոստոս, էջ 13: Զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014\\_0.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014_0.pdf) :

<sup>130</sup><<Ուկրաինան առանց Կուչմայի>> շարժումը (Ukraine without Kuchma, 2001), <<Նարնջագույն հեղափոխությունը>> (Orange Revolution, 2004), <<Եվրոմայդանի ցույցերը>> (Eurmaydan protests, 2013) աչքի էին ընկնում հասարակական բարձր ակտիվիզմով:

նմանատիպ միավորումների, դաշինքների և աշխատանքային խմբերի մասնակիցներն ու անդամները համալրեցին Ուկրաինայում նոր կառավարության շարքերը:

Բացի այդ, նախկին լրագրող և ակտիվ հասարակական գործիչ Տատյանա Չերնովոլի գլխավորությամբ մի խումբ կամավորներ ստեղծեցին **Հակակոռուպցիոն բյուրո** (Anti-Corruption Bureau, **ACB**),<sup>131</sup> որը նպատակ էր հետապնդում<sup>132</sup> Հակակոռուպցիոն քաղաքականության հանրային պաշտպանին<sup>133</sup> աջակցել՝ իր հետազոտությունների իրականացման գործում: Հակակոռուպցիոն բյուրոն չունեի իրավական կարգավիճակ, բայց այն մշակել էր «Ազգային հակակոռուպցիոն ծառայություն (National Anti-Corruption Service: NACS) ստեղծելու մասին» օրենքի նախագիծը, որով ստեղծվելու էր կառավարության մակարդակով հանրային ծառայողների շրջանում կոռուպցիայի դեմ պայքարող մարմին: Օրենքի նախագծի գործողությանը աջակցում էր վարչապետ Յացենյուկին, ԵՄ-ն, Համաշխարհային բանկը և այլ կառույցներ: Ըստ էության Հակակոռուպցիոն բյուրոն (ACB) հետագայում ստեղծվող Ազգային հակակոռուպցիոն ծառայության (NACS) նախատիպն էր, որը պետք է սկսեր գործել 2014թ. հուլիսին: Մինչև ստեղծվելը, Բյուրոն աշխատում էր բացահայտել երկրում առկա հիմնական կոռուպցիոն սխեմաները և կոռուպցիոն դրսևորումների շարունակականության վրա ազդող գործոնները: Բյուրոն ստեղծեց կոռուպցիոն դեպքերի մասին և քաղաքացիների բողոքների վերաբերյալ անկախ տվյալների բազա: Պետական և իրավական կարգավիճակ չունեցող մարմնի կողմից նման հասարակական ակտիվությունը հանգեցրեց, որ 2014թ. հոկտեմբերի 14-ին Ուկրաինայի Վերին Ռադան ընդունեց «Ուկրաինայի հակակոռուպցիոն ազգային բյուրոյի մասին» օրենքը:<sup>134</sup> Այսպիսով, 2015 թ. ապրիլի 16-ին Ուկրաինայի նախագահ Պետրո Պորոշենկոն ստորագրեց №217/2015 հրամանագիրը «Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոյի ստեղծման» մասին:<sup>135</sup> Վերջինս ուսումնասիրում է Ուկրաինայում կոռուպցիոն դրսևորումները և մեղադրանք առաջադրելու համար պատրաստում է գործեր: Այն ունի որոշ քննչական լիազորություններ, սակայն չի կարող քրեական գործերով մեղադրանք առաջադրել, գործով ներգրավվել կասկածյալներ և ձերբակալել անձանց: Մինչդեռ Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությունը (National Agency on Corruption Prevention

<sup>131</sup>Տե՛ս հետևյալ զեկույցը՝ “J.A. Kazlas, ICTJ briefing, “Corruption, Impunity and Current Reforms in Ukraine” Assessment Report”, 2014թ. օգոստոս, էջ 13: Զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014\\_0.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014_0.pdf) :

<sup>132</sup>Տատյանա Չերնովոլի ստեղծած հակակոռուպցիոն քաղաքականության հանրային պաշտպանը անվանվում է նաև Հակակոռուպցիոն քաղաքականությունների լիազոր անձ, անգլերեն անվանումը՝ Commissioner for anti-corruption policy:

<sup>133</sup>Տե՛ս հետևյալ զեկույցը՝ “J.A. Kazlas, ICTJ briefing, “Corruption, Impunity and Current Reforms in Ukraine” Assessment Report”, 2014թ. օգոստոս, էջ 13: Զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014\\_0.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Ukraine-Assessment-2014_0.pdf) :

<sup>134</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://nabu.gov.ua/en> :

<sup>135</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://nabu.gov.ua/en/history-nabu> :

(NACP)<sup>136</sup> պատասխանատու է հակակոռուպցիոն քաղաքականության ձևավորման և իրականացման համար՝ ստեղծելով կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջավայր:

---

<sup>136</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.networkforintegrity.org/continents/europe/national-agency-corruption-prevention-nacp/> :

## 1.2. Անցումային արդարադատության մեխանիզմները և գործիքները Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրներում

### 1.2.1. Գերմանիայի Դաշնային Հանրապետություն

Նախ, պետք է նշել, որ խոշոր պետությունների միջև քաղաքական, տնտեսական և գաղափարական խոր ու անհաշտ հակասությունների պատճառով սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Գերմանիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի համար պատերազմը միմյանց քաղաքական տիրապետող դիրքերը վերացնելու և աշխարհի նոր վերաբաժանման նպատակ էր հետապնդում: Կարևոր խնդիր էր նաև Խորհրդային Միության տապալումը: Այսպես, 1939 թ. սեպտեմբերի 1-ին գերմանական զորքերը ներխուժեցին Լեհաստան, որով պաշտոնապես սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Նացիստները գրավեցին հրեաներով խիտ բնակեցված տարածքներ, ինչպիսիք են Լեհաստանը, Բալթյան երկրները, Ուկրաինան, Բելառուսը: Խոշոր քաղաքներում կառուցվում էին հրեական գետտոներ,<sup>137</sup> որոնք առանձնացված թաղամասներ էին հրեաների, փոքրամասնությունների (այլլախոհներ, նույնասեռականներ, հավատացյալների խումբ ) կամ ռասայական խտրականության (գնչուներ, լեհեր, խորհրդային քաղաքացիներ) ենթարկվող այլ ժողովուրդների, մեկուսացված բնակչության համար:<sup>138</sup> Գետտոներում բնակեցվում էին քաղաքներից և արվարձաններից արտաքսված հրեական ամբողջ բնակչությունը: «Հրեական հարցի լուծման» հետևյալ սխեման էր գործում. եվրոպական բնակչության կենտրոնացում քաղաքների խոշոր շրջաններում, ոչ հրեա բնակչության անջատում հրեականից՝ զատում, հրեաների լիակատար անջատում հասարակական կյանքից, գույքի բռնագրավում, տնտեսական կյանքի բոլոր բնագավառներից հրեաների անջատում, ծանր ֆիզիկական աշխատանքի առաջարկ՝ որպես հրեաների միակ գոյատևման միջոց: Այսպես, տեղի ունեցավ Հոլոքոստը, որի ժամանակ մոտ 11 միլիոն մարդ սպանվեց:<sup>139</sup>

Սեպտեմբերի կեսերին, երբ Գերմանիան արդեն գրավել էր Լեհաստանի տարածքի համարյա կեսը, պատերազմում ներգրավվեց Խորհրդային Միությունը: Հակահիտլերյան կռաւիցիային միացան միմյանց հակադիր հասարակական-քաղաքական կարգեր ունեցող

<sup>137</sup>Տե՛ս Աշոտ Հայրապետյան, Օտար բառերի բառարան («Նաիրի» հրատարակչություն), Երևան, «հեղինակային հրատարակչություն», 2011թ. էջ 643:

<sup>138</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Niewyk, Donald L., “The Columbia Guide to the Holocaust”, Columbia University Press, 2000թ., էջ 45:

<sup>139</sup>Տե՛ս Stephanie Fitzgerald, “The Children of Holocaust” 2011թ., էջ 4:

երկրներ՝ կապիտալիստական ԱՄՆ-ն, Անգլիան և այլն, մյուս կողմից՝ սոցիալիստական ԽՍՀՄ-ը: Պատերազմը Գերմանիայի դեմ «դասակարգային պատերազմ չէր»:<sup>140</sup> Որոշ ժամանակ անց խորհրդային զորքերին հաջողվեց ազատագրել ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքը և պատերազմը տեղափոխել ֆաշիստական զորքերի կողմից գրավված տարածքներ: 1945թ. սկզբներին ակնհայտ էր, որ Գերմանիայի պարտությունը մոտակա ամիսների հարց է: Արդյունքում՝ արևելքից և արևմուտքից խորհրդային և դաշնակից ուժերը շարժվում էին դեպի Գերմանիա՝ ազատագրելով ֆաշիստական լծի տակ գտնվող եվրոպական պետությունները: Խորհրդային զորքերը մոտեցան Բեռլինին: Ապրիլի 30-ին պարզ դարձավ, որ Հիտլերը ինքնասպանություն է գործել: Երկու օր անց Բեռլինը հանձնվեց: Այնուհետև, Պոտսդամում գումարվեց հակահիտլերյան կռալիցիայի երեք մեծ տերությունների ղեկավարների հանդիպումը՝ ԱՄՆ-ի նախագահ Հարի Տրումենի, Ի. Ստալինի, Չերչիլի մասնակցությամբ: Նրանք հաստատեցին Գերմանիայի նկատմամբ քաղաքականության գլխավոր սկզբունքները՝ ապառազականացում, նացիզմի վերացում և ժողովրդավարացում: Ըստ ձեռք բերված պայմանավորվածության՝ Գերմանիայի տարածքում ձևավորվեցին երկու պետություններ՝ Արևմտյան Գերմանիա (Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն, (այսուհետ՝ ԳՖՀ) մայրաքաղաքը՝ Բոնն) և Արևելյան Գերմանիա (Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն, (այսուհետ՝ ԳԴՀ) մայրաքաղաքը՝ Բեռլինի արևելյան մասը): Բեռլինի արևմտյան մասը միացվեց ԳՖՀ-ին: Երկու պետությունների իշխանությունները սկզբում գերմանական միասնական քաղաքականություն էին վարում, որն ուղղված էր ժողովրդավարական գերմանական ազգ-պետությունը վերականգնելուն, ապառազականացմանը և ոչ նացիստական հասարակություն ստեղծելուն: Սակայն ռուսական հատվածը տնտեսապես զիջում էր, ինչի հետևանքով էլ խորհրդային ուժերը տապալվեցին ԳԴՀ-ում: ԳԴՀ ղեկավարները խոստացել էին, որ «ազատ և գաղտնի ընտրություններ» տեղի կունենան 1990թ. մայիսին: Սակայն երկրում շարունակ ցույցեր էին ընթանում, ինչը ստիպեց նրանց ընտրություններն անցկացնել մինչև մարտի 18-ը: Քրիստոնյա դեմոկրատ Լոտար դե Միայերը դարձավ ԳԴՀ կառավարության ղեկավար: Ապրիլի 12-ին նա հայտարարեց Հյուսիսատլանտյան դաշինքին՝ ՆԱՏՕ-ին (North Atlantic Treaty Organization, NATO) և Եվրոպական համայնքին միանալու շրջանակներում միասնական Գերմանիա ունենալու մասին<sup>141</sup>:

<sup>140</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.historyhit.com/key-quotes-by-winston-churchill-in-world-war-two/> :

<sup>141</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.cvce.eu/en/collections/unit-content/-/unit/df06517b-babc-451d-baf6-a2d4b19c1c88/084c0f6f-0f4e-4f94-9513-6e0bb867abe1>:

## 1. Քրեական արդարադատություն

Գերմանիայում պատերազմական իրավիճակի հանգուցալուծումը և հրեաների շուրջոստը բերել էր մարդու հիմնարար ազատությունների և իրավունքների կոպտագույն խախտումների: Անցումային արդարադատությունը սկիզբ դրվեց **Նյուրմբերգում՝ միջազգային ռազմականդատարանի ստեղծմամբ**<sup>142</sup>: Այսպես կոչված «Խոշոր պատերազմական հանցագործների դատաքննությունը» սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո: Քանի որ անհնար էր պատժել բոլոր նացիստական ոճրագործներին, **միջազգային ռազմականտրիբունալի** նպատակն էր առնվազն ամենասարսափելի հանցագործությունների բացահայտումը, դրանց հիմնական պատասխանատուների պատժումը և երկրում սիմվոլիկ արդարության հաստատումը: Ռազմական դատավարությունները անցկացվեցին երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակած տերությունների կողմից. տրիբունալի առաջ կանգնեցին ֆաշիստական Գերմանիայի քաղաքական, ռազմական, արդարադատության հայտնի գործիչները, ովքեր ծրագրել, իրականացրել կամ մասնակցություն էին ունեցել շուրջոստին և այլ պատերազմական հանցագործությունների:

Այս դատավարություններից առաջինը և ամենահայտնին ռազմական հանցագործների դատն էր, որը նիստը նախագահող բրիտանացի դատավորներից Նորման Բրիկետը նկարագրվել է որպես «պատմության մեծագույն դատավարություն»:<sup>143</sup> 1945-1946թթ. հոկտեմբերի 1-ին ընթացած դատավարությունը վերաբերվում էր Երրորդ Ռայխի 24 ամենակարևոր քաղաքական և ռազմական դեմքերին: Դատավարությանը չէին մասնակցում Ադոլֆ Հիտլերը,<sup>144</sup> Հայնրիխ Հիմլերը<sup>145</sup> և Յոզեֆ Գեբելսը,<sup>146</sup> որոնք ինքնասպանություն էին գործել 1945թ. գարնանը:

<sup>142</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://encyclopedia.ushmm.org/content/en/article/international-military-tribunal-at-nuremberg> :

Գերմանական աղբյուրը՝ Henkel (ed.), Matthias (2011), Memoriam Nuernberger Prozesse, exhibition catalogue (German), Nuremberg: Museen der Stadt Nuernberg, 78 pp., Summary of the indictment in Department of State Bulletin, 1945թ. հոկտեմբեր 21, էջ 595:

<sup>143</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Cooper, „On October 6, in Berlin, the Chief Prosecutors signed the momentous Indictment setting forth the charges ... against Hermann Göring and his associates and the six organizations, named as criminal, to which they belonged.“2011թ., էջ 38:

<sup>144</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Гитлер Адольф // Большая советская энциклопедия: [в 30 т.] / под ред. А. М. Прохоров — 3-е изд. — М.: Советская энциклопедия, 1969թ.:

<sup>145</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Гиммлер Генрих // Большая советская энциклопедия: [в 30 т.] / под ред. А. М. Прохоров — 3-е изд. — М.: Советская энциклопедия, 1969թ.:

<sup>146</sup>Տե՛ս “German National Library, Berlin State Library, Bavarian State Library et al. Record #118540041 // Gemeinsame Normdatei”, 2012-2016թթ.:

Ինչպես Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանը, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայացրել են մի շարք դատական որոշումներ, որոնց առարկան եղել է.

- Հոլոքոստի մերժումը և խոսքի ազատությունը,
- խորհրդային օկուպացիայի կամ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության օրոք բռնագրավված գույքի վերականգնման անհնարինությունը կամ դրա արժեքի անհամապատասխանությունը կրած վնասին և այլն:<sup>147</sup>

*Արևմտյան Գերմանիայում գերմանական դատարանների կողմից նացիստական հանցագործությունների դատավարությունը*

Գերմանիայի դատական համակարգը պաշտոնապես ստացել է նացիստական հանցագործությունների բացահայտմանն ուղղված գործողությունների թույլտվություն՝ Դաշնային վերահսկողության խորհրդի 1945թ. դեկտեմբերի 10-ի թիվ 10 (CCL 10) օրենքով (the Allied Control Council Law No. 10 (CCL 10)):<sup>148</sup> Այնուամենայնիվ, նրա իրավասությունը սահմանափակված էր գերմանացիների կամ գաղթականների նկատմամբ գերմանացիների կողմից կատարված հանցագործությունների քննությամբ: Մա զգալի սահմանափակում էր, քանի որ հայտնի է, որ ամենադաժան նացիստական վայրագությունների մեծ մասը կատարվել էր այլ ազգերի դեմ: Մինևույն ժամանակ, սակայն, CCL 10-ը հիմք է ընդունել Նյուրմբերգի դատավճիռների հիման վրա դասակարգումը՝ խաղաղության դեմ հանցագործություններ, պատերազմական հանցագործություններ, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ և հանցավոր կազմակերպությունների անդամակցությունը և դրանց համար սահմանված պատասխանատվության եղանակները:<sup>149</sup> Պետք է նշել նաև, որ CCL 10-ը կիրառելու թույլտվությունը գերմանական դատարաններին տարբեր վայրերում տրվել է տարբեր գործիքակազմերով, ինչը հանգեցրել է զգալի տարբերությունների մեղադրանքի և դաժան գործողությունների կատարման համար պատժի հարցում:<sup>150</sup> Դատավճիռների գերակշիռ մեծամասնությունը կայացվեց, երբ հանցագործների մասին ոստիկանությանը հայտնեցին

<sup>147</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/content/germany> :

<sup>148</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ International Nuremberg Principles Academy, Sanya Romeike, Occasional Paper N1, “Transitional justice in Germany after 1945 and after 1990”, էջ 15: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional\\_Justice\\_in\\_Germany.pdf](https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional_Justice_in_Germany.pdf):

<sup>149</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ International Nuremberg Principles Academy, Sanya Romeike, Occasional Paper N1, “Transitional justice in Germany after 1945 and after 1990”, էջ 15: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional\\_Justice\\_in\\_Germany.pdf](https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional_Justice_in_Germany.pdf) :

<sup>150</sup>Տե՛ս Ahrendt, Roland, “Rückwirkungsverbot.” In: Fischer, Torben & Lorenz, Matthias N. (Eds) Lexikon der Vergangenheitsbewältigung in Deutschland. Debatten- und Diskursgeschichte des Nationalsozialismus nach 1945”, 2007թ., էջեր 27-28 :



նացիստների զոհերը, նրանցից կախվածության մեջ գտնվող անձինք կամ ընկերները: Դատավարությունների քանակը արագ աճեց և 1948թ. հասավ գագաթնակետին: 1949թ. վերջի դրությամբ գերմանական դատարանները դատապարտել են 4667 մարդու՝ նացիստական հանցագործությունների համար. այս թիվը համապատասխանում էր արևմտյան օկուպացիոն ուժերի կողմից դատապարտվածների թվին: Այնուամենայնիվ, ամենադաժան և ծանր հանցագործությունների նկատմամբ դատապարտումը հազվադեպ էր տեղի ունենում:<sup>151</sup>

Բայց քննությունների և դատավարությունների թիվը 1950-ականների ընթացքում արագ և զգալիորեն նվազել է: 1949թ.-ին եղել է 465 դատավարություն, հաջորդ տարի այդ թիվը կազմել է 957, 1951թ.-ին՝ 386 և ընդամենը 22 դատավարություն 1959թ.-ին:<sup>152</sup> Անկման պատճառը հանցագործությունների վերաբերյալ ոստիկանությունում, քննչական և դատախազական մարմիններում հաղորդումների թվի նվազումն էր: Ավելին, Գերմանիայի քրեական օրենսգիրքը ոչ ճիշտ և ամբողջական կարգավորում էր նախատեսել՝ ամրագրելով, որ CCL 10-ը և նրա հետադարձ ուժ ունենալու մասին դրույթները չեղյալ են հայտարարվել:<sup>153</sup>

Սակայն 1958թ.-ին քրեական հետապնդման դեպքերը սկսում են շատանալ: Ամերիկայի Միացյալ Նահանգներն ընդդեմ Օտտո Օհինդորֆի և այլոց (հիշյալը դատավարությունը հայտնի է նաև որպես *Ulm Einsatzgruppen* անվանմամբ<sup>154</sup>) դատավարությունը բացառիկ էր իր տեսակով: Այն պատերազմական հանցագործությունների վերաբերյալ տասներկու դատավարություններից իններորդն էր: Վերաբերում էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ԱՄՆ իշխանությունների կողմից օկուպացված տարածքներում իրականացրած հանցագործություններին: Ապրիլից օգոստոս ամիսների ընթացքում Գերմանիայի և Լիտվայի սահմանին տեղի ունեցած հրեաների զանգվածային սպանությունների համար մահապատժի են ենթարկվել ղեկավար սպաների խմբից (*mobile killing squad*,

<sup>151</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ International Nuremberg Principles Academy, Sanya Romeike, Occasional Paper N1, “Transitional justice in Germany after 1945 and after 1990”, էջ 16: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝

[https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional\\_Justice\\_in\\_Germany.pdf](https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional_Justice_in_Germany.pdf) :

<sup>152</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ International Nuremberg Principles Academy, Sanya Romeike, Occasional Paper N1, “Transitional justice in Germany after 1945 and after 1990”, էջ 16: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝

[https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional\\_Justice\\_in\\_Germany.pdf](https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional_Justice_in_Germany.pdf) :

<sup>153</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ International Nuremberg Principles Academy, Sanya Romeike, Occasional Paper N1, “Transitional justice in Germany after 1945 and after 1990”, էջ 16: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝

[https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional\\_Justice\\_in\\_Germany.pdf](https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional_Justice_in_Germany.pdf) :

<sup>154</sup>Տե՛ս Eichmüller, Andreas, “Die strafrechtliche Verfolgung von NS-Verbrechen und die Öffentlichkeit in der frühen Bundesrepublik Deutschland 1949-1958”, In: Osterloh, Jörg & Vollnhals, Clemens (Eds). “NS-Prozesse und deutsche Öffentlichkeit. Besatzungszeit, frühe Bundesrepublik und DDR”, 2011թ. էջեր 53-75:

Einsatzkommando) տասը առաջատար անդամներ:<sup>155</sup> Առաջին խոշորագույն Հոլոքոստի դատավարության ժամանակ<sup>156</sup> բացահայտվել են մի շարք փաստաթղթեր, պատմաբաններ և վկաներ են ներգրավվել: Այս դատավարությունից հետո 1958թ. վերջում Լյուդվիգբուրգում ստեղծվեց Պետական արդարադատության ադմինիստրացիայի կենտրոնական գրասենյակը (այսուհետ՝ Գրասենյակ), որը «Ազգային սոցիալիստական հանցագործությունների (կենտրոնական գրասենյակի)» ուսումնասիրման համար էր ստեղծվել:<sup>157</sup> Որպես նացիստական հանցագործությունների հետաքննություն իրականացնող մարմին գրասենյակը պատասխանատու էր ապացույցների վերլուծության, նախաքննության նախաձեռնման և քրեական հետապնդումների ոլորտում համակարգում իրականացնելու համար: Միայն դրանից հետո ԳՖՀ-ում սկսվեցին համակարգված քրեական հետապնդումներ, ինչի արդյունքում ուսումնասիրությունները զգալիորեն աճեցին: Իր գործունեության առաջին տասներկու ամիսներին Գրասենյակը նախաձեռնել էր շուրջ 500 նախաքննություն՝ ներգրավելով մի քանի հարյուր կասկածյալ:

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Ապացույցների պահպանման, տուժածների վերաբերյալ տեղեկատվության և վկայությունների լայնածավալ հավաքագրման, պետական տեղեկատվության և հանրային արխիվների բացման, պահպանման և համապարփակ հաշվետվությունների հրապարակման նպատակով Գերմանիայում սկսվեցին ստեղծվել ճշմարտության հանձնաժողովներ: Նրանց առաքելությունն էր իրավունքները խախտված անձանց ձայնը լսելի դարձնելը, անցյալի հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկելը և այլն: Սա հանգեցրեց հետագա անցումային արդարադատության նախաձեռնություններին, օրինակ, փոխհատուցման, հին գործերով դատավճիռների կայացման և մասսայական դատավարությունների գործընթացին: Հարցումներ իրականացնող երկու հանձնաժողովներ ստեղծվեցին: 1992թ. Բունդեսթագի (Գերմանիայի խորհրդարանը) կողմից ստեղծվեց **«Գերմանիայում**

<sup>155</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ International Nuremberg Principles Academy, Sanya Romeike, Occasional Paper N1, “Transitional justice in Germany after 1945 and after 1990”, էջ 16: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝

[https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional\\_Justice\\_in\\_Germany.pdf](https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional_Justice_in_Germany.pdf) :

<sup>156</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ International Nuremberg Principles Academy, Sanya Romeike, Occasional Paper N1, “Transitional justice in Germany after 1945 and after 1990”, էջ 17: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝

[https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional\\_Justice\\_in\\_Germany.pdf](https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional_Justice_in_Germany.pdf) :

<sup>157</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ International Nuremberg Principles Academy, Sanya Romeike, Occasional Paper N1, “Transitional justice in Germany after 1945 and after 1990”, էջ 17: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝

[https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional\\_Justice\\_in\\_Germany.pdf](https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional_Justice_in_Germany.pdf) :

Սոցիալիստական միասնություն կուսակցության դիկտատուրայի պատմության և ունեցած դերի վերաբերյալ աշխատող» հանձնաժողովը (Working Through the History and Consequences of the Social Unity Party Dictatorship in Germany), իսկ 1994թ. ստեղծվեց **Գերմանիայի միասնության գործընթացում Սոցիալիստական միասնություն կուսակցության դիկտատուրայի հետևանքները հաղթահարելու հանձնաժողովը (Overcoming of the Consequences of the SED Dictatorship in the Process of German Unity):**<sup>158</sup> Հանձնաժողովները պատասխանատու էին առաջարկություններ ներկայացնել դաշնային կառավարությանը՝ հետաքննվող գործերի քննության ընթացքի, ինչպես նաև մեղադրանքներ առաջադրելու վերաբերյալ, որը հատուկ վերաբերվում էր անցյալին և անցյալում կատարված հանցագործություններին:<sup>159</sup>

Երկու հարցաքննությունների հանձնաժողովների աշխատանքը հանգեցրեց 1998թ-ին **Սոցիալիստական միասնություն կուսակցության դիկտատուրայի վերանայման դաշնային հիմնադրամի ստեղծմանը:**<sup>160</sup> Այս հիմնադրամը նպաստեց համապարփակ, շարունակական և բազմակարծիք վերլուծությունների իրականացմանը՝ հանցագործությունների պատճառների, կոմունիստական դիկտատուրայի, ինչպես նաև գերմանական և եվրոպական բաժանման պատմության և հետևանքների վերաբերյալ: Այդ նպատակով հիմնադրամը 2015թ. շուրջ 555 միջոցառում է կազմակերպել, հրատարակել ավելի քան 200 գրավոր տեքստ, ավելի քան 2500 ծրագիր, վավերագրական ֆիլմեր, թղթեր, ցուցահանդեսներ և սեմինարներ:

Բացի այդ, Սոցիալիստական միասնություն կուսակցությունը (SED) պահպանեց իր դիրքը իշխանական հսկայական անվտանգության ապարատի միջոցով: Այս համակարգի անկյունաքարը եղել է Պետական անվտանգության նախարարությունը (MfS)<sup>161</sup> կամ «Սթասին», որը հիմնադրվել է 1950թ. Գերմանիայում<sup>162</sup>, և որի նպատակն էր արխիվների պահպանումը և նախկին ԳՂՀ ոստիկանության գաղտնի գործողությունների բացահայտումը:

### 3. Փոխհատուցումներ

Գերմանիայի կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կատարված փոխհատուցումները կատարվել են որոշակի առանձնահատկություններով: Մասնավորապես,

---

<sup>158</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ International Nuremberg Principles Academy, Sanya Romeike, Occasional Paper N1, “Transitional justice in Germany after 1945 and after 1990”, էջ 61: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional\\_Justice\\_in\\_Germany.pdf](https://www.nurembergacademy.org/fileadmin/media/pdf/news/Transitional_Justice_in_Germany.pdf): McAdams, ‘Past’ 88-123 էջեր:

<sup>159</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ McAdams, ‘Past,’ 88-123 էջեր:

<sup>160</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ German, Bundesregierung, ‘Bericht,’ էջ 47., Federal Foundation for the Reappraisal of the SED dictatorship:

<sup>161</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.bstu.de/en/the-stasi/overview/>, function , the Ministry for State Security:

<sup>162</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://www.bstu.de/en/the-stasi/overview](https://www.bstu.de/en/the-stasi/overview/), function :

ԳԴՀ-ի կողմից փոխհատուցումները վճարվում էին միայն այն երկրներին, ովքեր դիվանագիտական կապեր ունեն Խորհրդային Միության հետ: Ի տարբերություն նշյալի, ԳՖՀ-ը հատուցումներն իրականացրեց ներառական և ամբողջական սկզբունքով, որի արդյունքում փոխհատուցում ստացան Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Գերմանիայի վայրագություններից տուժած բոլոր երկրները՝ անկախ դիվանագիտական կապերի առկայությունից: Առաջին դեպքում կիրառված տարբերակված մոտեցումը դրդում է վրեժխնդրության և ստեղծում է այնպիսի մթնոլորտ, որը մաքրում է քաղաքական թշնամիներին: Մինչդեռ, երկրորդ դեպքում կիրառված ներառական մոտեցումը նպաստում է արդար և ժողովրդավարական հաստատությունների անվտանգությանը:<sup>163</sup>

Գերմանիայում անցումային արդարադատությունը աչքի ընկավ վերականգնողական հատուցողական բնույթի օրենքների ընդունմամբ: Մասնավորապես, «Տիրագուրկ գույքային հարցերը կարգավորող ակտի» ընդունումը 1990թ.-ին, «Գերմանական ռեյխի և իրավաբանական անձանց իրավահավասար սկզբունքով դրամավարկային պարտավորությունների լուծման դաշնային ակտի» ընդունումը 1957թ.-ին, Քրեական նոր օրենսգրքի ընդունումը, որը փոփոխությունների է ենթարկվել 1994թ.-ին և 2005թ.-ին,<sup>164</sup> «Նախկին ԳԴՀ-ում քաղաքական հետապնդումների ենթարկված զոհերի վերականգնման մասին» չորրորդ օրենքի ընդունումը 2010թ.-ին, «Վերականգնման մասին» առաջին (1992թ.-ին) և երկրորդ օրենքի ընդունումը 1994թ.-ին և այլն:

### **Խորհրդանշական միջոցների կիրառումը**

Գերմանիայում անցումային արդարադատության մեկ այլ գործիք է հուշարձանների, թանգարանների տեսքով նախորդ ռեժիմների իրականացրած իշխանությունը դատապարտելը: Այսպես, Գերմանիայում 2000թ.-ի մայիսին «Կատարողական արվեստների» ամսագրի կողմից իրականացվեց «**Բրունդիբար**» (Brundibar) նախագիծը,<sup>165</sup> որի շրջանակում մանկական օպերայի հուշարձան հիմնվեց, որով հիշատակվում էր Հոլոքոստի արդյունքում մահացած երեխաների մասին:

Մեկ այլ օրինակ է Բեռլինի **Ստաստի քանդակարանը**,<sup>166</sup> որը կապում է անցումային արդարադատության հասկացությունը սոցիալական և մշակութային հիշողության

<sup>163</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://ies.berkeley.edu/blog/transitional-justice-germany-turkey-and-spain> :

<sup>164</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/legislation-denial-crimes/germany\\_denial\\_crimes\\_1998\\_2005.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/legislation-denial-crimes/germany_denial_crimes_1998_2005.pdf) :

<sup>165</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://holocaustmusic.ort.org/places/theresienstadt/brundibar/> :

<sup>166</sup>Տե՛ս հետևյալ հրապարակումը՝ Tony Paterson, The Independent, “Why Berlin cannot forget the Stasi”, 2010թ. հունիսի 17 :

ուսումնասիրությունների հետևյալ և ցույց է տալիս հիշողության տարբեր մակարդակների միջև դինամիկ փոխգործակցությունը:

#### 4. Համակարգային այլ բարեփոխումներ

##### Լյուստրացիա

Գերմանիայի կառավարությունը մի շարք հետաքննություններ է իրականացրել սպանությունների, դրանց փորձերի, առևանգումների, ընտրակեղծիքների և այլ իրավախախտումներում ԳԴՀ-ի ունեցած ներգրավվածությունը պարզելու նպատակով: Այնուամենայնիվ, ԳԴՀ-ում 52050 հետաքննություններից գրեթե կեսը դադարեցվել էր անբավարար ապացույցների և կասկածյալների պակասի պատճառով: Արդյունքում ընդամենը 132 անձ դատապարտվեց:<sup>167</sup>

Ընդհանուր առմամբ այս գործընթացները հանգեցրել են նրան, որ 1990թ-ի հոկտեմբերի 3-ին Գերմանիայում ստեղծվեց նախկին ԳԴՀ Ստասի (The Ministry for State Security or The State Security Service)<sup>168</sup> արխիվների պետական անվտանգության ծառայության դաշնային հանձնակատարը (The Federal Commissioner for the Records of the State Security Service of the former German Democratic Republic Stasi Records),<sup>169</sup> որը հայտնի է նաև «Ստասի արխիվների գործակալություն» անվանմամբ (the Stasi Records Agency): Այն Գերմանիայի բարձրագույն դաշնային գործակալություն է, որը պահպանում է արխիվները, հետաքննում նախկին Ստասի գործակալների գործողությունները, որոնք ծառայել են ոստիկանությունում գաղտնի և օտարերկրյա հետախուզական կազմակերպություններում՝ կոմունիստական ԳԴՀ-ի անունից: <sup>170</sup>

Պետք է նշել, որ այն մարդկանց համար, ովքեր տուժել էին Ստասիի գործակալների և նրանց հետ համագործակցողների պատճառով, լյուստրացիան դարձավ արդարությունն ապահովելու փորձ: Այսպես, Միավորման համաձայնագրով (The Unification Treaty) <sup>171</sup> ամրագրվեց, որ Ստասի գործակալները, նրանց աշխատակիցները և «Գերմանիայի սոցիալիստական միասնություն» կուսակցության (The Socialist Unity Party of Germany, SED) անդամները համարվում էին «ոչ պիտանի մարդիկ»՝ շարունակելու զբաղեցնել նոր կարգերով նախատեսված պաշտոններ, որոնք պահանջում են վստահություն և հանրային

<sup>167</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Alexandra Kathryn Nielsen, Lustration: transitional justice in poland and its continuous struggle to make means with the past”, 2008թ. հունիս, էջ 41: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://apps.dtic.mil/dtic/tr/fulltext/u2/a483448.pdf> :

<sup>168</sup>Հայտնի է նաև Ստասի (Stasi) և Պետական անվտանգության ծառայություն անվանումներով:

<sup>169</sup>Տե՛ս "BStU - BStU in Zahlen", Federal Commissioner for the Stasi Records, 2013թ. հունիսի 30:

<sup>170</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://apps.dtic.mil/dtic/tr/fulltext/u2/a483448.pdf> , էջ 41 :

<sup>171</sup>Գերմաներեն անվանումը՝ Vertrag zwischen der Bundesrepublik Deutschland und der Deutschen Demokratischen Republik über die Herstellung der Einheit Deutschlands (Einigungsvertrag), Միավորման համաձայնագիրը կնքվել է ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի միջև 1990թ, օգոստոսի 31-ին:

պատասխանատվություն: Սահմանափակումները վերաբերելի էին ոչ միայն կառավարության, օրենսդիր կամ դատական իշխանության ներկայացուցիչներին, այլև ներառում էին ուսուցիչներին և ոստիկաններին:<sup>172</sup>

Իրավաբանները, եկեղեցական աշխատողները, մասնավոր ձեռնարկությունների ղեկավարները աշխատանքի ընդունվելուց մանրամասն հարցաքննվում էին գործատուների<sup>173</sup> կողմից՝ բացառելու Ստասիի հետ կապ ունենալը:<sup>174</sup> Միասնության համաձայնագիրն ամրագրում էր, որ 250.000-ից ավելի պետական աշխատողներ դուրս կմնան պետական և քաղաքական կյանքից, մինչև որ նրանք պատշաճ կերպով չանցնեն Ստասիի հետ կապեր ունենալու բացահայտման գործընթացը: Ընդհանուր առմամբ, 400. 000 մարդ էր հետաքննվել Ստասիի հետ կապ ունենալու կասկածանքով, որից 4 տոկոսը Արևելյան Գերմանիայից էր, դրա 3 տոկոսը մեղավոր է ճանաչվել:<sup>175</sup>

Վերոնշյալ ձեռնարկած միջոցներից ակնհայտ է դառնում, որ լյուստրացիոն գործընթացի ժամանակ Գերմանիայում հիմնական շեշտադրում է կատարվել Ստասիի հետ ունեցած կապերի վրա, այլ ոչ թե անհատի իրականացրած գործողությունների, որի արդյունքում Միասնության համաձայնագրի ուժով ընդհանրական պատժի ներքո պատասխանատվություն էին կրում նաև անձինք, ովքեր հանցավոր գործողություններ չեն իրականացրել:

Ուստի հանրային համերաշխության ապահովման համար հարկավոր է հաշվի առնել լյուստրացիայի կիրառման ինչպես դրական կողմերը, այնպես էլ հնարավոր սահմանափակումների շրջանակները: Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ անցումային արդարադատության մեխանիզմները գործում են փոխլրացման և համերաշխության պահպանման սկզբունքների հիման վրա:

### Վերթինգ

Գերմանիայում ընթացող վերթինգային գործընթացը սկսվեց Արևելյան Գերմանիայից: Արևելյան Գերմանիայի քաղաքացիական հասարակության ակտիվիստները 1989թ. պահանջեցին վերթինգ իրականացնել՝ որպես քաղաքացիական հասարակության կողմից

<sup>172</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Maria Los, "Lustration and Truth Claims: Unfinished Revolutions in Central Europe." Law & Social Inquiry 20, no. 1 (Winter 1995), 114-115 էջեր:

<sup>173</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Noel Calhoun, Dilemmas of Justice in Eastern Europe's Democratic Transitions, New York: Palgrave Macmillan, 2004թ., էջ 7:

<sup>174</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://apps.dtic.mil/dtic/tr/fulltext/u2/a483448.pdf>, էջ 42 :

<sup>175</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Jon Elster, ed. Retribution and Reparation in the Transition to Democracy. Cambridge: Cambridge University Press, 2006թ.:

առաջարկվող պատժամիջոցի ձև:<sup>176</sup> Գերմանիայում վերթինգ իրականացվեց բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ:

### 1.2.2. Իսպանիայի Թագավորություն

1939-1975 թվականներին Իսպանիայի ղեկավարն էր գեներալ Ֆրանցիսկո Ֆրանկոն:<sup>177</sup> Երբ 1931թ. միապետությունը Իսպանիայում փոխարինվեց հանրապետությամբ, Ֆրանկոն և այլ գեներալներ, դուրս գալով հանրապետության դեմ, կազմակերպեցին հեղաշրջման փորձ, ինչից հետո սկսվեց Իսպանիայի քաղաքացիական պատերազմը: Մոտ կես միլիոն մարդկանց կյանքի գնով 1939թ-ին Ֆրանկոն հաղթեց պատերազմում՝ Իսպանիայում հիմնելով բռնապետություն:<sup>178</sup> Նա կազմակերպեց մի շարք համակենտրոնացման ճամբարներ,<sup>179</sup> ներառյալ՝ բռնի աշխատանքի և մահապատիժների ուղարկելով հիմնականում այն քաղաքական գործիչներին, ովքեր դեմ էին նրա գաղափարախոսությանը կամ համարվում էին նրա թշնամիները:<sup>180</sup> Մահապատիժ ենթարկվածների թիվը հասավ 200.000-ից 400.000-ի:<sup>181</sup> Ֆրանկոյի ժամանակ Իսպանիան պաշտոնապես չեզոք էր, բացառությամբ իսպանացի կամավորականների կողմից կազմավորված Կապույտ դիվիզիայի, որը կոչվում էր արևելյան ճակատում ԽՍՀՄ-ի դեմ:

1950-ականներին Ֆրանկոն մեղմեց իր ռեժիմը՝ դիկտատուրայից անցնելով կիսապյուրիստական ավտորիտար ռեժիմի:<sup>182</sup> Ֆրանկոն համարվում էր ամենաակնառու հակակոմունիստը աշխարհում, և նրա ռեժիմին սատարում էր ԱՄՆ-ը: Այսպես, Ֆրանկոյին դիմեցին ՄԱԿ-ի անդամ դառնալու համար: Այս դեպքում նա նաև ՆԱՏՕ-ի հետ համագործակցելու և վերջինիս պաշտպանության ներքո գտնվելու հնարավորություն էր ձեռք

<sup>176</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ United Nations Development Programme Bureau for Crisis Prevention and Recovery Justice and Security Sector Reform; Publication II, Vetting Public Employees in Post-conflict Settings Operational Guidelines, 2006թ. էջ 49: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-UNDP-Global-Vetting-Operational-Guidelines-2006-English>:

<sup>177</sup>Տե՛ս Spanish Biographical Dictionary, Real Academia de la Historia, 2009թ.:

Իսպանական աղբյուրը՝ Sinova, J. (2006) La censura de prensa durante el franquismo [The Media Censorship During Franco Regime]. Random House Mondadori. ISBN 84-8346-134-X :

<sup>178</sup>Տե՛ս “El “ideal supremo” totalitario de Franco que bendicen con dinero público los académicos de la Historia. Elplural.com.”, 2012թ. մայիսի 26 :

<sup>179</sup>Ֆրանկոյական համակենտրոնացման ճամբարների և Սպիտակ տեռորի մասին է խոսքը:

<sup>180</sup>Տե՛ս Sinova, J. (2006) La censura de prensa durante el franquismo [The Media Censorship During Franco Regime]. Random House Mondadori. ISBN 84-8346-134-X.

<sup>181</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Richards, Michael “A Time of Silence: Civil War and the Culture of Repression in Franco’s Spain, 1936–1945”, Cambridge University Press, 1998թ., էջ 11:

<sup>182</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Stanley G. Payne, The Franco Regime, 1936–1975, 625-628 էջեր: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://books.google.am/books?id=S6Ie\\_HYgjUwC&pg=PA645&dq=Francisco+Franco+biography&hl=fr&sa=X&ei=XuryVJXoFYz5UIffgYgE&ved=0CCMQ6AEwAA#v=onepage&q=Francisco%20Franco%20biography&f=false](https://books.google.am/books?id=S6Ie_HYgjUwC&pg=PA645&dq=Francisco+Franco+biography&hl=fr&sa=X&ei=XuryVJXoFYz5UIffgYgE&ved=0CCMQ6AEwAA#v=onepage&q=Francisco%20Franco%20biography&f=false) :

բերում: 1960-ականներին Իսպանիայի տնտեսությունը սկսեց կայուն աճ ունենալ, և սկսվեցին ժողովրդավարական բարեփոխումներ: 1975 թվականին Ֆրանկոյի մահից՝ հետո սկսվեց ժողովրդավարությանն անցնելու գործընթացը:

## 1. Քրեական արդարադատություն

Ակնհայտ է, որ Իսպանիայի ուշացած անցումային արդարադատության գործընթացը օրգանապես կտրել է կապը այն անձանց հետ, ովքեր պետք է հաղորդումներ տային կատարված հանցագործությունների մասին և, ըստ այդմ, հետաքննություններ իրականացվեին դրանց հիման վրա: Հենց այս օրինակի վրա պարզ է դառնում, որ անցումային արդարադատությունը պետք է լինի գերարագ՝ նախ հասարակության իրազեկման և նախնական ինստիտուտների ընտրության տեսանկյունից, այնուհետև՝ պրակտիկ գործողությունների անցնելու առաջնահերթությամբ պայմանավորված: Եթե օրենսդրական փոփոխություններին զուգահեռ վկայակոչվեին կոնկրետ Ֆրանկոյի ժամանակաշրջանում կատարված հանցագործությունները և ներկայացվեին զոհերը, ապա ուղղակիորեն սկիզբ կդրվեր զոհերի փոխհատուցման գործընթացին: Սա իր հերթին կհանգեցներ ուսումնասիրությունների և հետաքննությունների մեծածավալ նախաձեռնությանը: Բայց բոլոր թերությունները աստիճանաբար երկարացրել են գործընթացը և մի շարք հարցեր կորցրել են իրենց արդիականությունը: Միաժամանակ պետք է նշել, որ ժամանակի ընթացքում սերնդափոխության արդյունքում երիտասարդ քաղաքական ուժն ավելի մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում անցյալի հանցագործությունների վերաբերյալ,<sup>183</sup> սակայն դա արդեն հետանցումային շրջանն էր, որը բավականին զիջում էր այլ երկրներում անցումային արդարադատության ներդրված և գործող ինստիտուտներին:

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Իսպանիայում մի քանի կարևորագույն հարցերի շուրջ, ինչպիսին էր ճշմարիտ հանձնաժողովների ստեղծումը, կոնսենսուս և վերջնական համաձայնություն չկար: Եվ ակնհայտ է, որ զոհերը գրեթե չեն տեսել ճշմարտության վերականգնում և հատուցողական գործունեություն՝ քաղաքացիական պատերազմի և դիկտատորական շրջանի հանցագործությունների համար:<sup>184</sup>

Մյուս կողմից, 2005թ. սեպտեմբերին Իսպանիայի սահմանադրական դատարանը ամրագրեց, որ միջազգային իրավունքի սկզբունքները գերակա են ներպետական

<sup>183</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Nadia Hajji, Duke university, “Post-transitional justice in Spain: passing the historic memory law”, 2014թ., էջ 98 :

<sup>184</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/news/much-work-ahead-spain-facing-ghosts-past> :



օրենսդրության նկատմամբ՝ թույլատրելով, որ ազգային դատարանները բացի իրենց պետական սահմաններում հանցագործություններից քննեն նաև Իսպանիայի սահմաններից դուրս կատարված միջազգային բնույթ կրող հանցագործությունները: Այսպես, 2006թ. հունվարի 11-ին սահմանադրական դատարանը հետաքննություն է սկսում չինացի պաշտոնյաների, այդ թվում նախկին նախագահ Ջիանը Ցեմենի դեմ, ով, իբր, մասնակցել էր Տիբեթի ցեղասպանությանը:<sup>185</sup> Սա փաստում էր, որ գործընթացը թեև դանդաղ էր ընթանում, բայց ձևավորվում էր իրավագիտակցության մի աստիճան, երբ պետք էր անդրադառնալ կոնկրետ հանցագործությունների բացահայտմանը:

Այսինքն, ընդհանուր առմամբ, հետանցումային շրջանում սկսվեցին քայլերը՝ ճշմարտության որոնմանն ուղղված, մինչդեռ անցումային արդարադատությունը ենթադրում է միջոցների արագ ձեռնարկում, որպեսզի այնուհետև այլևս ժամանակավրեպ չլինի:

### 3. Փոխհատուցումներ

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում զեկուցող Պարլո դե Գրեֆը՝ որպես ճշմարտության, արդարության վերականգնման և նախկին իրավիճակի չկրկնման երաշխիքների ապահովող, իր զեկույցում ներկայացրեց, որ հատուցումների պակասը հանգեցնում է զոհերի իրավունքների խախտման:<sup>186</sup> Ակնհայտ է, որ հատուցումների և ճշմարտության բացահայտմանն ուղղված գործընթացները խիստ փոխկապակցված են: Ուստի, եթե հետաքննություններ չեն եղել, չի կարող խոսք լինել հատուցումների մասին:

Հարկ է նշել, որ իսպանական իրավիճակը կարող է մի շարք մեթոդաբանական և կիրառական խնդիրների հարցում օրինակ ծառայել, որ անցյալում տեղի ունենած մարդու իրավունքների խախտումների մասին պետք է բարձրաձայնել անմիջապես:

Իսպանիան այն երկրներից է, որտեղ անցումային արդարադատությունը խիստ դանդաղ է ընթացել: Վերջապես, 2000թ-ին իսպանական կառավարությունը սկսեց իր ներառական մոտեցումը՝ իրականացնելով արդարության վերականգնում դիկտատոր Ֆրանկոյի իշխանության ներքո տուժածների նկատմամբ: Երեսուն տարուց ավել պահանջվեց, որպեսզի երկիրը սկսի առաջնորդվել հատուցողական-վերականգնողական քաղաքականությամբ: Այսպես, 2007թ. ընդունվեց «Պատմական հիշողության մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք):<sup>187</sup> Օրենքը միջազգային և տեղական հանրության կողմից ուշադրության արժանացավ անցյալում

<sup>185</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Nadia Hajji, Duke university, “Post-transitional justice in Spain: passing the historic memory law”, 2014թ., էջ 90 :

<sup>186</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/news/much-work-ahead-spain-facing-ghosts-past> :

<sup>187</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Nadia Hajji, Duke university, “Post-transitional justice in Spain: passing the historic memory law”, 2014թ., էջ 83:

տեղի ունեցած իրադարձություններին անդրադառնալու համար: Այնուամենայնիվ, օրենքը չէր անդրադառնում պատմական դեպքերի մասին որևէ հիշատակման, չէր հաստատում, թե մարդու իրավունքների ի՞նչ խախտումներ են արձանագրվել, չէր դատապարտում Ֆրանկոյի ռեժիմը՝ նրա դաժան գործողությունների համար: Օրենքը պարզապես ճանաչեց յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը՝ անձնական և ընտանեկան հիշողություն ունենալու կամ իրենց նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ հետաքննության իրավունք ունենալու:<sup>188</sup>

#### **4. Համակարգային բարեփոխումներ**

Համակարգային բարեփոխումների մաս կազմող լյուստրացիան և վեթինգը Իսպանիայում չեն կիրառվել: Նախ պայմանավորված էր նրանով, որ Ֆրանկոյի մահից հետո միապետական կուսակցական կարգերի ժխտմամբ ստեղծված ժողովրդավարական հանրապետությունը խնդիր ուներ պետության հիմքում դնել ժողովրդավարական հիմնարար սկզբունքները: Իսպանիայում չկային այնպիսի փաստահավաք մարմիններ, արխիվների վերհանմամբ զբաղվող անձիք, որոնք կմեկնարկեին լյուստրացիոն կամ վեթինգային գործընթացներ: Վեթինգային հանձնաժողովների չստեղծումը խիստ երկարաձգեց անցումային արդարադատության այս գործիքների ներդրումը:

Ուստի, ամփոփելով, կարող ենք ասել, որ Իսպանիայում հասարակության պասիվ ներգործության միջոցների, քաղաքական դանդաղ զարգացումների և ընդհանուր անցումային արդարադատության գաղափարական հենքի պակասի պատճառով հիմնական մի շարք մեխանիզմներ չգործեցին:

#### **1.2.3. Պորտուգալիայի Հանրապետություն**

Անցումային արդարադատությունը Պորտուգալիայում ևս չի հաջողել: 1932-1968թթ. Անտոնիո դի Օլիվեյրա Սալազարը Պորտուգալիայում նախարարների խորհրդի նախագահն էր և Պորտուգալիայի փաստացի բռնապետը: 1930թ-ին հիմնել է «Ազգային միություն» ֆաշիստական կուսակցությունը, մասնակցել է 1933թ-ի սահմանադրության նախագծի նախապատրաստմանը, որի արդյունքում Պորտուգալիայում ստեղծվեց կորպորատիվ ֆաշիստական պետություն:<sup>189</sup> Այնուհետև տեղի ունեցավ հեղափոխություն և

<sup>188</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Boyd, “Politics of History”, էջ 146:

<sup>189</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://global.britannica.com/biography/Antonio-de-Oliveira-Salazar> :

տապալվեց Սալազարյան բռնապետական ռեժիմը, որի շուրջ առկա էր ն՛ ձախ, ն՛ աջ քաղաքական կուսակցությունների համաձայնությունը, քանի որ վերջիններս ցանկանում էին տարբերվել նախորդ ռեժիմից: Անցումային արդարադատության գործընթացն իր ազդեցությունն է ունեցել երկրի պետական մարմինների, պաշտոնատար անձանց, քաղաքացիական ծառայողների, քաղաքական վերնախավի և մասնավոր հատվածի վրա: Հեղափոխության քաղաքականությունը ներառում էր ռազմական ներգրավվածությունը, բնակչության մեծ մասի սոցիալական իրավունքի ընդլայնումը և տնտեսության առանցքային հատվածների կոլեկտիվացումը:<sup>190</sup> Պորտուգալիայում անցումային արդարադատության արդյունքում նոր իշխանությունների կողմից վերջ դրվեց անպատժելիության մթնոլորտին: Սակայն, ընդհանուր առմամբ, Պորտուգալիան նվազագույն քայլեր է ձեռնարկել անցումային արդարադատության մեխանիզմների ներդրման գործում:

## 1. Քրեական արդարադատություն

Պորտուգալիայում 1974թ. ապրիլի 25-ի հեղափոխությունից հետո ժողովրդավարացման գործընթացը միևնույն միտումն ուներ, ինչ Իսպանիայում: Սակայն այստեղ նոր քաղաքական դերակատարների հիմնական մտահոգություններն այն էր, որ անցում կատարելով այլ իրավական, քաղաքական, սոցիալական և տնտեսական կառուցվածքային համակարգի, տարբեր կողմերի միջև քաղաքական կոնֆլիկտներ կարող են ծագել: Հետևաբար, դատաիրավական համակարգը միայն առաջնային էր դարձել ժողովրդավարական իշխանության ապահովման համար:<sup>191</sup> Հեղափոխությունից 40 տարի անց ընդունվում է, որ դատական համակարգի ժողովրդավարացումը և իրավական մշակույթների անհրաժեշտ փոփոխությունները դեռևս թերի են: Անհրաժեշտ է նշել, որ Պորտուգալիայում բարդ անցումային տարիների մասին հիշատակը (1974-1982թթ.) ժամանակակից պորտուգալական հասարակության կողմից ընկալվում է որպես ավելի վիճահարույց ու հակասական խնդիր, քան ինքնին դիկտատուրան:<sup>192</sup> 1975թ-ին ընդունվեց նաև «Համաներման մասին» թիվ 729/75 դեկրետ-

---

<sup>190</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://www.researchgate.net/publication/237271801\\_Authoritarian\\_Legacies\\_Transitional\\_Justice\\_and\\_State\\_Crisis\\_in\\_Portugal's\\_Democratization](https://www.researchgate.net/publication/237271801_Authoritarian_Legacies_Transitional_Justice_and_State_Crisis_in_Portugal's_Democratization), Pinto 2006թ.:

<sup>191</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ © Cambridge University Press, “International Journal of Law in Context, 12,1.”, 2016թ., 24–41 էջեր:

<sup>192</sup>Տե՛ս հետևյալ զեկույցը՝ Luc Huyse, Transitional Justice after War and Dictatorship Learning from European Experiences (1945–2010), Final Report, 2013թ. հունվար, էջ 14: Չեկույցը հասանելի է <http://www.cegesoma.be/docs/media/Recherche/TransJustFinalReport.pdf> հղմամբ:

օրենքը: Ընդունվեց «Քաղբանտարկյալների նկատմամբ համաներման մասին» հրամանագիրը<sup>193</sup> և 1974թ-ի ապրիլի 26-ին քաղաքական բանտարկյալներին շնորհվեց համաներում: Մեկ օրվա ընթացքում ավելի քան 120 բանտարկյալ ազատ արձակվեց: 1996թ-ին ընդունվեց «1976թ. հուլիսի 27-ից մինչև 1991թ. հունիսի 21-ը քաղաքական պատճառներով կատարված գործողությունների համաներման մասին» թիվ 9/96 օրենքը:<sup>194</sup>

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Պորտուգալիան չի փորձել որևէ ճշմարտության որոնման մեխանիզմ ստեղծել: 1977թ. ապրիլին ստեղծվել է «Ֆաշիզմի վերաբերյալ սև գրքի հանձնաժողովը (Comissão do Livro Negro sobre o Fascismo, Commission for the Black Book on Fascism)՝ դասական ճշմարտության հանձնաժողովներին քիչ նմանությամբ պետական մարմին: Այն սկսում է գործել այն ժամանակաշրջանում, երբ Պորտուգալիան հաշտվել էր անցյալի հետ և ընդունել իրեն բաժին հասած ժառանգությունը: Հանձնաժողովը ղեկավարում էր նախարարների խորհուրդը և բաղկացած էր սոցիալիստական և հասարակական-քաղաքական մտավորականներից և գործիչներից: Օգտագործելով բնապետության արխիվի բոլոր աղբյուրները՝ Հանձնաժողովը հրատարակեց նախնական փաստաթղթեր պարունակող 22 գիրք, որոնք դատապարտեցին նախկին ռեժիմի ռեպրեսիաները, քաղբանտարկյալների նկատմամբ վերաբերմունքը, գրաքննությունը և տնտեսական խմբերի ու ոստիկանության միջև համագործակցությունը: Կար նպատակ, որ հետագայում հանձնաժողովի նույն անվանմամբ պետք է գործեր թանգարան, սակայն սա ձախողվեց, քանի որ 1991թ. կառավարությունը չաջակցեց ծրագրին:

## 3. Փոխհատուցումներ

1976թ-ին ընդունվեց «Փոխհատուցումներ իրականացնելու մասին» թիվ 43/76 դեկրետ-օրենքը:<sup>195</sup> Այս հրամանագրով հաստատվեցին, որ փոխհատուցումներ հատկացնելու էր վարչապետը և ֆինանսների նախարարը: 1981-2006թթ. ընթացքում 132 քաղաքացի ստացել է փոխհատուցումներ:<sup>196</sup> Ինչպես տեսնում ենք, Սալազարյան բռնապետական կարգերը

---

<sup>193</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/amnesty-laws/dec\\_political-pris\\_1974\\_pt.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/amnesty-laws/dec_political-pris_1974_pt.pdf) :

<sup>194</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/amnesty-laws/portugal\\_amnesty\\_law\\_1996.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/amnesty-laws/portugal_amnesty_law_1996.pdf) :

<sup>195</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/compensations/portugal\\_compensation\\_law\\_1976.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/compensations/portugal_compensation_law_1976.pdf) :

<sup>196</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://www.researchgate.net/publication/264240066\\_From\\_Ruptured\\_Transition\\_to\\_Politics\\_of\\_Silence\\_the\\_Case\\_of\\_Portugal](https://www.researchgate.net/publication/264240066_From_Ruptured_Transition_to_Politics_of_Silence_the_Case_of_Portugal) :

տապալվել են 1970թ-ին, իսկ անցումային արդարադատության կարևորագույն էլեմենտներից՝ փոխհատուցումների գործընթացը, սկսվել է տարիներ անց:

1977թ-ին կառավարությունն ընդունվեց նաև «Պետական նպաստների մասին» թիվ 171/77 դեկրետ-օրենքը:<sup>197</sup> Այս հրամանագրով հաստատվում էին կենսաթոշակները այն անձանց համար, ովքեր գոհ էին համարվում: Սոցիալիստական վարչապետ Մարիո Սոարեշի կողմից այս օրենքի հիման վրա ստեղծված մարմինները պետք է ազատության և ժողովրդավարության պաշտպանության բացառիկ արժեքների համար գործեին: 1982թ-ին նոր օրենսդրություն է ընդունվում՝ կենսաթոշակների հատկացումը կարգավորելու համար, որում փոփոխություններ են կատարվում 2003 թվականին:<sup>198</sup>

Պորտուգալիայում 1989թ-ին կատարած սահմանադրության վերանայումն ուներ հիմնարար նշանակություն, քանի որ վերջինիս արդյունքում հնարավորություն ընձեռվեց իրականացնել անցումային շրջանում ազգայնացված տնտեսության խոշոր հատվածների սեփականաշնորհում:

#### 4. Համակարգային բարեփոխումներ

##### Լյուստրացիա

1975թ-ի մարտի 11-ին ընդունվեց «Լյուստրացիայի մասին» թիվ 123/75 հրամանագիրը:<sup>199</sup> 1974թ. ապրիլի 25-ին Պորտուգալիայի նախագահը, երկրի նախարարների գրասենյակի անդամները, միակ և իշխող կուսակցության ղեկավարները, պաշտոնատար անձինք անմիջապես ազատվեցին իրենց պաշտոններից՝ 1/74 օրենքի, 2/74 օրենքի, 170/74 օրենքի և 1974 թվականի ապրիլի 25-ի 172/74 հրամանագրերի հիման վրա:<sup>200</sup> Որոշ պաշտոնատար անձիք երկրից արտաքսվեցին, որոնց շարքում էր երկրի նախագահը: Այսպես, 1974թ.-ի ապրիլի 26-ին զինվորական խմբի ուղեկցությամբ Պորտուգալիայի նախագահ Ամերիկո Թոմասը արտաքսվեց Մադեյրա կղզի, իսկ մայիսի 20-ին՝ իր ընտանիքի հետ միասին՝ Ռիո դե Ժանեյրո, որտեղ 4 տարի մնաց:

<sup>197</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/content/portugal> :

<sup>198</sup>Տե՛ս [https://www.researchgate.net/publication/264240066\\_From\\_Ruptured\\_Transition\\_to\\_Politics\\_of\\_Silence\\_the\\_Case\\_of\\_Portugal](https://www.researchgate.net/publication/264240066_From_Ruptured_Transition_to_Politics_of_Silence_the_Case_of_Portugal)

<sup>199</sup>Տե՛ս [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/illustration-mechanisms/portugal\\_decree\\_law\\_1975.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/illustration-mechanisms/portugal_decree_law_1975.pdf) :

<sup>200</sup>Տե՛ս [https://www.researchgate.net/publication/264240066\\_From\\_Ruptured\\_Transition\\_to\\_Politics\\_of\\_Silence\\_the\\_Case\\_of\\_Portugal](https://www.researchgate.net/publication/264240066_From_Ruptured_Transition_to_Politics_of_Silence_the_Case_of_Portugal) :

1975թ.-ի գեներալ Սպինոլայի<sup>201</sup> հետ աշխատած 60 գեներալներ, ովքեր ավտորիտար ռեժիմում ճնշումներ էին գործադրում, հեռացվեցին աշխատանքից: Արդյունքում, ռազմական և ոստիկանական կառույցներում աշխատող քաղաքացիների՝ աշխատանքից զանգվածային հեռացումներ սկսվեցին, ինչպես նաև վերացվեց «Ազգային հանրապետական ռազմական գվարդիայի» ինստիտուտը:

#### 1.2.4. Չեխիայի Հանրապետություն

Չեխիայում անցումային արդարադատությունը ներկայացնելիս պետք է նախ պատմական ակնարկ կատարել Չեխոսլովակիայի վերաբերյալ: Այն Կենտրոնական Եվրոպայում ինքնիշխան պետություն էր, որը գոյություն է ունեցել 1918թ. հոկտեմբերից, երբ հայտարարեց իր անկախությունը Ավստրո-Հունգարիայի կայսրությունից:<sup>202</sup> 1939-1945թթ. իր պարտադրված բաժանումից և նացիստական Գերմանիայի կազմի մեջ մտնելուց հետո Չեխոսլովակիան դե ֆակտո գոյություն չունեց, բայց իր կառավարությունը շարունակում էր գործել: 1948-1990թթ. Չեխոսլովակիան Արևելյան բլոկի կազմում էր:<sup>203</sup> 1968թ.-ի հունվարի 5-ից Չեխոսլովակիայում սկսվեց հեղափոխական շարժում, որը հայտնի է նաև **Պրահայի գարուն** անվանմամբ<sup>204</sup>: Չեխոսլովակիայի համար այն քաղաքական ազատականացման ժամանակաշրջան էր՝ որպես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կոմունիստական դարձած պետություն: 1989թ.-ի մարքսիստ-լենինիստական կառավարությունները և կոմունիզմը զիջում էին իրենց դիրքերն ամբողջ Եվրոպայում: Խորհրդային կարգերի փլուզման գործընթացին զուգահեռ հեղափոխական իրադարձություններ տեղի ունեցան Պրահայում՝ խաղաղ ցույցերի տեսքով: Այդ իսկ պատճառով այն ստացավ «թավշյա հեղափոխություն» անվանումը: 1989թ. նոյեմբերի 17-ին ոստիկանության կողմից ուսանող մասնակիցների նկատմամբ ճնշումներ գործադրվեցին: Ոստիկանության ճնշումներից անմիջապես հետո ցույցին մասնակից ուսանողները դիմեցին մտավորականներին, արվեստագետներին և թատերախմբերին, կինոարտադրողներին և հասարակական դժգոհության ալիքով նախաձեռնեցին

<sup>201</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Pinto, António Costa, “Coping with the Double Legacy of Authoritarianism and Revolution in Portuguese Democracy, South European Society and Politics”, 2010թ., էջ 399: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [http://repositorio.ul.pt/bitstream/10451/11536/1/ICS\\_ACPinto\\_Coping\\_ARI.pdf](http://repositorio.ul.pt/bitstream/10451/11536/1/ICS_ACPinto_Coping_ARI.pdf) :

<sup>202</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.juls.savba.sk/ediela/ks/1990/6/ks1990-6.lq.pdf> :

<sup>203</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Loth, Wilfried, *The Division of the World, 1941–1955: 1941–1955*, Routledge, 1988թ., էջ297 :

<sup>204</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Bischof, Günter, et al. eds., “*The Prague Spring and the Warsaw Pact Invasion of Czechoslovakia in 1968*” (Lexington Books, 2010), էջ 510:

քաղաքացիական անհանգստության առաջին ակտիվ կենտրոնները:<sup>205</sup> Այսպիսով սկսվեցին մեծաթիվ մարդկանց գործադուլները: Երկու օր անց որպես քաղաքական շարժում ստեղծվեց «Քաղաքացիական Ֆորում» (Občanské fórum - OF): Այն միավորում էր ոչ միայն կրոնական խմբերի, այլև դժգոհ և բողոքող քաղաքացիների, ընդհուպ «Ազգային ճակատ» կուսակցությունից որոշ կոմունիստներին: Երկրի փողոցներում և հրապարակում հավաքված ժողովրդի ուժեղ ճնշման հետևանքով նոյեմբերի 27-ին լայնածավալ ընդհանուր գործադուլ էր սկսվել: Կոմունիստները, որոնց ներկայացնում էր դաշնային վարչապետ Լադիսլավ Ադամեկը, ընդդիմության հետ բանակցություններ սկսեցին հեղափոխական շարժումը սկսելու առաջին շաբաթվա վերջում: Բանակցությունների անմիջական արդյունքը առաջին կարևորագույն քայլերի վերաբերյալ էր, մասնավորապես, ազատականացում՝ քաղբանտարկյալների ազատ արձակում, սահմանադրական այն հոդվածների վերացում, որոնք կապված են հասարակության մեջ Կոմունիստական կուսակցության առաջատար դերի հետ, ընդդիմադիր խմբերի գործունեության օրինականացում, մեդիաների նկատմամբ սահմանափակումների արգելքների բացառում և այլն: Վարչապետ Ադամեկը դեկտեմբերի 3-ին ձևավորեց կառավարություն, որտեղ դեռևս գերակշռում էին Կոմկուսի անդամները՝ 20 տեղից 15-ը: Այնուամենայնիվ, դժգոհ զանգվածները ակտիվորեն մերժեցին նոր դաշնային կառավարությունը: Բողոքի ակցիաները մեծաքանակ էին՝ չվերածվելով բռնության որևէ դրսևորման: Հաջորդ օրերին ընդդիմադիր շարժումը հասկացավ, որ պարտությունից խուսափելու համար ստիպված էր իշխանություն փնտրել: Արդյունքում, վարչապետ Ադամեկը հրաժարական տվեց հասարակական զանգվածային ճնշումների ներքո: Չեխոսլովակիայի Կոմունիստական կուսակցության քաղաքական վերնախավը անկայուն վիճակում էր: 1990թ. հունվարին հիմնական փոփոխությունը Չեխոսլովակիայի Սոցիալիստական Հանրապետության դաշնային ժողովի ընտրություններն էին, որը կազմված էր 350 անդամներից: Չեխոսլովակիայի Կոմկուսի 242 պատգամավորից 122-ը հրաժարական էին տվել կամ ազատվել: Այսպես, 1993թ. Չեխոսլովակիան խաղաղ եղանակով բաժանվեց երկու պետության՝ Չեխիայի Հանրապետության և Սլովակիայի Հանրապետության: Մի քանի օր անց տեղի ունեցավ 150 անդամից բաղկացած Սլովակիայի Ազգային Խորհրդի (Slovak National Council, SNR) կազմի փոփոխություն: Նախկին 106 կոմունիստական պատգամավորներից 21-ը հրաժարական տվեցին, իսկ մնացած տեղերը հատկացվեցին մյուս քաղաքական կուսակցություններին և հասարակական կազմակերպություններին:<sup>206</sup>

<sup>205</sup>Տե՛ս հետևյալ հրապարակումը՝ “Transformation: The Czech Experience”, Published by People in Need with the support of the Ministry of Foreign Affairs of the Czech Republic, Prague, 2006թ., էջ 13:

<sup>206</sup>Տե՛ս հետևյալ հրապարակումը՝ “Transformation: The Czech Experience”, Published by People in Need with the support of the Ministry of Foreign Affairs of the Czech Republic, Prague, 2006թ., էջ 15:

Այսպես, կառավարման փոփոխությունները՝ զուգորդված հասարակական ընդգծված ակտիվությամբ և քաղաքական արագ և դինամիկ քայլերով, հանգեցրին նրան, որ անցումային արդարադատության մի շարք մեխանիզմներ ներդրվեցին:

## 1. Քրեական արդարադատություն

1995թ. սկզբին «Կոմունիզմի հանցագործությունների հետաքննության և վավերագրության գրասենյակը» (the Office for the Documentation and Investigation of the Crimes of Communism) ստեղծվել է որպես ներքին գործերի նախարարության վարչական միավոր:<sup>207</sup> Այն 1948-1989թթ. ընթացքում այնպիսի քրեական գործեր է հարուցել, որոնք քաղաքական դրդապատճառներից ելնելով մնացել են չբացահայտված նախկին՝ Չեխոսլովակիայի կոմունիստական ռեժիմի ժամանակ: Այս իշխանության խնդիրն էր պատմել բոլոր պատմական անարդարությունների, գործողությունների մասին, դաժանության և հանցագործությունների մասին, որոնք կատարվել են կոմունիստական ռեժիմի և նրա ներկայացուցիչների կողմից: Իր գոյության սկզբից այս գրասենյակը համադրում էր արտադատական և դատական եղանակները՝ անցյալին վերաբերող փաստեր հավաքելու համար<sup>208</sup>:

Դատական օրենսդրական բարեփոխումների շարքին է դասվում 1990թ-ին ընդունված «Դատական վերականգնման վերաբերյալ թիվ 119/1990» ակտը, 1991թ-ին ընդունված «Արտահերթ դատական վերականգնման մասին թիվ 87/1991» օրենքը<sup>209</sup> և այլ իրավական ակտեր, որոնք կարգավորում են քաղաքական հետապնդումների քննության հարցերը:

Կարող ենք փաստել, որ դատական և արտադատական եղանակներով իրականացվող քրեական արդարադատությունը ընդհանուր առմամբ փոփոխությունների է ենթարկվել նորմատիվային մակարդակով:

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

2002թ. ընդունվեց «Նախկին պետական անվտանգության ծառայության կողմից կատարված աշխատանքների ընթացքում ստեղծված ֆայլերի բացահայտման և որոշ հետագա գործողությունների մասին թիվ 107/2002» բանաձևը՝ փոփոխելով թիվ 140/1996 կանոնակարգը:

2007թ. «Ընդհանուր ռեժիմների և անվտանգության ծառայությունների արխիվի ուսումնասիրության ինստիտուտի և որոշ ակտերի փոփոխությունների մասին» թիվ 181/2007

<sup>207</sup>Տե՛ս հետևյալ հրապարակումը՝ “Transformation: The Czech Experience”, Published by People in Need with the support of the Ministry of Foreign Affairs of the Czech Republic, Prague, 2006թ., էջ 30:

<sup>208</sup>Տե՛ս հետևյալ հրապարակումը՝ “Transformation: The Czech Experience”, Published by People in Need with the support of the Ministry of Foreign Affairs of the Czech Republic, Prague, 2006թ., էջ 30:

<sup>209</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/personal-rehabilitation/czech\\_extrajudicial\\_rehabilitation\\_1991.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/personal-rehabilitation/czech_extrajudicial_rehabilitation_1991.pdf):



ակտի ընդունմամբ ստեղծվեց Ամբողջատիրական (տոտալիտար) կարգերի և անվտանգության ծառայությունների արխիվի ուսումնասիրության ինստիտուտը (the Institute for the Study of Totalitarian Regimes and the Security Services Archive),<sup>210</sup> որով փաստահավաքագրման գործընթացի հիմք դրվեց: Մասնավորապես, հավաքագրվեց, գրանցվեց և ըստ կատարված հանցագործությունների խմբավորվեց ռազմական անվտանգության և այն ապահովող պետական մարմինների պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկատվությունը:

Չեխիայի Հանրապետությունում, որպես այդպիսին, առկա չէր որևէ հանձնաժողով, որը հնարավորություն կընձեռեր զոհերին պատմել իրենց պատմությունները: Անշուշտ, վերոնշյալը չի կարող որակվել որպես ճշմարտության որոնման լավագույն փորձ, քանի որ մի շարք նախկին բանտարկյալներ բարձրացրել են այն հարցը, որ իրենց պատմությունները խմբագրվել են, հետևաբար լիարժեք չեն եղել:<sup>211</sup>

### 3. Փոխհատուցումներ

Չեխոսլովակիայի Դաշնային Հանրապետության Դաշնային ժողովն ընդունեց «Գույքային խախտումների հետևանքների մեղմացման վերաբերյալ թիվ 403/1990» ակտը՝<sup>212</sup> կատարելով լրացումներ Քաղաքացիական օրենսգրքում: Համաձայն նշյալ իրավական ակտի՝ արխիվները, որոնք օրենքի ուժով հանդիսանում են Չեխիայի կամ վերջինիս իրավաբանական անձանց սեփականությունը, չեն կարող փոխանցվել որևէ այլ անձի, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Խոսելով փոխհատուցումների մասին, պետք է նաև անդրադառնալ նաև փոխհատուցման դրսևորումներից հրապարակային աճուրդներին: Առաջին հրապարակային աճուրդները վերաբերում էին մասնավոր ոլորտի (խանութներ, ռեստորաններ և այլ նմանատիպ կազմակերպություններ) սեփականության վերադարձին: Սա շարունակվեց մինչև 1993թ-ի դեկտեմբերը: Փետրվարին Դաշնային ժողովը ընդունեց «Մեծ սեփականաշնորհման մասին» ակտը՝ հնարավորություն ընձեռելով պետական գույքի փոխանցումը մասնավոր բիզնեսին:<sup>213</sup>

Այսպես, Չեխիայում ակտիվ տնտեսական ռեֆորմ էր «Չեխոսլովակիայում Կոմկոուսի անշարժ գույքի երկարաժամկետ օգտագործման չեղյալ հայտարարելու մասին թիվ 212/1990»

<sup>210</sup>Տե՛ս հետևյալ հրապարակումը՝ “Transformation: The Czech Experience”, Published by People in Need with the support of the Ministry of Foreign Affairs of the Czech Republic, Prague, 2006թ., էջ 30:

<sup>211</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://www.researchgate.net/publication/312959332\\_What\\_We\\_Know\\_About\\_Transitional\\_Justice\\_Survey\\_and\\_Experimental\\_Evidence\\_What\\_We\\_Know\\_About\\_Transitional\\_Justice](https://www.researchgate.net/publication/312959332_What_We_Know_About_Transitional_Justice_Survey_and_Experimental_Evidence_What_We_Know_About_Transitional_Justice) :

<sup>212</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/other-legislation/czech-republic-czech\\_rep\\_act\\_mitigation\\_certain\\_property\\_violations\\_1990.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/other-legislation/czech-republic-czech_rep_act_mitigation_certain_property_violations_1990.pdf) :

<sup>213</sup>Տե՛ս հետևյալ հրապարակումը՝ “Transformation: The Czech Experience”, Published by People in Need with the support of the Ministry of Foreign Affairs of the Czech Republic, Prague, 2006թ., էջ 24:

օրենքի,<sup>214</sup> «Չեխիայի և Սլովակիայի Դաշնային Հանրապետության ժողովրդի սոցիալիստական երիտասարդական կազմակերպության գույքի վերացման մասին թիվ 497/1990» օրենքի,<sup>215</sup> «Չեխիայի ու Սլովակիայի Դաշնային Հանրապետության ժողովրդին Կոմկուսի գույքի վերադարձի մասին թիվ 496/1990» սահմանադրական ակտի<sup>216</sup> ընդունումը: Մայիսի 21-ին Դաշնային ժողովի (Federal Assembly) կողմից ընդունված Հողի և գյուղատնտեսական այլ գույքի սեփականության իրավունքի ակտը (The act on the ownership of land and other agricultural property), որը օրինական սեփականատերերին գույքի վերականգնման վերաբերյալ օրենսդրական փաթեթի մաս էր կազմում: Այն անդրադառնում էր 1948-1989թթ. հողատարածքի և անտառների սեփականատերերի ոչ իրավաչափ հետևանքների մեղմացմանը:<sup>217</sup>

Ամփոփելով տնտեսական փոփոխությունները և համապատասխան օրենսդրական բարեփոխումները՝ կարող ենք եզրակացնել, որ Չեխիայում հատուցումների գործընթացը, որն ակտիվացրեց ազատ շուկայական տնտեսական կացութաձևի կարևորագույն տարրերը (ակտիվների վերադարձը փոքր բիզնեսներին, բաժնետերերի ներդրում, սեփականության վերադարձ՝ ամբողջական գույքի տրամադրման տեսքով և այլն), հստակ տարանջատումներ դրեց քաղաքականության և բիզնեսի միջև՝ փորձելով բացառել քաղաքական դաշտի և բիզնես ոլորտի սերտաճումը: Սա միանշանակ անցումային արդարադատության տնտեսական կոմպոնենտի գլխավոր ձեռքբերումն է: Թեև որոշ տեսաբաններ Չեխիայում տեղի ունեցող գործընթացները համարում են թերի, ընդհանուր առմամբ հեղափոխությունից հետո ազատ շուկայական հարաբերությունների խթանումը կոնկրետ քայլերի միջոցով է իրականացվել:

Անցումային արդարադատության մեխանիզմների ներդրման ելակետային պայմանների առկայությունը պարզելու համար ուսումնասիրվել են իրավական, քաղաքական, տնտեսական և սոցիալական գործոնները: Նմանատիպ խնդիրը հաղթահարվել է Չեխիայում՝ շեշտադրում կատարելով նախ գույքի վերադարձին, ապա փոքր բիզնեսի խրախուսմանը:

### **Խորհրդանշական միջոցներ**

Չեխիայում իրավունքները խախտված զոհերի հիշատակը որոշվեց հավերժացնել **անհատական հուշարձանների** եղանակով՝ այդ եղանակով շեշտադրելով մարդու իրավունքների

<sup>214</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/restitution-property/czech\\_restitution\\_law\\_212.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/restitution-property/czech_restitution_law_212.pdf) :

<sup>215</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/restitution-property/czech\\_restitution\\_law\\_497.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/restitution-property/czech_restitution_law_497.pdf) :

<sup>216</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/other-legislation/czech-republic-/czech\\_rep\\_constitutional\\_act\\_497\\_1990.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/other-legislation/czech-republic-/czech_rep_constitutional_act_497_1990.pdf) :

<sup>217</sup>Տե՛ս հետևյալ հրատարակումը՝ “Transformation: The Czech Experience”, Published by People in Need with the support of the Ministry of Foreign Affairs of the Czech Republic, Prague, 2006թ., էջ 24:

բարձրագույն արժեք լինելը: Այսպես, Չեխիայի Հանրապետության մայրաքաղաք Պրահայում գործում է **Երկրորդ դիմադրության շարժման հուշարձանը** կամ **Դիմադրության դրոշի հուշարձանը**, որի վրա Չեխիայի դրոշն է ամրացված: Այն նվիրված է 1938-1945թթ. Չեխոսլովակիայի նկատմամբ նացիստական օկուպացիայի երկրորդ շարժմանը: Այն ունի գրություն, որտեղ նշվում է *«Չեխ ազգի ազատության համար Երկրորդ դիմադրության զոհերի և հաղթողների համար. հարգանքի տուրք մատուցեք Երկրորդ դիմադրության ժամանակ հանուն հայրենիքի ազատության զոհվածներին և հաղթողներին»:*

#### **4. Համակարգային բարեփոխումներ**

##### **Լյուստրացիա**

Ի տարբերություն Սլովենիայի, Սլովակիայի, Լեհաստանի և Հունգարիայի, Չեխիայում կիրառվել են ամենախիստ լյուստրացիոն պրակտիկաները՝ փաստացի դատապարտելով նախկին կոմունիստներին: Այսպես, 1991թ-ի հոկտեմբերի 4-ին ընդունվեց «Չեխիայի ու Սլովակիայի Հանրապետության պետական մարմիններում և կազմակերպություններում որոշակի գործառույթների կատարման լրացուցիչ պայմաններ ստեղծելու մասին թիվ 451/1991» բանաձևը (հատնի է որպես Մեծ լյուստրացիայի օրենք):<sup>218</sup> Նշյալ օրենքով կոմունիստ ոստիկանության գաղտնի բոլոր աշխատակիցները սև ցուցակում էին գտնվում՝ պետական պաշտոններ զբաղեցնելու համար (քաղաքացիական ծառայության բարձրագույն օղակներում, դատական իշխանությունում, դատախազությունում, անվտանգության տեղեկատվական ծառայությունում, զինված ուժերի պաշտոններում, պետական ձեռնարկությունների կառավարման ոլորտում, կենտրոնական բանկում, երկաթգծերում, ավագ ակադեմիական պաշտոններում և հանրային էլեկտրոնային լրատվամիջոցներում): Չեխոսլովակիայի փլուզումից հետո այս օրենքը մնացել էր Չեխիայում և ամբողջական գործընթացն ավարտվել է 2000թ-ին:

Բավականին խոսուն են լյուստրացիոն գործընթացում ներգրավված անհատների թվերը: Չեխիայում 2009թ-ի մարտի դրությամբ սկսվել է 473,398 լյուստրացիոն գործ, որի արդյունքում կայացվել է 10,325 դրական ելքով որոշում:<sup>219</sup> Այսինքն, Չեխիայում շուրջ 10,000 անձ կորցրել է իր պաշտոնը՝ լյուստրացիոն խիստ դրսևորումների պատճառով: Չեխոսլովակիայում և Չեխիայում լյուստրացիայի վերաբերյալ օրենքների առաջնային նպատակը ոչ թե եղել է արդարության

<sup>218</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/illustration-mechanisms/czech\\_lustration\\_law\\_1991.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/illustration-mechanisms/czech_lustration_law_1991.pdf):


<sup>219</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունները՝ Lavinia Stan, 2009թ. , Lavinia Stan and Nadya Nedelsky (eds), Encyclopedia of Transitional Justice CUP, 2013թ.:

վերականգնումը, այլ երաշխիքների սահմանումը, որպեսզի 1948թ-ի փետրվարին տեղի ունեցած կոմունիստական հեղաշրջումը և բռնի դիկտատուրան այլևս չկրկնվեն:

2011թ-ին ընդունվեց «Հակակոմունիստական ընդդիմության և դիմադրություն ցուցաբերած մասնակիցների վերաբերյալ» թիվ 262/2011 ակտը:<sup>220</sup> Այս ակտը սահմանում է, թե ինչ է հակակոմունիստական ընդդիմությունը և դիմադրությունը, մեկնաբանում պայմանները, որոնց առկայության դեպքում անձը դիտվում է դիմադրություն ցուցաբերած մասնակից:

Ստորև ներկայացված է լյուստրացիոն նպատակների ընդհանուր նկարագիրը, որոնք քննարկման դրվեցին խորհրդարանում, իսկ քվեարկության պատկերը ներկայացված է Գծապատկեր 2-ում:

**Գծապատկեր 2**



**Հասարակական ակտիվիզմ**

<sup>220</sup>Տե՛ս

հետևյալ

հղմամբ՝

[http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/other-legislation/czech-republic/-czech\\_rep\\_act\\_262\\_2011.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/other-legislation/czech-republic/-czech_rep_act_262_2011.pdf):

Չեխիայում հասարակական ակտիվիզմը հիմնականում ջատագովել է համաներում շնորհելը: Դեկտեմբերի 10-ին՝ Մարդու իրավունքների համաշխարհային օրվա կապակցությամբ «Ամենաթի Ինթերնեյշնլ»-ը (the local branch of Amnesty International) կազմակերպում է տասնօրյա մարաթոն, որի ժամանակ քաղաքացիական հասարակությունը աջակցություն էր ցուցաբերում քաղբանտարկյալներին և վերջիններիս սատարելու նպատակով նամակներ էին հղում իրավասու պետական մարմիններին:<sup>221</sup> Օրինակ՝ նախագահին կամ կառավարությանն ուղղված նամակների միջոցով քաղաքացիները կարող էին խնդրել կոնկրետ անձանց ազատ արձակել:

### 1.2.5. Հունգարիա

1989թ. Հունգարիայի Ժողովրդական Հանրապետությունում կոմունիստական կարգերը տապալվեցին:<sup>222</sup> Սա Հունգարիայի համար խոշոր շրջադարձային իրադարձություն և որոշիչ պահ էր: Սոցիալիստական պետության տապալումը երկրի ապագայի մասին բուռն ու հուզական բանավեճերի առիթ դարձավ: Շատերը կարծում էին, որ առանց անցյալում տեղի ունեցած վայրագությունների համար մեղավորներին պատասխանատվության ենթարկելու կամ զոհերին փոխհատուցումներ տրամադրելու որևէ իմաստալից անցում տեղի չի ունենա: 1990թ-ի մայիսին կայացած առաջին ազատ խորհրդարանական ընտրությունները հանրաքվեի եղանակով տեղի ունեցան: Հունգարիան, ինչպես և նախկին խորհրդային դաշինքի երկրներից շատերը, բազմաթիվ փորձեր է արել անցումային արդարադատության տարբեր մեխանիզմների կիրառման համար, սակայն գործընթացը հաջողված չի համարվում:<sup>223</sup> Հունգարիայում անցումային արդարադատությունը հիմնականում օգտագործվել է քաղաքական մանիպուլյացիայի նպատակով: Հունգարիայի անցումային արդարադատության երկու հիմնական բաղադրիչը՝ քրեական օրենսդրության հետադարձ ուժ ունենալը և ոստիկանության գաղտնի ֆայլերի հրապարակումը, ցույց են տալիս այս գործընթացի ձախողումը:

Պետք է փաստել, որ քաղաքական էլիտայի սուր գաղափարական բաժանման և բնակչության անտարբերությամբ պայմանավորված անցումային արդարադատության

<sup>221</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.radio.cz/en/section/curraffrs/amnesty-czech-republic-launches-letter-writing-campaign-on-world-human-rights-day> :

<sup>222</sup> Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Roberts Adam, “Civil Resistance in the East European and Soviet Revolutions”, Albert Einstein Institution, 1991թ.: Հեղափոխության անվանումը հունգարերեն թարգմանաբար նշանակում է լույս, «ռեժիմի փոփոխություն» կամ «համակարգի փոփոխություն»:

<sup>223</sup> Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Csilla Kiss, “The Misuses of Manipulation: The Failure of Transitional Justice in Post-Communist Hungary”, *Europe-Asia Studies*, Vol. 58, No. 6, 2006թ., 925-940 էջեր:

մեխանիզմների հաջողված գործարկում տեղի չունեցավ: Այսպիսով, համակարգային մոտեցումների և իրական քաղաքական կամքի բացակայության պատճառով, նոր ձևավորված իշխանության կողմից պաշտոնների զբաղեցմամբ և մանիպուլյացիոն գործընթացներով պայմանավորված էլ ձախողված է համարվում Հունգարիայի փորձը:

## 1. Քրեական արդարադատություն

Ազրեսիան որպես հանցանք ամրագրվեց 81/1945 հրամանագրի ընդունմամբ,<sup>224</sup>որի 11-րդ հոդվածի համաձայն՝ ռազմական հանցագործություն կատարած է համարվում այն անձը,

- 1) ով նպաստել է 1939թ-ի նացիստական պատերազմում Հունգարիայի մասնակցությանը, ձեռք է բերել ղեկավար պաշտոն պատերազմում կամ չի կարողացել կանխել նման մասնակցությունը, թեև ունեցել է դրա հնարավորությունը պետական կառավարման ոլորտում ունեցած քաղաքական, տնտեսական կամ ինտելեկտուալ դիրքորոշման շնորհիվ,
- 2) ով որպես կառավարության կամ խորհրդարանի անդամ կամ հանրային պաշտոնյա, նախաձեռնել կամ մասնակցել է Հունգարիայի ժողովրդին պատերազմի հրահրող բանաձևի ընդունմանը, սակայն ունեցել է իրական հնարավորություն այն կանխելու համար,
- 3) ով փորձել է կանխել զինադադարի պայմանագրի կնքումը կամ բռնություն է կիրառել՝ օգտագործելով իր ազդեցությունը ռազմական կամ քաղաքական կյանքում:

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Ճշմարտության ու հաշտեցման հանձնաժողովը ստեղծվել է Հունգարիայում 1945թ., որը Հարավային Աֆրիկայում մշակված մոդելի հիման վրա պետք է գործեր: Հանձնաժողովը 1945թ-ից ի վեր կատարված քաղաքական հանցագործություններին պետք է անդրադառնար: Գաղափարը Հունգարիայում հետպատերազմյան դատավարություններում կիրառվող վերականգնողական արդարության մոդելի ներդրումն է: 1945թ-ի հունվարի 28-ին Բուդապեշտի Ազգային կոմիտեի հինգ անդամների առաջին նիստում ընդունվեց որոշում Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովի ստեղծման մասին (the Formation of a Truth and Reconciliation

<sup>224</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Tamás Hoffmann, “Post-World War II. Hungarian Criminal Justice and International Law – The Legacy of the People’s Tribunals”, էջ 3: Աշխատությունը հասանելի է հետևյալ Տե՛ս հղմամբ՝ [http://real.mtak.hu/20004/1/hoffmann\\_postwwii\\_hungarian\\_criminal\\_justice\\_and\\_international\\_law.pdf](http://real.mtak.hu/20004/1/hoffmann_postwwii_hungarian_criminal_justice_and_international_law.pdf)

Commission)<sup>225</sup> 1919թ-ի մարտի 21-ի (Հունգարիայի Խորհրդային Հանրապետության հռչակման) ժամանակաշրջանում Հունգարիայի ժողովրդի հետ տեղի ունեցած աղետալի գործողությունները, պատճառները և ծավալը հնարավորինս ամբողջական պատկերը նկարագրելու և հաստատելու համար: 1945թ. հունվարի 20-ին Հունգարիայի ժամանակավոր ազգային կառավարությունը հատկապես անցյալի հակամարտություններից բխող հանցագործությունների և զոհերի ճակատագրով էր հետաքրքրված, բայց այս գործընթացները սահմանափակ էին, ոչ լրիվ:<sup>226</sup>

### 3. Փոխհատուցումներ

Խորհրդային Միության փլուզումից հետո Հունգարիայում բանավեճեր էին տեղի ունենում՝ հողերի (գույքի) վերականգնման ծրագիր մշակելու վերաբերյալ: Հունգարիայում մի շարք քաղաքացիներ և անկախ քաղաքական գործիչներ խթանում էին հողերի վերականգնման գործընթացի իրականացումը: Սակայն ոլորտային ներդրումների առաջնահերթություններում չկողմնորոշվելը գործող իշխանություններին ստիպեց դիմել Հունգարիայի սահմանադրական դատարան:

Այսպիսով, սահմանադրական դատարանը ներգրավվեց այն ժամանակ, երբ քաղաքականություն մշակողները, չցանկանալով պատասխանել խնդրահարույց հարցերին, որոշեցին դատարանին խնդրել խորհրդակցական եզրակացություն տալ այն հարցի վերաբերյալ, թե արդյո՞ք կառավարությունը կարող է առանձնացնել տրամադրած փոխհատուցման տեսակը: Սահմանադրական դատարանը ամբողջովին սահմանեց Հունգարիայի հատուցման-վերականգնման քաղաքականությունը: Դատարանը որոշեց, որ հողը չպետք է առանձնացնել մյուս ակտիվներից և անհրաժեշտ է հավասար պայմաններ ստեղծել այլ գույքային իրավունքների պաշտպանության համար ևս:

### 4. Համակարգային բարեփոխումներ

#### *Լյուստրացիա*

Հունգարիան ամբողջությամբ չկիրառեց լյուստրացիոն գործիքները, ուստի դրա մասնակի կիրառումն ամենակարճն է տևել ողջ հետխորհրդային երկրների շարքում՝ սկսվելով 1994թ-ին և ավարտվելով 2005թ-ին: Դրա հետևանքով Հունգարիան թույլ է տվել նախկին որոշում կայացնողներին, կուսակցությունների ղեկավարներին և գաղտնի գործակալներին պահպանել իրենց հանրային պաշտոնները հետկոմունիստական շրջանում, եթե նրանք հրապարակային

<sup>225</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.on-curating.org/issue-28-reader/proposal-for-hungary-1945.html#.W-J1jZP7TIU> :

<sup>226</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.on-curating.org/issue-28-reader/proposal-for-hungary-1945.html#.W-KHCZP7TIV> :

կամ գրավոր կերպով ընդունում էին, որ իրենց պաշտոնավարումների ընթացքում տեղի են ունեցել մարդու իրավունքների զանգվածային խախտումներ: Այսինքն, հանցագործությունների կատարման փաստի ձևական ընդունման միջոցով պաշտոնյաները և նախկինում որոշում կայացողները մնացին իրենց դիրքում: Հետագայում, լյուստրացիայի մի քանի դրսևորումների շնորհիվ պաշտոնները դադարեցրեցին մոտավորապես 500 պաշտոնատար անձ: Հարկ է նշել, որ նույնիսկ չեն ձևավորվել հետկոմունիստական գաղտնի ուժերի բացահայտման ցանկեր:

### ***Հասարակական ակտիվիզմ***

Անհրաժեշտ է ընդգծել, որ Հունգարիայում արդարադատության մեխանիզմների և գործիքների կիրառելիության ձախողման պատճառներից մեկը՝ խիստ սահմանափակ հասարակական ակտիվիզմն էր:

Համեմատական սահմանադրական իրավունքի դոկտոր, Կենտրոնական եվրոպական համալսարանի ուսումնասիրող և դասախոս Ռինատա Ուիցսն<sup>227</sup> նշում է. *«Հունգարիայում տիրող ռեպրեսիվ ռեժիմի ներկայացուցիչները երկրում տիրող իրավիճակը ներկայացնում էին ծայրահեղ, և հասարակությունը Հունգարիան ընկալում էր որպես զոհի կարգավիճակ ունեցող երկիր: Հիմնական որոշում կայացնողները ներկայացնում էին, թե իբր անում են ամեն բան՝ իրավիճակը փոփոխելու համար»:* Այսպիսով, փորձ էր արվում ներկայացնել, թե բարեփոխումների գործընթացները կախված են արտաքին գործոններից: Հետևաբար, այն միջավայրում, երբ հասարակությունը համոզված էր, որ փոփոխությունները պայմանավորված չեն ներքին գործոններով, դրսևորում էր արտահայտված պասիվություն:

### **1.2.6. Լեհաստանի Հանրապետություն**

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Լեհաստանում տիրում էր ռեպրեսիվ և ավտորիտար կոմունիստական ռեժիմ: Սենատոր Զբիգնև Ռոմաշևսկու խոսքերով՝ *Լեհաստանի ոստիկանությունում 70.000 գաղտնի սպաներ են ծառայել, որոնք կապ են ունեցել կոմունիստական կուսակցության էլիտաների հետ և նպատակ են հետապնդել հասարակությունում լայնամասշտաբ հսկողություն իրականացնել և պահպանել շորթումների և խոշտանգումների ռեժիմը՝ որպես գործիքակազմ կիրառելով պաշտոնների կեղծ նշանակումները:*<sup>228</sup> Կոմունիստական ռեժիմի ժամանակ ոստիկանության գաղտնի աշխատակիցները օգտագործում էին իրենց դիրքը՝ օտարերկրյա հետախուզական

<sup>227</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://people.ceu.edu/renata\\_uitz](https://people.ceu.edu/renata_uitz) :

<sup>228</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.humanityinaction.org/knowledgebase/165-justice-or-revenge-the-human-rights-implications-of-lustration-in-poland> :



ծառայությունների հետ կապի մեջ գտնվելով: Վերջիններիս վրա մեծ ազդեցություն է ունեցել Մոսկվան, որը 1990-ական թվականներին հասունացած բազմաթիվ քաղաքական սկանդալների պատճառ է հանդիսացել, այդ թվում՝ Մոսկվայի բարձրաստիճան պաշտոնյաների փորձերը՝ ուղղված Լեհաստանում տնտեսական գերակայություն ձեռք բերելուն: Այդպիսի օրինակ է հանդիսանում Մոսկվայի կողմից բենզինի արդյունաբերության պատասխանատու լեհական ընկերության նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու ջանքերը<sup>229</sup>: Սակայն, տեղի ունեցավ կոմունիստական համակարգի փլուզում, որով պայմանավորված էր անցումային արդարադատության կիրառումը:

Լեհաստանում երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ խորհրդային և գերմանական ճնշումներ և վայրագություններ են կատարվել: Գերմանիայի վարած քաղաքականությունը Լեհաստանում բնակվող երեք միլիոն հրեաների մահվան պատճառ դարձավ: Գերմանիան վարում էր դաժան և կոշտ քաղաքականություն, մասնավորապես, կենտրոնացման ճամբարների միջոցով, որոնք կարևոր նշանակություն ունեին Լեհաստանի հրեական բնակչության 90% -ից ավելիին համակարգված ոչնչացման գործում:<sup>230</sup>

## 1. Քրեական արդարադատություն

1989թ-ին Լեհաստանում ընդունվեց «**Համաներում հայտարարելու և որոշ հանցագործությունների և իրավախախտումների վարույթների կարճման մասին**» օրենքը (Act on amnesty and annulment of certain crimes and offences):<sup>231</sup> Այն անդրադառնում է համաներման շրջանակում դատական այն գործերի կարճմանը, որոնք վերաբերում են քաղաքական հանցագործություններին՝ գործադուլների, ցույցերի ընթացքում դրսևորված ոչ իրավաչափ գործողություններին: Դրանք հիմնականում տեղի են ունեցել 1980թ-ի մայիսի 31-ից մինչև 1989թ-ի մայիսի 29-ը:

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Լեհաստանի Ազգային հիշատակի ինստիտուտը (The Institute of National Remembrance) Լեհաստանի խորհրդարանի կողմից 1998թ-ի դեկտեմբերի 18-ին վերափոխվել է և կոչվել

<sup>229</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.humanityinaction.org/knowledgebase/165-justice-or-revenge-the-human-rights-implications-of-lustration-in-poland>:

<sup>230</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Donald L. Niewyk; Francis R. Nicosia, “The Columbia Guide to the Holocaust”, Columbia University Press, 2012թ. հուլիս 24, էջ 73:

<sup>231</sup>Տե՛ս

հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/amnesty-laws/poland\\_amnesty\\_1989.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/amnesty-laws/poland_amnesty_1989.pdf):

հետևյալ

Լեհաստանի ժողովրդի դեմ հանցագործությունների քննության հանձնաժողով (Commission for the Prosecution of Crimes against the Polish Nation, IPN):<sup>232</sup> Այն, ըստ էության, փոխարինում էր 1945թ-ի նացիստական հանցագործությունների ուսումնասիրությամբ զբաղվող նախկին մարմին:<sup>233</sup> Հանձնաժողովը սկսեց իր գործունեությունը 2000թ-ի հուլիսի 1-ին: Իր հիմնադրման առաջին տասնհինգ տարիների ընթացքում հանձնաժողովը հավաքեց ավելի քան 90 կիլոմետր (56 մղոն) տարածքի չափով արխիվային փաստաթղթեր՝ 794 հրապարակում, կազմեց 453 ցուցանմուշ, անցկացրեց 817 գիտաժողով և նախաձեռնեց 30 կրթական ինտերնետային պորտալ: Նույն ժամանակահատվածում ինստիտուտի հետազոտողները հարցազրույցներ են անցկացրել ավելի քան 103,000 վկայի հետ և հարցաքննել քրեական հանցագործությունների համար մեղադրվող 508 անձի, որոնց վերաբերյալ դատարանների կողմից 137 դատավճիռ է կայացվել:<sup>234</sup> Հանձնաժողովը ուսումնասիրում էր 1939թ. Լեհաստանում կատարված նացիստական և կոմունիստական հանցագործությունների վերաբերյալ արխիվները, ինչպես նաև 1989թ. հեղափոխությունից հետո փաստաթղթեր էր ներկայացնում հեղափոխության վերաբերյալ և տարածում իր ուսումնասիրությունների արդյունքները հանրության շրջանում: Հանձնաժողովի մասին նոր օրենքի համաձայն, որը ուժի մեջ է մտել 2007թ-ի մարտի 15-ին, Հանձնաժողովը պետք է պարտադիր կատարի լեհական օրենսդրությամբ սահմանված լուստրացիոն ընթացակարգերը:<sup>235</sup>

Այնուամենայնիվ, այդ օրենքի հիմնական դրույթների սահմանադրականությունը վիճարկվեց 2007թ-ի մայիսի 11-ին Լեհաստանի սահմանադրական դատարանում,<sup>236</sup> ուստի Հանձնաժողովի դերը լուստրացիոն գործընթացում ներկայումս անհասկանալի է:

---

<sup>232</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://ipn.gov.pl/pl?dzial=&id=4792> : Լեհական աղբյուրը՝ “(in Polish) Nowelizacja ustawy z dnia 18 grudnia 1998 r. o Instytucie Pamięci Narodowej – Komisji Ścigania Zbrodni przeciwko Narodowi Polskiemu oraz ustawy z dnia 18 października 2006 r. o ujawnianiu informacji o dokumentach organów bezpieczeństwa państwa z lat 1944–1990 oraz treści tych dokumentów” :

<sup>233</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Tismaneanu, Vladimir; Iacob, Bogdan, “Remembrance, History, and Justice: Coming to Terms with Traumatic Pasts in Democratic Societies. Central European University Press. 2015թ., էջ 243:

<sup>234</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Tismaneanu, Vladimir; Iacob, Bogdan, “Remembrance, History, and Justice: Coming to Terms with Traumatic Pasts in Democratic Societies. Central European University Press. 2015թ., էջ 243:

<sup>235</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://ipn.gov.pl/pl?dzial=&id=4792> : Լեհական աղբյուրը՝ Nowelizacja ustawy z dnia 18 grudnia 1998 r. o Instytucie Pamięci Narodowej – Komisji Ścigania Zbrodni przeciwko Narodowi Polskiemu oraz ustawy z dnia 18 października 2006 r. o ujawnianiu informacji o dokumentach organów bezpieczeństwa państwa z lat 1944–1990 oraz treści tych dokumentów.

<sup>236</sup>Տե՛ս հետևյալ հրապարակումը՝ “Polish court strikes down spy law”. BBC News. May 11, 2007. Retrieved June 5, 2018. :

Հանձնաժողովը Եվրոպական Հիշողության և խղճի կազմակերպման պլատֆորմի հիմնադիր անդամ է:<sup>237</sup>

### 3. Փոխհատուցումներ

Ի տարբերություն տարածաշրջանի այլ երկրների՝ Լեհաստանում անցումային արդարադատության կարևորագույն մեխանիզմներից հատուցումները բավականին արագ են ընթացել սկզբնական շրջանում: Այսպես, 1991թ-ին ընդունվեցին «Հակամարտության մասնակիցների և պատերազմի և հետպատերազմյան ճնշման զոհ դարձած որոշ մարդկանց մասին» օրենքը<sup>238</sup> և «Վերականգնողական ակտը»:<sup>239</sup> 2009թ-ին ընդունվեց «1956-1989թթ. հանցավոր խմբի գործունեության հետևանքով զոհերի ընտանիքների փոխհատուցման մասին» ակտը:

Լեհաստանի իշխանությունները Գերմանիայից պահանջել են և այժմ էլ շարունակում են պահանջել փոխհատուցում տալ Երկրորդ համաշխարհային Ֆպատերազմի ժամանակ Լեհաստանում տեղի ունեցած զանգվածային կորուստների դիմաց: Լեհաստանի խորհրդարանի հետազոտական գրասենյակը պատրաստում էր վերլուծություն այն մասին, թե արդյո՞ք Լեհաստանը կարող է օրինական դարձնել պահանջը:<sup>240</sup>

#### **Պաշտոնական ներողությունների հայտնում**

Լեհաստանի Հանրապետության նախագահ Ալեքսանդր Կվասնևսկին 2001թ-ի հուլիսի 10-ին Լեհաստանի Ջեդվարոն քաղաքում պաշտոնական ներողություն է խնդրել հրեա ժողովրդից՝ նշելով, որ հրեաների նկատմամբ կատարված հրկիզումներին, սպանություններին և ծեծերին մասնակցած լեհերը համարվում են հանցագործներ, մեղավոր են Լեհաստանի Հանրապետության առաջ և պարտավոր են վերականգնել հրեաների խախտված իրավունքները և վերադարձնել զոհերից գողացված սեփականությունը:<sup>241</sup>

<sup>237</sup>Տե՛ս հրապարակումը՝ Czech Prime minister Petr Nečas, "The years of totalitarianism were years of struggle for liberty", Platform of European Memory and Conscience, հետևյալ հղմամբ՝ <http://www.memoryandconscience.eu/2011/10/20/czech-prime-minister-petr-necas-the-years-of-totalitarianism-were-years-of-struggle-for-liberty/> :

<sup>238</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/other-legislation/poland/poland\\_act\\_combattants\\_2007.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/other-legislation/poland/poland_act_combattants_2007.pdf): Այն փոփոխվել է 2007 թվականին:

<sup>239</sup>Տե՛ս հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/personal-rehabilitation/poland-rehabilitation\\_1991.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/personal-rehabilitation/poland-rehabilitation_1991.pdf) :

<sup>240</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/news/poland-eyes-demanding-wwii-reparations-germany>:

<sup>241</sup>Տե՛ս հղմամբ՝ [http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/public-apologies/poland\\_kwasniewski\\_apology\\_jews\\_2001.pdf](http://www.proyectos.cchs.csic.es/transitionaljustice/sites/default/files/maps/info/public-apologies/poland_kwasniewski_apology_jews_2001.pdf) :

### Խորհրդանշական միջոցների կիրառում

Լեհաստանի հրեաների պատմության թանգարանը (POLIN Museum of the History of Polish Jews, Muzeum Historii Żydów Polskich) Վարշավայի նախկին գետտոյի տարածքում գտնվող թանգարան է:<sup>242</sup> Վարշավայում Լեհաստանի հրեաների պատմությանը նվիրված խոշոր թանգարանի ստեղծման գաղափարը 1995թ. նախաձեռնել է Լեհաստանի հրեական պատմական ինստիտուտի ասոցիացիան (The Association of the Jewish Historical Institute of Poland):<sup>243</sup> Թանգարանը բացվել է 2013թ. ապրիլի 19-ին: Հիմնական ցուցահանդեսը բացվել է 2014թ-ի Հոկտեմբերին: Այն աչքի է ընկնում նրանով, որ մուլտիմեդիայի եղանակով ներկայացնում է Լեհաստանում հրեական համայնքի մինչև Հոլոքոստը հազար տարի շարունակվող զարգացած շրջանը:

Բելցեկում (Bełżec) գերմանացիների կողմից ստեղծված հրեաների համար ոչնչացման կենտրոն կար: 1942թ-ի մարտից մինչև դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում սպանվել է շուրջ 450,000 մարդ, որոնց մեծ մասը Լեհաստանում ապրող հրեաներ էին, ինչպես նաև Գերմանիայի, Ավստրիայի, Չեխիայի և Սլովակիայի հրեա քաղաքացիներ էին:<sup>244</sup> 1934թ-ի մարտի 17-ին Բելցեկի առաջին տեղահանության նպատակը հենց հրեաների ոչնչացումն էր: 2004թ-ի Բելցեկում հիմնադրվել է թանգարանը՝ որպես Մանրադեքի պետական թանգարանի մասնաճյուղ (State Museum at Majdanek) և դրա հիմնական պարտականություններից մեկը Բելցեկում գերմանական «մահվան ճամբարի» (death camp) զոհերի վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրությունն է:

#### 4. Համակարգային բարեփոխումներ

##### Լյուստրացիա

Թեև 1990-ական թվականներին ընդունվեց լյուստրացիոն օրենսդրություն, սակայն քաղաքական իրավիճակից պատճառով օրենսդրությունն իր նպատակին չճառայեց: Լեհաստանում «Լյուստրացիայի մասին» ակտն ընդունվել է 1997թ-ին, որը համապատասխանում էր Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1996թ-ի 1096 բանաձևին՝ նախկին կոմունիստական տոտալիտար համակարգերի փոփոխմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:<sup>245</sup> Նշյալ բանաձևի համաձայն՝ խաղաղ գոյակցության և

<sup>242</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://www.polin.pl/en/system/files/attachments/miniguide\\_en\\_0.pdf](https://www.polin.pl/en/system/files/attachments/miniguide_en_0.pdf) .:

<sup>243</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://forward.com/news/world/173741/polish-museum-set-to-open-spectacular-window-on-je/?p=all&p=all#ixzz2hj3rUl32> :

<sup>244</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.belzec.eu/en/history/camp\\_history/2](http://www.belzec.eu/en/history/camp_history/2) :

<sup>245</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Alexandra Kathryn Nielsen, Lustration: transitional justice in poland and its continuous struggle to make means with the past”, 2008թ. հունիս, էջ 5: Աշխատությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://apps.dtic.mil/dtic/tr/fulltext/u2/a483448.pdf> :

անցումային գործընթացների բանալին կայանում է նրանում, որ արդարադատության ձգտող քաղաքական գործիչները չդիմեն վրեժխնդրության:

Լյուստրացիայի դրսևորման հաջորդ փուլը հետևյալն էր. 2006թ-ի խորհրդարանի կողմից ներկայացվեց օրինագիծ և 2007թ. փոփոխման ենթարկվեց, ինչի արդյունքում կտրուկ փոխվեց լեհական լյուստրացիայի գործընթացը: Օրենքի շրջանակներում մի շարք դատավորներ, իրավաբաններ, հարկային խորհրդատուներ, հավաստագրված հաշվապահներ, դատարանի աշխատակիցներ, լրագրողներ, դիվանագետներ, քաղաքային պաշտոնյաներ, բուհերի ուսուցիչներ, պետական և մասնավոր ուսումնական հաստատությունների ղեկավարներ, պետական վերահսկվող ընկերությունների ղեկավարներ, ֆոնդային բորսայում ցուցակագրված ընկերությունների վերահսկիչ խորհուրդների անդամներ պարտավորվում էին ներկայացնել, թե արդյո՞ք համագործակցել են Լեհաստանի ժողովրդական հանրապետության պետական անվտանգության մարմինների<sup>246</sup> հետ 1944-1990թթ. ընթացքում: Նման համագործակցության առկայության դեպքում սահմանվեց ժամկետ, որ վերջիններս դադարեցնեն իրենց գործառույթները տվյալ պաշտոններում:

Նախորդ օրենքի գործողությունը տարածվել էր շուրջ 36,000, իսկ նոր օրենքինը մինչև 400,000-700,000 անձանց վրա: Լեհաստանում ստեղծվեց նաև Լյուստրացիայի բյուրոն,<sup>247</sup> որը գտնվում էր Ազգային հիշատակի ինստիտուտի (the Institute of National Remembrance) կազմում, որը մշակում և հրապարակում էր նախկին ռեժիմի այն անձանց անձնական տվյալներով ցուցակներ, որոնք եղել էին ոստիկանության գաղտնի տեղեկատվական աշխատակիցներ և գրադեցրել էին կոմունիստական կուսակցության բարձրագույն պաշտոններ:

### 1.2.7. Ռումինիա

Ռումինիայում անցումային արդարադատության կիրառումը կապված է եղել կոմունիստական կարգերի ժամանակ իրականացված կոշտ քաղաքականությամբ, որը զուգակցված է եղել մարդու իրավունքների զանգվածային խախտումներով: Սակայն Ռումինիայում քաղաքացիական դերակատարները չեն կարողացել երկարաժամկետ ծրագրեր և կառուցողական մեթոդաբանություններ կազմել անցումային արդարադատության, հատկապես վերջինիս տարր կազմող դատական համակարգի բարեփոխումների վերաբերյալ: 1989թ-ից

<sup>246</sup> Խոսքը Սոցիալիստական Լեհաստանի մասին է:

<sup>247</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://ipn.gov.pl/pl?dzial=&id=4792> : Լեհական աղբյուրը՝ “(in Polish) Nowelizacja ustawy z dnia 18 grudnia 1998 r. o Instytucie Pamięci Narodowej – Komisji Ścigania Zbrodni przeciwko Narodowi Polskiemu oraz ustawy z dnia 18 października 2006 r. o ujawnianiu informacji o dokumentach organów bezpieczeństwa państwa z lat 1944–1990 oraz treści tych dokumentów” :

հետո կոմունիստական անցումային արդարադատության միջոցով լյուստրացիոն գործընթացներ և դատավարություններ սկսվեցին կոմունիստական ռեժիմի հանցագործների դեմ՝ շարքային քաղաքացիներին ծանոթացնելով ռստիկանության կողմից կազմած և գաղտնի պահված փաստաթղթերին՝ ստեղծելով **Նախագահության պատմության հանձնաժողովը, Քաղաքացիների Կարծիքի տրիբունալը, գույքի վերականգնումը և հուշագրումը:**

## 1. Քրեական արդարադատություն

1989թ-ից սկսված Ռումինիայում ստեղծվեց **Քաղաքացիների կարծիքի արտահայտման տրիբունալը** (The Citizen's Opinion Tribunal):<sup>248</sup> Չհանդուրժելով այն փաստը, որ դատական համակարգի կողմից երկրում Նյուրմբերգյան տիպի դատավարություններ չեն կազմակերպվում՝ դատապարտելու կոմունիստական հանցագործներին, 2006թ-ի սեպտեմբերի 7-ին քաղաքացիական հասարակության կազմակերպությունները Կլուժ-Նապոկայում ստեղծեցին դատական աստյաններ (տրիբունալներ): Քաղաքացիների կարծիքի արտահայտման տրիբունալը ներքին տրիբունալ էր և բաղկացած էր կոմունիստական ռեպրեսիայի գոհ դարձած 9 հոգուց, որոնք Ռումինիայի տարբեր շրջաններից էին: Դատավարություններին մասնակցում էին 150 քաղաքացի, ովքեր ներկա էին որպես ատենակալներ: Տրիբունալը դատապարտել է ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունները՝ ներառյալ կանխամտածված սպանությունը, բնաջնջումը, հարկադիր արտաքսումը, ձերբակալությունները, խոշտանգումները, մարդկանց անհետ կորչելը, էթնիկ և կրոնական հալածանքները և այլն: Կոմունիստական ռեժիմը մեղավոր է ճանաչվել, երբ տրիբունալը քննարկման է դրել իր կարծիքը՝ կոմունիստների կողմից մարդու իրավունքների ոտնահարումների վերաբերյալ վերջնական ամփոփումը Curtea Penală de Condamnare Juridico-Morală Crimelor Regimurilor Comuniste, 2006)<sup>249</sup> (: Սակայն, Տրիբունալը հանրային մեծ արձագանք չի ունեցել Ռումինիայում և արտերկրում: Այն անտեսվել է հասարակության, քաղաքական էլիտայի, տեղական մամուլի և հիմնական ասոցիացիաների կողմից, որոնք կոմունիստական ժամանակաշրջանի գոհերի և մտավորականության ներկայացուցիչներն էին: Հասարակությունը ձգտում չունեցավ աջակցելու կոմունիզմի ժամանակ տեղի ունեցած հանցագործությունների բացահայտմանն ուղղված դատավարություններին, սակայն կոմունիստական ժամանակաշրջանի գոհերը պնդում էին, որ հետկոմունիստական պետությունը՝ կոմունիստական պետության իրավահաջորդը, պետք է կրի կոմունիստական ռեժիմի հանցագործությունների պատասխանատվությունն իր

<sup>248</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Lavinia Stan, “Civil Society and Post-communist Transitional Justice in Romania”, Chapter 2, էջ 26:

<sup>249</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Lavinia Stan, “Civil Society and Post-communist Transitional Justice in Romania”, Chapter 2, էջ 26:

կանոնավոր արդարադատություն իրականացնող դատարանների միջոցով: Ռումինիայի դատական համակարգը անտեսեց այդ պահանջները՝ մատնանշելով, որ այդ գործերով կիրառվող սահմանափակ իրավական կարգավորումները թույլ չեն տալիս անդրադառնալ այդ հարցերին:

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Ստեղծվեց նախագահական պատմության հանձնաժողովը (The presidential history commission): Անշուշտ, քաղաքացիական հասարակությունը 2006թ-ին անցումային արդարադատության հարցով նշված հանձնաժողովի ստեղծմամբ մեծագույն հաջողությունն է գրանցել: Ղեկավարական-լիբերալ կուսակցության նախագահ Տրայան Բասեսկուին<sup>250</sup> Ռումինիայի կոմունիստական դիկտատուրայի ուսումնասիրման նախագահական հանձնաժողով ստեղծեց (Comisia Prezidențială pentru Analiza Dictaturii Comuniste din România):<sup>251</sup> Հանձնաժողովը ստեղծվել է ի պատասխան քաղաքացիական հասարակության կոչերի՝ փոխելու իր շահերը առաջ տանող և կոռուպացված քաղաքական էլիտային: Տիմիշոարա<sup>252</sup> քաղաքի բնակիչների ճնշման ներքո նախագահ Բասեսկուն հայտարարեց, որ իր իշխող ղեկավարական-լիբերալ կուսակցությունը չի կարող աջակցել լյուստրացիոն գործընթացներին՝ առանց դատապարտելու կոմունիստական ռեժիմը՝ որպես հանցագործների և ռեպրեսիվ ռեժիմը կրող իշխանություն:<sup>253</sup> Նա իբրև պարզաբանում ասում էր, որ նախկին ռեժիմի հետ համագործակցող անձինք ոչ մի իրավախախտում չեն արել, նրանք պարզապես ենթարկվել են այդ ժամանակ հանրության կողմից ընդունված և միջազգայնորեն ճանաչում ստացած պետության վարչակարգին:

## 3. Փոխհատուցումներ

Թեև Ռումինիայի քաղաքացիական հասարակությունը ջանքեր էր գործադրում տուժողներին փոխհատուցման իրավունքից օգտվելու հնարավորություն ընձեռելու ուղղությամբ, սակայն հետխորհրդային կառավարությունները հիմնականում անտարբեր էին տուժածների հանդեպ, քանի որ հետաքրքրված էին միայն իրենց շահերը շոշափող ընտրությունների արդյունքներով: Ընդհանուր առմամբ, Ռումինիայում որպես հատուցման տեսակ կիրառվել է գույքի վերականգնումը, այն էլ ոչ ամբողջապես:

1989թ. Գույքի սեփականատերերի ասոցիացիան, որի գույքը առգրավվել էր պետության կողմից, խնդրել է կոմունիստական իշխանություններին կորցրած գույքը վերադարձնել կամ

<sup>250</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.britannica.com/biography/Traian-Basescu> :

<sup>251</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Lavinia Stan, “Civil Society and Post-communist Transitional Justice in Romania”, Chapter 2, էջ 25:

<sup>252</sup>Տիմիշոարան քաղաք է Ռումինիայում:

<sup>253</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Lavinia Stan, “Civil Society and Post-communist Transitional Justice in Romania”, Chapter 2, էջ 25:

արդար փոխհատուցում ստանալ: Նրանց հակադրվել են Ազգային բնակավայրերում բնակվող վարձակալների ասոցիացիան և 112/1995 Օրենքով սեփականության իրավունք ստացած վարձակալների ասոցիացիան:<sup>254</sup> Երբ օրենսդրական փոփոխություններ տեղի ունեցան ոչ Գույքի սեփականատերերի ասոցիացիայի օգտին, վերջինս բաց նամակով դիմեց բոլոր քաղաքական կուսակցություններին, խորհրդարանին, սակայն նրանց՝ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքը մնաց անպատասխան:

#### 4. Համակարգային բարեփոխումներ

##### *Լյուստրացիա*

Քաղաքացիական հասարակությունը նպաստել է լյուստրացիային, սակայն չի հաջողել երկխոսությունը քաղաքական վերնախավերի հետ՝ գործընթացն ամբողջովին իրականացնելու համար: 1990թ-ի մարտի 11-ին «Society Timișoara»<sup>255</sup> (Տիմիշոարայի հասարակություն) կազմակերպությունը հրապարակեց Հռչակագիր (The Timișoara Declaration, 1990), որի 8-րդ հոդվածը կոչ է արել *ընտրական օրենսդրության փոփոխությունների ընդունման մասին*: Հռչակագրով առաջարկում էին Կոմունիստական կուսակցության ղեկավարներին, պետական պաշտոնյաներին և արժեթղթերի գործակալներին արգելել նախագահական ընտրություններում թեկնածու առաջադրելը և առաջին հերթին կուսակցական ցուցակներում ընդգրկելը երեք հերթական, իրար շարունակող օրենսդրական փուլերում՝ 12 տարի տևողությամբ:<sup>256</sup>

Ինչպես ակնհայտ է դառնում, լյուստրացիան Ռումինիայում դրսևորվեց արգելքի սահմանմամբ, համաձայն որի, կոմունիստական ժամանակաշրջանում որոշումներ կայացնողները այլևս իրավասու չէին զբաղեցնել հանրային պաշտոններ:

##### *Հասարակական ակտիվիզմ*

Ռումինիայում քաղաքացիական հասարակության մասնակցությունը անցումային արդարադատության իրականացման գործում ունեցել է վճռորոշ նշանակություն, քանի որ հետկոմունիստական Ռումինիայում առաջին երկու տասնամյակի ընթացքում քաղաքական վերնախավը հիմնականում հետաքրքրված էր նեղ խմբային շահերով, և միայն քաղաքացիական հասարակության ջանքերի շնորհիվ է, որ հնարավոր է եղել ներդնել անցումային արդարադատության մեխանիզմներ: Օրինակ կարող է ծառայել Բուխարեստի «Սոցիալական երկխոսության» խումբը (Timuroara Society for Social Dialogue) և «Տիմիշոարայի

<sup>254</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Lavinia Stan, “Civil Society and Post-communist Transitional Justice in Romania”, Chapter 2, էջ 27:

<sup>255</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Lavinia Stan, “Civil Society and Post-communist Transitional Justice in Romania”, Chapter 2, էջ 20:

<sup>256</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Lavinia Stan, “Civil Society and Post-communist Transitional Justice in Romania”, Chapter 2, էջ 22:



հասարակությունը» (Society Timișoara)<sup>257</sup>, որոնք հիմնադրվել էին 1989թ-ի վերջերին՝ իրական ժողովրդավարությունը խթանելու համար՝ բերելով նոր, այլընտրանքային տեսակետներ: 1999թ-ին Բուխարեստում ստեղծվեց Պետության կողմից խաբեությամբ բռնագրավված գույքի սեփականատերերի ասոցիացիան (The Association of Owners of Property Abusively Confiscated by the State): Այն ստեղծվել էր սեփականությունը կորցրածների, նրանց իրավահաջորդների, ժառանգների կողմից: Ասոցիացիան ստեղծվել էր գույքի վերականգնման և արդարացի փոխհատուցման համար: Սկզբնական շրջանում անդամակցում էր 11,000 հոգի, իսկ ներկայումս՝ 1500 հոգի:<sup>258</sup>

1990թ-ին ստեղծվել է Քաղաքացիական միությունը, որը բաղկացած էր 216 հեղինակավոր գրողներից, փիլիսոփաներից և հակակոմունիստական քարոզիչներից, որոնք հումանիստական և ժողովրդավարական աջակցություն ցուցաբերելու համար էին միավորվել:<sup>259</sup>

Պետք է նշել, որ Ռումինիայում քաղաքացիական հասարակության խմբերի ծրագրերը աջակցություն են ստացել միայն այն ժամանակ, քանի դեռ քաղաքական կուսակցությունները հավանական շահ են կանխատեսել կոմունիստական անցյալի վերաբերյալ գործողություններ կատարելու դիմաց: Հասարակական խմբերն անտեսվում էին, երբ արդարադատությունն իրականացնելու մասին պահանջները սպառնում էին քաղաքական էլիտայի հզոր ներկայացուցիչներին, որոնց համար կարիերան, իշխող կուսակցության մաս լինելն առաջնահերթություն էր, քան օրինականությունը կամ ժողովրդականությունը:

### 1.2.8. Ալբանիայի Հանրապետություն

1990-ական թվականներին Ալբանիայում առկա էին անհրաժեշտ պատմական և քաղաքական նախադրյալներ՝ արդունավետ կերպով անցումային արդարադատություն իրականացնելու համար: 1945-1991թթ. ընթացքում երկրի ղեկավարումը ստանձնած կոմունիստական ուժերը երկրում բռնապետական կարգեր էին հաստատել, որոնց առկայության պարագայում ոչնչացվում էին այլախոհական հայացքներ ունեցող բոլոր անձինք: Այս քաղաքականության թիրախում հայտվեց երկրի բնակչության գրեթե մեկ քառորդը:<sup>260</sup> Դեռ ավելին, իշխանությունները առավելագույն ջանքեր էին գործադրում պահպանելու

<sup>257</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Lavinia Stan, “Civil Society and Post-communist Transitional Justice in Romania”, Chapter 2, էջ 20:

<sup>258</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Lavinia Stan, “Civil Society and Post-communist Transitional Justice in Romania”, Chapter 2, էջ 19:

<sup>259</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Ștefănescu, 1995թ. էջ 104:

<sup>260</sup>Տե՛ս Elbasani, Arolda. “Public Contestation and Politics of Transitional Justice: Poland and Albanian Compared.” SSRN Electronic Journal (OADAD):

բոնապետական կառավարումը: 1990-1992թթ. Ալբանիայում հակակառավարական լայնամասշտաբ ցույցեր տեղի ունեցան, որոնց ընթացքում բախումներ տեղի ունեցան կառավարական ուժերի և ցուցարարների միջև: Արդյունքում երկրում տեղի ունեցավ իշխանափոխություն:<sup>261</sup>

### 1. Քրեական արդարադատություն

Հեղափոխությունից հետո ամենահայտնի կոմունիստը, ով դատարանի առաջ կանգնեց Նեքսիմիյե Հոքսան էր, ով նախկին դիկտատոր Էնվեր Հոքսայի այրին էր: 1993թ-ի փետրվարին նա 9 տարվա ազատազրկման դատապարտվեց՝ պետական միջոցները ապօրինի կերպով յուրացնելու համար: 1993թ-ի մայիսին վերաքննիչ դատարանը ևս 2 տարի ավելացրեց նրա պատժին: Վճռաբեկ դատարանն անփոփոխ թողեց վերաքննիչ դատարանի որոշումը: Համընդանուր համաներման և քրեական օրենսդրության փոփոխությունները նրա ազատազրկման ժամկետները  $\frac{2}{3}$ -ով կրճատեցին: Նախագահ Բերիշայի կողմից հայտարարված մեկ այլ համաներման համաձայն՝ նրա պատիժը ևս 6 ամսով կրճատվեց: Արդյունքում նա ազատազրկվեց ընդամենը 2 տարի ժամկետով:<sup>262</sup>

Հաջորդ մեծ հնչեղություն ունեցող դատավարություններն, այսպես կոչված, «բլոկմեններ»-ի դատավարություններն էին: Բլոկմեններն աշխատանքի հարցերով նախարարության աշխատակիցներ էին, ովքեր թանկարժեք ամառանոցներում էին բնակվում և Տիրանայում նրանց համար հիմնադրվել էր հատուկ թաղամաս, որը կոչվում էր Բլոկներ: Մեկ տարի տնային կալանքում պահվելուց հետո բլոկմենները դատապարտվեցին քրեական օրենսգրքի 107 հոդվածով, որը պատիժ էր նախատեսում քաղաքացիների իրավահավասարությունը խախտելու համար: Նրանք պետական միջոցների հաշվին հատուկ արտոնություններից էին օգտվել, օրինակ, թանկարժեք արձակուրդներ էին անցկացրել արտասահմանում, օգտվել էին գերթանկարժեք առողջապահական համակարգից և այլն:

Դատավարության օրը դատարանը որոշեց նիստերը դռնփակ անցկացնել՝ ազգային անվտանգության ու պետական գերակա շահի պահպանման հիմքերով:<sup>263</sup> 1993թ-ի դեկտեմբերին բոլոր 8 բլոկմենները դատապարտվեցին 5-ից մինչև 8-տարվա ազատազրկման: Սակայն հետագայում, շնորհիվ գործողության մեջ մտած «Համաներման մասին» օրենքի, նրանց անազատության մեջ գտնվելու տարիները որոշակիորեն կրճատվեցին:

<sup>261</sup>Տե՛ս Prifti, P., 1978. Socialist Albania Since 1944: Domestic and Foreign Developments. MIT press, Cambridge:

<sup>262</sup>Տեղեկատվությունը հասանելի է՝ <http://www.refworld.org/docid/3ae6a7f30.html>:

<sup>263</sup>Տե՛ս Article 12 of the Law on the Organization of the Judiciary and Constitutional Court says that the public and mass media may be barred from a courtroom if necessary for "national security, public order, or for the best interest of minors, private parties and justice."

1994թ-ի մայիսին դատավարությունների նոր շարք սկսվեց ընդդեմ նախկին պաշտոնյաների: Նրանց մեջ առավել կարևորությամբ աչքի էին ընկնում նախկին կոմունիստ նախագահ Ռամիզ Ալիայի գործը, ով մեղադրվում էր պետական միջոցները յուրացնելու համար: Նախկին վարչապետ Ադիլ Կարչանին, փոխվարչապետներ Ռիտո Մարկոն և Մանուշ Միլիտոսիուին նույնպես մեղադրանքներ առաջադրվեցին նմանատիպ հանցակազմերով: Մեղադրանքներ առաջադրվեցին նաև ներքին գործերի նախկին նախարարին, վճռաբեկ դատարանի նախկին նախագահին և գլխավոր դատախազին: Հետագա տարիներին նրանք բոլորն էլ դատապարտվեցին տարբեր տեսակի հանցագործություններ կատարելու համար:<sup>264</sup>

Human Rights Watch միջազգային իրավապաշտպան կառույցի հետ խոսելիս մի շարք ալբանացիներ շեշտում էին այն հանգամանքը, որը դատավարությունները մեծամասամբ քաղաքական կոնտեքստ ունեին և ճշմարտությունը բացահայտելու նպատակ չէին հետապնդում:<sup>265</sup> Նորընտիր կառավարության կողմից իրականացված ձերբակալությունները ժողովրդի շրջանում դիվիդենդներ հավաքելու միջոց էր՝ խորհրդարանական ընտրություններից առաջ: Ընտրողական բնույթ կրող արդարադատությունը այդպես էլ չկարողացավ բացահայտել նախկինում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ ամբողջ ճշմարտությունը:

## 2. Համակարգային բարեփոխումներ

Ալբանիայի վեթիինգի հաջողված օրինակը կարող է ծառայել որպես հիմնական մոդել, այլ երկրների, այդ թվում Բալկանյան երկրների համար, որով սահմանվել է համակարգային լուծումներ վեթիինգի գործընթացի համակարգային վերահսկողության և ղեկավարման համար:

266

«Դատավորների և դատախազների անցումային վերազնահատման մասին» Ալբանիայի օրենքը (այսուհետ նաև՝ «Վեթիինգի մասին» օրենք) նախատեսում է վերազնահատման գործընթացի իրականացման երեք բաղադրիչներ:<sup>267</sup>

*ա. ակտիվների ստուգում.*

*բ. Կասկածելի կապերի ստուգում.*

*գ. գիտելիքների/հմտությունների ստուգում:*

<sup>264</sup>Տե՛ս Human Rights Watc/Helsinki interview with Teodor Keko, Tirana, 1994թվականի մարտի 28:

<sup>265</sup>Տե՛ս Human Rights Watc/Helsinki interview with Teodor Keko, Tirana, 1994թվականի մարտի 28:

<sup>266</sup> <http://www.legalpoliticalstudies.org/wp-content/uploads/2017/06/Policy-Analysis-An-Analysis-of-the-Vetting-Process-in-Albania.pdf>

<sup>267</sup>Տե՛ս մանրամասն «Դատավորների և դատախազների անցումային վերազնահատման մասին» Ալբանիայի օրենքը [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2016\)062-e&fbclid=IwAR3gy\\_OUL\\_hzGXR7o04MkXzGiiybF7LWXqZk4bAOT2PxSv6DQHVMmssmqdY](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2016)062-e&fbclid=IwAR3gy_OUL_hzGXR7o04MkXzGiiybF7LWXqZk4bAOT2PxSv6DQHVMmssmqdY)

## 1. Ակտիվների ստուգում

Ակտիվների ստուգումը «Վեթիքինգի մասին» օրենքով նախատեսված առաջին բաղադրիչն է: Այս բաղադրիչն է, որին առավել շատ դիմադրել են դատավորները և դատախազները, ինչի արդյունքում վեթիքինգի գործընթաց չանցնելու նպատակով կտրուկ մեծացավ այս համակարգերում պաշտոնյաների հրաժարականների թիվը:

Ակտիվների ստուգման բաղադրիչի հիմնական տարրը՝ հայտարարագրերի ներկայացումներից հետո ակտիվների ընդհանուր աուդիտի անցկացումն է, որտեղ գնահատվում է ակտիվների ձեռք բերման աղբյուրների օրինականությունը:

Ստուգումը հնարավորություն կտա գնահատել ակտիվների «հետևում» գտնվող ցանկացած ֆինանսական պարտավորություն և դրանից բխող ցանկացած հնարավոր անձնական հետաքրքրություն՝ գնահատվողի (ստուգվողի) և նրա հետ փոխկապակցված անձի համար:

Բոլոր դատավորներն ու դատախազները պարտավոր են հայտարարագրել իրենց ակտիվները՝ հնարավորություն ընձեռելով համապատասխան մարմիններին կատարել իրենց ակտիվների վերաբերյալ հետաքննություն:

Յուրաքանչյուրը, ում ակտիվները գնահատվում են, պետք է հիմնավորի դրանց ձեռքբերման օրինական աղբյուրները (օրինակ՝ եկամուտները, հարկային հայտարարագրերը):

Ի լրումն ակտիվների հայտարարագրման, գնահատվող ներկայացնում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք հարկավոր են հիմնավորելու իր հայտարարության արժանահավատությունը և օրինականությունը: Եթե հայտարարագրված ունեցվածքը **երկու անգամ ավելի մեծ**, որքան նրա օրինական եկամուտը, գնահատվողը համարվում է մեղավոր և պաշտոնից ազատվում է, **եթե չկարողանա ապացուցել հակառակը**:<sup>268</sup>

## 2. Կասկածելի կապերի ստուգում

Այս չափանիշի վերջնական պատակն է հավաստիանալ, որ դատավորները, դատախազները կապված չեն կազմակերպված հանցավոր խմբերի հետ:

Այսպես, կասկածելի կապերի ստուգումը ընդգրկում է ակտիվների հայտարարագրերի և այլ տվյալների ստուգումը, որոնք ուղղված են բացահայտել կազմակերպված հանցագործությունների մեջ ներգրավված անձանց և նրանց կապերը: Եթե ստուգման արդյունքում գնահատվողը մեղավոր է ճանաչվում կազմակերպված հանցագործության

<sup>268</sup> Տե՛ս նույն տեղում, Բաժին 4:

մասնակիցների հետ հստակ կապեր ունենալու հիմքով, նա պաշտոնից ազատվում է, եթե չի կարող ապացուցել հակառակը:<sup>269</sup>

### 3. Գիտելիքների/հմտությունների վերազնահատում

Գիտելիքների/հմտությունների վերազնահատումները ապահովում են, որ բոլոր սուբյեկտները ենթարկվեն հմտությունների գնահատման: Այսպես, դատավորների դեպքում գնահատվում են նրանց՝ որպես դատավորի հմտությունները, դատախազների դեպքում՝ նրանց նախնական քննություն անցկացնելու կարողությունները:

Գիտելիքների/հմտությունների վերազնահատումը հնարավորություն է տալիս գնահատել նաև գնահատվողի կազմակերպական հմտությունները, էթիկան և անձնական որակները: Գիտելիքների/հմտությունների վերազնահատումը իրականացվում է օրենքով սահմանված չափանիշների հիման վրա:

Այն անձանց, ովքեր ստացել են «ոչ բավարար» գնահատականը, առաջարկվում է դասընթացներ անցնել Մագիստրանտների դպրոցում: Իսկ նրանք, ովքեր գնահատվել են որպես «անհամապատասխան» որոշակի հմտությունների համար, ազատվում են պաշտոնից:

Ալբանիայի Ազգային անվտանգության մարմինների դերը, որը պատասխանատու է դատավորների և դատախազների ֆոնին գնահատելու համար, 24-ն գտնվում է հակասությունների կենտրոնում, կոպիտ արձագանքելով Դեմոկրատական կուսակցության կողմից, երկրի առաջատար ընդդիմադիր կուսակցությունից:<sup>270</sup>

**Նշենք նաև, որ Ազգային անվտանգության մարմինը** վերազնահատում իրականացնող մարմինների հետ համագործակցությամբ **իրականացնում է դատավորների և դատախազների կասկածելի կապերի ստուգում:** Սա կուսակցությունների շրջանում մտահոգությունների տեղիք էր տվել այն տեսանկյունից, որ **Անվտանգության մարմինը** գործադիր իշխանության մաս է կազմում և կառավարության կողմից ենթարկվում է վերահսկողության, հետևապես վերթինգի գործընթացը, որոշակի չափով, վերահսկվում է գործադիրի կողմից: Վենետիկի հանձնաժողովը, սակայն մերժեց այս փաստարկը այն հիմքով, որ վերջնական որոշումը կայացնում է անկախ հանձնաժողովը:<sup>271</sup>

<sup>269</sup> Տե՛ս նույն տեղում, Բաժին 5:

<sup>270</sup> Տե՛ս նույն տեղում, Բաժին 6:

<sup>271</sup> [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)036-  
e&fbclid=IwAR0u3WXpe24SnXiyoe5jOGfh5MikMvSucCvzQyHhEuAg5lfx4Ibg--S3ORY](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)036-<br/>e&fbclid=IwAR0u3WXpe24SnXiyoe5jOGfh5MikMvSucCvzQyHhEuAg5lfx4Ibg--S3ORY)

### 1.2.9. Նախկին Հարավսլավիայի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետություն

Ռազմական և քաղաքական իրավիճակը Սերբիայում, Բոսնիա և Հերցեգովինայում, Խորվաթիայում և Կոսովոյում՝ Հարավսլավիայի փլուզման և դրան հաջորդող ժամանակահատվածում

1991-2008թթ. տեղի ունեցած մի շարք իրադարձությունների հետևանքով նախկին Հարավսլավիայի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետությունը բաժանվեց վեց անկախ պետությունների և միջազգային ճանաչում ստացած պետության՝ Կոսովոյի: Հարավսլավիայի տրոհման գործընթացը սկսվել էր դեռևս 1991-1992թթ., երբ հաջորդաբար իրենց անկախությունը հռչակեցին նշված չորս երկրները՝ Սլովենիան, Խորվաթիան, Բոսնիա և Հերցեգովինան և Մակեդոնիան:<sup>272</sup>

Հարավսլավիան, որի կազմում մնացին երկու հանրապետություն, անվանակոչվեց Սերբիա և Մոնտենեգրո, որոնք հետագայում նույնպես առանձնացան որպես անկախ պետություններ՝ Սերբիա և Մոնտենեգրո:

1992թ. փետրվարի 29-ին և մարտի 1-ին բոսնիական կառավարությունը նշանակեց հանրաքվե՝ որոշելու համար Բոսնիա և Հերցեգովինայի անկախության հարցը:<sup>273</sup> Մեծամասնություն կազմող խորվաթները և բոսնիացիները քվեարկեցին հոգուտ անկախության: Հանրաքվեի արդյունքները անընդունելի էին բոսնիացի սերբերի համար, ովքեր բոյկոտեցին քվեարկությունը՝ դեմ լինելով անկախությանը և հայտարարեցին, որ հանրաքվեն հակասահմանադրական միջոցներով է իրականացվել: Հաշվի առնելով, որ քվեարկողների մեծամասնությունը քվեարկել էին անկախության օգտին՝ 1992թ-ի ապրիլի 7-ին Բոսնիայի խորվաթ և բոսնիացի պատգամավորները անկախություն հռչակեցին: Ի պատասխան դրան՝ նույն թվականի ապրիլի 7-ին Բոսնիայի սերբերը հռչակեցին նոր հանրապետություն՝ Սերբական Հանրապետությունը (Republika Srpska) և սկսեցին պահանջել Բոսնիա և Հերցեգովինայի այլ տարածքներ ևս, որտեղ սերբ փոքրամասնություններն էին բնակվում:<sup>274</sup>

Անհրաժեշտ է նշել, որ դեռևս մինչև հանրաքվեն՝ Բոսնիայում երեք էթնիկ խմբերն էլ սկսել էին կազմավորել իրենց սեփական զինված ուժերը և ոստիկանական ուժերը: Սերբերի բանակը օժանդակություն էր ստանում Հարավսլավական Ժողովրդական Բանակի (ՀԺԲ) կողմից:

<sup>272</sup>Sté u *Степан Месич* Как развалилась Югославия = Kako je srusena Jugoslavija. — М.: Альпина Паблишер, էջ 400, 2013:

<sup>273</sup>Տեղեկատվությունը հասանելի է՝ [https://www.washingtonpost.com/archive/politics/1992/03/01/bosnians-hold-independence-referendum/9aade8bb-a390-4b3e-82ce-50dee3822ccc/?utm\\_term=.04e1d4579a83](https://www.washingtonpost.com/archive/politics/1992/03/01/bosnians-hold-independence-referendum/9aade8bb-a390-4b3e-82ce-50dee3822ccc/?utm_term=.04e1d4579a83):

<sup>274</sup> Stéu Bethlehem & Weller, “The Yugoslav Crisis in International Law”, էջ 20, 1997:

Առաջին արյունալի բախումը տեղի ունեցավ 1991թ-ի սեպտեմբերի 30-ին, երբ ՀԺԲ-ն հարձակվեց Բոսնիայի խորվաթաբնակ Ռավնո քաղաքի վրա: Անկախության հանրաքվեի անցկացման շրջանում դրությունն էլ ավելի լարվեց: Երկրի տարբեր վայրերում բախումներ սկսվեցին, հատկապես արևելյան Բոսնիայում՝ Դրինայի կիրճում, իսկ երկրի հյուսիս-արևմուտքում 1992թ-ի ապրիլից արյունահեղություններ և էթնիկ զտումներ սկսվեցին: Բիյելյինա, Վիշեգրադ, Ֆոչա, Բրատունակ, Սանակի Մոստ, Պրիյեդոր, Կոզարակ և այլ բնակավայրերում բոսնիացի բնակչությունը դարձավ թիրախ:<sup>275</sup>

Ըստ Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի՝ ռազմական ընդհարումը տեղի է ունեցել Բոսնիայի, Հարավսլավիայի Ֆեդերատիվ Հանրապետության (հետագայում Սերբիա և Մոնտենեգրոյի) և Խորվաթիայի միջև:<sup>276</sup> Համաձայն միջազգային տրիբունալի եզրակացության՝ Սերբիան ռազմական և ֆինանսական օգնություն է տրամադրել Բոսնիայի սերբերի զինված ուժերին, որոնք բաղկացած էին Հարավսլավական Ժողովրդային Բանակից, Սերբական Հանրապետության բանակից, Սերբական Հանրապետության ներքին գործերի նախարարությունից և Սերբական Հանրապետության երկրապահ ուժերից: Խորվաթիան էլ իր հերթին ռազմական օգնություն էր տրամադրել Բոսնիայի խորվաթների զինված ուժերին:

Հակամարտության սկզբնական շրջանում Բոսնիայի տարածքում ապրող խորվաթները և բոսնիացիները պատերազմում էին բոսնիացի սերբերի դեմ, որոնք Բոսնիա և Հերցեգովինայի անկախության հռչակումից հետո հռչակել էին նոր հանրապետություն՝ Սերբական Հանրապետությունը: Բոսնիացի սերբերին աջակցում էր Սերբիան՝ Սլոբոդան Միլոշևիչի ղեկավարությամբ:

1993թ-ին պատերազմ սկսվեց նաև մուսուլման բոսնիացիների և բոսնիացի խորվաթների միջև: 1994թ-ին Խորվաթիայի նախագահ Ֆրանյո Տուջմանի միջամտությունից հետո բոսնիացիների և բոսնիացի խորվաթների միջև հաշտություն կնքվեց:

Մարդկային զոհերի թիվը պատերազմից հետո, համաձայն Բոսնիայի կառավարության և ՆԱՏՕ-ի տրամադրած տվյալների, կազմում էր շուրջ 200,000 անձ: Համաձայն նույն վիճակագրության՝ պատերազմի հետևանքով փախստական էին դարձել ավելի քան 326,000 անձ: 2007 թվականի հունիսի 21-ի Սարաևոյի Հետազոտության և Փաստագրության Կենտրոնը հրատարակել է «Բոսնիացի մեռյալների գիրքը» (անգլ. *The Bosnian Book of the Dead*): Այն հանդիսանում է տվյալների բազա, որում ամփոփված են ավելի քան 97,207<sup>277</sup> զոհված անձանց անուններ:

<sup>275</sup>Տե՛ս A Legal Geography of Yugoslavia's Disintegration, Ana Trbovich, էջ 228:

<sup>276</sup>Տեղեկատվությունը հասանելի է՝ [https://www.hrw.org/reports/2004/ij/icty/2.htm#\\_Toc62882595](https://www.hrw.org/reports/2004/ij/icty/2.htm#_Toc62882595):

<sup>277</sup>Տե՛ս RDC - Casualties Research Results - June 2007:

Միջազգային մասնագետների մի խումբ 240,000-ից ավելի տվյալներ է հավաքագրել, դրանք տեխնոլոգիական գործընթացների են ենթարկվել՝ ստուգվել, բաղդատվել և գնահատվել են՝ վերջնական ցուցանիշներ ունենալու համար:<sup>278</sup> Վերջերս կատարված մեկ այլ հետազոտություն ցույց է տվել, որ զոհերի մեծամասնությունը՝ 97,207 հոգի բոսնիացիներ էին (65%), սերբերը զոհերի թվաքանակով երկրորդ էին (մոտ 25%), իսկ խորվաթները՝ երրորդը (մոտ 8%):<sup>279</sup> Քաղաքացիական զոհերի 83%-ը բոսնիացիներ էին, 10%-ը՝ սերբեր, 5%-ը՝ խորվաթներ ու ավելի քիչ քանակով այլ բանակներ և այլ ազգային փոքրամասնություններ: Բոսնիայի պատերազմին մասնակցած <sup>280</sup> միջազգային խաղաղապահ զոհվել է 320 զինվոր:

### 1. Քրեական արդարադատություն

1993թ-ին ՄԱԿ-ի Անվատանգության Խորհուրդը բանաձև ընդունեց, որի հիման վրա ստեղծվեց Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալը (այսուհետ՝ տրիբունալ): Տրիբունալը առաքելություն ուներ հետաքննելու 1991թ-ին սկսած Նախկին Հարավսլավիայում ծավալվող ռազմական իրադարձությունները:

Տրիբունալը իրավասություն ուներ պատասխանատվության ենթարկել անձանց, ովքեր մեղադրվում էին 1991 թվականից հետո միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կոպտագույն խախտումներ իրականացնելու համար: Տրիբունալի առաքելությունն էր Բալկանյան թերակղզում վերահաստատել միջազգային խաղաղությունը:

Տրիբունալն իր գործունեությամբ նպատակ էր հետապնդում քրեական պատասխանատվության ենթարկել անձանց, այլ ոչ թե կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների կամ վարչական մարմինների:

Չնայած այն հանգամանքին, որ տրիբունալը իրավասությունն ուներ քննելու միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները, ազգային դատարանները, նույնպես, իրավասու էին իրականացնել գործերի քննություններ: Տրիբունալի կանոնադրությամբ այն ավելի բարձր դիրքում էր գտնվում, քան ներպետական դատարանները: Տրիբունալն իրավասություն ուներ նաև որոշակի գործերի քննությունը հանձնել ներպետական դատարաններին:

Տրիբունալն իրավասություն ուներ քրեական հետապնդման ենթարկելու և դատապարտելու ցանկացած անձի, ով մեղադրվում էր հետևյալ հանցագործությունները կատարելու համար.

- 1) 1949 թվականի Ժնևյան կոնվենցիաների կոպտագույն խախտումներ,

<sup>278</sup> Տեղեկատվությունը հասանելի է՝ <http://www.hicn.org/wordpress/wp-content/uploads/2012/07/rdn5.pdf>:

<sup>279</sup> St' u Research shows estimates of B&H death toll inflated - IHT: The Bosnian Book of Dead, հասանելի է՝ <http://www.hicn.org/wordpress/wp-content/uploads/2012/07/rdn5.pdf>:

<sup>280</sup> St' u Bosnia's Book of Dead - BIRN Report, հասանելի է՝ <http://www.hicn.org/wordpress/wp-content/uploads/2012/07/rdn5.pdf>:



- 2) պատերազմական ավանդույթների և օրենքների խախտումներ,
- 3) ցեղասպանություն,
- 4) մարդկության դեմ ուղղված այլ հանցագործություններ:

Տրիբունալի կողմից պատասխանատվության կարող էր ենթարկվել ցանկացած անձ, անկախ այն հանգամանքից, թե ինչ պետական պաշտոն էր զբաղեցնում:<sup>281</sup> Փաստը, որ անձը հանդիսանում է պետության զլուխ, չէր ազատում նրան քրեական պատասխանատվությունից և ոչ էլ համարվում էր մեղմացուցիչ հանգամանք:<sup>282</sup>

Տրիբունալի կանոնադրության 7-րդ հոդվածը սահմանում էր, որ յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում էր հանցագործություն պլանավորելու, հարուցելու, հրամայելու կամ այլ կերպով հանցագործության կատարմանը աջակցելու համար, պետք է անհատական պատասխանատվություն կրի կատարած հանցագործության համար:

Մարդկության դեմ ուղղված հանցագործությունները որպես միջազգային հանցագործություն դասակարգելու գաղափարը սկզբնավորվել է դեռևս Տոկիոյի և Նյուրմբերգի տրիբունալներից և իր արտահայտումն է գտել նաև վերոհիշյալ տրիբունալի կանոնադրության մեջ: Համաձայն կանոնադրության՝ այն հանցագործությունները, որոնք կատարվել են ռազմական հակամարտության ժամանակ, անկախ հակամարտության միջազգային բնույթ կրելուց կամ չկրելուց, համարվում են մարդկության դեմ ուղղված հանցագործություններ: Այդ հանցագործություններն են.

- 1) սպանությունը,
- 2) հարկադիր ստրկացումը,
- 3) արտաքսումը,
- 4) ապօրինի բանտարկությունը,
- 5) խռչտանգումը,
- 6) բռնաբարությունը,
- 7) քրեական հետապնդումների ենթարկելը՝ հիմք ընդունելով անձի քաղաքական համոզմունքները, ազգային պատկանելիությունը, կրոնական որոշակի խմբի պատկանելու հանգամանքը,
- 8) այլ ոչ մարդկային վերաբերմունքը:

<sup>281</sup>Տեղեկատվությունը հասանելի է՝ <http://www.icty.org/en/sid/135>

<sup>282</sup> Տեղեկատվությունը հասանելի է՝ <http://www.icty.org/en/sid>

## 1.2.10. Սերբիայի Հանրապետություն

### 1. Քրեական արդարադատություն

Սերբիայում քրեական արդարադատությունը հիմանականում Նախկին Հարավսլավիայի գործերով քրեական տրիբունալի կողմից է իրականացվել:

### 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Բացառությամբ մի քանի դեպքերի՝ սերբ իշխանությունները լուրջ քայլեր չիրականացրեցին ստեղծելու պետական իրավասու մարմին, որը նպատակ էր հետապնդելու բացահայտելու և արձանագրելու նախկինում տեղի ունեցած հանցագործությունների վերաբերյալ ճշմարտությունը: 2001 թվականին, նախագահ Կոստունիցայի որոշմամբ, ստեղծվեց **Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողով**: Քանի որ հանձնաժողովի ստեղծման հիմնական նպատակը ավելի շատ քաղաքական հաջողություններ արձանագրելն էր, քան ճշմարտության բացահայտումը, քաղաքացիական հասարակության մի շարք ներկայացուցիչներ այն համոզմունքին էին, որ Հանձնաժողովի հիմնական նպատակը պատմական ճշմարտության աղճատումն էր:

Հանձնաժողովը ստեղծվել էր միջազգային հանրության պահանջով, որով նախագահ Կոստունիցայից պահաջում էին բացահայտել պատերազմի ժամանակյակ տեղի ունեցած իրադարձությունները: Չստանալով քաղաքացիական հասարակության աջակցությունը՝ **Հանձնաժողովը լուծարվեց 2003 թվականին՝ առանց մեկ նիստ անգամ անցկացնելու**:<sup>283</sup>

### 3. Փոխհատուցումներ

Սերբիայում 1990-ական թվականների ընթացքում մարդու իրավունքների խախտումների զոհերին սիստեմատիկ փոխհատուցումներ տրամադրելու ծրագրերը բացակայում են: Տարբեր տեսակի օրենքներով փոխհատուցումներ են նախատեսված որոշ կատեգորիայի անձանց համար, մինչդեռ զոհերի մի սովոր հատված դուրս է մնացել փոխհատուցումներ ստանալու ծրագրերից: Այն զոհերը, ովքեր դուրս են մնացել նմանատիպ ծրագրերից, կարող են փոխհատուցում ստանալ դատական ակտերի հիման վրա, բայց դատարաններում վնաս կրելու վերաբերյալ ապացուցման բեռն ընկնում էր տուժողների վրա, ինչի պատճառով զոհերից շատերը չեն կարողանում ստանալ անհրաժեշտ փոխհատուցումներ:<sup>284</sup>

<sup>283</sup> Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://ictj.org/sites/default/files/ICTJ-FormerYugoslavia-Serbia-Review-2008-English.pdf>:

<sup>284</sup> Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://www.google.com/url?q=https://www.ictj.org/news/serbia-commemorates-victims-croatia%25E2%2580%2599s-operation>:

Հարկ է նշել, որ գոհված քաղաքացիների և զինվորների ընտանիքները փոխհատուցումներ ստանալիս բավականին բարդ իրավիճակում են հայտնվում: Փոխհատուցում ստանալու համար նրանք պետք է գրանցեն իրենց հարազատների մահվան փաստը, որպեսզի կարողանան ամսական կամ տարեկան կտրվածքով թոշակ ստանալ: Սա զոհերի հարազատների համար լրացուցիչ դժվարություններ է առաջացնում, քանի որ հարազատներին կորցնելու ցավը երբեմն բարոյական խոչընդոտներ է ստեղծել նրանց մահը գրանցելու համար:

#### **Հրապակային ներողության հայցում**

2006-2007 թվականների ընթացքում Սերբիայի Խորհրդարանը ուղերձ ընդունեց, որով ներողություն էր խնդրում 1995 թվականին Սրբերնիցայում Բոսնիայում ձևավորված սերբ բանակի կողմից իրագործված ցեղասպանության համար: Մի շարք փորձագետների կարծիքով, Սերբիայի խորհրդարանը ոչ միայն ցեղասպանության համար պետք է ներողություն խնդրեր, այլ նաև էթնիկ սերբերի կողմից՝ նախկին Հարավսլավիայում կատարած բոլոր հանցագործությունների համար:

2007 թվականի արդարադատության միջազգային դատարանն իր վճռում նշեց, որ սերբական իշխանությունները ձախողվել են Սրբերնիցայում տեղի ունեցած ցեղասպանության կանխումը, այնուամենայնիվ, դատարանը զոհերի հարազատներին ֆինանսական փոխհատուցումներ տրամադրելու պահանջ չդրեց սերբական իշխանությունների առաջ:

#### **4. Համակարգային բարեփոխումներ**

##### **Լյուստրացիա և վեթիինգ**

«Մարդու իրավունքների խախտումների համար հաշվետվողական լինելու մասին» օրենքն ընդունվեց 2003 թվականին՝ Սերբիայի խորհրդարանի կողմից:<sup>285</sup> Սակայն նորընտիր կառավարությունն այդպես էլ անհրաժեշտ միջոցներ չձեռնարկեց օրենքում նախանշված դրույթները իրականություն դարձնելու համար: Սերբիայի դեմոկրատական կուսակցությունը, որն այդ ժամանակ իշխող քաղաքական ուժերից մեկն էր, դեմ էր այդ օրենքի ընդունմանը:

Սերբական արմատական կուսակցությունը և Սերբիայի սոցիալիստական կուսակցությունը խորհրդարանում անհրաժեշտ քանակությամբ ձայներ ունեին օրենքի կիրառման համար խոչընդոտներ ստեղծելու և օրենքով ստեղծվելիք հանձնաժողովի անդամների ընտրությունը չեղարկելու համար: Օրենքը նախատեսում էր **փաստահավաք խումբ**

<sup>285</sup> Սերբական Խորհրդարանը <<Պատերզմական հանցագործությունների մասին> օրենքը ընդունեց 2003 թվականին:

**ստեղծել**, որը բացահայտելու էր 1976 թվականից հետո սեղի ունեցած մարդու իրավունքների խախտումները:<sup>286</sup>

2007 թվականին Սերբիայի նախագահ Բորիս Տադիչը հայտարարեց, որ լուստրացիայի իրականացումը այսքան տարի անց անհնար է: Հաշվետվողականության վերաբերյալ օրենքի դրույթներն էլ այդպես էլ կյանքի չկոչվեցին:

Սերբիան վեթիինգի գործընթացով չի հանդիսանում ռեզիոնալ մակարդակում հիմնական մոդել: Կառավարությունը ձախողեց համապարփակ վեթիինգային գործընթացի ձևավորումը և համակարգային վերակառուցումը, թեպետ, վեթիինգի իրականացման համար հիմնական օրենսդրական պայմանները և սկզբունքները նախանշվել էին : Քաղաքական կամքի ակնհայտ բացակայությունը հանդիսացավ վեթիինգի գործընթացի ձախողման հիմնական պատճառներից մեկը:<sup>287</sup>

### 1.2.11. Բոսնիա և Հերցեգովինա

#### 1. Քրեական արդարադատություն

Բոսնիա և Հերցեգովինայում պատերազմից հետո քրեական արդարադատությունը հիմնականում ՄԱԿ-ի կողմից հիմնադրված Նախկին Հարավսլավիայի համար միջազգային քրեական տրիբունալի (**The International Criminal Tribunal for the former Yugoslavia, 1993-2017թթ.**)<sup>288</sup> կողմից իրականացվեց: Տրիբունալը հիմնականում քննության առարկա էր դարձնում մեծ կարևորություն ունեցող գործերը: Ինչպես նաև, 2002թ-ին Բոսնիայի Խորհրդարանը հիմնադրեց Բոսնիա և Հերցեգովինայի դատարանը (**The Court of Bosnia and Herzegovina**),<sup>289</sup> որն իրավասություն էր ունենելու քննության առարկա դարձնել ցեղասպանությունների և պատերազմական հանցագործությունների վերաբերյալ գործերը: Դատարանն իր գործունեությունը սկսեց 2005թ.-ին և, վերջին տվյալներով, կայացրել է ավելի քան 200 դատավճիռ:<sup>290</sup>

Ի տարբերություն Նախկին Հարավսլավիայի համար միջազգային քրեական տրիբունալի, որը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից էր ղեկավարվում, Բոսնիա և Հերցեգովինայի դատարանը (**The Court of Bosnia and Herzegovina**) իր գործունեությունը իրականացնում է

<sup>286</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://ictj.org/sites/default/files/ICTJ-FormerYugoslavia-Serbia-Review-2008-English.pdf>

<sup>287</sup> <http://www.legalpoliticalstudies.org/wp-content/uploads/2017/06/Policy-Analysis-An-Analysis-of-the-Vetting-Process-in-Albania.pdf>

<sup>288</sup> Տեղեկատվությունը հասանելի է՝ <http://www.icty.org/>:

<sup>289</sup> Տեղեկատվությունը հասանելի է՝ <http://www.sudbih.gov.ba/>:

<sup>290</sup> Տե՛ս <http://www.balkaninsight.com/en/article/bosnia-over-200-indictments-since-end-of-war>:

բոսնիական օրենսդրության հիման վրա՝ հիմք ընդունելով Բոսնիա և Հերցեգովինայի քրեական օրենսգիրքը և քրեական դատավարության օրենսգիրքը: Չնայած այն հանգամանքին, որ դատարանի և դատախազության կազմում ընդգրկված են միջազգային մեծ ճանաչում ունեցող իրավաբաններ, այդուհանդերձ, դատարանի աշխատակազմի մեծամասնությունը տեղացի բոսնիացիներ են: Դատավարությունները իրականացվում են Բոսնիա և Հերցեգովինայի պետական լեզուներով: Դատապարտված անձինք իրենց պատիժները կրում են Բոսնիա և Հերցեգովինայում:

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Բոսնիայում ճշմարտության հայտնաբերումը մի շարք դժվարություններ ունի: Պատերազմի ժամանակ քարոզչության նպատակը հակամարտության վերաբերյալ հանրությանը այլ ճշմարտություն հրամցնելն էր:

Հակամարտության վերաբերյալ ճշմարտությունը երկրի տարբեր շրջաններում տարբեր կերպ է մեկնաբանվում: Կոսովոյի անկախացումից ոգևորված մինչև հիմա սերբերով բնակեցված շրջանները Բոսնիայից անկախության հանրաքվե անցկացնելու հույսեր են փայփայում: Հիշյալ հանգամանքով պայմանավորված՝ երկրում այդպես էլ միասնական ջանքեր չգործադրվեցին՝ բացահայտելու հակամարտության վերաբերյալ պատմական ճշմարտությունը: Երկար ժամանակ ճշմարտության բացահայտման առաքելությունը իրականացվում էր Նախկին Հարավսլավիայի համար միջազգային քրեական տրիբունալի կողմից:<sup>291</sup>

Ճշմարտության բացահայտման գործընթացը ավելի է բարդանում՝ պայմանավորված հակամարտության բնութագրման բարդությամբ: Շատերի կարծիքով, Հարավսլավիայում ծավալված իրադարձությունները քաղաքացիական պատերազմ էին, մյուսներն այն Հարավսլավիայի կողմից իրականացված ագրեսիա են դիտարկում: Բոսնիայի տարածքում բնակվող սերբ առանջնորդները այն համոզմունքն էին արտահայտում, որ Բոսնիայում անհրաժեշտ էր ստեղծել սերբական հանրապետություն՝ տեղացի սերբերին բոսնիացի մուսուլմանացումից պաշտպանելու համար: Եվ այս պատճառով էլ երկու կողմերում էլ արդարացվում են իրենց առաջնորդների կողմից իրականացված հանցագործությունները:<sup>292</sup>

Չնայած այն հանգամանքին, որ Բոսնիայում **այդպես էլ պաշտոնապես չհիմնադրվեց ճշմարտության և հաշտեցման վերաբերյալ հանձնաժողով**, այդուհանդերձ մի շարք փորձեր իրականացվեցին նմանատիպ հանձնաժողով հիմնադրելու համար: Այդպիսի փորձեր իրականացվեցին 1997, 2001 և 2005 թվականներին: 1997թ. Նախկին Հարավսլավիայի համար

<sup>291</sup> Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-DDR-Bosnia-CaseStudy-2009-English.pdf>

<sup>292</sup> Տե՛ս [http://www.trial-ch.org/en/trial-watch/profile/db/facts/gojko\\_jankovic\\_503.html](http://www.trial-ch.org/en/trial-watch/profile/db/facts/gojko_jankovic_503.html)

միջազգային քրեական տրիբունալը դեմ արտահայտվեց ճշմարտության հանձնաժողովի հիմնադրմանը՝ պատճառաբանելով, որ նմանատիպ հանձնաժողովի գոյությունը կարող է վտանգել խաղաղության հաստատման գործընթացը և տարածաշրջանում մեծացնել էթնիկ հակամարտությունները:<sup>293</sup> 2001թ-ին նույնպես ջանքեր գործադրվեցին ճշմարտության հանձնաժողով հիմնադրելու համար, սակայն այս ջանքերն անհրաժեշտ արդյունքներ չտվեցին: Նույն ճակատագրին արժանացավ նաև 2005թ. հանձնաժողով հիմնադրելու վերաբերյալ փորձերը:

### **3. Փոխհատուցումներ**

Հետպատերազմական Բոսնիայում այն համոզմունքն էր, որ հակամարտության զոհերը պետությունից չեն ստացել անհրաժեշտ փոխհատուցումներ և աջակցություն: Ասվածի լավագույն վկայությունն այն է, որ հակամարտության ավարտից միայն տասմեկ տարի անց պետությունը ջանքեր գործադրեց փոխհատուցումներ տրամադրելու հակամարտության զոհերին և նրանց հարազատներին:<sup>294</sup> Չնայած այն հանգամանքին, որ մինչ օրս Բոսնիայում բացակայում են համապարփակ փոխհատուցումներ տրամադրելու ծրագրերը, այդուհանդերձ, մի շարք փոքր մասշտաբի ծրագրեր են իրականացվել՝ փախստականներին իրենց նախկին բնակության վայրերում վերաբնակեցնելու համար:

### **4. Համակարգային բարեփոխումներ**

Բոսնիա և Հերցեգովինայում վեթօինգը ունեցավ փափուկ/մեղմ ազդեցություն, որտեղ գործընթացը իրականացվել է ամբողջովին միջազգային հանրության վերահսկողության ներքո: Արդյունքում, մեծացել է դատական համակարգի թափանցիկությունն ու հաշտվողականությունը, և մասամբ վերականգնվել է դատական համակարգի նկատմամբ հանրության վստահությունը:

Այդուհանդերձ, ամբողջ գործընթացը տեղի ունեցել դժվարությունների միջոցով, հատկապես այդ դժվարությունները առաջացել են գնահատման հստակ չափորոշիչների սահմանման գործընթացում:

Դատավորներին վեթօինգի ենթարկելու անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված էր եղել այդ համակարգում առկա կոռուպցիայի և ոչ կոմպետենտության հանգամանքներով:

Բոսնիայի Վեթօինգ մասին օրենքի կիրառման ձախողումը պայմանավորված էր գնահատման հստակ չափանիշների բացակայությամբ:

<sup>293</sup>Տեղեկատվությունը հասանելի է՝ <http://www.icty.org/>

<sup>294</sup>Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://www.brookings.edu/on-the-record/post-conflict-property-restitution-in-bosnia-balancing-reparations-and-durable-solutions-in-the-aftermath-of-displacement/>:

Բարեխղճությունը, տեխնիկական հմտությունները, որակավորումները, գույքային և ֆինանսական կարգավիճակը և պատերազմական հանցագործությունների վերաբերյալ արձանագրությունները այն հիմնական չափանիշներն էին, որոնք բարդ էր գնահատել Բոսնիայի ինստիտուցիոնալ համակարգի թափանցիկության և հաշվետվողականության բացակայության պատճառով: Ոչ արդյունավետությունը և թափանցիկության բացակայությունը, ևս մեկ անգամ դիտարկվեցին որպես «արդյունավետ համակցություն՝ համեստ արդյունքների նվաճման համար»:<sup>295</sup>

#### **Վերթինգը դատական և դատախազական համակարգերում**

1995 թվականին Դեյթոնի խաղաղության համաձայնագրով (The General Framework Agreement for Peace in Bosnia and Herzegovina, Բոսնիայում և Հերցեգովինայում խաղաղության համար շրջանակային ընդհանուր համաձայնագիր)<sup>296</sup> վերջ տրվեց ոչ միայն երեքուկես տարի տևած դաժան պատերազմին, բայց նաև ձևավորեց համալիր ծրագիր՝ Բոսնիա և Հերցեգովինայում հաստատել խաղաղություն:

1998 թվականից սկսած, օրենքի գերակայության բարեփոխումները սկսեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել միջազգային օրակարգին:

Նախնական ջանքերը, որոնք ուղղված էին դատավորների և դատախազների համապարփակ վերանայմանը և նրանց՝ ոչ համապատասխանության հիմքով զբաղեցրած պաշտոնից հեռացնելու համար գործընթացը, պսակվեց անհաջողությամբ:

Ի պատասխան, 2001 թ.-ի սկզբին ստեղծվեց Անկախ դատական հանձնաժողովը (ԱԴՀ)՝ որպես դատական բարեփոխումների առաջատար միջազգային կառույց, որը զարգացրեց դատական բարեփոխումների առողջացման ռազմավարությունը, որով առաջարկվեց փոխարինել վերանայման ընթացիկ գործընթացը՝ բոլոր դատավորների և դատախազների վերանշանակման գործընթացով: Արդյունքում, դատական համակարգը դարձավ շատ թանկ և անարդյունավետ, և չապահովեց էթնիկական այնպիսի համաչափ ներկայացվածություն, ինչպիսին որ հասարակության մեջ է: Այնուհետև, ԱԴՀ-ն առաջարկեց սկսել դատավորների և դատախազների վերանշանակման գործընթացը, որը կապահովի ոչ միայն նրանց համապատասխանությունը, այլև կմեկնարկի դատական համակարգի վերակառուցման ծրագիրը:

Մի շարք փորձագետներ, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդից, ի սկզբանե խորը վերապահումներ հայտնեցին ընդհանուր վերանշանակման գործընթացին: Հիմնական մտահոգությունը վերաբերում էր դատական պաշտոնների զբաղեցման համար առաջարկվող

<sup>295</sup> <http://www.legalpoliticalstudies.org/wp-content/uploads/2017/06/Policy-Analysis-An-Analysis-of-the-Vetting-Process-in-Albania.pdf>

<sup>296</sup> <https://www.osce.org/bih/126173?download=true>

բաց մրցույթին և այդ պաշտոններից հնարավոր ազատումներին, հատկապես, որ դա տեղի էր ունենում Դեյթոնի խաղաղության համաձայնագրի ստորագրումից վեց տարի անց: Կար կարծիք, որ նման միջոցները կխախտեին դատական համակարգի անկախությունը, մասնավորապես՝ նրանց անփոփոխելիության սկզբունքը, որը նախատեսված է սահմանադրությամբ և օրենսդրությամբ, և կծառայի որպես դատական համակարգում քաղաքական միջամտության բացասական նախադեպ:

Ի պատասխան, այլ վերլուծաբանները հայտարարեցին, որ «դա հենց այն պատճառով էր, որ դատավորը ... անկախ չէ, և մասնագիտական վերանայման գործընթացը ստեղծվել է իրական անկախության հիմքերը ապահովելու համար»: Ավելին, վերանշանակման գործընթացը ոչ միայն անհրաժեշտ էր, այլև այն հիմնական համարժեք գործընթացն էր, որ հարկավոր էր դատական համակարգի վերակառուցումը իրականացնելու համար, մասնավորապես՝ կրճատել դատական համակարգի աշխատողների, այդ թվում դատավորների թիվը, ինչպես նաև խթանել էթնիկական ներկայացվածությունը:

Ապակենտրոնացված տեղական իշխանությունների կառուցվածքի վերաբերյալ որոշ մտահոգություններ մեղմելու նպատակով, ստեղծվեց երեք խորհուրդ. Բոսնիա և Հերցեգովինայի Բարձր Դատական և Դատախազական խորհուրդ (պետական խորհուրդ)<sup>297</sup>, Բոսնիա և Հերցեգովինայի Բարձր Դատական և Դատախազական խորհուրդ (դաշնային խորհուրդ), Սըրբսկայի Հանրապետության (Republika Srpska) Բարձր Դատական և Դատախազական խորհուրդ (ՍՀ խորհուրդ): Խորհուրդները գործարկվեցին 2002 թվականի սեպտեմբերի 2-ից:

Խորհուրդները անկախ մարմիններ էին, որոնք կարգավորում էին դատական համակարգի հետ կապված կարևորագույն հարցերը, մասնավորապես՝ դատավորների և դատախազների ընտրությունը, նշանակումը, փոխադրումը, կարգապահական հարաբերությունները և ազատումը, նրանց մասնագիտական վերապատրաստման նկատմամբ վերահսկողությունը, և բոլոր դատարանների ու դատախազական համակարգի համար բյուջետային առաջարկների նախապատրաստումը: Անցումային ժամանակաշրջանում, որն ավարտվեց 2004 թվականի մայիսի 31-ին, խորհուրդներին տրվեց լրացուցիչ հանձնարարություններ՝ **վերակառուցել բոլոր դատարաններն ու դատախազական ստորաբաժանումները, ներառյալ գրեթե բոլոր դատավորների և դատախազների վերանշանակումը:**

<sup>297</sup> Բոսնիա և Հերցեգովինայի Բարձր Դատական և Դատախազական խորհրդի (պետական խորհուրդ) և Բոսնիա և Հերցեգովինայի Բարձր Դատական և Դատախազական խորհրդի (դաշնային խորհուրդ) մասին օրենքները [https://pravosudje.ba/vstv/faces/pdfservlet.jsessionid=2ed1a30eff3ec5ef6041422200cb73c2728cfa2aa8cf9cafc6b186765c3c7a28.e34TbxyRbNiRb40Qb34MahePaxn0?p\\_id\\_doc=14047](https://pravosudje.ba/vstv/faces/pdfservlet.jsessionid=2ed1a30eff3ec5ef6041422200cb73c2728cfa2aa8cf9cafc6b186765c3c7a28.e34TbxyRbNiRb40Qb34MahePaxn0?p_id_doc=14047)  
<http://rai-see.org/wp-content/uploads/2015/08/LAW-ON-HIGH-JUDICIAL-AND-PROSECUTORIAL-COUNCIL-OF-BH.pdf>



Այս անցումային ժամանակաշրջանում, երեք խորհուրդները համատեղ ունեին 17 ազգային անդամ, ներառյալ 6-ական անդամ Դաշնային և ՄՀ խորհուրդներից, 5-ը՝ պետական խորհրդից, ինչպես նաև 8 միջազգային անդամներ, որից երկուսը հանդիսանում էին նախագահը և փոխնախագահը: Խորհուրդների ազգային անդամները հանդիսանում էին դատական և դատախազական համակարգի տարբեր մակարդակների դատավորներ և դատախազներ, ինչպես նաև փաստաբաններ: ԱԴՀ-ի աշխատակազմը բաղկացած էր 120 աշխատողից, որը իրականացնում էր նաև խորհուրդների քարտուղարության գործառույթները:

Դատարանների վերակառուցումը հիմնված էր համապարփակ գնահատման վրա, որտեղ կիրառվեց երեք հիմնական սկզբունք.

- a. դատավորների ծանրաբեռնվածությունը,
- բ. բնակչության քանակը, որոնց սպասարկում են դատարանները,
- գ. դատարանի հեռավորությունը հաջորդ՝ առավել մեծ դատարանից:

Արդյունքում, առաջին ատյանի դատարանների ավելին քան 30 տոկոսը փակվեց:

Անհրաժեշտ դատավորների և դատախազների քանակը հաշվարկվեց դատական գործերի ներհոսքի հիման վրա: Արդյունքում, խորհուրդները գրեթե 30 տոկոսով կրճատեցին դատավորների թիվը: Այն պահից, երբ դատարանների և դատախազական ստորաբաժանումների, ինչպես նաև յուրաքանչյուր դատարանի և դատախազության ստորաբաժանման համար դատավորների և դատախազների թիվը որոշվեց, խորհուրդները նախաձեռնեցին վերանշանակման գործընթացը:

**Դատական համակարգի փոփոխությունների ամփոփումը, առաջին ատյանի դատարան.<sup>298</sup>**

ԿԱՌՈՒՅՑԸ	ՆԱԽԿԻՆՈՒՄ	ԱՌԱՋԱԴՐՎԱԾԸ	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՄՀ խորհուրդ	25	21	- 16 %
Դաշնային խորհուրդ	53	31	- 42 %
Ընդհանուր	78	52	- 33%

**Բարձր Դատական և Դատախազական խորհրդի կողմից որոշված դատավորների և դատախազների պաշտոնների թիվը.<sup>299</sup>**

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ	ՆԱԽԿԻՆՈՒՄ	ՆՈՐ	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՄՀ շրջանի դատարանի դատավորներ	56	61	+ 9%
ՄՀ հիմնական դատարանի	227	144	- 37%

<sup>298</sup> <http://www.legalpoliticalstudies.org/wp-content/uploads/2017/06/Policy-Analysis-An-Analysis-of-the-Vetting-Process-in-Albania.pdf>

<sup>299</sup> Տե՛ս նույն տեղում:

դատավորներ			
Քենթոնրլի (Cantonal) Դաշնային դատարանի դատավորներ	158	120	- 24%
Դաշնային մունիցիպալ դատարանի դատավորներ	439	304	- 31%
Ընդհանուր	880	629	- 29%
<b>ԴԱՏԱԽԱՉՆԵՐ</b>	<b>ՆԱԽԿԻՆՈՒՄ</b>	<b>ՆՈՐ</b>	<b>ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ</b>
ՍՀ շրջանի դատախազներ	70	73	+ 4%
Քենթոնրլի (Cantonal) Դաշնային դատախազներ	177	172	- 3%
Ընդամենը	247	245	- 1%

Վերանշանակման գործընթացում հայտարարվեց դատական և դատախազական համակարգում թափուր տեղերը համալրելու մասին բաց մրցույթ, որին կարող էին դիմել այն բոլոր որակավորված մասնագետները, այդ թվում դրսից թեկնածուներ (external candidates), ովքեր համապատասխանում էին պահանջներին: Պաշտոնավարող դատավորները և դատախազները նույնպես իրավունք ունեին դիմելին՝ հավակնելու իրենց կամ այլ պաշտոնի:

Վերանշանակման գործընթացը տեղի է ունեցել մի քանի փուլերով և յուրաքանչյուր փուլում ներգրավվել են սահմանափակ թվով դատարաններ և դատախազական ստորաբաժանումներ: Խորհուրդները բաց մրցույթի հայտարարություն էի տարածում: Մոտ 2000 անձ դիմել էր 953 պաշտոնի համար: Դիմորդներից շատերը դիմել էի մեկից ավելի պաշտոնի համար, ինչի արդյունքում ստացվել էր շուրջ 5000 հայտ:

Հանրության կողմից ստացվել էր ավելի քան 4800 բողոք ընդդեմ դատավորների և դատախազների, որոնք հիմնականում դժգոհում էին դատարանների որոշումներից, սակայն չէին ներառել որևէ մեղադրանք: Նման բողոքները, ընդհանուր առմամբ, քննության չեն ենթարկվել: 2004 թ. մայիսի 31-ի դրությամբ Կարգապահական հացերով դատախազության գրասենյակը ուսումնասիրել է 4,514 բողոք: Դրանցից 750-ը դատախազը համարել էր հիմնավոր և փոխանցել էր խորհուրդների քննարկմանը:

Վերանշանակման գործընթացում որպես խորհուրդների քարտուղարություն, ԱԴՀ-ը ստուգում էր ստացված դիմումների համապատասխանությունը ընդհանուր կանոններին, ներառյալ սեփականության ձեռքբերման համապատասխանությունը օրենքին, քաղաքական պատկանելիությունը, և ունեցած ակտիվները: Դիմումներում ներառվում էր նաև տեղեկություններ, որոնք վերաբերում էին ռազմական ծառայությանը, զբաղեցրած հանրային պաշտոններին և իրավական գործընթացներին, որոնք տեղի են ունեցել կոնֆլիկտային տարիներին: ԱԴՀ-ն սրամաղրում էր դիմումատուների անունները տարբեր միջազգային կազմակերպությունների՝ նրանից մեկնաբանություններ, բողոքներ, զնահատականներ ստանալու համար: Ստացվում էր նաև հակամարտության հետ կապած տեղեկություններ, սակայն պետք է

նշել, որ այս գործընթացի համար հարկավոր էր ավելի շատ տեղեկություններ, սակայն դրանց տրամադրման և ձեռքբերման գործընթացը կաղում էր, ինչի արդյունքում հնարավոր չէր ապահովել անկախ քննություն: Այսպիսով, թե արդյո՞ք սրանց արդյունքում տեղի ունեցան դատավորների և դատախազների վերանշանակում, որոնք չէին համապատասխանում այդ պաշտոններին, սույն հետազոտության կատարման ընթացքում հայտնի չդարձավ:<sup>300</sup>

2004 թվականի մայիսի 31-ի դրությամբ ընդհանուր թվով 953 դատական և դատախազական պաշտոններից, խորհուրդները կարողացան նշանակել 878-ի: Ազգային փոքրամասնությունների բացակայության պատճառով մնացած 75 պաշտոնները (8%) անցումային ժամանակաշրջանում թափուր մնացին: Գործող դատավորների և դատախազների գրեթե 30%-ը, ովքեր դիմել էին վերանշանակման նպատակով, չվերանշանակվեցին երկու պատճառով. կամ լրացրել էր նրանց կենսաթոշակի տարիքը, կամ նրանք չուզեցին անցնել վերանշանակման գործընթաց:

### 1.2.12. Խորվաթիայի Հանրապետություն

#### 1. Քրեական արդարադատություն

Չնայած այն հանգամանքին, որ Խորվաթիայի ներպետական դատարանները միջազգային հանցագործություններ կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու մի շարք դատավարություններ են իրականացրել, այդուհանդերձ, Խորվաթիայում քրեական արդարադատությունն իրականացվեց Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի կողմից:

#### 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Խորվաթական անկախ լրատվամիջոցները և հասարակական կազմակերպությունները հսկայական դեր են խաղացել հակամարտության վերաբերյալ պատմական ճշմարտությունը բացահայտելիս, իսկ պետությունը պատմական ճշմարտությունը բացահայտելու համար մեծ ջանքեր չի գործադրել: 2005թ-ին բացվեց **Հայրենիքի պաշտպանության համար մղված պատերազմի խորվաթական հիշատակի և փաստաթղթավորման կենտրոնը** (Croatian Memorial and Documentation Centre on the Homeland Defense War), որը նպատակ էր հետապնդում հավաքագրել և փաստաթղթավորել պատերազմի հետ առցանցվող տարբեր տեսակի

300

ապացույցներ: Կենտրոնը դիտարկվում էր որպես «պետական գիտական ինստիտուտ», որը պատերազմին վերաբերվող տարբեր թեմաներով հետազոտություններ է իրականացնում:<sup>301</sup>

### 3. Փոխհատուցումներ

Խորվաթիայում փոխհատուցումներ հիմնականում այն անձինք են ստացել, որոնց սեփականության իրավունքը խախտվել էր պատերազմի տարիներին: Դրանք հիմնականում փախստականներն էին: Վնասված կամ անհետացած սեփականության համար փոխհատուցումների տրամադրումը պետության սոցիալական գործունեության հիմնական ուղղություններից մեկն էր: Հաճախ անձինք իրենց գույքային և ոչ գույքային իրավունքները վերականգնում էին նաև ներպետական և միջազգային դատարաններին դիմելով: Փոխհատուցումներ տրամադրելու պետական համապարփակ ծրագրի շրջանակներում փոխհատուցում ստանալու տեսանկյունից Մարդու իրավունքների եվրոպական դատարանը երբեմն միակ միջոցն էր լինում:<sup>302</sup>

#### ***Հրապակային ներողության հայցում***

Բացի ֆինանսական փոխհատուցումներ տրամադրելուց՝ Խորվաթիայում կիրառվեցին նաև հատուցման այլ ծրագրեր, որոնց մեջ հիշատակման են արժանի պաշտոնական ներողությունների հայցումը:<sup>303</sup>

2000թ. Մոնտենեգրոյի նախագահ Միլո Դուկանովիչը ներողություն խնդրեց խորվաթ ժողովրդից՝ 1991թ. Դուբրովնիկի պաշարմանը իր հայրենակիցների մասնակցության համար:<sup>304</sup>

2003թ. Բելգրադում հանդիպման ժամանակ Խորվաթիայի նախագահ Ստեփան Մեսիչը և Սերբիայի նախագահ Սվետազար Մարովիչը փոխադարձաբար ներողություն խնդրեցին 1991-1995թթ. ընթացքում տեղի ունեցած դեպքերի առնչությամբ:<sup>305</sup>

Այս ներողությունները տարբեր կերպ ընկալվեցին հանրային լայն շրջանակներում: Հասարակության մի հատված այն համոզմունքին էր, որ ներողությունների հայցումը շատ կարևոր նախադրյալ էր անցյալի հետ հաշտվելու համար, մյուսների կարծիքով՝

<sup>301</sup>Տե՛ս «Na tragu istine o Domovinskom ratu», Hrvatski Vojnik, փետրվարի 7, 2006 թվական, հասանելի է՝ <http://www.hrvatskivojnik.hr/hrvatski-vojniki/0722006/nazor.asp>:

<sup>302</sup>Տե՛ս BBC, “Balkan refugee crisis eases”:

<sup>303</sup>Տե՛ս “Basic principles and guidelines on the right to a remedy and reparation for victims of gross violations of international human rights law and serious violations of international humanitarian law”, Human Rights Resolution, 2005/35, հասանելի է՝ [http://ap.ohchr.org/documents/E/CHR/resolutions/E-CN\\_4-RES-2005-35.doc](http://ap.ohchr.org/documents/E/CHR/resolutions/E-CN_4-RES-2005-35.doc)

<sup>304</sup>Transitions Online, “Apologies All Around”, Sept. 18, 2003, հասանելի է՝ <http://www.tol.cz/look/BRR/article.tpl?IdLanguage=1&IdPublication=9&NrIssue=1&NrSection=6&NrArt:>

<sup>305</sup> “Presidents apologize over Croatian war”, Sept. 10, 2003, հասանելի է՝ <http://news.bbc.co.uk/2/hi/europe/3095774.stm>.

ներողություններ հայցելը անիմաստ էր մնալու այնքան ժամանակ, քանի դեռ հանցագործություն իրականացրած անձինք մնալու էին անպատիժ:<sup>306</sup>

#### 4. Համակարգային բարեփոխումներ

##### Վերթինգ

Հակամարտությունից հետո պաշտոնական ձևաչափով Խորվաթիայում տեղի չունեցան համակարգային վերթինգներ: Փոխարենը ոչ պաշտոնական մակարդակով վերթինգ տեղի էր ունենում: Մասնավորապես, նախկին պաշտոնյաները հեռացվում էին իրենց զբաղեցրած պաշտոններից, հրաժարական էին ներկայացնում կամ էլ թոշակի էին անցնում: Համենայնդեպս, քաղաքական և դատական համակարգում վերթինգ տեղի չունեցավ և առանձնապես մեծ ջանքեր չգործադրվեցին պաշտոններից հեռացնելու մարդու իրավունքների խախտումներով աչքի ընկած պաշտոնյաներին: Ոչ պաշտոնական վերթինգը դատական համակարգից հեռացրեց ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ դատավորներին: 2014թ-ի դրությամբ խորվաթական դատարաններում դատավորների 5.4 տոկոսն է միայն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ:<sup>307</sup>

Ընդհանուր առմամբ, նշենք, որ Խորվաթիայում վերթինգի գործընթացը ձախողվել էր: Հավելենք նաև, որ մշակվել էր երկու օրենսդրական նախագծեր, որոնք կապված էին կոմունիստական դարաշրջանում կատարված չարաշահումների հետ: Երկու նախագծերից որևէ մեկը չընդունվեց: <sup>308</sup>

##### 1.2.13. Կոսովոյի Հանրապետություն

Կոսովոյի Հանրապետությունը բալկանյան փոքր պետություն է՝ 10.9 հազար քառ. կմ տարածքով և մոտ 1.7 մլն բնակչությամբ: Այն անկախացել է Սերբիայից 2008 թվականին:<sup>309</sup> 2013թ-ի սեպտեմբերի տվյալներով՝ ՄԱԿ-ի անդամ պետությունների կեսից ավելին՝ 106 պետություն ճանաչել են Կոսովոյի անկախությունը:

<sup>306</sup>Sté u HINA News agency, Aug. 5, 2006, “Croatian President says Operation Storm Crimes Committed by Individuals”.

<sup>307</sup> Sté u “Comments of the Government of Croatia on the Second Opinion of the Advisory Committee on the Implementation of the Framework Convention for the Protection of National Minorities in Croatia”, 2005, հասանելի է՝ <http://www.minorityrights.org/admin/Download/pdf/CroatiaMicro2005.pdf>:

<sup>308</sup> <http://www.legalpoliticalstudies.org/wp-content/uploads/2017/06/Policy-Analysis-An-Analysis-of-the-Vetting-Process-in-Albania.pdf>

<sup>309</sup> Sté u Международный суд ООН признал независимость Косово, հասանելի է՝ <http://kommersant.ru/doc.aspx?DocsID=1473715>:

Ժամանակակից կոնֆլիկտի առաջացման հիմքերը բխում են 20-րդ դարասկզբից, երբ Օսմանյան կայսրությունը կորցրեց իր վերահսկողությունը բալկանյան թերակղզու պետությունների նկատմամբ: 1912-1913թթ. Բալկանյան պատերազմների հետևանքով Կոսովոյի մեծ մասը մտավ Սերբիայի կազմի մեջ, իսկ մի փոքր մասը՝ Մոնտենեգրոյի (Չերնոգորիայի) կազմում: Հենց այդ շրջանում էլ հիմնադրվեց Ալբանիա պետությունը՝ Հունաստանի, Մակեդոնիայի, Կոսովոյի և Մոնտենեգրոյի (Չերնոգորիայի) հարևանությամբ: Ալբանիայում բնակչության կազմում մեծամասամբ ալբանացիներ են, իսկ փոքրամասնություններն են՝ հույները, մակեդոնացիները և մոնտենեգրացիները:<sup>310</sup> Ալբանացիների կրոնը մուսուլմանությունն է: Այս իրադարձություններից հետո մեծ թվով էթնիկ ալբանացիներ մնացին Կոսովոյի կազմում, որը բնական հակասություն էր ծնում ալբանական և սլավոնական բնակչության միջև՝ ոչ միայն էթնիկ, այլև կրոնական տարբերությունների պատճառով:

Առաջին աշխարհամարտից հետո Կոսովոն Սերբիայի կազմի մեջ էր, այդպես շարունակվեց մինչև Հարավսլավիայի կազմաքանդումը: Սերբիայում երկու էթնիկ խմբերի միջև հակասությունն էլ ավելի սրվեց, երբ 1988 թվականին Հարավսլավիայում իշխանության անցավ Սլոբոդան Միլոշևիչը: 1989թ-ին նոր սահմանադրության նախագիծը արմատապես կրճատում էր երկրի քիչ թե շատ ինքնավարություն ունեցող շրջանների ղեկավարների լիզորությունները, և Կոսովոյի ալբանացիները բոյկոտեցին այդ հանրաքվեն: Կոսովոյի տեղական լիազորությունները կրճատվեցին, արդյունքում սկսվեցին զանգվածային ցույցեր և անհանգստություններ: 1990թ-ին Կոսովոյում արտակարգ իրավիճակ հայտարարվեց, սակայն ալբանացիների շրջանում անջատողական ձգտումները էլ ավելի էին մեծանում: 1991թ. սեպտեմբերի 22-ին հռչակվեց Կոսովոյի Հանրապետության ստեղծումը, անցկացվեցին չթույլատրված հանրաքվե ու նախագահական ընտրություններ՝ ալբանական համայնքների շրջանում: Մեկ ամիս անց՝ հոկտեմբերի 22-ին, երկրի անկախությունը ճանաչեց Ալբանիան: 1996թ. նոր ուժերի միացմամբ Կոսովոյի ազատագրման բանակը վերաձևավորվեց:<sup>311</sup> Սկսվեց իրական պարտիզանական-ահաբեկչական պատերազմ: Արդյունքում՝ 1998թ-ին նրանց դեմ դուրս եկավ արդեն հարավսլավական բանակը: Պատերազմը ուղեկցվում էր զանգվածային ճնշումներով, խաղաղ բնակիչների սպանություններով, էթնիկական գտումներով:

1999թ. ռազմական գործողություններին միջամտեց ՆԱՏՕ-ն՝ ընդդեմ Հարավսլավիայի: ՆԱՏՕ-ն լիազորված էր ՄԱԿ-ի կողմից, իսկ զանգվածային ավիահարվածների արդյունքում սերբական կառավարությունը հարկադրված էր թույլ տալ ՆԱՏՕ-ի զորքերի մուտքը այդ շրջան, որի ղեկավարությունը հանձնվեց ՄԱԿ-ին՝ համաձայն 1999 թվականի հունիսի 10-ի ՄԱԿ-ի

<sup>310</sup> Տե՛ս <http://worldpopulationreview.com/countries/albania-population/>:

<sup>311</sup> Տե՛ս New Kosovo War Victims Report Released հասանելի է՝ [http://www.rferl.org/content/New\\_Kosovo\\_War\\_Victims\\_Report\\_Released/1845593.html](http://www.rferl.org/content/New_Kosovo_War_Victims_Report_Released/1845593.html)

Անվտանգության խորհրդի թիվ 1244 բանաձևի:<sup>312</sup> ՄԱԿ-ի ժամանակավոր ադմինստրացիայի հաստատումից հետո մեծ թվով փախստականներ (հիմնականում սերբեր ու գնչուներ) մնացին Սերբիայում, նրանց թիվը, ըստ սերբական տվյալների, մոտ 277,000 էր: Ներկայումս Կոսովոյի բնակչության 92%-ը ալբանացիներ են, մինչդեռ 1991թ-ին միայն 82%-ն էին, սերբերը կազմում են 5%-ը, իսկ գնչուները՝ 3%-ը:

2004թ. հոկտեմբերի 23-ին Կոսովոյում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ (երկիրը խորհրդարանական հանրապետություն է), պառլամենտում տեղերը բաշխվեցին ըստ էթնիկական պատկանելության՝ 120 մանդատներից 100-ը պատկանում է ալբանացիներին, մնացածը՝ ազգային փոքրամասնություններին, որից 10-ը՝ սերբերին: Արդյունքում, 2008թ-ի փետրվարի 18-ին Կոսովոյի պառլամենտը միակողմանի հայտարարեց երկրի անկախության մասին:<sup>313</sup> Իսկ արդեն 2010թ-ի հուլիսի 22-ին ՄԱԿ-ի Միջազգային դատարանը օրինական ճանաչեց Կոսովոյի անկախության հռչակումը Սերբիայից:<sup>314</sup> Դրանով, ըստ էության, հակամարտությունը վերջնականապես կարելի է լուծված համարել: Կոսովոյի հակամարտության մեջ տարբերակիչ գիծն այն էր, որ այստեղ տեղի ունեցավ միջազգային միջամտություն՝ ՆԱՏՕ-ի և ՄԱԿ-ի կողմից: Իսկ մյուս առանձնահատկությունը՝ աշխարհաքաղաքական իրողություններն են, մասնավորապես, հակամարտության հիմքերում առկա էին երկբևեռ աշխարհակարգի խնդիրները: Ի վերջո, Կոսովոյի անկախացումը նաև Ռուսաստանի աշխարհաքաղաքական պարտությունն էր, դրանով էր պայմանավորված, որ մինչև օրս Ռուսաստանի Դաշնությունը չի ճանաչում Կոսովոյի անկախությունը: Կոսովոյի հակամարտությունը ևս մեծ թվով գոհերի ու կորուստների հանգեցրեց:<sup>315</sup>

## 1. Ճշմարտության որոնում

Ներկայումս Կոսովոյում ակտիվ քայլեր են իրականացվում **Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողով ստեղծելու համար**: Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովը նպատակ է հետապնդելու հաշտեցնել Կոսովոյում բնակվող սերբերին և ալբանացիներին: Շատերը նմանատիպ հանձնաժողովը դրական քայլ են դիտարկում, բայց տեղացի սերբերը այն համոզվումքին են, որ այդ հանձնաժողովը քաղաքական գործիք է դառնալու նախագահ Հաշիմ Տաչիի ձեռքին:

<sup>312</sup> Տե՛ս <http://www.refworld.org/cgi-bin/tehis/vtx/rwmain?docid=3b00f27216>

<sup>313</sup> Տե՛ս Парламент Косова объявил о независимости края, 17.02.2008, հասանելի է՝ <http://www.vesti.ru/doc.html?id=164128&cid=1>

<sup>314</sup> Տե՛ս Международный суд ООН признал независимость Косово, 22.07.2010, <http://kommersant.ru/doc.aspx?DocsID=1473715>

<sup>315</sup> Տե՛ս New Kosovo War Victims Report Released, December 14, 2013 հասանելի է՝ [http://www.rferl.org/content/New\\_Kosovo\\_War\\_Victims\\_Report\\_Released/1845593.html](http://www.rferl.org/content/New_Kosovo_War_Victims_Report_Released/1845593.html)

Նահագահ Տաչին իր հերթին այն համոզմունքին է, որ հանձնաժողովը Կոսովոյի քաղաքացիներին հնարավորություն կընձեռի հաշվի նստել պետական ճշմարտության հետ և անցնում անցում կատարել դեպի ապագա: Նախագահի ձևակերպմամբ՝ Կոսովոյում անհրաժեշտություն կա հասարակական համերաշխություն հաստատելու, որպեսզի հասակակից երեխաները միմյանց դիտեն ոչ թե որպես թշնամիներ, այլ բարեկամներ:

Ներկայումս Նախագահ Տաչին աշխատանքային խումբ է ձևավորել, որը նպատակ է ունի անցումային արդարադատության հանձնաժողով հիմնադրել:<sup>316</sup>

## 2. Համակարգային բարեփոխումներ

### *Վերթինգ*

Կոսովոյում դատավորների և դատախազների վերագնահատումը իրականացվել է ԵՄ հասարակության հետ կապերի գրասենյակի (EU Commission Liaison Office) վերահսկողության ներքո, նպատակ ունենալով ստեղծել անկախ և մասնագիտական դատական և դատախազական համակարգ:

Վերթինգի գործընթացի ներքո, 898 դատավորներ և դատախազներ վերագնահատման գործընթացի մաս դարձան, որից միայն դատավորների և դատախազների 50 տոկոսը հաջողությամբ անցան էթիկայի և մասնագիտական թեսթը, ինչի արդյունքում վերանշանակվեցին որպես դատավոր և դատախազ:

Ընդհանուր առմամբ, Կոսովոյում վերթինգի գործընթացում գնահատումները դրական էին:

Այդուհանդերձ, մինչ օրս կոռուպցիայի բարձր մակարդակը, դատական համակարգի արդյունավետության և անկախության բացակայությունը վկայում են այն մասին, որ գործընթացը չունեցավ երկարատև ազդեցություն Կոսովոյի դատական համակարգում:<sup>317</sup>

### 1.2.14. Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետություն

Հարավսլավիայից անկախանալուց հետո՝ Նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետությունը (ՆՀՀ Մակեդոնիա) հռչակեց իր անկախությունը 1991թ-ի սեպտեմբերի 8-

<sup>316</sup> Աշխատությունը հասանելի է՝ <http://www.balkaninsight.com/en/article/can-kosovo-s-wartime-truth-commission-achieve-reconciliation--06-25-2018>:

<sup>317</sup> <http://www.legalpoliticalstudies.org/wp-content/uploads/2017/06/Policy-Analysis-An-Analysis-of-the-Vetting-Process-in-Albania.pdf>



ին:<sup>318</sup> Այս գործընթացը նախորդեց Իլինի ապստամբությանը: Իլինի ապստամբության օրը՝ օգոստոսի 2-ը, պետական մակարդակով տոնվում է որպես անկախության հռչակման օր:<sup>319</sup>

1990-ականների սկզբին Հարավսլավական պատերազմների ընթացքում Մակեդոնիան զերծ մնաց ռազմական բախումներից: ՆՀՀ Մակեդոնիայի և Հարավսլավիայի միջև աննշան սահմանային փոփոխություններ տեղի ունեցան միայն երկու երկրների համաձայնությամբ: 1999թ-ի Կոսովոյի պատերազմից հետո ՆՀՀ Մակեդոնիայի սահմանները որոշակի փոփոխությունների ենթարկվեցին, երբ 360,000 այբանացի փախստականներ Կոսովոյից ներգաղթեցին ՆՀՀ Մակեդոնիա:<sup>320</sup> Փախստականների ներհոսքի հետևանքով 2001թ. փետրվարից օգոստոսն ընկած ժամանակահատվածում բախում տեղի ունեցավ երկրի հյուսիսային և արևմտյան սահմաններին այբանացի փախստականների և կառավարության միջև: Հակամարտությունն ավարտվեց ՆԱՏՕ-ի միջամտությամբ: Օհրիդի համաձայնագրով կառավարությունը համաձայնվեց դադարեցնել քաղաքական պայքարը և ճանաչել այբանացի փոքրամասնությունների իրավունքները: Այբանական կողմը համաձայնվեց հրաժարվել տարածքային պահանջներից և ընդունեց ՆՀՀ Մակեդոնիայի տարածքային ամբողջականությունը: Բացի այդ, ՆՀՀ մակեդոնական բանակը պետք է զինաթափվեր և հանձնվեր ՆԱՏՕ-ին:

Այնուամենայնիվ, պատերազմի ավարտից հետո այբանացի փախստականները վերադարձան Կոսովո և հիմնադրեցին իրենց ազգային բանակը, հստակեցվեցին Կոսովոյի հետ սահմանները, և երկու կողմերում էլ խաղաղություն հաստատվեց: 2012թ. ՆՀՀ Մակեդոնիայում միջնաշուկայային լարվածություն առաջացավ այբանացիների և մակեդոնացիների միջև, որոնք ուղեկցվեցին բռնության տարբեր դրսևորումներով:<sup>321</sup>

Պրեսպայի համաձայնագիրը,<sup>322</sup> որը փոխարինում է 1995թ-ին ստորագրված ժամանակավոր համաձայնագրին, ստորագրվեց 2018թ-ի հունիսի 17-ին Հունաստանում՝ Պրեսպա գետի վրա գտնվող Պսարաղես գյուղում, երկու երկրների նախագահների՝ Նիկոլա Դմիտրիովի և Նիկոս Կոթսիանի կողմից, ինչպես նաև երկու վարչապետների՝ Զորան Զանի և Ալեքսիս Ցիպրասի ներկայությամբ: Հանդիպմանը ներկա էին ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցիչ Մեթյու Նիմեթը, քաղաքական հարցերով գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ռոզմարի Դի Կարլոն, ԵՄ-ի արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին, Եվրոպական ընդլայնման և եվրոպական

<sup>318</sup> St' u Nohlen, D & Stöver, P (2010) *Elections in Europe: A data handbook*, էջ 1278 :

<sup>319</sup> St' u "Recognition of States: Annex 3" Web.archive.org. Archived from the original on 15 February 2005. Retrieved 28 April 2010:

<sup>320</sup> St' u Brunnbauer, Ulf (2002). "The implementation of the Ohrid Agreement: Ethnic Macedonian resentments" (PDF). *Journal on Ethnopolitics and Minority Issues in Europe* (1/2002). Retrieved 2015-05-18:

<sup>321</sup> St' u [http://www.rferl.org/content/macedonia\\_ethnic\\_albanians\\_protest\\_murder\\_suspect\\_arrests](http://www.rferl.org/content/macedonia_ethnic_albanians_protest_murder_suspect_arrests):

<sup>322</sup> Հասանելի է՝ <http://www.ekathimerini.com/resources/article-files/aggliko-1.pdf>:

հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատար Յոհաննես Հանը և ուրիշներ: Հանդիսությունից հետո Հունաստանի վարչապետ Ցիպրասը իր մակեդոնացի գործընկերների հետ Օտեսեվա գյուղում ճաշելու համար անցնում է Մակեդոնիայի սահմանը և այս նշանակալից քայլը գնահատվում է որպես 1991թ-ի անկախության հռչակումից հետո Հունաստանի վարչապետի առաջին այցը ՆՀՀ Մակեդոնիա:

## 1. Քրեական արդարադատություն

Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալը իրավասություն ուներ քննելու 2011թ-ի հակամարտության ընթացքում տեղի ունեցած հանցագործությունները: Միջազգային հանրության ներգրավվածության շնորհիվ 2001թ-ին տեղի ունեցած իրադարձությունները բավականին կարճ ընթացք ունեցան: Հակամարտության ավարտից անմիջապես հետո ՆՀՀ Մակեդոնիան **Համաներման վերաբերյալ օրենք** ընդունեց, որի շնորհիվ պատերազմական հանցագործություններ իրականացրած անձինք հնարավորություն ունեցան խուսափել քրեական պատասխանատվությունից:

Նախկին Հարավսլավիայի համար միջազգային քրեական տրիբունալը սկսեց հետաքննություններ իրականացնել 2001թ-ին և չորս անձանց կալանավորելու վերաբերյալ որոշումներ ուղարկեց ՆՀՀ Մակեդոնիայի կառավարությանը:<sup>323</sup> Կառավարությունը դիմեց տրիբունալին՝ հայցելով տրիբունալի թույլտվությունը գործերը միջազգային դատարանի փոխարեն ներպետական դատական ատյաններում իրականացնելու, և տրիբունալը բավարարեց այս միջնորդությունը: Հետագայում ՆՀՀ Մակեդոնիայի իշխանությունները համապատասխան քայլեր չձեռնարկեցին մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

### Ճշմարտության որոնման գործընթաց

Օհրիդյան համաձայնագրով (the Ohrid Agreement, 2001)<sup>324</sup> նախատեսվում էր հանրային համերաշխություն ապահովել, զինված խմբերին զինաթափել և նրանց մասնակից դարձնել հասարակական կյանքին: Հենց այդ նպատակով էլ ՆՀՀ Մակեդոնիայում, հասարակական համերաշխություն ապահովելու նպատակով, ընդունվեց 2003 թվականին ընդունվեց **Համաներման մասին օրենքը**, որը ռազմական բախումներին մասնակցած անձանց հնարավորություն էր ընձեռում ազատվել քրեական պատասխանատվությունից<sup>325</sup>:

<sup>323</sup> St' u Lamont, Christopher K. Forging Transitional Justice: The Reconciliation of Law and Transition in Macedonia. The Macedonian Question: 20 Years of Political Struggle into European Integration. Libertas (2012):

<sup>324</sup> Աշխատությունը հասանելի է՝ <https://www.ecmi.de/fileadmin/downloads/publications/JEMIE/2002/nr1/Focus1-2002Brunnbauer.pdf>:

<sup>325</sup> St' u [http://www.mcser.org/images/stories/2\\_journal/mjssso203september2011/4.%20frckoski.pdf](http://www.mcser.org/images/stories/2_journal/mjssso203september2011/4.%20frckoski.pdf):

Ճշմարտության բացահայտման և հասարակական հաշտեցման միասնական ծրագրի բացակայությունը մեծ հիասթափություն առաջացրեց ՆՀՀ Մակեդոնիայում, հատկապես՝ երկրում փոքրամասնություն կազմող ալբանացիների շրջանում, քանի որ ռազմական հակամարտության վերաբերյալ ճշմարտությունը այդպես էլ չբացահայտվեց հանրության լայն շրջանակների համար:

ՆՀՀ Մակեդոնիայում այդպես էլ ճշմարտության հանձնաժողով չստեղծվեց, որը պետք է քններ ռազմական բախումների վերաբերյալ պատմական ճշմարտությունը:<sup>326</sup> ՆՀՀ Մակեդոնիայում ներքին գործերի նախարարի կողմից առաջարկվել էր, և ապա 2000թ.-ին ընդունվել է «Պետական անվտանգության ծառայությունում պահվող անձնական գործեր վարելու մասին» օրենքը (Law on handling personal files kept by the State Security Service):<sup>327</sup> Որպես օրենքի կիրառելիության ժամկետ սահմանվել է 1945-2000թթ. ընկած ժամանակահատվածը: Օրենքը ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2001 թվականի հուլիսի 1-ը արխիվները հասանելի են եղել: Արդյունքում, օրենքի ընդունմամբ Պետական անվտանգության աշխատակիցների կողմից հետախուզված և դատական հետապնդման ենթարկված անձանց վերաբերյալ ընդհանուր թվով 15,000 ֆայլեր հասանելի դարձան:<sup>328</sup> Գործընթացը, սակայն մտավ փակուղի, այն պատճառով, որ Ներքին գործերի նախարարության պաշտոնյաները իրենց համար ընթացակարգը դարձրեցին բյուրոկրատական և ապահովեցին ուժեղ պաշտպանություն իրենց համար: Օրենքի 1 տարվա գործողության ժամանակ Ներքին գործերի նախարարությունը երբեք չի հստակեցրել հանրության համար հասանելի նյութերի քանակը:<sup>329</sup> Բացի այդ, խորհրդարանի համար նախարարության պատրաստած զեկույցը երբեք չի հրապարակվել: Պետք է հաշվի առնել, որ այդ շրջանում ՆՀՀ Մակեդոնիան անվտանգության հետ կապված խնդիրներ ուներ, որը անկախություն ձեռք բերելուց ի վեր մեծ ճգնաժամ էր վերջինիս համար: Այդ էր պատճառը, որ ցածր մակարդակի հասարակական ակտիվիզմ դրսևորվեց: Օրենքը միայն հետաքրքրել էր մի քանի լրատվական միջոցների, այն էլ դրա ընդունման առաջին երեք ամիսներին: Նշյալը հիմնականում պայմանավորված էր 2000թ.-ին ՆՀՀ Մակեդոնիայում տեղի ունեցած ընտրություններով:

### Հատուցումներ

<sup>326</sup> St' u Bloomfield, David, Teresa Barnes and Luc Huyse (eds). Reconciliation After Violent Conflict: A Handbook. International Institute for Democracy and Electoral Assistance (IDEA). [http://www.idea.int/publications/reconciliation/upload/reconciliation\\_full.pdf](http://www.idea.int/publications/reconciliation/upload/reconciliation_full.pdf) :

<sup>327</sup> St' u [http://cdrsee.org/pdf/lustration\\_documentation.pdf](http://cdrsee.org/pdf/lustration_documentation.pdf), p.29:

<sup>328</sup> St' u նույն տեղում:

<sup>329</sup> St' u նույն տեղում:

ԵՄ-ը մեծ աջակցություն է տրամադրել մակեդոնական իշխանություններին՝ վերականգնելու հակամարտության հետևանքով մարդկանց պատճառված վնասները:<sup>330</sup>

Մասնավորապես՝ ֆինանսական միջոցներ հատկացվեցին, որպեսզի կառավարությունն ի վիճակի լինի վերականգնել հակամարտության հետևանքով ավերված տները, ենթակառուցվածքները: Ֆինանսական միջոցներից հատկացումներ արվեցին նաև ներքին տեղահանումների հետևանքով տուժած անձանց, որպեսզի նրանք կարողանային ադապտացվել նոր իրականությանը:

ԵՄ հատկացված ֆինանսական միջոցների հաշվին ՆՀՀ Մակեդոնիայի իշխանությունները հնարավորություն ստացան անվճար սնունդ և առաջին կարգի այլ օգնություն տրամադրել հասարակության խոցելի խմբերին: ԵՄ-ն ՆՀՀ Մակեդոնիայում նաև իրականացրեց «Համայնքային վերակառուցման, զարգացման և կայունացման» ծրագիրը, որի առանցքում էին գտնվում հետպատերազմական հասարակության ներկայացուցիչները, ազգային փոքրամասնությունները և կրթական հիմնարկները:<sup>331</sup>

Այսպիսով, հարկ է նշել, որ ՆՀՀ Մակեդոնիայում չեն իրականացվել անցումային արդարադատության իրականացման այնպիսի կարևորագույն մեխանիզմներ, ինչպիսիք են՝ լյուստրացիան և վեթիինգը:

---

<sup>330</sup>Տե՛ս [http://www.eurac.edu/en/research/autonomies/minrig/Documents/Mirico/23\\_Macedonia.pdf](http://www.eurac.edu/en/research/autonomies/minrig/Documents/Mirico/23_Macedonia.pdf)

<sup>331</sup> Տե՛ս [http://www.eurac.edu/en/research/autonomies/minrig/Documents/Mirico/23\\_Macedonia.pdf](http://www.eurac.edu/en/research/autonomies/minrig/Documents/Mirico/23_Macedonia.pdf)

## **ԳԼՈՒԽ 2. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

1950-1980թթ. Լատինական Ամերիկայի երկրներում իշխանությունը զավթվել էր բռնատիրական ռեժիմների կողմից: Այս ռեժիմները աչքի էին ընկնում մարդու իրավունքների լայնամասշտաբ խախտումներով: Խոշտանգումները, առևանգումները, սպանությունները և անհետացումները համատարած երևույթներ էին Լատինական Ամերիկայում: Բռնապետությունից ժողովրդավարության անցման ճանապարհին նախորդ ռեժիմների կողմից մարդկանց պատճառված վնասի հարցը երբեմն մնում էր առանց կարգավորման, իսկ բռնապետական ռեժիմների կառավարման հետևանքով ծագած խնդիրները շարունակում էին մնալ առանց լուծումներ ստանալու: Արդյո՞ք ոճրագործություն կատարած անձինք պետք է պատասխանատվություն ենթարկվեն, արդյո՞ք նախորդ ռեժիմի վայրագությունների զոհերին փոխհատուցում տրամադրելը կարող է ժողովրդավարական կայունություն ապահովել նախկին բռնատիրական երկրներում, ինչպի՞սի մեխանիզմներ կարելի է կիրառել ճշմարտությունը բացահայտելու, մեղավորներին պատասխանատվության ենթարկելու և զոհերի իրավունքները վերականգնելու համար. այս և նմանատիպ այլ հարցեր մտահոգության տեղիք էին տալիս թե՛ արգենտինական և չիլիական դատարաններում, թե՛ Գվատեմալայի փողոցներում, և թե՛ տարածաշրջանային լրատվամիջոցներով:

Դատարանները էական դեր ունեն այսպիսի հարցերին պատասխան տալու տեսանկյունից, բայց արդյո՞ք **ճշմարտության և հաշտեցման մեխանիզմները** արդյունավետ չեն կարող լինել: Այսպիսով, անցումային արդարադատության ինչպիսի՞ մեխանիզմներ կիրառվեցին Հարավային և Հյուսիսային Ամերիկայի երկրների կողմից այս խնդիրների լուծման համար:

### **2.1. Անցումային արդարադատության մեխանիզմները և գործիքները Հարավային Ամերիկայում**

#### **2.1.1. Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն**

1960-ական թվականների սկզբից սոցիալիստական շարժումները մեծ թափ հավաքեցին Բրազիլիայում և սկսեցին մեծ դեր խաղալ Բրազիլիայի քաղաքական կյանքում: Երկրում ավելացել էին քաղաքացիական անհնազանդությունները, ինչի արդյունքում Բրազիլիայի նախագահ Ժոաո Գուլարտն իշխանության եկավ 1960թ-ի մարտի 31-ին և զինվորական

բոնաստիքություն հաստատեց՝ իշխանության դեկին մնալով շուրջ 25 տարի:<sup>332</sup> Իշխանությունը բռնազավթելու ժամանակահատվածում ռազմական կառավարությունն իրականացրեց մարդու իրավունքների բազմաթիվ խախտումներ՝ թիրախավորելով քաղաքական հակառակորդներին: Մասնավորապես, 1967թ-ին ռազմական խումբն ընդունեց **«Ազգային անվտանգության մասին» նոր օրենքը և նոր սահմանադրություն** հեղինակեց, որով **ուժը կորցրած ճանաչվեց դաշնային սահմանադրությունը** և զինված ուժերին հսկայական լիազորություններ տրվեցին քաղաքական հակառակորդների դեմ պայքարելու հարցում: Ավելին, 1968թ-ին ընդունված **5-րդ «Ինստիտուտոցիանալ ակտը»** ռազմական ղեկավարությանը լիազորություն տվեց գրաքննություն իրականացնել մշակութային և սոցիալական հավաքների կազմակերպման և անցկացման նկատմամբ և անհիմն կերպով կասեցրեց մի շարք սահմանադրական իրավունքներ, այդ թվում՝ կալանքից ազատ արձակվելու իրավունքը:

Չնայած այն հանգամանքին, որ սիստեմատիկ խոշտանգումների, առանց դատավարության իրականացվող մահապատիժների կամ հարկադիր անհետացումների աստիճանը անհամեմատ ավելի քիչ էր, քան Լատինական Ամերիկայի մնացած երկրներում, այդուհանդերձ, ոչ պաշտոնական տվյալներով,<sup>333</sup> ռազմական ռեժիմի վայրագություններին զոհ դարձան հազարավոր մարդիկ:

1973թ-ից բռնի ռազմական խմբերին փոխարինելու եկան չեզոք քաղաքացիական խմբերը, ինչն էլ հիմք դարձավ աստիճանական, անվտանգ և դանդաղ բարեփոխումների և անցումային արդարադատության իրականացման համար:

## 1. Քրեական արդարադատություն

1979թ-ին, քաղաքական փոխզիջման գնալով ընդդիմության հետ, Բրազիլիայի նախագահ Ֆիզուերեիդոն հայտարարեց համաներում բոլոր քաղաքական բանտարկյալների համար: Նույն թվականին ընդունված **«Համաներման մասին» օրենքը** հնարավորություն ընձեռեց քաղբանտարկյալներին ազատ արձակել, պայմանով, որ **նոր կառավարությունը քրեական հետապնդում չի սկսի նախկին ռեժիմի այն ներկայացուցիչների նկատմամբ, ովքեր խախտել էին մարդկանց հիմնարար իրավունքները**: Այսպիսով, տարիներ շարունակ պատասխանատվությունից խուսափելու հնարավորություն ընձեռվեց նախկին իշխանությունների պաշտոնատար անձանց, ովքեր ընդգրկված էին եղել առևանգումների, հարկադիր անհետացումների և քրեական վարույթների ընթացքում իրականացված

<sup>332</sup> Տե՛ս սույն հղմամբ՝ <https://mail.google.com/mail/u/0/?ui=2&ik=a1d7d5d462&attid=0.6&permmmsgid=msg-f.1610589133926424690&th=1659f648b6c9e072&view=att&disp=inline>

<sup>333</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/brazil>

խոշտանգումների գործընթացներում: 2010թ-ին Մարդու իրավունքների ինտերամերիկյան դատարանը «*Գերիլիա դո Արագույան ընդդեմ Բրազիլիայի*»<sup>334</sup> գործով որոշում կայացրեց, որում նշվում էր, որ Բրազիլիան պատասխանատվություն է կրում 1972-1975թթ. շուրջ 70 անձանց անհետացման համար: Այս վճռից անմիջապես հետո բրազիլական դատարանները ձեռնամուխ եղան նմանատիպ գործերը վարույթ ընդունելու պրոցեսին, մասնավորապես, Բրազիլիայի պատմության մեջ առաջին անգամ ազգային անվտանգության ծառայողները դատական գործերում ներգրավվեցին որպես մեղադրյալ:

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

«**Համաներման մասին» օրենքով** նախատեսված իրավունքներից օգտվելու համար անհրաժեշտ էր, որպեսզի պետության կողմից քաղաքական հետապնդումների ենթարկված անձինք ստորագրեին համաներման հանրագրեր, և այդ նպատակով վերջիններիս իրավաբանները հնարավորություն ստացան մուտք գործել ռազմական արխիվներ: Այսպիսի անկանխատեսելի մուտքը դեպի պետական արխիվներ և դրա արդյունքում ռազմական գործողությունների վերաբերյալ տեղեկատվության տիրապետումը հանգեցրեց մի իրավիճակի, երբ իրավունքների խախտումների զոհերը միավորվեցին՝ պահանջելով հայտնել ճշմարտությունը այն մասով, թե որքանով է պետությունը ներգրավված եղել քաղաքական սպանությունների և հարկադիր անհետացումների մեջ:

Վերոնշյալի արդյունքում Բրազիլիայում ստեղծվեց **Հետաքննության ոչ պաշտոնական հանձնաժողով**՝ եկեղեցու կողմից: Թեև հիշյալ հանձնաժողովը չունեւ պաշտոնական կարգավիճակ, սակայն այն կարողացավ պահպանել իր գոյությունը 1979-1982 թվականների ընթացքում: Վերջինս հեղինակեց ոչ պաշտոնական «**Ճշմարտության զեկույցը**»,<sup>335</sup> որը տեղեկություն էր պարունակում զինվորական բռնապետության կողմից իրականացված մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ 1964-1979 թվականների ընթացքում: Այն բաղկացած էր 2700 էջից և հիմնված էր տարբեր հետաքննական մեթոդների վրա: Զեկույցը կազմելուն աջակցել են իրավաբաններ և մասնագիտացված քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, ինչպես նաև ավելի քան 35 հետաքննական աշխատանքներ են կատարվել՝ զեկույցն ամբողջական տեսքի բերելու նպատակով: Հետաքննության շրջանակներում 1843 քաղբանտարկյալներ վկայություն են տվել և վեր են հանվել մարդկանց խոշտանգման ենթարկելու 283 եղանակ, որոնք կիրառվել էին 242 խոշտանգման

<sup>334</sup> Տե՛ս [http://www.corteidh.or.cr/docs/casos/articulos/seriec\\_219\\_ing.pdf](http://www.corteidh.or.cr/docs/casos/articulos/seriec_219_ing.pdf):

<sup>335</sup> Տե՛ս <http://www.usip.org/publications/commission-of-inquiry-brazil>:

կենտրոններում՝ 444 խոշտանգողների կողմից:<sup>336</sup> Ջեկույցից նաև պարզ էր դառնում, որ խոշտանգման գոհ են դարձել ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք և երեխաներ. երեխաները բռնությունների են ենթարկվել իրենց ծնողների աչքի առաջ, իսկ կանայք, հատկապես բանտերում, ենթարկվել են բռնաբարության: Այս զեկույցը նպատակ է հետապնդել լռեցնել զինվորական բռնապետության կողմից իրականացված մասսայական խոշտանգումները հերքող ընդդիմախոսներին՝ ակնհայտ փաստերը երևան հանելով: Այն Բրազիլիայի քաղաքացիներին կոչ էր անում ակտիվ կերպով մասնակցություն ունենալ ընտրություններին, արտահայտել իրենց անհամաձայնությունը և պետությանը հաշվետու դարձնել իր գործողությունների համար: Թեև այս զեկույցում դրույթներ չկան այն մասին, թե նորընտիր կառավարությունն ինչպիսի քայլեր կարող է իրականացնել զոհերին պատշաճ փոխհատուցում տրամադրելու համար, այն հսկայական ազդեցություն ունեցավ բրազիլական հասարակության վրա. զեկույցի հրապարակվելուց մեկ շաբաթ անց 100,000 օրինակ վաճառվեց:

Քանի որ նախկին հանձնաժողովը պաշտոնական ստեղծված չէր և նրանից ստացված տեղեկատվությունը չէր կարող օգտագործվել պաշտոնական մակարդակով, այդ իսկ պատճառով էլ 1990թ-ին Բրազիլիայի կառավարությունը ստեղծեց ճշմարտության նոր՝ **Հատուկ հանձնաժողով** (Special Commission),<sup>337</sup> որը ձեռնամուխ էր լինելու նախկին ռեժիմի կողմից իրականացված մարդու իրավունքների խախտումները բացահայտելու գործին: Թեև փորձեր էին իրականացվում նշյալ հանձնաժողովը խորհրդարանական մակարդակով ստեղծելու ուղղությամբ, այդուամենայնիվ, դրանք հաջողությամբ չպսակվեցին: Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում էր Բրազիլիայի տարբեր շրջաններ այցելություններ կատարելու, խոշտանգման ենթարկվածներին և նրանց հարազատներին հարցաքննելու և ռազմական մարմիններին տեղեկատվություն ստանալու հարցումներ ուղարկելու եղանակով: Հանձնաժողովի կողմից հարցաքննված անձանց թվին էին պատկանում նաև զինված ուժերի նախկին ներկայացուցիչներ, որոնք նոր տեղեկություն տրամադրեցին սպանված և անհետ կորած անձանց վերաբերյալ: Տեղեկատվություն ստանալու հարցումների շնորհիվ պարզ դարձավ, որ 43 քաղաքական ակտիվիստներ ռազմական ռեժիմի գոհ են դարձել:

2011թ. հոկտեմբերի 26-ին ստեղծվեց նաև **Ճշմարտության ազգային հանձնաժողովը՝** (National Truth Commission)<sup>338</sup> Բրազիլիայի Կոնգրեսի կողմից համապատասխան օրենքի հիման վրա: Հանձնաժողովի առաքելությունն էր 1946-1988թթ. ընթացքում տեղի ունեցած մահապատիժների, խոշտանգումների, անհետացումների և այլ բնույթի մարդու իրավունքների

<sup>336</sup> Ամցումային արդարադատության միջազգային կենտրոնի ամփոփաթեթը հասանելի է՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/brazil>:

<sup>337</sup> Տե՛ս <https://www.americananthro.org/ParticipateAndAdvocate/Content.aspx?ItemNumber=2071>:

<sup>338</sup> Տե՛ս A Comissão da Verdade no Brasil, NÚCLEO DE PRESERVAÇÃO DA MEMÓRIA POLÍTICA – SÃO PAULO:



խախտումների քննությունը և պարզաբանումը: Հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ օրենքով պետական մարմինների վրա դրված էր նշյալ հանձնաժողովի հետ համագործակցելու պարտավորություն՝ ի տարբերություն նախորդ հանձնաժողովի: Բացի այդ, 2011թ-ի ավարտին ընդունված **«Տեղեկատվության ազատության վերաբերյալ» օրենքը**<sup>339</sup> ևս նպատակ էր հետապնդում աջակցություն ցուցաբերել նշյալ հանձնաժողովին՝ հնարավորություն ընձեռելով մուտք գործել բռնատիրական ռեժիմի կողմից ստեղծված արխիվներ: Թեև այն բավականին լայն լիազորությունների շրջանակ ուներ հետաքննելու մարդու իրավունքների խախտումները, սակայն չունեի դատախազական գործառույթներ մեղադրանք ներկայացնելու և դատարանում մեղադրանքի կողմում հանդես գալու համար: 2013թ-ին վերոգրյալ հանձնաժողովը ստեղծեց 13 մասնագիտական խումբ՝ ուղղված հետաքննության իրականացման պրոֆեսիոնալիզմի մակարդակի բարձրացմանը, իսկ 2014թ-ին՝ հրատարակեց իր ավարտական զեկույցը, որտեղ մանրամասն կերպով ամփոփվել էր իրականացված գործողությունները:

### 3. Փոխհատուցումներ

Թեև մինչև 1995թ. Բրազիլիայում պետական մակարդակով գոյություն չունեի փոխհատուցման ծրագիր, սակայն զոհերի հարազատների կողմից պետությունից որոշակի փոխհատուցում ստանալու առաջին իրավական գործընթացները թվագրվում են 1978թ-ին: Փոխհատուցումները ներառում էին.

- **դրամական փոխհատուցում,**
- **մարդու իրավունքների խախտումների համար Բրազիլիայի պատասխանատվության ճանաչում հանրային ներողությունների և հայտարարությունների միջոցով:**

Մինչև փոխհատուցման ծրագրի ընդունումն արդեն իսկ առկա էր հատուցումների վերաբերյալ դատական պրակտիկա: Օրինակ՝ 1978թ-ին դաշնային դատարանի վճռով սահմանվեց Բրազիլիայի կողմից լրագրող Վլադիմիր Հերցոգի մահվան համար վերջինիս կնոջը դրամական փոխհատուցում (ամսական կենսաթոշակ) հատկացնել, 1981թ-ին՝ Մարիո Ալվեսի մահվան համար՝ վերջինիս առևանգման, անհետացման և մահվան համար պաշտոնական ներողություն հայցել, 1991թ-ին մեկ այլ ակտիվիստի սպանության համար վերջինիս ընտանիքին դրամական փոխհատուցման տրամադրել և այլն:<sup>340</sup>

<sup>339</sup>Ամցումային արդարադատության միջազգային կենտրոնի ամփոփաթերթը հասանելի՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/brazil>:

<sup>340</sup> Ignacio Cano & Patrícia Salvão Ferreira, The Reparations Program in Brazil, in THE HANDBOOK OF REPARATIONS (Pablo de Greiff ed., 2006), [hereinafter The Reparations Program in Brazil], հասանելի է՝ <http://www.oxfordscholarship.com/view/10.1093/0199291926.001.0001/acprof-9780199291922>:

1995թ-ի դեկտեմբերի 4-ին Բրազիլիայի նախագահ Ֆերնանդո Էնրիկե Կարդոզոն ստորագրեց «Փոխհատուցումների մասին» դաշնային ծրագիրը, որը նախատեսում էր փոխհատուցումներ 1961-1979թթ. ընթացքում անհետացած կամ մահացած անձանց: **«Փոխհատուցումների մասին» օրենքով** ստեղծվեց 7 անդամից բաղկացած **Մահացածների և անհետ կորած անձանց հարցերով հատուկ հանձնաժողով**:<sup>341</sup> Օրենքը գոհերի հարազատներին հնարավորություն էր ընձեռում դիմելու Հատուկ հանձնաժողովին՝ փոխհատուցում ստանալու համար: Հարկ է նկատել, որ փոխհատուցման տրամադրումը նախատեսվում էր դաշնային բյուջեի առանձին տողով: Փոխհատուցում տրամադրելիս հաշվի էին առնվում գոհերի տարիքը, սեռը, ընտանեկան դրությունը և այլ գործոններ: Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ վերոնշյալ հանձնաժողովին դիմելը խոչընդոտ չէր բրազիլական դատարաններում գործերը վարույթ ընդունելու համար: 1999թ-ի նշյալ հանձնաժողովն արդեն իրականացրել էր իր առջև դրված նպատակները, և բոլոր իրավասու դիմողները փոխհատուցում էին ստացել:

2011թ-ին կառավարությունը ստեղծեց **«Համաներման» հանձնախումբ**,<sup>342</sup> որը նպատակ ուներ փոխհատուցում տրամադրել այն անձանց, ովքեր փոխհատուցում չէին ստացել վերոնշյալ հանձնաժողովի կողմից: Այսպես, այն անձինք, ովքեր զինվորական ռեժիմի կողմից ենթարկվել էին խոշտանգումների, կամայական ձեռքարկությունների կամ հարկադիր արտաքսման, հնարավորություն էին ձեռք բերում ստանալու փոխհատուցում: Այս համատեքստում **«Համաներման» հանձնախումբը** շուրջ 12,000 անձանց սիմվոլիկ փոխհատուցում տրամադրեց և պաշտոնապես ներողություն խնդրեց նրանցից:

Քանի որ փոխհատուցումների մասին օրենսդրությունը որոշակի սահմանափակումներ էր նախատեսում, բրազիլական իշխանությունները ձեռնամուխ եղան տարատեսակ բնույթի փոխհատուցումներ նախատեսող օրենքներ ընդունելուն, որոնք հիմնականում վերաբերում էին խոշտանգումների ենթարկված անձանց:

Հարկ է նաև հավելել, որ անցումային արդարադատության բրազիլական պրակտիկան ցույց է տալիս, որ հանրային ներողությունները կարող են բավականին արդյունավետ միջոց լինել պետությունների կողմից իրենց առջև դրված նպատակներն իրականացնելու համար: Նախկին ռազմական ղեկավարությունը ոչ պաշտոնական մակարդակով ևս ներողություն խնդրեց բրազիլացիներից: Հատկանշական է, որ «O Globo» ամսագիրը, որը մեծ լսարան ունի Բրազիլիայում, պաշտոնական մակարդակով ներողություն խնդրեց՝ խոստովանելով նախկին բռնապետական ռեժիմի հետ իրենց համագործակցության մասին:

<sup>341</sup>Stéu Special Commission on Deaths and Disappearances:

<sup>342</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի ամփոփաթեթը հասանելի՝ Brazil's Amnesty Commission: Interview with Paulo Abrão, TJ BRASILIA BLOG (Հուլիսի 8, 2011),<http://tjbrasil.com/blogspot.com/2011/07/during-conference-we-asked-national.html>:

### Խորհրդանշական միջոցների կիրառում

Բրազիլիայում ստեղծվեց օնլայն հարթակ,<sup>343</sup> որը հնարավորություն ընձեռեց անձանց արխիվացնել բռնապետության տարիներին վավերագրվող նյութերը<sup>344</sup>:

#### **4. Համակարգային բարեփոխումներ**

##### Հասարակական ակտիվիզմ

Մի շարք ակտիվիստների և նախկին իշխանություններից տուժած անձանց ընտանիքների անդամների կողմից Բրազիլիայի տարբեր հատվածներում ստեղծվեցին տարբեր հասարակական կազմակերպություններ: Նշյալ, ինչպես նաև արդեն իսկ գործող հասարակական կազմակերպությունները և եկեղեցին մեծ դերակատարություն են ունեցել երկրում անցումային արդարադատության իրականացման գործընթացում թե՛ ճշմարտության որոնման և տարածման, թե՛ փոխհատուցման հարցում:

Նախ, մի շարք հասարակական կազմակերպություններ քարոզչություն էին իրականացնում՝ ուղղված քաղբանտարկյալների ազատ արձակմանը: Բացի այդ, 1985թ-ի զոհերի ընտանիքի անդամները և ակտիվիստները հիմնադրեցին «Բացառել խոշտանգումների կրկնությունը» (**Torture Never Again**) անվանամաքհասարակական կազմակերպություն, որը միտված էր խոշտանգումների և անհետացումների վերաբերյալ ճշմարտության տարածմանը: Ավելին, եկեղեցին և քաղաքացիական հասարակությունը ցուցաբերել են թե՛ ֆինանսական, թե՛ մասնագիտական աջակցություն Հետաքննության ոչ պաշտոնական հանձնաժողովի կողմից ճշմարտության զեկույցի հրապարակմանը՝ դրանում հիմք հանդիսացող ռազմական արձանագրությունների կազմման և դրա պատճենահանման գործընթացում, օրինակ՝ «Աշխարհի եկեղեցիների խորհուրդ»-ը (World Council of Church) պատճենահանման նպատակով տրամադրել է շուրջ 350,000 ԱՄՆ դոլար»<sup>345</sup>

Մասնագիտացված կազմակերպությունները սերտ համագործակցել են ինչպես զոհվածների և անհայտ կորածների հարազատների հանձնաժողովի հետ՝ հանրությանը իրազեկելու և հատուցումներ հատկացնելու ուղղությամբ,<sup>346</sup> այնպես էլ՝ զոհերի և նրանց

<sup>343</sup>Sté u Letter from Jaime Wright, Coordinator of the “Brasil: Nunca Mais” Project, to Anthony W.Ferguson, Director of Library Resources Group at Columbia University (1987 թվականի նոյեմբերի 17):

<sup>344</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի ամփոփաթեթը հասանելի է՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/brazil>:

<sup>345</sup>Sté u Lawrence Weschler, I-A Miracle, A Universe, THE NEW YORKER, (1987 թվականի մայիսի 25):

<sup>346</sup> Apoio editorial ao golpe de 64 foi um erro, O GLOBO (Aug. 31, 2013, 5:00 PM), <http://oglobo.globo.com/pais/apoio-editorial-ao-golpe-de-64-foi-um-erro-9771604>. See also Roy Greenslade,

հարազատների հետ՝ Մարդու իրավունքների ինտերամերիկյան դատարան դիմելու և անհրաժեշտ փոխհատուցումներ ստանալու հարցում:

## 2.1.2. Չիլիի Հանրապետություն

1973թ-ին Ագուստո Պինոչետը իշխանությունից հեռացրեց երկրի նախագահ Սալվադոր Ալլենդեյին և սոցիալիստական ղեկավարությանը: Պինոչետը շուրջ 16 տարի ղեկավարեց երկիրը՝ մինչև 1989թ-ի հերթական ընտրությունները: Պինոչետյան ռեժիմի հիմնական բնութագրիչներից էր ընդդիմախոսներին ճնշելը և քաղաքական հետապնդումների ենթարկելը՝ առանց դատավարության մահապատիժների, խոշտանգումների և անհետացումների միջոցով: Թեև Չիլիում ընդդիմությունը չունեի զենք ձեռք բերելու և կրելու հնարավորություն և իր գործողությունները կատարում էր բացառապես խաղաղ միջոցներով, կառավարությունը հարձակման թիրախ էր դարձնում նաև նրանց՝ խաղաղ ցուցարաններին: Իրավիճակը բարելավվեց, երբ 1990թ-ի ընտրություններից հետո Չիլիի բնակչությունն անցկացրեց արտահերթ ընտրություններ և նախագահ ընտրեց Պատրիցիո Ալվինին, ով նախաձեռնեց անցումային արդարադատության միջոցների կիրառում, որտեղ խիստ կարևորվում էր պետական մարմինների հաշվետվողականությունը և դատավարությունների անաչառ իրականացումը:

### 1. Քրեական արդարադատություն

1978թ. ընդունվել է «Համաներման մասին» օրենքը, որը հնարավորություն ընձեռեց 1973-1979թթ. ընթացքում հանցագործություններ կատարած անձանց խուսափելու քրեական պատասխանատվությունից: Չնայած այն հանգամանքին, որ «Համաներման մասին» օրենքը կիրառելիություն չունեի վերջին տարիների ընթացքում, բայց մինչ օրս այդ օրենքը չիլիական իրավական համակարգի բաղկացուցիչ մասն է և չիլիացի դատավորները իրենց գործունեությունն իրականացնելիս պարտավոր են առաջնորդվել այդ օրենքի նորմերով:<sup>347</sup> Բռնատիրական ռեժիմին պատասխանատվության ենթարկելու ամենախիզախ փորձը թերևս իրականացվել է իսպանացի դատավոր Գարզոնի կողմից, ով, օգտագործելով միջազգային

---

Brazilian media group apologises for supporting military dictatorship, THE GUARDIAN (սեպտեմբեր 9, 2013, 9:15 AM), հասանելի է <http://www.theguardian.com/media/greenslade/2013/sep/09/brazil-newspapers>:

<sup>347</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ Elizabeth Lira, The Reparations Policy for Human Rights Violations in Chile, in THE HANDBOOK OF REPARATIONS հասանելի է՝ <http://www.oxfordscholarship.com/view/10.1093/0199291926.001.0001/acprof-9780199291922-chapter-3>:

իրավունքում հանրահայտ «*համընդհանուր իրավագործության*» դոկտրինան, 1998թ-ին դիմեց Մեծ Բրիտանիայի ղեկավարությանը՝ խնդրելով արտահանվել Պինոչետին իր կատարած հանցագործությունների համար: Այս իրադարձությունը հիմք հանդիսացավ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար՝ Չիլիում 300-ից ավելի դատական հայցեր հարուցելու ընդդեմ Պինոչետի: «Համաներման մասին» օրենքի սահմանադրականությունը սկսեց վիճարկվել Չիլիի տարբեր դատարաններում, և բազմաթիվ դատարաններ սկսեցին չկիրառել նշյալ օրենքը: Չիլիի վճռաբեկ դատարանը չեղյալ հայտարարեց Պինոչետի անձեռնմխելիությունը, և նա մինչև իր մահը տնային կալանքում անցկացրեց իր կյանքի վերջին ժամանակահատվածը:

## 2. **Ճշմարտության որոնման գործընթաց**

1990թ. Չիլիի նախագահ Ալվինո ընդունեց Բարձրագույն 355 հրամանը՝ «**Ճշմարտության և հաշտեցման ազգային հանձնաժողով**» **հիմնադրելու վերաբերյալ**:<sup>348</sup> Հանձնաժողովը բաղկացած էր 8 անդամից, որոնցից 4-ը Պինոչետի ռեժիմի աջակիցներ էին և նախկինում աշխատել էին նրա կաբինետում, և 4-ը նախկինում ընդդիմացել էին այդ ռեժիմին: Հանձնաժողովը միտված էր բացահայտել և քննել Պինոչետի կառավարման տարիներին տեղի ունեցած մարդկանց մահվան և անհետացման հետ կապված գործերը, և վերջինիս մանդատում չէր ընդգրկվում մարդու իրավունքների այնպիսի խախտումների վերաբերյալ փաստերի հավաքագրումը, ինչպիսիք են՝ ոչ մահացու խոշտանգումները, անօրինական ձերբակալությունները և բռնի աքաղարկումը:<sup>349</sup>

1991թ-ի փետրվարին վերոնշյալ հանձնաժողովը 1,800 էջից բաղկացած **զեկույց** ներկայացրեց նախագահ Ալվինին, ով այդ զեկույցը ներկայացրեց երկրի քաղաքացիներին: Հանձնաժողովը փաստագրեց 3,428 գործ, որոնք վերաբերում էին անհետացումներին, առանց դատավարական գործընթացների իրականացված սպանություններին, խոշտանգումներին և առևանգումներին: Չեկույցը գոհերին առանձնացրել էր՝ ըստ կատարված հանցագործությունների ենթատեսակների: Չեկույցը ներառում էր նաև *առաջարկությունների քաղաքացիական*՝ նախկին ռեժիմի կողմից կատարված վայրագությունները շտկելուն ուղղված քայլերի վերաբերյալ: Դրանցից մեկով նախատեսվում էր ստեղծել «**Վերականգման և հաշտեցման ազգային համագործակցության հարթակ**», որի գործառույթները կներառեին գոհերին և նրանց հարազատներին աջակցության տրամադրումը և այն գործերով հետաքննությունների իրականացումը, որոնք Ճշմարտության և հաշտեցման ազգային

<sup>348</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ National Commission for Truth and Reconciliation known as the Rettig Commission. PEACE, հասանելի է՝ <http://www.usip.org/publications/truth-commission-chile-90>:

<sup>349</sup>Տե՛ս Truth Commission: հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.usip.org/publications/truth-commission-chile-90> :

հանձնաժողովն ի վիճակի չէր եղել իրականացնել: Չնայած այն հանգամանքին, որ նախագահ Ալվիհը մտադրված էր ամբողջովին իրականացնել զեկույցում նշված հանձնարարականները, կառավարությունը դանդաղեցրեց այդ գործընթացը: Հարկ է նշել, որ Ագուստո Պինոչետն ու այլ ռազմական առաջնորդներ հերքեցին զեկույցում տեղ գտած բացահայտումները:

2003թ. նախագահ Ռիկարդո Լագոսը ստեղծեց «Քաղաքական ձերբակալությունների և խոշտանգումների հաղորդման ազգային հանձնաժողովը» (**The National Commission on Political Imprisonment and Torture Report**): Այդ հանձնաժողովը հայտնի էր նաև **Վալեչ հանձնաժողով** անվանմամբ (Valech Commission):<sup>350</sup> Այն ստեղծվեց փաստագրելու այն իրավախախտումները, որոնք դուրս էին նախորդ ճշմարտության և հաշտեցման ազգային հանձնաժողովի մանդատից, մասնավորապես, ոչ մահացու խոշտանգումները, անօրինական ձերբակալությունները և բռնի աքսորը: Հանձնաժողովը բաղկացած էր 8 անդամից, որոնք նշանակվում էին նախագահի կողմից: Վերջինս իր գործունեությունը ծավալել է 2003-2005թթ. ընթացքում և հետաքննություններ է իրականացրել 1973-1990թթ. ընթացքում ծավալված գործողությունների վերաբերյալ՝ քննության առարկա դարձնելով շուրջ 35,000 անձանց գործերը և պատրաստելով 1,200 էջից բաղկացած զեկույց, այնուհետև նախագահ Լագոսի խնդրանքով քննության առարկա դարձրին ևս 1,000 գործ և վերջնական զեկույցը ներկայացվեց 2005թ-ի ավարտին:<sup>351</sup> Ջեկույցում արձանագրվեց, որ պետական մարմինները խոշտանգումները և կալանքը օգտագործել են որպես ընդդիմադիր քաղաքական գործիչներին ճնշելու, իսկ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը՝ գործող ռեժիմին պաշտպանական լծակներով օժտելու գործիքներ, դատական իշխանությունը լուռ հետևել, իսկ իրավապահ մարմիններն իրենց օժանդակությունն են ցուցաբերել նշյալ գործընթացին: Ջեկույցում նշվում էր, որ 28,549 անձինք ներառված են եղել ոստիկանության և հետախուզական մարմինների կողմից իրականացված խոշտանգումների ցուցակներում: Հարկ է նկատել, որ, ի տարբերություն 1991 թվականի, երբ ռազմական ղեկավարությունը ամբողջովին հերքում էր զեկույցում արձարձված մեղադրանքները, այս անգամ զինված ուժերի հրամանատարությունը ընդունեց զինված ուժերի ներգրավվածությունը կատարված հանցագործություններում:<sup>352</sup>

2009թ-ին չիլիական կառավարությունը հիմնադրեց Մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտը, որը զբաղվում էր նախկին գործերի վերաբացմամբ և զոհերին փոխհատուցումներ տրամադրելով:

<sup>350</sup> Տե՛ս [https://www.usip.org/sites/default/files/resources/collections/truth\\_commissions/Chile90-Report/Chile90-Report:](https://www.usip.org/sites/default/files/resources/collections/truth_commissions/Chile90-Report/Chile90-Report:)

<sup>351</sup> Տե՛ս Commission of Inquiry: Chile 03, հասանելի է՝ <http://www.usip.org/publications/commission-of-inquiry-chile-:>

<sup>352</sup> Տե՛ս Decreto Supremo No. 1086, Noviembre 3, 2004, Biblioteca del Congreso Nacional (Chile), հասանելի է՝ [http://www.usip.org/sites/default/files/file/resources/collections/commissions/Chile03-Charter\\_decree108.](http://www.usip.org/sites/default/files/file/resources/collections/commissions/Chile03-Charter_decree108.)

### 3. Փոխհատուցումներ

Չիլին մեծամասամբ օրենսդրական նախաձեռնությունների մակարդակով ձեռնամուխ եղավ փոխհատուցումներ տրամադրել այն անձանց, ովքեր զոհ էին դարձել բռնատիրական ռեժիմին: Հատուցումները ցկյանքս տրամադրվում էին զոհերի հարազատներին նպաստների տեսքով: Պրակտիկայում փոխհատուցումները տրվում էին այն անձանց, ովքեր կարողանում էին ապացուցել, որ իրենք ռեժիմի վայրագությունների զոհն են դարձել: Մասնավորապես, Քաղաքական ձերբակալությունների և խոշտանգումների ազգային հանձնաժողովի կողմից հրապարակված զեկույցի հիման վրա շուրջ 20,000 զոհ և զոհերի իրավահաջորդ ամբողջ կյանքի ընթացքում տրամադրվող կենսաթոշակի, անվճար կրթության, բնակարանների և բուժօգնության հնարավորություն ստացան: Չոհերի փոխհատուցման հարցերով էր զբաղվում նաև Մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտը:<sup>353</sup>

Հարկ է նշել, որ կառավարության կողմից հիմնադրվեց նաև **Համապարփակ ֆիզիկական և հոգեբանական առողջապահական համակարգը**: Չիլին մեծամասամբ օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով փոխհատուցումներ տրամադրեց նախկին ռեժիմի կողմից իրականացված հանցագործությունների զոհերին և նրանց հարազատներին ամսական կտրվածքով նպաստի տրամադրմամբ, որը նրանք ստանալու էին ամբողջ կյանքի ընթացքում:<sup>354</sup>

#### **Պաշտոնական ներողությունների հայցում**

Չիլիում կիրառելի էին անցումային արդարադատության փոխհատուցման այնպիսի գործիքներ, ինչպիսիք էին՝ հանրային ներողությունների հայցումը և հայտարարությունները: Մասնավորապես, հեռուստատեսությամբ հեռարձակվեց նախագահ Այլվինի հրապարակային ներողության հայցումը:

#### **Խորհրդանշական միջոցների կիրառում**

2010թ-ին Չիլիի մայրաքաղաք Սանտյագոյում այցելուների առաջ իր դռները բացեց «Հիշողության և Մարդու իրավունքների» թանգարանը: Թանգարանում վկայություններ կան Պինոչետայան ժամանակաշրջաններում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ: Թանգարանում գործում է նաև պատմական արխիվը, որտեղ փաստաթղթեր են

<sup>353</sup>Commission of Inquiry, տե՛ս հետևյալ հղմամբ՝ [www.usip.org/publications/commission-of-inquiry-chile-03](http://www.usip.org/publications/commission-of-inquiry-chile-03) (last visited Sept. 15, 2013).

<sup>354</sup> Տե՛ս [http://www.ddhh.gov.cl/social\\_beneficios.html](http://www.ddhh.gov.cl/social_beneficios.html). Sources consulted include those previously cited as well as the Chilean government's website on the reparation and human rights programs:

ամփոփված Պինոչետյան ռեժիմի գոհերի վերաբերյալ, և այդ փաստաթղթերը հասանելի են հանրության համար: Թանգարանում ցուցադրվում են 1970-1980թթ. չիլիական բանտերը և բանտարկյալների առօրյա կյանքի վերաբերյալ այլ տեղեկություններ:<sup>355</sup>

#### 4. Համակարգային բարեփոխումներ

Չիլիում համակարգային բարեփոխումները մեծ արդյունքների չհանգեցրին, քանի որ նախկին իշխանության ներկայացուցիչները շարունակում էին էական ազդեցություն ունենալ երկրում: Չիլիում չկիրառվեցին անցումային արդարադատության իրականացման այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են՝ լյուստրացիան և վեթինգը: Հասարակական ակտիվիզմը բավականին ցածր մակարդակի վրա էր գտնվում անցումային արդարադատության իրականացման ողջ ժամանակահատվածում:

#### 2.1.3. Կոլումբիայի Հանրապետություն

Սկսած 1960-ական թվականներից, ավելի քան 50 տարի Կոլումբիայում ռազմական գործողություններ էին ծավալվում, որոնց մասնակցում էին բազմաթիվ կողմեր: Պատերազմի կողմեր էին հանդիսանում կառավարական ուժերը և պարտիզանական խմբերը: Պատերազմները տեղի էին ունենում, քանի որ բնակչության, բնական ռեսուրսների, քաղաքական իշխանության և թմրանյութերի շրջանառության վրա վերահսկողություն իրականացնելու նպատակ էր հետապնդվում: Պատերազմի հետևանքով ավելի քան 4 միլիոն մարդ տեղահանվեց իր բնակչության վայրից: Բռնությունները հիմնականում դրսևորվում էին հարկադիր անհետացումներով, արտադատական սպանություններով, սեռական և վերաարտադրողական բռնությունների, անչափահասներին բանակ գորակոչելով, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքով:

Պատերազմը տեղի էր ունենում պարտիզանական երկու խմբերի (որոնք էին «Կոլումբիայի հեղափոխական զինված ուժերը» (Revolutionary Armed Forces of Colombia, 1964-2017) և «Ազգային ազատագրական բանակ»<sup>356</sup> (National Liberation Army, 1964թ-ից մինչ այսօր) և աջակողմյան խորհրդարանական խմբերի միջև, որը կոչվում էր «Կոլումբիայի միացյալ պաշտպանական ուժեր» (United Self-Defenders of Colombia): Ավելի քան 30,000 պարտիզանական խմբեր գորացրվեցին 2003-2006թթ. ընթացքում: Համենայնդեպս, այլ տեսակի պարտիզանական խմբերի ձևավորումը շարունակվեց և հակամարտությունը նոր թափ ստացավ, ինչը մարդկանց

<sup>355</sup> Տե՛ս <https://www.atlasobscura.com/places/museum-of-memory-and-human-rights>:

<sup>356</sup> Տե՛ս [www.icso.cl/wp-content/uploads/2011/03/Descripcion-de-medidas-reparacion-MAYO2012.pdf](http://www.icso.cl/wp-content/uploads/2011/03/Descripcion-de-medidas-reparacion-MAYO2012.pdf):



տեղահանումների պատճառ հանդիսացավ:<sup>357</sup> Ռազմական խմբերը տարբեր միջոցներ գործադրելով փորձում էին թուլացնել իրենց հակառակորդներին՝ հիմնականում փորձելով ենթարկեցնելով քաղաքացիական բնակչությանը՝ գործելով սարսափելի հանցագործություններ: Չանգվածային բռնությունների զոհ դարձավ ավելի քան 8 միլիոն մարդ, որը կազմում էր Կոլումբիայի բնակչության շուրջ 17%-ը: Համաձայն Պատմական հիշողության ազգային կենտրոնի՝ հակամարտությունը այսպիսի հետևանքներ ունեցավ՝ 220,000 մարդ զոհվեց, շուրջ 6 միլիոն մարդ տեղահանվեց, մարդկային անհետացումների, սեռով պայմանավորված հանցագործությունների ավելի քան 60,600 դեպք գրանցվեց, 6,500 երեխա հարկադիր կերպով գորակոչվեց բանակ:

2012թ-ին խաղաղության բանակցություններ սկսվեցին Կառավարական ուժերի և պարտիզանական խմբերի առաջնորդների միջև: Բանակցությունները կենտրոնացված էին 6 ուղղությունների շուրջ, որոնք էին՝ գյուղատնտեսական բարեփոխումները, քաղաքական մասնակցությունը, անօրինական թմրամիջոցները, զոհերը, ռազմական գործողությունների ավարտը և խաղաղության համաձայնության ընդունումը: 2016թ-ի սեպտեմբերին Կոլումբիական կառավարությունը և պարտիզանական խմբերը ստորագրեցին խաղաղության համաձայնագիր, որով վերջ էր դրվում երկիրը կործանման հասցնող պատերազմին: Այն դրույթներ էր նախատեսում **«Ճշմարտության, արդարադատության, փոխհատուցումներ վերաբերյալ համապարփակ համակարգ»** ստեղծելու մասին:<sup>358</sup> Երկրում հանրաքվե տեղի ունեցավ համաձայնագրի տեքստը հաստատելու համար: Արդյունքում, որքան էլ զարմանալի էր, բայց հանրաքվեի արդյունքով համաձայնագիրը մերժվեց, ինչը հետագա բանակցությունների պատճառ հանդիսացավ: Վերանայված համաձայնագիրը հավանության արժանացավ Կոլումբիական կառավարության կողմից և հայտնի է որպես Հավանական համաձայնագիր<sup>359</sup>:

## 1. Քրեական արդարադատություն

Անցումային արդարադատություն իրականացնելիս Կոլումբիան ստեղծեց Անցումային արդարադատության դատարան (այսուհետ՝ ԱԱԴ), որը խաղաղություն հաստատելու հատուկ իրավասությամբ էր օժտված: 2000 թվականին հարկադիր անհետացումներ (forced disappearance) իրականացնելը քրեականացվեց: 2010 թվականին գլխավոր դատախազի գրասենյակում հարկադիր անհետացման և հարկադիր տեղահանումների հարցերով բաժանմունք ստեղծվեց: ԱԱԴ-ն բաղկացած էր մի քանի դատարանից, որոնք հետաքննություններ և

<sup>357</sup>Historical Memory Group (2013). Հասանելի է՝ ["Enough Already!" Colombia: Memories of War and Dignity](#):

<sup>358</sup> Տե՛ս <https://www.nytimes.com/2016/10/03/world/colombia-peace-deal-defeat.html>:

<sup>359</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/colombia>:

դատավարություններ էին իրականացնում ռազմական հակամարտության ընթացքում մարդու իրավունքների խախտումներ իրականացրած անձանց հանդեպ:

Դատարանը իրավասություն ուներ քննելու այն անձանց գործերը, ովքեր անմիջական մասնակցություն էին ունեցել ռազմական գործողություններին: Եթե հանցագործություն իրականացրած անձինք համագործակցում էին դատարանի հետ, դատարանը իրավասություն ուներ այլընտրանքային պատժամիջոցներ կիրառելու: Այդպիսի պատժի օրինակներից է հասարակական վայրերում հանրային աշխատանքներ իրականացնելը: Այդ եղանակով նրանք հասարակության առաջ պատասխանատվության էին ենթարկվում՝ իրենց կատարած հանցագործությունների համար: Նրանք պարտավորվում էին նաև **իրենց զոհերին անմիջականորեն փոխհատուցումներ** տրամադրել:

2017 թվականին նոր համաներման մասին նոր օրենք ընդունվեց, որով ԱԱԴ-ի համար հատուկ իրավասություն սահմանվեց: Համաձայն այդ օրենքի՝ այն մարդիկ, ովքեր ԱԱԴ-ում խոստովանելու էին իրենց կատարած հանցագործությունները և հայտնելու էին բացառապես ճշմարտությունը և խոստանալու էին, որ ապագայում կբացառեն նմանատիպ հանցագործությունների իրականացումը, ազատվելու էին քրեական հետապնդումներից:

Եթե դատարանը հանգեցր այն հետևությանը, որ մեղադրյալը չի կատարում դատարանի առջև ստանձնած իր պարտականությունները, ապա իրավունք ունի մեղադրյալին մինչև 20 տարվա ազատազրկման դատապարտելու: Մինևույն ժամանակ, եթե դատարանը հայտնաբերի, որ անձը շարունակում է հանցագործություններ իրականացնել 2016 թվականից հետո, ապա դատարանը իրավասություն ունի գործի վարույթը փոխանցելու իրավասու դատարանների քննությանը:

Դատարանի կառուցվածքը հետևյալն է. դատարանի բարձրագույն օղակը կազմում է Խաղաղության տրիբունալը: Խաղաղության տրիբունալը բաղկացած է 20 ազգային և 4 օտարերկրյա դատավորներից: Խաղաղության տրիբունալը իրավասություն ունի քննելու ամենաձանր հանցագործությունները, օրինակ, հարկադիր անհետացումները, երեխաներին բանակ գորակոչելը և սեռական բռնությունը:

Նախքան Խաղաղության տրիբունալ հասնելը՝ գործերը քննության առարկա պետք է դառնա բազմաթիվ փոքր տրիբունալներում: Այս փոքր պալատներում դիմողը հնարավորություն ուներ խոստովանելու ամբողջ ճշմարտությունը: Ճշմարտությունը խոստովանելու դեպքում, կախված հանցանքի ծանրությունից, նրանք կարող են արդարացվել կամ էլ՝ սահմանափակ սանկցիանների ենթարկվել: Այնուամենայնիվ, բոլոր գործերով Խաղաղության տրիբունալի կողմից ստորադաս տրիբունալների դատավճիռների հաստատումը պարտադիր բնույթ ունի:

Միևնույն ժամանակ դատարանի ենթակառուցվածքներում գործող հետաքննական մարմինը հետաքննությունն իրականացնելու միջոցով հնարավորություն ունի պարզելու, թե արդյո՞ք մեղադրյալը խոստովանում է ամբողջ ճշմարտությունը, թե՛ ոչ:

Եթե անձը համաձայն չէ ընդունված դատական ակտի հետ, ապա իրավունք ունի բողոքարկելու այն: Դատարանն իր գործունեությունն իրականացնելիս փորձում է ղեկավարվել միջազգային բոլոր չափանիշներով:<sup>360</sup>

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Կոլումբիայի ճշմարտության հանձնաժողովը պաշտոնապես կոչվում էր «**Ճշմարտության պարզաբանման, համակեցության և արարքների կրկնությունը ապագայում բացառելու հանձնաժողով**» (Commission for the Clarification of Truth, Coexistence and Non-Repetition):<sup>361</sup> Այս հանձնաժողովը մանդատ ունի բացահայտելու ռազմական բախումների ժամանակ տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումները: Այն նաև պետք է փորձի ամբողջականորեն բացահայտելու հակամարտությունը:

Հիշյալ հանձնաժողովը մանդատ ունի վկայություններ հավաքագրելու, բայց այդ վկայությունները չեն կարող օգտագործվել դատական գործընթացներում: Ճշմարտության հանձնաժողովը ստեղծվել է 2017թ-ին՝ նախագահի հրամանագրի հիման վրա և 3 տարվա գործունեության մանդատ ունի:

Հանձնաժողովը բաղկացած է 11 անդամներից: Կոլումբիան նախկինում ևս ունեցել է տարբեր ճշմարտության հանձնաժողովներ, որոնք ինչպես հաջողության, այնպես էլ ձախողման պատմություններ են արձանագրել: Կոլումբիայում ստեղծվել է նաև «Պատմական հիշողության ազգային կենտրոն»-ը, որն իր գործունեությունը ծավալում է 2012թ-ից:

Որոնման գործակալությունը նույնպես անցումային արդարադատության իրականացմանն օժանդակող մարմին է: Այն նպատակ է հետապնդում տեղեկություններ հավաքագրել անցյալում անհետ կորած անձանց և կատարված հանցագործությունների վերաբերյալ: Գործակալությունն իր սեփական բյուջեն ունի: Այն ստեղծվել է նախագահի հրամանագրի հիման վրա՝ 20 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել Կոնգրեսի կողմից<sup>362</sup>:

<sup>360</sup> Տե՛ս <https://colombiareports.com/everything-need-know-colombias-transitional-justice-system>:

<sup>361</sup> Տե՛ս “Commission for the Clarification of Truth, Coexistence and Non-Repetition”:

<sup>362</sup> Աշխատությունը հասանելի է՝ <https://colombiareports.com/everything-need-know-colombias-transitional-justice-system>:

### 3. Փոխհատուցումներ

Սկզբնական շրջանում պետությունը բավարար ջանքեր չէր գործադրում՝ ուղղված պետության կողմից պատճառված վնասների փոխհատուցմանը, քանի որ իշխանությունները հրաժարվում էին ընդունել իրենց կողմից կատարած հանցագործությունները: Սակայն 2011 թվականին Կոլումբիական կառավարությունն ընդունեց **«Ձոռերի և սեփականության վերականգնման մասին» օրենքը**,<sup>363</sup> որով նախատեսեց փոխհատուցումների քաղաքականություն՝ ներքին տեղահանված անձանց և ռազմական խախտումների զոհերի համար: Օրենքով նախատեսված փոխհատուցումները հիմնականում հատուցողական բնույթի էին: Սակայն երկրի տարածքում շարունակվող ռազմական բախումները, պետական մարմինների սահմանափակ հնարավորություններն ու ռեսուրսները, պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության բացակայությունը դանդաղեցնում էր փոխհատուցումների տրամադրումը, իսկ մի շարք շրջաններում, նույնիսկ, հանդիպում կատաղի դիմադրության՝ տարիներ շարունակ ռազմական արտոնություններից օգտված և ապօրինի սեփականություն ձեռք բերած անձանց կողմից:

Նշյալ ծրագիրը նպատակ ուներ նաև կանխարգելել բռնի գործողությունների կրկնման հավանականությունն ապագայում: Վերջինս նախատեսել էր մի կառուցակարգ, որը հնարավորություն էր ընձեռում տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացուցիչներ ունենալ զոհերի իրավունքների վերականգնման գործընթացում: Այն բաղկացած էր.

1. **Ձոռերի բաժնից**, որի համակարգումն իրականացվում էր Սոցիալական բարգավաճման մասնաճյուղի կողմից,
2. **Սեփականության վերականգնման բաժնից**, որի համակարգումն իրականացվում էր գյուղատնտեսության նախարարության կողմից:

Քանի որ ներքին ռազմական բախումների հետևանքով տուժածների ընդհանուր մասշտաբը բավականին մեծ էր և պետությունը հնարավորություն չուներ բոլորին փոխհատուցում տրամադրել միանգամից, այդ պատճառով, օրենքի տեսանկյունից, զոհեր էին համարվում այն անձինք, ովքեր 1985թ-ից կրել էին վնասներ պետական գործակալների կամ անօրինական ռազմական խմբերի կողմից միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների կամ միջազգային մարդու իրավունքի **ծանր խախտումների** հետևանքով, ինչպես նաև նրանց անմիջական հարազատները: Օրենքը պետական մարմիններին պարտավորեցնում էր գրանցամատյաններում գրանցել այն անձանց, ովքեր ահաբեկչական հարձակումների կամ տեղահանությունների զոհ էին դարձել:

<sup>363</sup>Մանրամասները կարճավորվում են Կոլումբիական պառլամենտի կողմից ընդունված <<Ձոռերի և սեփականության վերականգնման մասին>> օրենքով:

Օրենքով նախատեսվում էր հատուցումների բավականին խրթին համակարգ, որի շրջանակներում կառավարությունը.

- սկսեց համապարփակ հոգեբանական և առողջապահական ծրագիրը, որը ներառում էր անվճար բժշկական օգնություն,
- իրականացրեց ապաստանների վերանորոգում՝ սուբսիդիաների միջոցով կամ նոր ապաստաններ էր հատկացնում,
- պարտքերն էր նվազեցում,
- ապահովում էր կրթական ծրագրերի հասանելիությունը,
- աշխատանքով էր ապահովում,
- ազատում էր պարտադիր զինվորական ծառայությունից,
- տրամադրում էր մեկանգամյա, կանխիկ դրամական փոխհատուցում,
- փոխհատուցում էր զոհերի հուղարկավորության ծախսերը և այլն:

Հարկ է նշել, որ փոխհատուցման ոչ բոլոր եղանակներն էին տարածվում բոլոր զոհերի վրա, օրինակ, անվճար բժշկական օգնությունը տրամադրվում էր սահմանափակ թվով անձանց և սահմանափակ միջոցներով: Այդ նպատակով օրենքը պետական մարմինների համար պարտականություն էր սահմանել անմիջականորեն արձագանքել ծայրահեղ աղքատության մեջ գտնվող անձանց կարիքներին: Օրենքը պաշտպանական հատուկ մեխանիզմ էր նախատեսում *կանանց, երեխաների և տեղաբնակ փոքրամասնությունների* ներկայացուցիչների համար. փոխհատուցում ստանալիս նրանց կարծիքը պարտադիր պետք է հաշվի առնվեր, և նրանք ծրագրով նախատեսված առավելագույն փոխհատուցման հնարավորություն էին ստանում: Բացի այդ, օրենքը տեղահանված անձանց հնարավորություն էր ընձեռում փոխհատուցումներ ստանալ այն ժամանակահատվածի համար, երբ նրանք հարկադիր կերպով բացակայել էին իրենց տներից: Ընդ որում, եթե ամուսիններից մեկն էր դիմում փոխհատուցում ստանալու համար, մյուս ամուսինն օրենքի ուժով փոխհատուցում ստանալու հնարավորություն էր ունենում:

Արդյունքում, երկիրը հսկայական օգնություն տրամադրեց ռազմական բախումների զոհերին և նրանց հարազատներին, մասնավորապես, հակամարտության հետևանքներով իրենց սեփականությունը կորցրած անձինք ստացան անհրաժեշտ փոխհատուցում:

#### **4. Համակարգային բարեփոխումներ**

##### **Վեթիկներ**

Կոլումբիայում վեթիկներին մեխանիզմների կիրառելիությունը նույնպես անցումային արդարադատության բաղկացուցիչ մաս էր: Կոլումբիայում վեթիկների մասին օրենք ընդունվեց,

որը ռազմական բախումների ընթացքում մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղված անձանց համար արգելք էր սահմանում ընտրվելու որպես դատավոր,<sup>364</sup> ինչը բավականին մեծ դժգոհությունների առիթ հանդիսացավ իրավապաշտպանների շրջանում և այնպիսի հեղինակավոր կազմակերպություն, ինչպիսին է՝ Human Rights Watch-ը, իր մտահոգությունները արտահայտեց նմանատիպ վիճահարույց օրենքի ընդունման մասին :<sup>365</sup>

## **2.2. Անցումային արդարադատության մեխանիզմները և գործիքները Հյուսիսային Ամերիկայում**

### **2.2.1. Գվատեմալայի Հանրապետություն**

Գվատեմալայում ներքին անհնազանդությունները սկսվեցին 1940-ական թվականներից, որոնք վերաճեցին ռազմական բախումների 1950-ական թվականների կեսերից և ավարտվեցին 1996թ-ին: Հակամարտության կիզակետում էին հայտնվել երկրում մեծամասնություն կազմող տեղացիները և փոքրամասնություն կազմող եկվորները: Այս սոցիալական և ռասսայական խնդիրները երկիրը քաղաքական բևեռների բաժանեցին, ինչի հետևանքով երկրում ռազմական գործողություններ սկսվեցին: 1954թ-ի փոքրամասնության ներկայացուցիչ կառավարությունը, ով ստանում էր օժանդակություն ԱՄՆ-ի կողմից, քաղաքացիների նկատմամբ տարիներ շարունակ ինտենսիվ կերպով ճնշումներ գործադրելուց հետո երկրում հաստատեց բռնատիրություն՝ թիրախավորելով տեղաբնակ գյուղացիական բնակչությանը, ուսանողներին, արհեստակցական միության ներկայացուցիչներին և այլն: Այնուհետև, երկրի տարածքում կամավորական զինված խմբերի ձևավորվեցին՝ բռնապետական կառավարության դեմ պայքարելու նպատակով, ինչի հետևանքով 1960թ-ին երկրում սկսվեց քաղաքացիական պատերազմ՝ բռնատիրական կառավարության և հիշյալ խմբերի միջև:<sup>366</sup> Կառավարությունը մշակեց մի շարք մարտավարություններ՝ ուղղված բնակչությանը ահաբեկելուն և զինված խմբերին օժանդակելու գործընթացը կասեցնելուն: Կարելի է հիշատակել մահվան հրապարակները և զինվորական խմբերի ձևավորումը, որոնք ռազմական գործողություններ էին

<sup>364</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ\\_Report\\_ColombiaReparationsChallenges\\_2015.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ_Report_ColombiaReparationsChallenges_2015.pdf):

<sup>365</sup>Տե՛ս <https://www.hrw.org/news/2018/06/05/colombia-mend-transitional-justice-law>:

<sup>366</sup>Տե՛ս Id. 209 Guatemala ‘Silent Holocaust’: The Mayan Genocide, THE CENTER FOR JUSTICE AND ACCOUNTABILITY, <http://www.cja.org/article.php?list=type&type=294>:

իրականացնում սեփական ազգաբնակչության դեմ՝ հրկիզումներ իրականացնելով հենց տեղաբնակների համայնքներում<sup>367</sup>:

1982թ. կամավորական խմբերը միավորվեցին «Գվատեմալական ազգային հեղափոխական միության» ներքո: Միջազգային հանրությունը սկսեց ճնշումներ գործադրել կառավարության և ապստամբների վրա՝ միտված հաշտության համաձայնագրի կնքմանը. 1990-ական թվականների սկզբին ՄԱԿ-ի միջամտությամբ սկսվեցին խաղաղության հասնելու բանակցությունները, որի արդյունքում 1994թ-ի կողմերը ստորագրեցին Մարդու իրավունքների վերաբերյալ համապարփակ համաձայնագիր:<sup>368</sup>

## 1. Քրեական արդարադատություն

Չնայած այն հանգամանքին, որ Պատմական պարզաբանման հանձնաժողովի (The Commission for Historical Clarification) զեկույցի հիման վրա միայն մի քանի գործեր քննվեցին Գվատեմալայում, Մարդու իրավունքների ինտերամերիկյան դատարանը բավականին հարուստ նախադեպային իրավունք ձևավորեց՝ ընդդեմ Գվատեմալայի կայացնելով շուրջ 200 որոշում, որի արդյունքում պետությունն իրավախախտման գոհերին պարտավորվեց վճարել շուրջ 8 միլիոն ԱՄՆ դոլար: Գվատեմալան պարտավորվեց նաև որդեգրել մեխանիզմ, որը հնարավորություն կտար առանց վերոնշյալ դատարանի միջամտության փոխհատուցումներ տրամադրել իրավախախտման գոհերին:

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Գվատեմալայի կաթոլիկ եկեղեցու Մարդու իրավունքների գրասենյակը<sup>369</sup> հիմնադրեց «Պատմական հիշողության վերականգնում ծրագիր» հանձնաժողովը՝<sup>370</sup> քաղաքացիական պատերազմի ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումները բացահայտելու նպատակով, որի շրջանակներում հետաքննությունները սկսվեցին 1944 թվականին: Մի շարք բարձրաստիճան հոգևորականներ կոորդինացրեցին և ուղղորդեցին նշյալ հանձնաժողովի գործունեությունը: Հանձնաժողովն աշխատանքի ընդունեց մեծ թվով վերլուծաբանների, մասնագետների և բազմալեզու հարցազրուցավարների: Վերլուծաբանների կարծիքով՝ կաթոլիկ եկեղեցին իր վրա վերցրեց տեղեկատվության հավաքագրման ծանր պարտականությունը՝

<sup>367</sup>St´u Truth Commission: Guatemala, <http://www.usip.org/publications/truth-commission-guatemala>:

<sup>368</sup>St´u Claudia Paz y Paz Bailey, Guatemala- Gender and Reparations for Human Rights Violations, in WHAT HAPPENED TOTHE WOMEN? GENDER AND REPARATIONS FOR HUMAN RIGHTS VIOLATIONS:

<sup>369</sup> St´u <https://ghrcusa.wordpress.com/2013/12/12/human-rights-office-of-the-archdiocese/>:

<sup>370</sup>St´u Rachel Hatcher, Truth and Forgetting in Guatemala: An Examination of Memoria del Silencio and Nunca Más, 34 CAN. J. OF LATIN AM. & CARIBBEAN STUD. 131, 131-33 (2009):

ելնելով այն մտավախությունից, որ պետության կողմից ստեղծված **«Պատմական պարզաբանման հանձնաժողովը»** (որին անդրադարձ կլինի ստորև) օժտված է լինելու սահմանափակ լիազորություններով և կարող է բխվել դժվարությունների հարցազրույցներ անցկացնելիս՝ երկրի բարդ աշխարհագրական դիրքի և եկվորների հանդեպ տեղաբնակ գվատեմալացիների ունեցած անվստահության պատճառով:

Նշյալ հանձնաժողովը 1998թ-ի ապրիլին հրապարակեց 1,400 էջից բաղկացած **«Այլևս երբեք»** անվամբ **զեկույց**, որի ընթացքում անցկացրեց 6,500 անհատական և խմբակային հարցազրույց: Հարցվողների 92%-ը բռնությունների զոհեր էին, իսկ մնացած 8%-ը մեղադրվում էին բռնություն իրականացնելու համար: Ձեկույցը լույս սփռեց հակամարտության ողբերգական հետևանքների վրա: Համաձայն զեկույցի՝ քաղաքացիական պատերազմը խլել էր շուրջ 150,000 խաղաղ բնակչի կյանք, 50,000 մարդ անհետ կորել էր, 1 միլիոն մարդ փախստական էր դարձել, 200,000 հազար երեխա մնացել էր առանց ծնողական խնամքի, 40,000 կին կորցրել էր ամուսնուն: Ձեկույցում նշված էր նաև սպանությունների, խոշտանգումների և սեռական բռնության դեպքերի քանակի մասին:<sup>371</sup>

Հետկոնֆլիկտային Գվատեմալայի անցումային արդարադատության առանցքային կետը **«Պատմական պարզաբանման հանձնաժողով»** անվամբ ճշմարտության ազգային հանձնաժողովի հիմնադրումն էր՝ կառավարության և «Գվատեմալական ազգային հեղափոխական միության» միջև ձեռք բերված համաձայնությամբ, որն իր գործունեությունը ծավալեց 1997-1999թթ. ընթացքում:<sup>372</sup> Հանձնաժողովի առաքելությունն էր բացահայտել և պարզաբանել 1960-1996թթ. կատարված մարդու իրավունքների խախտումները՝ հրապարակելով զեկույց, որը օբյեկտիվ, հավասար և անկողմնակալ պարզաբանումներ կտար պատերազմական գործողությունների ընթացքում գվատեմալական ժողովրդին պատճառված վնասի մասին, և պահպանել զոհերի հիշողությունները՝ գվատեմալացի բնակչության շրջանում փոխադարձ հարգանք սերմանելու նպատակով: Հանձնաժողովը, որպես տեղեկատվության հիմնական աղբյուր, հիմք ընդունեց քաղաքացիական պատերազմի տարիների ընթացքում կաթոլիկ եկեղեցու, այն է՝ «Պատմական հիշողության վերականգնում ծրագիր» հանձնաժողովի կողմից հավաքագրված տեղեկատվությունը:

Նշյալ մարմինը 1999թ-ի փետրվարին հրապարակեց **«Գվատեմալա. Լռության հիշողությունը» զեկույցը**:<sup>373</sup> Ձեկույցը հետագայում ներկայացվեց Գվատեմալայի կառավարությանը, Հեղափոխական միությանը և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին: 11,000 անձի

<sup>371</sup> Տե՛ս <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/guatemala>:

<sup>372</sup> Տե՛ս COMMISSION FOR HISTORICAL CLARIFICATION: CHARTER, at 1(1994), հասանելի է՝ <http://www.usip.org/sites/default/files/file/resources/collections/commissions/Guatemala-Charter.pdf>:

<sup>373</sup> Տե՛ս <https://www.documentcloud.org/documents/357870-guatemala-memory-of-silence-the-commission-for.html>:



հետ ավելի քան 7,200 հարցազրույցի արդյունքում պարզ դարձավ, որ ավելի քան 200,000 մարդ սպանվել կամ անհետ կորել է: Հանցագործությունների 90 տոկոսը իրականացվել են պետական մարմինների, իսկ 3 տոկոսը՝ կամավոր զինված խմբերի կողմից:<sup>374</sup> Ջեկույցի ամենակարևոր արժեքն այն է, որ հաստատվեց՝ Գվատեմալայի կառավարությունը, ի դեմս գեներալ Էֆրան Մոնտի, ով պատասխանատու է ցեղասպանություն իրականացնելու համար: Ջեկույցով Գվատեմալայի կառավարության համար հանձնարարականներ մշակվեց, որոնցով Գվատեմալայի ղեկավարությունը պարտավորվում էր փոխհատուցումներ տրամադրել զոհերին և նրանց հարազատներին:

2005թ-ին մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ակտիվիստները ոստիկանական բաժանմունքից ձեռք բերեցին և հրապարակեցին փաստաթղթեր առ այն, որ ոստիկանությունը ներգրավված է եղել հակահեղափոխական հանցագործությունների մեջ: Հետագայում այդ տեղեկությունը հասանելի դարձավ հանրության համար և օգտագործվեց դատարաններում՝ անհետացումների վերաբերյալ գործեր քննելիս:

### **3. Փոխհատուցումներ**

2003թ. հիմնադրվեց «Ազգային փոխհատուցումների հանձնաժողով, որն ի սկզբանե բաղկացած էր նաև հասարակական սեկտորի ներկայացուցիչներից: Սակայն երկու տարի անց պետությունը կոմիտեի կազմում այլևս չներառեց քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, այլ միայն պետական ապարատի ներկայացուցիչներին, ինչը վերջինիս նկատմամբ առաջացրեց անվստահություն՝ բնակչության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների շրջանում: Նշյալ հանձնաժողովի կողմից մշակված փոխհատուցման ծրագիրը նախատեսում էր կիրառել հետևյալ 5 փոխհատուցման մեխանիզմները.

2. **նյութական վերականգնում,**
3. **ֆինանսական փոխհատուցում,**
4. **հոգեբանական վերականգնում,**
5. **զոհերին հարգանք ցուցաբերելու մեթոդներ,**
6. **մշակութային վերականգնում:<sup>375</sup>**

Նյութական փոխհատուցում էին ստանում բավականին մեծ կատեգորիայի իրավախախտումների զոհեր, որոնց շարքում կարելի է առանձնացնել անհայտ կորածների և մահապատժի ենթարկված անձանց հարազատներին և խոշտանգման և սեքսուալ բռնության

<sup>374</sup> Տեղեկատվությունը հասանելի է՝ <https://www.palgrave.com/us/book/9781403964472>:

<sup>375</sup> *St u Acuerdo Gubernativo Número 258-2003, 7 de mayo de 2013, Programa Nacional de Resarcimiento (Guat.)*, available at <http://www.pnr.gob.gt/archivos/transparencia/Acuerdo%20gubernativo.pdf>:

ենթարկված անձանց: Հետագայում փոխհատուցում ստանալու հնարավորություն տրամադրվեց նաև որբերին ու հաշմանադամներին: Փոխհատուցման ծրագիրն արդեն գործում է 10 տարի: Չոհերը փոխհատուցում են ստանում տարեկան կտրվածքով՝ բյուջեով նախատեսված առանձին տողով:

#### **Պաշտոնական ներողությունների հայցում**

Գվատեմալայում անցումային արդարադատության փոխհատուցման գործիքներից էին պաշտոնական ճանաչումը, ներողության հայցումը և հայտարարությունները հրապարակային տարածելը: Վերոնշյալ հանձնաժողովի կողմից զեկույցի հրապարակումից մի քանի օր առաջ նախագահ Ալվարո Արզուն Գվատեմալայի քաղաքացիներից ներողություն էր հայցել ռազմական բախումների ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների համար: Զինված խմբերը նույնպես բնակչությունից ներողություն են հայցել 1999թ-ին մարտին: 2004թ-ին նախագահ Օսկար Բերգերը հավելյալ ներողություն հայցեց բնակիչներից՝ մարդու իրավունքների խախտումների համար, և պատասխանատվություն ստանձնեց կատարելու զեկույցում նախանշված հանձնարարականները:

#### **4. Համակարգային բարեփոխումներ**

##### **Վեթօինգ, լյուստրացիա**

Ինչպես Արգենտինայում, Չիլիում, Իսպանիայում, Հարավային Աֆրիկայում, Գվատեմալայում ևս անցումային արդարադատության այնպիսի գործիքներ, ինչպիսիք են՝ համակարգային բարեփոխումները, լյուստրացիան և վեթօինգը, կիրառելիություն չեն ունեցել:<sup>376</sup>

##### **Հասարակական ակտիվիզմ**

Հասարակական կազմակերպությունները Գվատեմալայում ևս մեծ աջակցություն են ցուցաբերել անցումային արդարադատության գործընթացին թե՛ խաղաղության բանակցությունների ժամանակ, թե՛ հետագայում ստեղծված հանձնաժողովի գործունեության օրոք: Մասնավորապես, հիմնադրվեց «Քաղաքացիական հասարակության միավորում»-ը՝ գյուղացիների, կանանց և խոցելի այլ խմբերի իրավունքների պաշտպանություն իրականացնելու նպատակով: Մի շարք հասարակական կազմակերպություններ ջատագովություն էին իրականացնում ճշմարտության հանձնաժողով ձևավորելու համար, իսկ

---

<sup>376</sup> See LUSTRATION AND CONSOLIDATION OF DEMOCRACY AND THE RULE OF LAW IN CENTRAL AND EASTERN EUROPE Editors: Vladimira Dvořáková Anđelko Milardović, էջ 25, հասանելի է՝ [https://www.kas.de/c/document\\_library/get\\_file?uuid=ae7b83d0-197c-5edc-e31a-60d7b861b7b0&groupId=252038](https://www.kas.de/c/document_library/get_file?uuid=ae7b83d0-197c-5edc-e31a-60d7b861b7b0&groupId=252038):

այնուհետև աջակցություն ցուցաբերում դրանց գործունեության ընթացքում՝ ուղղված տեղեկատվության հավաքագրմանը:

### ԳԼՈՒԽ 3. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՖՐԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Մալին, Ուգանդան, Իրաքը, Նեպալը այն երկրներն են, որոնք, որպես այդպիսին, ձախողվել են անցումային արդարադատության ծրագրեր իրականացնելիս: Այդ ձախողումների պատճառ են եղել՝

- սահմանափակ ռեսուրսները, քանի որ նշյալ երկրները տարիներ շարունակ քաղաքացիական պատերազմների թատերաբեմ են եղել, որոնց հետևանքով սպառվել են երկրների ռեսուրսները,
- ժողովրդավարական ենթակառուցվածքների բացակայությունը,
- քաղաքական կամքի բացակայությունը,
- անցումային արդարադատության մեթոդներ ընտրելիս քաղաքական կոնսենսուսի բացակայությունը,
- գոհերի կարիքների անտեսումը,
- տեղական իշխանությունների կողմից տեղի բնակչության շահերի փոխարեն միջազգային կազմակերպությունների շահերով առաջնորդվելը:<sup>377</sup>

Վերոհիշյալ երկրներում անցումային արդարադատության վերաբերյալ ուսումնասիրությունները վկայում են, որ այն իրականացվել է դանդաղ, անհամաչափ, անբավարար և անարդյունավետ եղանակներով: Բացառություն է Իրաքը, որտեղ, թեև մեթոդները ջանասիրաբար կյանքի են կոչվել, սակայն դեկլարությունը հաշվի չի առել բնակչության կարիքները:

Չիշյալ երկրներում արձանագրվել է նաև դրական փորձ: Օրինակ, Քենիայի «Ճշմարտության, արդարադատության և փոխհատուցումների» հանձնաժողովին հաջողվել է արձանագրել մարդու իրավունքների խախտումները և դրանք պատմության մի մաս դարձնել: Կարելի է դրական համարել նաև անցումային արդարադատության որոշակի բաղադրիչների կիրառումը որոշ երկրներում, օրինակ, Նեպալում գոհերին ժամանակավոր բարելավման միջոցներ տրամադրելը, Ուգանդայում գոհերի հիշատակի հուշարձան կառուցելը և ամենամյա հիշատակման արարողությունները: Ուգանդայի, Քենիայի, Մալիի, Կոնգոյի փորձը ուսումնասիրելիս այն հետևության ենք գալիս, որ անցումային արդարադատության

<sup>377</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ Victims Fighting Impunity: Transitional Justice in the African Great Lakes Region, March 2017, International Center for Transitional Justice (“ICTJ”):

միասնական մեխանիզմի ստեղծումը անհաջողության դատապարտվեց այս երկրներում, քանի որ պայմանավորվածությունները ձեռք էին բերվել քաղաքական բանակցությունների արդյունքում, **երկրների բարեփոխումներ իրականացնելու կարողությունները բավականին սահմանափակ էին, քաղաքացիական հասարակությունը բավական չափով ինտեգրված չէր գործընթացին**, մարդու իրավունքների խախտումները կրում էին շարունակական բնույթ, մարդիկ, ովքեր մասնակցություն էին ունեցել այլոց իրավունքների խախտումներին, շարունակում էին պաշտոններ զբաղեցնել: Այս երկրների գրանցած արդյունքները հիասթափեցնող էին և՛ ներպետական մակարդակում, և՛ միջազգային դոնորների աչքերում: Այդ է պատճառը, որ շատերի մոտ կարծիք է ձևավորվել, որ շատ դեպքերում անհրաժեշտ է ձեռնամուխ լինել փոքրամասշտաբ բարեփոխումների իրականացմանը, քան սպասել ազգային, համապարփակ բարեփոխումների իրականացմանը, որը երբեմն կարող է անհաջող ընթացք ունենալ:

Աֆրիկյան այս չորս երկրի փորձի ուսումնասիրությունից գալիս ենք այն եզրահանգմանը, որ անցումային արդարադատության իրականացման համար առանցքային կարևորություն ունի **գոհերի հետ համագործակցությունը, տվյալ երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային առանձնահատկությունները, ինչպես և համագործակցությունը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:**

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները էական դեր կարող են ունենալ մարդու իրավունքների խախտումները արձանագրելու տեսանկյունից, հատկապես այն իրավիճակներում, երբ գոհերը չեն վստահում պետական մարմիններին: Մյուս կողմից կարևոր է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներուժի հզորացումը, որպեսզի նրանք կարողանան անհրաժեշտ ապացույցներ ներկայացնել պետական կառավարման մարմիններին:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերը հատկապես կարևորվում է գենդերային նրբություններ ունեցող հետաքննություններ իրականացնելիս: Նրանք կարող են կանանց հնարավորություն ընձեռել պատմելու իրենց պատմությունները, երբեմն հնարավորություն ընձեռելով անանուն բողոքներ ներկայացնել:

### 3.1. Անցումային արդարադատության մեխանիզմները և գործիքները Աֆրիկայում

#### 3.1.1. Ուգանդայի Հանրապետություն

1962թ-ին Ուգանդայի անկախացումից ի վեր երկրում սկսվեցին ռազմական գործողություններ՝ ուղղված իշխանությունը բռնի կերպով փոխանցելուն, ինչն էլ հանգեցրեց տարիներ շարունակ տևող քաղաքացիական պատերազմի: 1962-1985 թվականների քաղաքացիական պատերազմին զոհ դարձավ շուրջ 300,000 մարդ:

1979 թվականին նախկին ռեժիմի կողմից, իրենց քաղաքական հայացքների պատճառով արքայական դարձած մի շարք ուգանդացիներ, որոնց մեջ էր նաև ներկայիս նախագահ Յովերի Մուսեվենին, ներխուժեցին Ուգանդա: Մի շարք պարտիզանական մարտերից հետո Մուսեվին և «Ազգային դիմադրության բանակ»-ը վերահսկողություն հաստատեցին երկրի վրա և սկսեցին հաշտության պայմանագիր կնքել հակառակորդ ապստամբների հետ:

Արդյունքում պարտիզանական մի խումբ, որն իրեն կոչում էր «Լորդի դիմադրության բանակ»,<sup>378</sup> հաշտության պայմանագիր չկնքեց իշխանական ուժերի հետ և երկրի հյուսիսում պատերազմական գործողություններ սկսեց իրականացնել կառավարական բանակի հետ: Պատերազմական գործողությունները ուղեկցվում էին մարդու իրավունքների զանգվածային խախտումներով՝ սպանություններով, զանգվածային առևանգումներով և Լորդի դիմադրության բանակի ներկայացուցիչների կողմից անչափահասների ներգրավմամբ ռազմական գործողություններին: Հաշվարկված է, որ 1975-2005 թվականների ընթացքում ավելի քան 75,000 երեխա շահագործվեցին որպես զինվորներ, գերիներ և սեքսուալ ստրուկներ:<sup>379</sup>

Չնայած այն հանգամանքին, որ 2006-2008 թվականների ընթացքում կառավարությունը հսկայածավալ քայլեր էր իրականացնում խաղաղության համաձայնագիր կնքել Լորդի դիմադրության բանակի ներկայացուցիչների հետ, այդուհանդերձ այդ բանակցությունները միշտ չէ, որ հաջողությամբ էին պսակվում:<sup>380</sup> Վերջին շրջանում Լորդի դիմադրության բանակի ներկայացուցիչների ակտիվությունը էականորեն կրճատվել է, քանի որ նրանց առաջնորդներից շատերը կալանավորվել են քենիական իշխանության ներկայացուցիչների կողմից: Նշյալ բանակի ակտիվության նվազեցմամբ պայմանավորված՝ ուգանդական իշխանությունները ձեռնամուխ են եղել մի շարք անցումային արդարադատության մեխանիզմներ կիրառելուն: Բայց և այնպես, կիրառված մեխանիզմները դեռևս ցանկալի արդյունքների չեն հանգեցրել, այդպատճառով էլ ուգանդացի ակտիվիստները կառավարությունից պահանջում են

<sup>378</sup> Մանրամասն տես՝ <http://www.aljazeera.com/news/africa/2011/10/2011101418364196576.html>:

<sup>379</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է՝ [https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Uganda-Justice-Attitudes-2007-English\\_0.pdf](https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Uganda-Justice-Attitudes-2007-English_0.pdf):

<sup>380</sup> Մանրամասն տես՝ <http://www.csmonitor.com/World/Keep-Calm/2012/0309/When-Joseph-Kony-almost-came-in-from-the-cold-Juba-peace-talks-video>:

ավելի ակտիվ քայլեր իրականացնել՝ անցումային արդարադատության մեխանիզմները առավել արդյունավետ կերպով գործարկելու համար:

Ուգանդայում երկրի ներքաղաքական իրավիճակը բարդացնում է անցումային արդարադատության իրականացումը: Երկրի նախագահ Մուսեվիինին երկրում իշխանության է եկել 1986 թվականից: Դիտորդների պնդմամբ նախորդ 2 ընտրությունների ընթացքում ընտրական պայքարը անհավասար պայմաններում է իրականացվել, քանի որ Մուսեվիինիի հակառակորդ Կիզգա Բեսիգեն ընտանեկան կալանքի դատապարտվեց ընտրություններից մի քանի օր առաջ: 2007թ-ին կառավարությունը և Լորդի դիմադրության բանակը պայմանավորվեցին ստորագրել Հաշվետվողականության և հաշտեցման համաձայնագիր (Ջուբա համաձայնագիր), որը հնարավորություն էր ընձեռում կյանքի կոչել անցումային արդարադատության մի շարք մեխանիզմներ:<sup>381</sup> Մակայն, համաձայնագրի կյանքի կոչման գործընթացն ունեցավ բավականին դանդաղ ընթացք:

Լորդի դիմադրության բանակի առաջնորդ Ժոզեֆ Կոնին պայմանագիր ստորագրելուց առաջ նախապայման առաջադրեց ուգանդական իշխանություններին՝ համոզել Միջազգային քրեական դատարանին հետ վերցնելու իրեն և իր դաշնակիցներին կալանավորելու վերաբերյալ որոշումները: Ուգանդական իշխանությունները ի վիճակի չեղան ապահովելու այս նախապայմանը, ինչի հետևանքով պայմանագրի կնքումը ձախողվեց:

Չնայած գրավոր կնքված պայմանագրի բացակայությանը՝ Ուգանդայի կառավարությունը 2008 թվականին **անցումային արդարադատության աշխատանքային խումբ ձևավորեց**, որն իր գործունեությունն իրականացնելու էր «**Արդարադատության վերաբերյալ՝ օրենքի**» հիման վրա: Այս խումբը 6-ամյա գործունեության ընթացքում անցումային արդարադատության ազգային ծրագիր մշակեց, որը նախատեսում էր, թե ինչպես պետք է իրականացնել անցումային արդարադատությունը, անդրադարձ էր կատարվում այն միջոցներին, որոնց կիրառմամբ հանցագործները պատասխանատվության էին ենթարկվելու: Դրույթներ կային նաև զոհերին անհրաժեշտ օգնություն տրամադրելու և ազգային համերաշխություն հաստատելու վերաբերյալ:

2014թ-ին աշխատանքային խումբը կառավարությանը ներկայացրեց իր մշակած ծրագիրը, որը հավանության չարժանացավ կառավարության կողմից: Այս ծրագիրը մինչև հիմա կառավարությունում է գտնվում, և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ակտիվ պայքար են իրականացնում այդ ծրագրի իրականացումն ապահովելու համար:<sup>382</sup>

<sup>381</sup> See `Agreement on Accountability and Reconciliation (The Juba Agreement), հասանելի է՝ <http://www.c-r.org/accord/uganda/accord11/theconflict.shtml>:

<sup>382</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է՝ <https://www.ictj.org/news/uganda-adopt-transitional-justice-policy>:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները իրենց մտավախություններն են հայտնում նաև **ընտրողաբար իրականացվող անցումային արդարադատության վերաբերյալ**: Անցումային արդարադատությունը իրականացվում է՝ թիրախում ունենալով Լորդի դիմադրության բանակի ներկայացուցիչներին, քննության առարկա չդարձնելով ուզանդական բանակի կողմից իրականացվող վայրագությունները:

Ուզանդայի պարագայում հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ ճիշտ չէ սկսել անցումային արդարադատության ծրագրի իրականացումը՝ առանց այդ ծրագրի հաջողությունը իրական կյանքի պայմաններին համապատասխան գնահատելու:<sup>383</sup>

## 1. Քրեական արդարադատություն

Ուզանդայի բարձրագույն դատարանի միջազգային հանցագործությունների բաժինն իր գործունեությունը սկսել է ծավալել 2008 թվականից:<sup>384</sup> Այս դատարանը իրավասություն ունի քննելու միջազգային և անդրազգային բնույթ կրող այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են՝ ցեղասպանությունը, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, տեռորիզմը, ծովահենությունը և մարդկանց թրաֆիքինգը: Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը (այսուհետ՝ ԱԱՄԿ) դատավարական աջակցություն, փորձի փոխանակման ծրագրեր, փորձագիտական կարծիք և այլ բնույթի օգնություն է տրամադրում ուզանդական իշխանություններին:

Չնայած այն հանգամանքին, որ կառավարությունը հիմնադրեց **Միջազգային հանցագործությունների բաժանմունքը՝** պատասխանատվության ենթարկելու այն անձանց, ովքեր մեղադրվում էին ցեղասպանություն, մարդկության դեմ և պատերազմական հանցագործություններ կատարելու համար, պետք է նշել, որ առաջին դատավարությունները սկսվել են 2011 թվականին և մինչ օրս գտնվում են ընթացքի մեջ: Նման դանդաղ ընթացքը պայմանավորված է տարբեր գործոններով, որոնցից հիշատակման է արժանի **համաներման մասին օրենսդրության** կիրառումը և **դատարանին անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ չհատկացնելը**:

Ուզանդական իշխանությունները ցանկանում էին պատասխանատվության ենթարկել պատերազմական հանցագործություններում ամենամեծ ներգրավվածությունն ունեցող անձանց՝ միաժամանակ քաջալերելով պարտիզանական խմբերին իրենց զենքերը հանձնել կառավարությանը:

<sup>383</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/uganda>:

<sup>384</sup> Տե՛ս [The International Crimes Division of the High Court of Uganda](https://www.ictj.org/news/uganda-kwoyelo-case) հասանելի է՝ <https://www.ictj.org/news/uganda-kwoyelo-case>:



Այս նպատակները արդյունավետ իրականացնելու նպատակով ուզանդական իշխանությունները դիմեցին Միջազգային քրեական դատարանին, իրենց երկրի տարածքում հանցագործություններ կատարողներին պատասխանատվության ենթարկելու խնդրանքով: Իշխանությունները նաև **համաներման վերաբերյալ տարբեր օրենքներ ընդունեցին**, որոնց շնորհիվ բազմաթիվ ապստամբներ ազատվեցին քրեական պատասխանատվությունից:<sup>385</sup>

**«Համաներման մասին»** օրենքն ընդունվեց 2010 թվականին: Այն քրեական պատասխանատվությունից ազատեց պարտիզանական խմբերում կռվող մի շարք զինվորների: Այդ օրենքի միջոցով պատասխանատվությունից ազատվեցին ավելի քան 26,000 նախկին զինվորական, որոնց մեծ մասը Լորդի դիմադրության բանակի նախկին անդամներ էին:<sup>386</sup>

Բացի ներպետական մակարդակով դատավարություններ իրականացնելուց, ուզանդական իշխանությունները դիմեցին Միջազգային քրեական դատարանի օգնությանը, որպեսզի այն քննության առնէր միջազգային հանցագործությունները:<sup>387</sup> Ուզանդան Հաագայի դատարանին դիմեց, որը Լորդի դիմադրության բանակի 5 առաջնորդներին կալանավորելու վերաբերյալ որոշում կայացրեց: 2015 թվականին Լորդի դիմադրության բանակի առաջնորդ Դոմինիկ Օնգվենն ձերբակալվեց ԱՄՆ հատուկ ուժերի կողմից և հանձնվեց Միջազգային քրեական դատարանին: Օնգվենին 70 տարբեր հանցակազմերով մեղադրանքներ են առաջադրվել, որոնք հիմնականում հանցագործություններ են ուղղված մարդկության դեմ:<sup>388</sup> Օնգվենի քրեական գործը աչքի է ընկնում մի շարք բարդություններով, որոնց մեջ հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ նա միակ մեղադրյալն է, ով նաև ժամանակին գոհի կարգավիճակ է ունեցել՝ անչափահաս տարիքում բռնի կերպով գորակոչվելով բանակ:

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

2015 թվականին Ուզանդայի մարդու իրավունքների հանձնաժողովը իրականացրեց **«Մարդու իրավունքների փաստագրում» ծրագիրը**, որն առաջին պետական ծրագիրն էր, որ նպատակ ուներ արձանագրելու 1986-2007 թվականների ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումները: Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը ներգրավված էր նշյալ հանձնաժողովի աշխատանքային խմբում և ակտիվ օժանդակություն էր ցուցաբերում հանձնաժողովին: ԱՄՄԿ-ն իր գործունեությամբ նպաստում էր նաև հիշյալ հանձնաժողովի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությանը, որպեսզի հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնելիս հաշվի

<sup>385</sup> Տե՛ս <https://www.icc-cpi.int/uganda>:

<sup>386</sup> Տե՛ս <https://www.amnesty.org/en/what-we-do/international-justice>:

<sup>387</sup> Տե՛ս <https://www.icc-cpi.int/uganda/ongwen>:

<sup>388</sup> Տե՛ս <https://www.icc-cpi.int/uganda/ongwen>:

առնի զոհերի կարիքները և զոհերը ակտիվ մասնակցություն ունենան անցումային արդարադատության իրականացման գործընթացին:<sup>389</sup>

### 3. Փոխհատուցումներ

Մինչ օրս Ուգանդային կառավարությունը ձեռնամուխ է եղել մի շարք վերականգնողական, մարդասիրական և զարգացման ծրագրեր իրականացնելուն, որոնք նպատակ են հետապնդել վերականգնելու քաղաքացիական պատերազմի տարիներին երկրի բնակչությանը պատճառված կորուստները: Պետք է փաստել, որ այս ծրագրերը ավելի շատ նպատակ են հետապնդել երկրում կայունություն և զարգացում ապահովել, քան թե նպաստել արդարադատության հաստատմանը: Ուգանդական կառավարությունն իր բարեփոխումները բավականին սակավաթիվ բյուջեով է իրականացրել, այդ պատճառով էլ բոլոր կարիքավոր անձինք չէ, որ անհրաժեշտ մակարդակի օգնություն են ստացել: Հատուցումներ տրամադրելիս ազգային ծրագրեր գոյություն չեն ունեցել, փոխարենը հատուցումները կամայական բնույթ են կրել:<sup>390</sup>

### 4. Համակարգային բարեփոխումներ

Ուգանդայում չեն կիրառվել անցումային արդարադատությանը բնորոշ այնպիսի գործիքների, ինչպիսիք են՝ վեթիինգը և լյուստրացիան

#### Հասարակական ակտիվիզմ

2015 թվականի հոկտեմբերին Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը սիմպոզիում էր հրավիրել Ուգանդայի մայրաքաղաք Կամպալայում, որը նպատակ ուներ գնահատելու կառավարության կողմից իրականացվող ծրագրերը, որոնք առնչվում էին հակամարտության հետևանքով զոհ դարձած երեխաներին և նրանց ծնողներին: Կանանց և երեխաների խմբերը հիմնականում երկրի հյուսիսից էին հրավիրվել (որտեղ էլ տեղի էին ունեցել ռազմական բախումները և մարդու իրավունքների խախտումները): Չոհերը բարձրաձայնում էին իրենց պատմությունը, ներկայացնում այն դժվարությունները, որոնց իրենք բախվել էին: Այս սիմպոզիումի հիմնական նպատակն էր զոհերին հնարավորություն ընձեռել իրենց ձայնը լսելի դարձնել, իսկ կառավարությանը՝ պատրաստակամ դարձնել արձագանքելու զոհերի կարիքներին:

<sup>389</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/news/ictj-partners-victims-civil-society-transitional-justice>:

<sup>390</sup> Հղումը հասանելի է՝ <https://www.pgaction.org/pdf/presentation-on-reparations.pdf>:

Այս սիմպոզիումի արդյունքում մեծացավ կառավարության կողմից հայցվող ներդրությունների քանակը և գոհերին տրվող աջակցության թիվը:<sup>391</sup>

### 3.1.2. Քենիայի Հանրապետություն

2007 թվականին ղեկսեմբերյան նախագահական ընտրությունները Քենիայում գուգորդվեցին քաղաքական անհանգստությամբ և բռնություններով: Ընտրության արդյունքների կեղծման վերաբերյալ մեղադրանքներին հաջորդեցին էթնիկ լարվածությունները, ցույցերը, բռնաբարությունները և հարձակումները, ինչպես նաև արյունահեղությունը: Հետընտրական բռնություններին գոհ գնաց ավելի քան 1,100 մարդ: Զանգվածային տարհանումներն ու ավերումներն էլ երկրում դարձան սովորական հանդիպող երևույթներ: 2000 թվականին երկրի ամենաազդեցիկ քաղաքական կուսակցությունների առաջնորդները համաձայնվեցին բանակցություններ իրականացնելու ճանապարհով երկրում ապահովել կայունություն:

#### 1. Ճշմարտության որոնման գործընթաց

Նշյալ բանակցությունների արդյունքում երկրում մեծ աջակցություն վայելող 2 քաղաքական կուսակցությունների առաջնորդները պայմանավորվեցին ստեղծել հետևյալ 2 հանձնաժողովները.

1. Հետընտրական բռնությունների վերաբերյալ հետաքննություն իրականացնող հանձնաժողով (կրճատ՝ ՀԲՎՀԻՀ կամ էլ՝ Վակի հանձնաժողով):<sup>392</sup>
2. Ընտրությունների արդյունքները անկախ վերանայման ենթարկող հանձնաժողով (կրճատ՝ ԸԱՎԵՀ), որը ճգնաժամի հետաքննությանն իրականացման էր ձեռնամուխ լինելու:<sup>393</sup>

Այս երկու հանձնաժողովներն իրենց գործունեությունը սկսեցին 2008 թվականի հոկտեմբերից: Նրանց հանձնարարականները հետևյալն էին.

- ստեղծել հատուկ տրիբունալ, որը ձեռնամուխ էր լինելու պատասխանատվության ենթարկելու հետընտրական բռնության կազմակերպիչներին և կատարողներին.
- իրականացնել սահմանադրական բարեփոխումներ.

<sup>391</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի գեկույցը հասանելի է՝ [https://www.ictj.org/sites/default/files/Great\\_Lakes\\_Report\\_March.pdf](https://www.ictj.org/sites/default/files/Great_Lakes_Report_March.pdf):

<sup>392</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի գեկույցը հասանելի է՝ [https://www.icc-cpi.int/CourtRecords/CR2015\\_05984.PDF](https://www.icc-cpi.int/CourtRecords/CR2015_05984.PDF):

<sup>393</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://rescuekenya.wordpress.com/2008/10/20/kreigler-report-report-of-the-independent-review-commission-on-the-general-elections-held-in-kenya-on-27-december-2007/>

- ստեղծել **Ճշմարտության, արդարադատության և հաշտեցման հանձնաժողով**, որը հետամուտ էր լինելու հետընտրական գործընթացները քննելուն:<sup>394</sup>

- իրականացնել վեթիինգ ոստիկանական համակարգում:

Քենիայի իշխանությունները ձեռնամուխ եղան այս հանձնարարականների կատարմանը: 2012 թվականին ընդունվեց նոր Սահմանադրությունը և դատական համակարգի բարեփոխումները սկսեցին կյանքի կոչվել: Բայց բարեփոխումների գործընթացը բավականին դանդաղ տեմպով էր առաջ գնում:

**Ճշմարտության, արդարադատության և հաշտեցման հանձնաժողով** ստեղծելու հանձնարարականը ևս կատարվեց և 2008 թվականին երկրի կառավարության կողմից հիմնադրվեց սույն հանձնաժողովը՝ զոհերի խնդիրներին լուծումներ տալու նպատակով:<sup>395</sup> Հանձնաժողովն իր «**Ավարտականգեկույցը**»<sup>396</sup> խորհրդարանին ներկայացրեց 2013թ-ին, սակայն այն հավանության չարժանացավ:

Ձեկույցի ուներ հետևյալ թերությունները.

- Չնայած այն հանգամանքին, որ զեկույցը անդրադարձ էր կատարում մի շարք խնդիրների, ներառյալ՝ գեղեցիկ գործնով պայմանավորված բռնությանը և հողերի ապօրինի օտարմանը, այդուհանդերձ որոշ հարցեր մնացել էին առանց կարգավորման, օրինակ, պաշտոնյանների կողմից կատարված սպանությունները:
- Բանտերում առկա հիմնախնդիրները, մասնավորապես՝ խոշտանգումների թվի բարձր մակարդակին անդրադարձը դուրս էր մնացել զեկույցից: Հարկ է ընդգծել, որ զեկույցում գրեթե կարգավորված չէր առաջարկությունների բաժինը:

## 2. Փոխհատուցումներ

Թեև Ճշմարտության, արդարադատության և հաշտեցման հանձնաժողովի կողմից մշակված զեկույցը նախատեսում էր փոխհատուցումների համակարգ, բայց զոհերը մեծամասամբ ցանկանում էին երկրում համակարգային բարեփոխումներ տեսնել, որոնց արդյունքում կբարելավվեր երկրի ողջ ազգաբնակչության բարեկեցության մակարդակը:<sup>397</sup>

Նշյալ հանձնաժողովը հանձնարարական ուներ, որով կոչ էր անում կառավարությանը փոխհատուցումների միասնական շրջանակ ձևավորել:<sup>398</sup> Հիշյալ հանձնաժողովն իր

<sup>394</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.tjrkenya.org/>

<sup>395</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://digitalcommons.law.seattleu.edu/tjrc/>

<sup>396</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ The Truth, Justice and Reconciliation Commission of Kenya, “The Final Report of the TJRC” (2013) [hereinafter TJRC Report], հասանելի է՝ [www.tjrkenya.org/index.php?option=com\\_content&view=article&id=573&Itemid=238](http://www.tjrkenya.org/index.php?option=com_content&view=article&id=573&Itemid=238)

<sup>397</sup>Տե՛ս TJRC Report, Volume IV, Chapter 3, Reparations Framework, էջ 101

<sup>398</sup> TJRC Report, Volume IV Chapter 3, Reparation Framework, էջ 102

առաջարկությունները կազմելիս հաշվի չէր առել փոխհատուցումների տրամադրման հստակ մեխանիզմները և այն ֆինանսական միջոցները, որոնց հաշվին տրամադրվելու էին փոխհատուցումները: Հանձնաժողովի կողմից ուշադրություն չէր դարձվել նաև այն հանգամանքին, որ փոխհատուցումների գործընթացը արդյունավետ կերպով իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավվել նաև ինստիտուցիոնալ, կառավարական և տեխնիկական պրոֆեսիոնալ անձնակազմ:

Անհրաժեշտ էր ունենալ համակարգային ծրագիր, որի իրականացման շնորհիվ Քենիան տեղական և միջազգային ռեսուրսներ ներգրավվելով ի վիճակի կլինեին անհրաժեշտ փոխհատուցումներ տրամադրել հակամարտության բոլոր գոհերին:

Սակայն, ինչպես վերը նշվեց, 2013թ-ին կառավարության կողմից հավանության չարժանանալու պատճառով գոհերը այդպես էլ անհրաժեշտ փոխհատուցումներ չստացան:

2015թ-ին շարունակական ճնշման ազդեցության տակ երկրի նախագահը պաշտոնապես ներողություն խնդրեց գոհերից և խոստացավ հիմնադրել փոխհատուցումների հիմնադրամ, որն իր տրամադրության տակ կունենա շուրջ 100 միլիոն դոլարի հասնող բյուջե: Այնուամենայնիվ, փոխհատուցումներ տրամադրելու ընթացակարգերը դեռևս մշակման փուլում են և ոչ մի փոխհատուցում մինչև օրս չի տրամադրվել:

### **3. Համակարգային բարեփոխումներ**

#### **Վեթթինգի իրականացում**

2013 թվականին ընդունված **Ազգային ոստիկանական ծառայության (վեթթինգային)** կարգավորումների համաձայն՝ մինչև 2011 թվականը ոստիկանությունում ծառայության անցած բոլոր ոստիկանները և քաղաքացիները ենթակա էին վեթթինգի: Վեթթինգ իրականացնելու պարտականությունը տրված էր Ազգային ոստիկանական ծառայության հանձնաժողովին: Հետագայում պարզ դարձավ, որ նշյալ հանձնաժողովը քաղաքական կամքի բացակայության պատճառով չէր իրականացնելու իր վրա դրված պարտականությունները և միայն 2 տարի անց սկսեց իր գործունեությունը ծավալել:<sup>399</sup>

Վեթթինգի ենթակա ոստիկանների ընդհանուր թիվը կազմում էր 77,500: Թեև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ահռելի ճնշումներ էին գործադրում պետության վրա՝ այս հարցի վերաբերյալ, այդուհանդերձ, միայն սահմանափակ թվով ոստիկաններ պատասխանատվության ենթարկվեցին: 2016 թվականի դեկտեմբերի 16-ի տվյալներով՝ ոստիկանական համակարգից հեռացվել է մոտ 2,470 ոստիկան: Միաժամանակ

<sup>399</sup>Տե՛ս The National Police Service Website, “Vetting Panel,” հասանելի է՝ <http://www.npsc.go.ke/index.php/2014-03-25-12-07-38/2014-04-04-04-13-10/vetting-panel>:

հարկ է նշել, որ հեռացվածների իրական թիվը դեռևս անհայտ է մնում:<sup>400</sup> Հիմնականում այն ոստիկանները ենթարկվեցին պատասխանատվության, ովքեր ներգրավված էին կոռուպցիոն բնույթի հանցագործությունների մեջ, իսկ մարդու իրավունքները խախտած ոստիկանները այդպես էլ պատասխանատվության չենթարկվեցին: 2018թ-ին նախատեսվում էր ամբողջովին ավարտել վեթինգի անցկացումը, բայց, ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, հանձնաժողովը ի վիճակի չի լինելու այդ ժամանակահատվածում ավարտել իր գործունեությունը:

Մտահոգությունները կապված վեթինգի իրականացման հետ, հետևյալն էին.

1. գործընթացն ինքնին կրում էր կոռուպցիոն բնույթ,
2. հանձնաժողովի անդամների ընտրությունն իրականացնելիս չէր պահպանվել թափանցիկության սկզբունքը, անդամները հիմնականում կառավարության ներկայացուցիչներ էին և հանձնաժողովը չունեւ անկախություն,
3. գործընթացը իրականացնելիս իրավապահ մարմինների կարողությունները բավականին թույլ էին,
4. վեթինգ իրականացնելիս բացակայում էր հստակ կանխորոշված ծրագրային գործողությունները: Վեթինգային գործողությունների ծրագիրը աչքի էր ընկնում մի շարք թերություններով: Միայն արտաքին ճնշման ազդեցության ներքո վեթինգային հանձնաժողովը սկսեց հասկանալ իր ծրագրային գործունեության առաջնահերթությունները,
5. ոստիկանական համակարգը լքած նախկին բարձրաստիճան պաշտոնյաները իրենց մեղքերը սկսեցին բարդել ստորադասների վրա,
6. գործընթացի թեմատիկ լսումները փակ մնացին զանգվածային լրատվության ներկայացուցիչների համար,
7. վեթինգ իրականացնելիս հանձնաժողովը բողոքներ լսելու և բողոքների հիման վրա հետաքննություններ իրականացնելու գործառույթ չիրականացրեց: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները եկան այն հետևության, որ տեղեկություն ստանալու և վարույթ հարուցելու գործընթացները թափանցիկ չեն հանրության համար, տեղեկություն տրամադրելու ժամանակը բավականին կարճ էր և դիմում ներկայացնողների հետ բացակայում էր հետադարձ կապը,
8. հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնելիս չհամագործակցեց զոհերի հետ: Հանձնաժողովն ի վիճակի չէր կարողանալ պատշաճ համագործակցել նաև հասարակության

<sup>400</sup>Տե՛ս National Police Service Commission Report 2015/2016, 23, and Patrick Vidija, “126 Traffic Officers Sacked after Failing NPSC Vetting,” Daily Star, December 6, 2016, հասանելի է՝ [http://www.the-star.co.ke/news/2016/12/06/127-traffic-officerssacked-after-failing-npsc-vetting\\_c1469036](http://www.the-star.co.ke/news/2016/12/06/127-traffic-officerssacked-after-failing-npsc-vetting_c1469036):

հետ: Վեթօթինգային հանձնաժողովը նախորոք չհրապարակեց նաև իր գործողությունների ծրագիրը, որպեսզի հասարակությունը պատկերացում ունենար, թե ի՞նչ սկզբունքներով է այն առաջնորդվում իր գործունեությունն իրականացնելիս:

Շատ բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք նախկինում մեղադրվում էին ապօրինի հարստացման և այլ հանցագործությունների կատարման համար, կարողացան խուսափել վեթօթինգից, ինչը դժգոհությունների մեծ առիթ բարձրացրեց հանրության շրջանում: Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը հետևյալ առաջարկությունները ներկայացրեց վեթօթինգային հանձնաժողովին՝ արդյունավետ գործունեություն իրականացնելու համար.

- վեթօթինգ իրականացնելիս ունենալ ֆինանսական, մարդկային և այլ տեսակի կարևոր ռեսուրսներ,
- վեթօթինգ իրականացնելիս հաշվի առնել գոհերի պահանջմունքները,
- վեթօթինգ իրականացնելիս աշխատանքային գործընթացները հստակ նախանշել,
- անհրաժեշտ է ունենալ ապացույցների ընդունման անհրաժեշտ չափորոշիչներ,
- պատշաճ տվյալների բազա ունենալ,
- վեթօթինգային գործընթաց իրականացնելիս առաջնորդվել սահմանադրությամբ ամրագրված երաշխիքներով և պաշտպանել գերակա հանրային շահը,
- անհրաժեշտ է սահմանել նաև տեղեկատվություն տրամադրող անձի պաշտպանության երաշխիքներ,
- անհրաժեշտ է բողոքների հաշվառման գրանցամատյան վարել և այդ մատյանում տեղեկություններ արձանագրել ընթացքի մեջ գտնվող հետաքննությունների վերաբերյալ,
- սահմանել ընդունված որոշումների բողոքարկման համակարգ,
- վեթօթինգ կիրառել հանձնաժողովի վրա քաղաքական ճնշում բանեցողների վրա,
- վեթօթինգ կիրառելիս քաղաքացիական հասարակության կառույցները, դոնոր միջազգային կազմակերպությունները պետք է ակտիվ ներգրավվածություն ունենան,
- դատական և քվազի-դատական մարմինները պետք է համագործակցեն վեթօթինգ կիրառելիս:

### **Պատական համակարգի վեթօթինգ**

Սահմանափակ հաջողություններ արձանագրվեցին նաև դատական համակարգի ներկայացուցիչների կողմից իրականացված վեթօթինգի գործընթացում: Պատճառն այն էր, որ կոռումպացված դատավորներին փոխարինելու եկան այլ դատավորներ, բայց կոռուպցիան դատական համակարգում զգալի չափերով պահպանվեց:

Թեև հանձնաժողովը հարուցել էր 4,575 քրեական գործ, սակայն 2015թ-ին երկրի նախագահը հայտարարել էր, որ, տարբեր պատճառներից ելնելով, քրեական հետապնդումներ չեն իրականացվի:<sup>401</sup>

### 3.1.3. Մալիի Հանրապետություն

Անցումային արդարադատությունը Մալիում քննարկելիս պետք է նշել, որ ներքին բախումները երկրի հյուսիսում սկսվեցին 2012 թվականին՝ ձևավորելով առանձնացմանն ուղղված շարժումներ: Կառավարությունը մինչ հիմա վերահսկողություն չունի երկրի հյուսիսային շրջանների նկատմամբ: Շարժումները իրենց առանձնանալու ձգտումները բացատրում էին երկրում առկա կոռուպցիայի բարձր մակարդակով: Երկրի հյուսիսում ռազմական գործողություններ սկսեց ծավալել «Ազգային ազատագրական շարժում» կոչվող ռազմական խմբավորումը, որն իր առաջ խնդիր էր դրել երկրի հյուսիսում անկախ պետականություն հաստատել: Այս իրադարձությունները ռազմական բախումների սկիզբ հանդիսացավ:

2012 թվականին նախագահ Ամադի Տիմատու Տուրեն ռազմական խմբավորում ստեղծեց, որը նպատակ ուներ երկրի հյուսիսում վերականգնելու կենտրոնական իշխանությունը: Երկրի հյուսիսային մի քանի քաղաքներ գրավվեցին շարժումների կողմից, իսկ այդ շրջաններում սկսեց շարիաթական իրավունք կիրառվել: Մալիի իշխանությունները օգնության կանչեցին Աֆրիկական Միության իրենց գործընկերներին: Արդյունքում 2015 թվականին հաշտության համաձայնագիր կնքվեց ապստամբների և Մալիի կառավարության միջև:

Ռազմական բախումների հետևանքով հազարավոր մարդիկ զոհվեցին, ուստի անհրաժեշտություն առաջացավ անցումային արդարադատության մեխանիզմներ կիրառել:<sup>402</sup>

Հետաքննությունների, ճշմարտությանորոնման և փոխհատուցումների վերաբերյալ քննարկումները կրում են շարունակական բնույթ և դժվար է հետևություններ անել, թե այս գործընթացը ինչպիսի՞ հանգուցալուծում կունենա: Շատերի կարծիքով այս գործընթացները սկսվել են միջազգային հանրության պահանջով, ոչ թե խնդիրներին լուծումներ տալու հասարակության հրամայականով:

<sup>401</sup>Տե՛ս <http://kenyalaw.org/kl/fileadmin/pdfdownloads/Acts/VettingofJudgesand>:

<sup>402</sup>Տե՛ս <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Mali-Assessment-2014.pdf>:



## 1. Քրեական արդարադատություն

2013 թվականի հունվարի 16-ին միջազգային քրեական դատարանի գլխավոր դատախազ Ֆատու Բենսուդան Մալիում 2012 թվականից տեղի ունեցող դեպքերը քննելու վարույթ հարուցեց: Դրա համար հիմք հանդիսացավ Մալիի արդարադատության նախարար Մալլիկ Կուլիբալիյի դիմումը՝ երկրում ծավալվող դեպքերը մանրակրկիտ քննության առարկա դարձնելու համար: Մալիի իշխանությունները դիմեցին միջազգային քրեական դատարանին, քանի որ գտնում էին, որ երկրի ներպետական դատական ատյաններն ի վիճակի չեն արդար և անկողմնակալ քննություն իրականացնել:

Միջազգային քրեական դատարանի գլխավոր դատախազի խոսքով, հակամարտության մասնակիցները գործել էին մարդկության դեմ ուղղված հետևյալ հանցագործությունները՝

- սպանություններ,
- խոշտանգումներ, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք և դիակապտություն,
- ծրագրավորված հարձակումների իրականացում խաղաղ բնակչության և պատմամշակութային հուշարձանների վրա,
- կողոպուտ,
- բռնաբարություններ:<sup>403</sup>

Հետաքննությունները դեռևս ընթացքի մեջ են, չնայած այն հանգամանքին, որ որոշ անձանց կոնկրետ մեղադրանքներ չեն առաջադրվել:

Միջազգային հանրությունը այն համոզմունք է արտահայտում, որ Միջազգային քրեական դատարանի ներգրավվածությունը կարող է դրական ազդեցություն ունենալ հակամարտությունը լուծելու համար: Ամեն դեպքում, **ազգային դատարանները** արդեն իսկ ձեռնամուխ են եղել որոշակի գործերի քննությանը: Գործերի քննությունը տեղի է ունենում Բամակո քաղաքում, որը գտնվում է երկրի հարավում, ուստի շատ դժվար է դատարանում ապահովել քաղաքացիական հասարակության և գոհերի ներկայացվածությունը:

2013-2014 թվականների ընթացքում որոշակի քայլեր են իրականացվել 20 զինվորի սպանության գործով դատավարությունը իրականացնելու համար: Մի քանի անձինք նույնիսկ ներգրավվել են որպես մեղադրյալ: Սակայն արդարադատության իրականացմանը խոչընդոտում է այն հանգամանքը, որ երկրի հյուսիսային շրջանները անհասանելի են Մալիի իշխանությունների համար:

Չնայած այն հանգամանքին, որ Մալիի իշխանությունները հնարավորություն չունեն մուտք գործելու երկրի հյուսիսային շրջաններ, երկրի Բարձրագույն դատարանի քննության ներքո են գտնվում ձերբակալված մի քանի իսլամիստների գործեր, որոնք ներկայացնում էին

<sup>403</sup> Տե՛ս <https://www.icc-cpi.int/Pages/item.aspx?name=pr829>:

հիշյալ շարժումները: Նրանք մեղադրվում են այնպիսի ծանր հանցագործությունների համար, ինչպիսիք են՝ բռնաբարությունը, սպանությունը, սեռական ստրկությունը, խոշտանգումները, անմարդկային վերաբերմունքը, ապստամբությունները, աքսորը, առանց դատարանի որոշման իրականացվող մահապատիժները և այլն:<sup>404</sup>

Մալիի կառավարությունն արդեն իսկ քայլեր է իրականացնում երկրի դատական համակարգում բարեփոխումներ իրականացնելու համար: Մասնավորապես, կառավարությունը կենտրոններ է ստեղծել, որտեղ գոհերը կարող են ազատ ցուցմունքներ տալ:

Մալիի արդարադատության նախարար Մոհամեդ Ալի Բաթիլին հայտարարել է, որ իրենք մասնակցելու են Բրյուսելյան կոնֆերանսին,<sup>405</sup> որպեսզի անհրաժեշտ գիտելիքներ և փորձ ձեռք բերեն երկրի հյուսիսում գոհերի համար լսման կենտրոններ հիմնադրելու համար: Այս կենտրոններում գոհերը լսվելու իրավունք և անհրաժեշտ իրավական պաշտպանություն և անհրաժեշտ փոխհատուցումներ կստանան:<sup>406</sup>

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Մալիում անցումային արդարադատության իրականացումը ենթադրում էր նաև ճշմարտության որոնման գործընթացի իրականացում: Այդ պատճառով էլ 2013 թվականին կառավարության կողմից հիմնադրվեց **«Երկխոսության և համերաշխության ազգային հանձնաժողով»**-ը (այսուհետ՝ ԵՀԱՀ), որը նպատակ էր հետապնդում երկխոսության և ազգային համերաշխության հաստատման ծրագիր իրականացնել՝ արձանագրելով հակամարտության ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումները, ինչպես նաև փոխհատուցումներ տրամադրել գոհերին: Հանձնաժողովը բաղկացած էր 34 անդամից: Հարկ է նշել, որ կազմավորման օրվանից հիշյալ հանձնաժողովը համագործակցություն չէր իրականացնում գոհերի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Ինտենսիվ կերպով քննադատության ենթարկվելուց հետո Մալիի իշխանությունները հարկադրված էին լուծարելու նշյալ հանձնաժողովը և հիմնելու ճշմարտության մեկ այլ հանձնաժողով:

2014 թվականի մարտի 10-ին Մալիի խորհրդարանը խորհրդարանական մեծամասնության քվեարկությամբ ստեղծեց **«Ճշմարտության, արդարադատության և համերաշխության հանձնաժողով»**:<sup>407</sup> Այս նոր հանձնաժողովի գործառույթն էր՝ բացահայտել

<sup>404</sup>Տե՛ս FIDH report, La Justice en Marche 8:

<sup>405</sup>Տե՛ս [www.malijet.com/la\\_societe\\_malienne\\_aujourd'hui/actualite\\_de\\_la\\_nation\\_malienne/93454-suivi-de-la-conferencedes-donateurs-pour-le-mali-la-communaute-.html](http://www.malijet.com/la_societe_malienne_aujourd'hui/actualite_de_la_nation_malienne/93454-suivi-de-la-conferencedes-donateurs-pour-le-mali-la-communaute-.html): հետևյալ հղմամբ՝

<sup>406</sup>Տե՛ս [www.journaldumali.com/article.php?aid=8257](http://www.journaldumali.com/article.php?aid=8257):

<sup>407</sup>Տե՛ս Քվեարկության ընթացքում 99 պատգամավորներ կողմ քվեարկեցին, 18-ը ձեռնպահ, ոչ ոք դեմ չքվեարկեց:

1960-2013 թվականների ընթացքում տեղի ունեցած հանցագործությունների վերաբերյալ ճշմարտությունը: Հանձնաժողովը առաքելություն ուներ նաև խաղաղություն հաստատել երկրում:

Շատ պառլամենտականների կարծիքով՝ այս հանձնաժողովը չի ունենալու անկախություն: Հիշյալ հանձնաժողովը բաղկացած է լինելու 15 անդամից, որոնք ներկա դրությամբ դեռևս չեն նշանակվել: Համաձայն օրենքի՝ հանձնաժողովի անդամները ընդգրկված են լինելու վեց մասնագիտական խմբերում: Յուրաքանչյուր խումբ բաղկացած է լինելու 2-ական անդամից: Հանձնաժողովի անդամները ունենալու են հաշտեցում իրականացնելու, ճշմարտություն որոնելու, փոխհատուցումներ տրամադրելու, փախստականներին իրենց նախկին բնակության վայրերը վերադարձնելու և այլ գործառույթներ:<sup>408</sup>

2016 թվականի տվյալներով՝ հիշյալ հանձնաժողովի անդամները դեռևս չեն նշանակվել և իրավասու մարմինները չեն կարողանում անհրաժեշտ բացատրություններ ներկայացնել անդամների նշանակման ձգձգումների վերաբերյալ:<sup>409</sup>

### 3. Փոխհատուցումներ

Երկրի կենտրոնում պետք է լսման կենտրոններ բացվեն, որոնք հնարավորություն կընձեռեն հակամարտության զոհերին ստանալու պատշաճ աջակցություն, ինչպես նաև անհրաժեշտ փոխհատուցումներ:<sup>410</sup> Մինչ օրս այս կենտրոնները չեն գործարկվել:

### 4. Համակարգային բարեփոխումներ

Մալիում չեն գործարկվել անցումային արդարադատություն իրականացնելու այնպիսի գործիքներ, ինչպիսիք են՝ լյուստրացիան և վեթֆինգը: Պատճառն այն է, որ շրջանները, որտեղ պետք է հիշյալ գործիքները կիրառվեին, դեռևս գտնվում են ապստամբների իշխանության ներքո:

<sup>408</sup>

Մանրամասն տես՝

[http://malijet.com/mobile/mobile/la\\_societe\\_malienne\\_aujourd'hui/actualite\\_de\\_la\\_nation\\_malienne/96869-les-deputes-ont-vote-le-texte-creant-la-commission-verite-justic.html](http://malijet.com/mobile/mobile/la_societe_malienne_aujourd'hui/actualite_de_la_nation_malienne/96869-les-deputes-ont-vote-le-texte-creant-la-commission-verite-justic.html):

<sup>409</sup> Commission vérité justice toujours attendue : A quoi joue-t-on au ministère de la réconciliation? հասանելի է՝ <http://maliactu.net/commission-verite-justice-toujours-attendue-a-quoi-joue-t-on-au-ministere-de-la-reconciliation/#sthash.wltgL9SL.dpuf>:

<sup>410</sup> Տե՛ս [www.journaldumali.com/article.php?aid=8257](http://www.journaldumali.com/article.php?aid=8257):

### 3.1.4. Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն

1960 թվականին Բելգիայից անկախանալուց հետո Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը 32-ամյա բռնապետական կառավարման ներքո էր գտնվում նախագահ Մոբուտու Սեսե Սեկոյի կողմից: Նախագահ Մոբուտուն հայտնի էր պետական ռեսուրսները քաղաքական նպատակներով օգտագործելու իր սովորույթով: Որպես հետևանք՝ երկիրը զրկվեց մի շարք արժեքավոր ռեսուրսներից: Տարիներ շարունակ տեղի ունեցած իշխանական հովանավորչությունը կաթվածար վիճակի հասցրեց ողջ պետական կառավարման ապարատը:<sup>411</sup>

Մոբուտուին իշխանությունից հեռացնել հաջողվեց միայն «Աֆրիկյան աշխարհամասի պատերազմի ավարտից» հետո: Այս աշխարհամասային պատերազմը սկսվեց 2003 թվականին և ավարտվեց 2007 թվականին: Պատերազմում ընդգրկված էր 9 աֆրիկյան երկիր, ավելի քան չորս ազգ և տարբեր բնույթ կրող միջազգային զինված խմբեր: Ընդդիմության առաջնորդ Լաուրենտ Կավիլան Մոբուտուին իշխանությունից հեռացնելու քարոզարշավով հանդես եկավ՝ ուզանդական և ռուանդական զորքերին ներգրավվելով Կոնգոյում ծավալվող քաղաքացիական պատերազմին:

Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը երկար ժամանակ աչքի էր ընկնում մարդու իրավունքների զանգվածային խախտումներով: Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կոպիտ խախտումներ արձանագրվեցին: Գրանցվեցին դեպքեր, երբ մանկահասակ երեխաները զինվորական ծառայության էին զորակոչվում, իսկ սեռով պայմանավորված բռնությունը կրում էր զանգվածային բնույթ:

2002 թվականի դեկտեմբերի 2-ին կնքվեց Կոնգոյի կառավարության, տարբեր զինված խմբերի, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների միջև կնքվեց մասնակի խաղաղության **«Համակարգային և ներառող համաձայնագիր»**-ը, որը ուղղված էր խաղաղության հաստատման ժամանակավոր միջոցներ կիրառելուն:<sup>412</sup>

Չնայած այն հանգամանքին, որ հակամարտությունը պաշտոնապես ավարտվեց 2003 թվականի Կոնգոյի և Ուգանդայի միջև կնքված հաշտության համաձայնությամբ, այդուհանդերձ 2007 թվականի դրությամբ հակամարտության զոհ էր դարձել ավելի քան 5,4 միլիոն մարդ: Հակամարտությունը կործանարար ազդեցություն էր ունեցել երկրի ենթակառուցվածքների և առողջապահական համակարգի վրա՝ դանդաղեցնելով նաև երկրի զարգացումը: Որպես

<sup>411</sup> Մանրամասն տե՛ս <http://theconversation.com/from-mobutu-to-kabila-the-drc-is-paying-a-heavy-price-for-autocrats-at-its-helm-79455>:

<sup>412</sup> Մանրամասն տե՛ս <https://reliefweb.int/report/democratic-republic-congo/global-and-inclusive-agreement-transition-dr-congo-inter-congolese>:

եզրակացություն պետք է նշել, որ քաղաքական փոխզիջումների հետևանքով ձեռք բերված պայմանավորվածությունները այդպես էլ չհանգեցրին իրական փոփոխությունների, քանի որ իշխանության բաշխումը կառավարության և ապստամբների միջև հնարավորություն չտվեց ստեղծելու արդյունավետ մեխանիզմներ:

Այս համաձայնագրի ստորագրումից հետո խաղաղության հաստատման մի շարք բանաձևեր կնքվեցին, որոնք հայտնի են որպես<sup>413</sup>«Արևի քաղաքի համաձայնագրեր»: Այս համաձայնագրերը նպատակ էին հետապնդում ստեղծելու անցումային արդարադատության ինստիտուտներ:

## 1. Քրեական արդարադատություն

Արևի քաղաքի համաձայնագրերը այլ պայմանագրերի հետ վերցրած հանձնառություն ունեին հետաքննելու միջազգային բնույթ կրող հանցագործություններ: Այդուհանդերձ համաձայնություն չկար այն հարցում, թե արդյո՞ք տրիբունալը ստանալու էր միջազգային աջակցություն, թե՞ ոչ: Միևնույն ժամանակ ռազմական դատարաններն իրենց վարույթներում քննում էին 50-ից ավել գործեր, որտեղ նրանց ակտիվ աջակցություն էին տրամադրում քաղաքացիական հասարակության կառույցները: 2003թ-ին օրենք ընդունվեց, որը ռազմական դատարանների վարույթներում քննվող գործերը փոխանցեց քաղաքացիական դատարաններին:

2004 թվականին Կոնգոյի իշխանությունները դիմեցին Միջազգային քրեական դատարանին՝ 2002 թվականից երկրում տեղի ունեցած միջազգային բնույթ կրող հանցագործությունների վերաբերյալ հետաքննություններ իրականացնելու խնդրանքով:<sup>414</sup>

Երկու ամիս անց Միջազգային քրեական դատարանի դատախազը որոշեց հետաքննություններ իրականացնել Կոնգոյում՝ ուշադրության կենտրոնում ունենալով հակամարտության կիզակենտրոն Իտուրի շրջանը:

Ապստամբ զորքերի առաջնորդ՝ Թոմաս Լյուբանգա Դիլոն միջազգային քրեական դատարանի որոշմամբ դատապարտվեց 14 տարվա ազատազրկման՝ մարդկության դեմ իրականացված հանցագործությունների համար: Նա մեղադրվում էր 15 տարեկան երեխաներին բանակ զորակոչելու և վայրագություններին մասնակից դարձնելու համար: Դատարանի վերաքննիչ պալատը որոշումը թողեց անփոփոխ: Բոսկո Նտագանդան, ով նույնպես մեղադրվում էր միջազգային հանցագործություններ կատարելու համար, 2013 թվականին կամավոր ներկայացավ Միջազգային քրեական դատարան: 2014 թվականին

<sup>413</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի գեկույցը հասանլի է՝ [https://www.ictj.org/sites/default/files/Great\\_Lakes\\_Report\\_March.pdf](https://www.ictj.org/sites/default/files/Great_Lakes_Report_March.pdf):

<sup>414</sup> Տե՛ս <http://www.icc-cpi.int/>:

դատարանը Նտագանդային մեղավոր ճանաչեց մարդկության դեմ գործած 5 տեսակի հանցագործության համար, որը նա կատարել էր Իտուրի շրջանում:

Մեկ այլ ապստամբ առաջնորդ Գերման Կատանգան, ով մեղադրվում էր Իտուրի շրջանում գործած մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար, 2014 թվականին դատապարտվեց 12 տարվա ազատազրկման:

Պետք է փաստել, որ անգամ այս դատավարություններից հետո քաղաքական իրավիճակը Կոնգոյում շարունակում է մնալ անկայուն: 2011 թվականին երկրում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որոնք նախագահ Կաբիլայի համար երաշխավորեցին իշխանության լինելու ևս 1 ժամանակահատված՝ մինչև 2021 թվականը:

2009 թվականին երկրում ընդունվեց «**Համաներման մասին**» օրենք, որը տարածվում էր երկրի տարբեր վայրերում ապստամբական գործողություններ կատարած անձանց վրա: Օրենքը չէր տարածվում այն անձանց վրա, ովքեր պատերազմական հանցագործություններ էին իրականացրել:<sup>415</sup>

## 2. Ըշմարտության որոնման գործընթաց

Արևի քաղաքի համաձայնագրի հիման վրա ստեղծվեց **Ըշմարտության և հաշտեցման հանձնաժողով**: Հանձնաժողովի անդամները ընտրվում էին՝ հաշվի առնելով անձանց քաղաքական կուսակցություններին անդամագրվելու հանգամանքը և հաշվի չէր առնվում մասնագիտական կարողությունները: Հանձնաժողովի անդամներն իրենց գործունեությունն իրականացնելիս այդպես էլ չկարողացան պայմանավորվածություն ձեռք բերել իրենց կողմից իրականացվելիք գործողությունների ընթացակարգերի հետ կապված և իրենց 2007թ. զեկույցում առաջարկ ներկայացրեցին հիմնադրել մեկ այլ հանձնաժողով, որը նույնպես չկարողացավ իրականացնել իր առջև դրված խնդիրները:<sup>416</sup>

## 3. Փոխհատուցումներ

Կոնգոյի կառավարությունը ներկայումս ակտիվ քայլեր է իրականացնում գոհերին պատշաճ օգնություն ցուցաբերելու համար: Կառավարությունը ակտիվ խորհրդակցություններ է իրականացնում **Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի** հետ՝ բնակչությանը

<sup>415</sup>

Տե՛ս

հետևյալ

հղմամբ՝

[https://reliefweb.int/sites/reliefweb.int/files/resources/ipi\\_e\\_pub\\_peacejusticeafrica.pdf](https://reliefweb.int/sites/reliefweb.int/files/resources/ipi_e_pub_peacejusticeafrica.pdf):

<sup>416</sup> Տե՛ս Elena Naughton, “Democratic Republic of the Congo: Case Study,” in *Challenging the Conventional: Can Truth Commissions Strengthen Peace Processes? (ICTJ and the Kofi Annan Foundation, 2014)*:

պատշաճօգնություն տրամադրելու համար: ԱԱՄԿ-ն ներքոթվարկյալ առաջարկներն է ներկայացրել կառավարությանը՝ փոխհատուցումները պատշաճ կերպով տրամադրելու համար:

1. **Ստեղծել պետական հիմնադրամ, որը մեծամասամբ ֆինանսավորվելու է պետական միջոցներից:** ԱԱՄԿ-ն Կոնգոյի կառավարությանը առաջարկ է ներկայացրել ստեղծելու հիմնադրամ, որն անմիջական փոխհատուցումներ կտրամադրի միջազգային հանցագործությունների զոհերին: Ընդ որում, հիմնադրամը պետք է նպատակ հետապնդի փոխհատուցումներ տրամադրելու ոչ միայն հակամարտության անմիջական զոհերին, այլ նաև երկրի ամբողջ բնակչությանը:<sup>417</sup> Ձոհերի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող խումբը կարևորում է հիմնադրամի ստեղծումը՝ որպես կառավարության առաջնահերթ նպատակ բնակչության փոխհատուցումներ տրամադրելու տեսանկյունից:<sup>418</sup>
2. **Բարեփոխումներ իրականացնել քաղաքացիական և ռազմական արդարադատության ոլորտներում:**
3. **Ձոհերի խմբերին աջակցություն և իրավաբանական օգնության տրամադրել:** Ձոհերը և նրանց հարազատները կարիք ունեն քաջալերման և խրախուսման՝ ինչպես Կոնգոյի կառավարության, այնպես էլ՝ միջազգային կազմակերպությունների կողմից:
4. **Համապարփակ ուսումնասիրություններ իրականացնել խմբակային և խորհրդանշային փոխհատուցումներ տրամադրելու վերաբերյալ:** Կոնգոյի կառավարությունը՝ արդարադատության նախարարության միջոցով պետք է ուսումնասիրության առարկա դարձնի բոլոր այն գործերը, որոնք կարող են հիմք լինել խմբակային և խորհրդանշական փոխհատուցումներ տրամադրելու համար: Օրենքի նախագիծը, որով կարող են վարչական փոխհատուցումներ տրամադրվել, ասվածի լավագույն օրինակն է:

#### 4. Այլ համակարգային բարեփոխումներ

##### *Վերթիկնգ*

Վերթիկնգի իրականացումը ընդգրկված էր Կոնգոյի կառավարության առաջնահերթությունների մեջ: Կոնգոյում վերթիկնգը հիմնականում պետք է բանակում կիրառվեր, և այն մի քանի խումբ զինվորականները՝ ծերության թոշակի տարիք ունեցողները,

<sup>417</sup>Մանրամասն տե՛ս Interview with Lambert Lisika, Mbandaka-based human rights lawyer, La Clinique Juridique, 2011 թվականի հուլիս:

<sup>418</sup>Տե՛ս Interview with François Tshitoya, Mbandaka-based human rights lawyer, Observatoire Congolais de Droits Humains, հուլիս 2011:

մարդու իրավունքների խախտում թույլ տվողները և նրանք, ովքեր չէի համապատասխանում բանակում ծառայելու չափանիշներին, պետք է հեռացվեն բանակից:<sup>419</sup>

**Human Rights Watch** միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը նշում է, որ Կոնգոյի իշխանությունները պետք է օրենք ընդունեն, որի հիման վրա կստեղծվի «**Վեթինգային հանձնաժողով**»:<sup>420</sup> Վեթինգային հանձնաժողովի անդամները պետք է անկախ մարմնի կողմից ընտրվեն և վերահսկողություն իրականացնեն ողջ վեթինգային գործընթացի նկատմամբ: Վեթինգային հանձնաժողովը հաջողություններ կգրանցի, եթե նրա անդամները **անկախ են, անաչառ և ունեն բարձր պրոֆեսիոնալիզմ**:

Հանձնաժողովը պետք է բաղկացած լինի ինչպես տեղաբնակներից, այնպես էլ օտարերկրացիներից: Հանձնաժողովը պետք է ազատ գործի և կաշկանդված չլինի տեղական սովորույթներով և ավանդույթներով: Հանձնաժողովի անդամները պետք է մարդու իրավունքների վերաբերյալ խորացված գիտելիքների տիրապետեն, ինչպես նաև քաջածանոթ լինեն Կոնգոյի քաղաքական և սոցիալական կյանքի առանձնահատկություններին: Անդամների ընտրությունը պետք է թափանցիկ բնույթ կրի, և անդամներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել տեղացի բնակչության կարծիքը:

Հանձնաժողովը տեղեկատվական բազա պետք է մշակի Կոնգոյի բանակում և զինված ուժերում ծառայող այն անձանց վերաբերյալ, ովքեր ՄԱԿ-ի փաստաթղթերում, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների զեկույցներում մեղադրվում են մարդու իրավունքների խախտումներ կատարելու համար: Հանձնաժողովը պետք է քննություն իրականացնի՝ հիմք ընդունելով նաև տեղական մեդիայի հաղորդումները:

Այնուհետև, հանձնաժողովը պետք է հետաքննություն իրականացնի և պարզի տարբեր տեսակի զեկույցներում հիշատակվող անձանց մասնակցությունը մարդու իրավունքների խախտումներին: Եթե հանձնաժողովին հաջողվի ապացուցել, որ նրանք իրականում մասնակից են այդպիսի արարքներ կատարելու մեջ, հիշյալ անձինք պետք է հեռացվեն պատասխանատվության ենթարկվեն: ՄԱԿ-ի ուղեցույցները կոչ են անում հետևելու «**Հավանականությունների բալանս**» **մեթոդին**, այսինքն, նախքան վեթինգ իրականացնելը ճշտել հանցագործությունների մեջ ներգրավված լինելու անձի հավանականության աստիճանը:<sup>421</sup>

<sup>419</sup>Sté u Mécanisme national de Suivi (MNS), « Critères et Indicateurs de Progrès de Septembre 2013 à սեպտեմբեր 2014 : Engagements Pris au Niveau National aux termes de l'Accord-Cadre pour la Paix, la Sécurité et la Coopération en République Démocratique du Congo et dans la Région », on file at Human Rights Watch. Ձեկույցը լույս է տեսել 2013 թվականի սեպտեմբերին:

<sup>420</sup> Ձեկույցը հասանելի է՝ <https://www.hrw.org/news/2014/04/07/establishing-vetting-mechanism-security-forces-democratic-republic-congo>:

<sup>421</sup> Ձեկույցը հասանելի է՝ [https://www.hrw.org/news/2014/04/07/establishing-vetting-mechanism-security-forces-democratic-republic-congo#\\_ftn8](https://www.hrw.org/news/2014/04/07/establishing-vetting-mechanism-security-forces-democratic-republic-congo#_ftn8):



Ցանկալի է, որ վեթիինգային հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնի՝ հիմնվելով Կոնգոյի օրենքների վրա, որպեսզի այն անձինք, ովքեր վեթիինգի են ենթարկվում, փաստացի հեռացվեն զբաղեցրած պաշտոններից, իսկ հանձնաժողովի ընդունած որոշումները պարտադիր կլինեն կիրառման համար:

Կարևոր է նաև, որ վեթիինգ իրականացնելիս հաշվի առնվեն գոհերի, վկաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների իրավունքներն ու օրինական շահերը, ովքեր մասնակցություն են ունեցել վեթիինգային հարցաքննություններին:

Ցավոք սրտի, մինչ օրս Կոնգոյի իշխանություններն ի վիճակի չեն եղել ստեղծել համապատասխան վեթիինգային հանձնաժողովը:

### **Հասարակական ակտիվիզմ**

Կոնգոյում համագործակցության իրականացումը ռազմական արդարատություն իրականացող մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև մեծ նշանակություն կարող է ունենալ, քանի որ երկրի իշխանությունները վերահսկողություն չեն իրականացնում երկրի ամբողջ տարածքի վրա, ուստի հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների զեկույցները քրեական գործեր հարուցելու արժեքավոր հիմք կարող են հանդիսանալ: Այն վայրերը, որտեղ պետական մարմինները անմիջականորեն մուտք գործելու հնարավորությունից զրկված են, տեղական ՔԿՀ-ների զեկույցները ապացույցներ հավաքագրելու միակ արժեքավոր միջոցներն են:<sup>422</sup>

### **3.1.5. Եգիպտոսի Արաբական Թագավորություն**

1952 թվականից սկսած Եգիպտոսում իշխանության էին գալիս մի շարք բռնապետական ռեժիմներ: Ազգային Ժողովրդավարական կուսակցությունը, որը Եգիպտոսի իշխող քաղաքական ուժն էր, իշխանության էր եկել 1978 թվականին և իշխանությունում իր դիրքերը պահպանեց մինչև 2011 թվականը, երբ զանգվածային ցույցերը ստիպեցին երկրի նախագահ Հոսնի Մուբարակին հրաժարական ներկայացնել:

Մուբարակի կառավարությունը և նրան հարող Ազգային ժողովրդավարական կուսակցությունը երկրում անցկացնում էին շինծու ընտրություններ և իրենց ձեռքում էին կենտրոնացրել պետական կառավարման մարմինների համակարգը: 1981 թվականից սկսած երկրում հայտարարվել էր արտակարգ դրություն, որը հիմք էր հանդիսանում ընդդիմության

---

<sup>422</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է՝ [https://www.ictj.org/sites/default/files/Great\\_Lakes\\_Report\\_March.pdf](https://www.ictj.org/sites/default/files/Great_Lakes_Report_March.pdf):

ներկայացուցիչների նկատմամբ շինծու մեղադրանքներ կազմելու, կամայական ձերբակալություններ իրականացնելու և քաղաքացիներին ռազմական տրիբունալներով պատասխանատվության ենթարկելու համար: Խոշտանգումները, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքը, զանգվածային պրակտիկա էին դարձել Եգիպտոսում:<sup>423</sup>

2011 թվականի փետրվարին 12-օրյա ցույցերից հետո, որոնք ուղեկցվում էին զանգվածային բռնություններով և սպանություններով, Հոսնի Մուբարակը ստիպված էր հրաժարական ներկայացնել և իշխանությունը փոխանցել Ռազմական խմբավորումների գերագույն հանձնաժողովին:<sup>424</sup>

Այս իրադարձություններից մեկ ամիս անց ազգային հանրաքվե տեղի ունեցավ, որը ճանապարհ հարթեց արտակարգ ընտրություններ իրականացնելու համար: Ռազմական խմբավորումների գերագույն հանձնաժողովը ուժը կորցրած ճանաչեց երկրի սահմանադրությունը և ազատ արձակեց խորհրդարանը: 2012 թվականին Մուհամեդ Մուբսին ընտրվեց որպես երկրի նախագահ՝ առաջին անգամ երկրում կայացված ժողովրդավարական ընտրություններում: Սակայն Մուբսիի իշխանությունը Եգիպտոսում երկար կյանք չունեցավ: 2013 թվականին լայնամասշտաբ հակակառավարական ակցիաներ տեղի ունեցան՝ ընդդեմ Մուբսիի և նրա քաղաքական հենարանը հանդիսացող «Իսլամական եղբայրություն» կուսակցության: Այս ցույցերը ավարտվեցին օգոստոսյան արյունահեղությամբ, որի ավարտին իշխանությունը փոխանցվեց Եգիպտական զորքերի գլխավոր հրամանատար Աբդել Ֆաթթահ էլ-Սիսիին:<sup>425</sup>

## 1. Քրեական արդարադատություն

Նոր իշխանությունները պատրաստակամ էին իրականացնել արդարադատություն և երկրի նախագահ Մուբարակին պատասխանատվության ենթարկել նախկին 30 տարիների իրականացրած զանգվածային իրավախախտումների համար: Ուստի, նույնիսկ վերջինիս ծանր առողջական վիճակը նրան չազատեց դատարանի առջև կանգնելուց: Մուբարակի դատավարության առանցքային կետը ցույցերի ընթացքում 800 մարդկանց սպանությունն էր: Մուբարակի տղաները՝ Գամալը և Ալան, նույնպես ենթարկվեցին քրեական հետապնդման՝ հոր իշխանության տարիներին պետական հարստություններն ապօրինի կերպով յուրացնելու համար: Հաբիբ էլ-Ադլին՝ ներքին գործերի նախկին նախարարը, դատապարվեց 12 տարվա ազատազրկման:

<sup>423</sup> Տե՛ս <https://www.nytimes.com/2011/01/29/world/middleeast/29unrest.html>:

<sup>424</sup> Տե՛ս Kirkpatrick, David D.; Shadid, Anthony; Cowell, Alan "[Mubarak Steps Down, Ceding Power to Military](#)". *New York Times*. Retrieved:

<sup>425</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.aawsat.net/2014/04/article55331446>:

Մուբարակը մեղադրվում էր ցուցարարների սպանությունները չկանխելու և կոռուպցիայի համար:<sup>426</sup> Մուբարակի դատավարության ժամանակացույցը հետևյալն է. 2011 թվականի ապրիլին Մուբարակը ձերբակալվեց եգիպտական իշխանությունների կողմից՝ սպանություններ կատարելու մեղադրանքով: 2011 թվականի մայիսի 24-ին Կահիրեի գերագույն դատարանը մեղադրանք առաջադրեց Մուբարակին և 6 այլ բարձրաստիճան պաշտոնյաների 2011 թվականի հունվարի 25-31 ընկած ժամանակահատվածում 225 ցուցարարների սպանությունը կազմակերպելու և ավելի քան 2,800 ցուցարարի հանդեպ մահափորձ իրականացնելու համար: 2012 թվականի հունիսին Մուբարակը Կահիրեի քրեական դատարանի կողմից դատապարտվեց ցմահ ազատազրկման, քանի որ, ունենալով լայն լիազորությունների շրջանակ, չէր կանխարգելել մեծ թվով ցուցարարների սպանությունները:

2013 թվականի հունվարին Եգիպտոսի վճռաբեկ դատարանը բեկանեց ստորադաս դատարանի որոշումը և գործը նոր քննության ուղարկեց:

Վճռաբեկ դատարանը գտավ, որ Կահիրեի դատարանը սխալ է կիրառել օրենքը, շեշտադրելով այն հանգամանքը, որ պաշտոնական անգործության համար չի կարող մահապատիժ նշանակվել: Եգիպտական օրենսդրությունը թույլ է տալիս կիրառել մահապատիժ միայն գործողությունների համար:

2014 թվականի նոյեմբերին Կահիրեի դատարանը գործից հանեց սպանությունների վերաբերյալ մեղադրանքները՝ գտնելով, որ քրեական գործով նախկին դատախազը քաղաքական դրդապատճառներից ելնելով է այդ մեղադրանքները գործին ավելացրել:

2015 թվականին դատախազությունը բողոքարկեց ստորադաս դատարանի որոշումը՝ քրեական գործի վարույթից սպանության մեղադրանքը հեռացնելու մասով, ինչը բավարարվեց Եգիպտոսի վճռաբեկ դատարանի կողմից:

2017 թվականի մարտի 2-ին Եգիպտոսի վճռաբեկ դատարանը արդարացրեց Մուբարակին և կալանքից ազատ արձակեց:<sup>427</sup>

Մուբարակի և իր կուսակիցների դատավարությունը, որի շրջանակներում քննվում էր ցուցարարների սպանության գործերը, բացասական ընկալվեց հասարակության կողմից՝ չնայած այն հանգամանքին, որ դատավարությունը հասարակության և ՁԼՄ-ների համար բաց էր:<sup>428</sup> Հարկ է նշել, որ դատավարություններն աչքի էին ընկնում մի շարք թերություններով: Միաժամանակ դատախազությունը հատուկ բաժանմունք ստեղծեց պաշտոնյաների գործերը

<sup>426</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/egypt>:

<sup>427</sup> Տե՛ս ["Egypt's Hosni Mubarak freed after six years in detention"](#). *BBC News*. մարտ 2017.

<sup>428</sup> Տե՛ս <https://timep.org/commentary/analysis/egypts-authorities-co-opt-transitional-justice>

քննելու համար: Եվ չնայած սրան, հիշյալ բաժանմունքը իր քննության կիզակետում պահեց միայն ոստիկաններին, ովքեր ցույցերի ընթացքում վայրագություններ էին կատարել:

Ձինվորական ղեկավարությունը դեմ էր նախորդ տարիների ընթացքում կատարված բոլոր հանցագործությունները բացահայտելուն՝ կողմ արտահայտվելով միայն կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտմանը:

Նշենք նաև, որ մյուս բարձրաստիճան պաշտոնյաներն արդարացվեցին՝ ապացույցների անբավարարության հիմքով: Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները դատապարտեցին դատախազության և ազգային անվտանգության մարմինների անգործությունը, որը նրանք դրսևորել էին ապացույցներ հավաքելիս: Ընդհանուր առմամբ, հանրության գնահատմամբ դատավարությունները կամայական էին և ոչ օրինական:

Նաև լրացնեք, որ Մուբարակից հետո իշխանության եկած «Իսլամական եղբայրություն» կուսակցությունը շարունակեց իր նախնիների պրակտիկան և երկրում շարունակվեցին խոշտանգումները և առանց դատարանի վճռի իրականացվող սպանությունները:<sup>429</sup>

Ժամանակավոր կառավարությանը հաջողվեց բազմաթիվ հաղթանակներ տանել տեղական ինքնակառավարման և համապետական ընտրություններում: 2012 թվականին նրանց կողմից թեկնածու առաջադրված Մոհամեդ Մորսին կարողացավ հաղթանակ տանել եգիպտական նախագահական ընտրություններում: Սակայն սա միայն ժամանակավոր հաջողություն էր: Եգիպտոսում անցումային կառավարության դեմ բազմաթիվ բողոքի ակցիաներ իրականացվեցին, որոնք հանգեցրին 2013 թվականի օգոստոսյան արյունահեղությանը:<sup>430</sup> Օգոստոսյան արյունահեղությունից հետո երկրում իշխանությունը փոխանցվեց զինված ուժերի գլխավոր հրամանատար Աբդել Ֆաթահ էլ-Միսիին:

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Երեք պաշտոնական **փաստահավաք հանձնաժողովներ են** հիմնադրվել Եգիպտոսում 2011, 2012 և 2013 թվականներին: Այս հանձնաժողովները կոչված էին քննելու հեղափոխությունից առաջ, հեղափոխության ընթացքում և հեղափոխությունից հետո տեղի ունեցող գործողությունները: Պետք է փաստել, որ այդ 3 հանձնաժողովներն էլ իրենց գործունեությունն իրականացնելիս չառաջնորդվեցին անցումային արդարադատություն իրականացնելու հանձնարարականներով: Այս հանձնաժողովները հասարակական ճնշման արդյունքում ստեղծվեցին և ի սկզբանե չունեին անցումային արդարադատություն

<sup>429</sup>Sté u Moataz El Fegier Truth and reconciliation? Transitional Justice in Egypt, Libya and Tunisia հասանելի է՝ [https://www.files.ethz.ch/isn/179398/Truth%20and%20reconciliation\\_%20Transitional%20Justice%20in%20Egypt\\_%20Libya%20and%20Tunisia.pdf](https://www.files.ethz.ch/isn/179398/Truth%20and%20reconciliation_%20Transitional%20Justice%20in%20Egypt_%20Libya%20and%20Tunisia.pdf):

<sup>430</sup> Sté u <https://www.theatlantic.com/photo/2013/07/millions-march-in-egyptian-protests/100543>:

իրականացնելու առաքելություն: 2014 թվականին ընդունված սահմանադրությունը խորհրդարանի առաջ պարտականություն էր դնում՝ ընդունել օրենք, որը կերաշխավորեր անցումային արդարադատության իրականացման ընթացքը, երկրում կապահովվեր հասարակական համերաշխության մթնոլորտի հաստատումը:<sup>431</sup>

### **3. Փոխհատուցումներ**

#### **Ակտիվների վերականգնում**

Եգիպտոսի նախկին նախագահ Մուբարակի կինը՝ Սյուզաննեն համաձայնվեց պետությանը վերադարձնել իր 4 միլիոն դոլարարժողությամբ ակտիվները, որպեսզի խուսափի քրեական պատասխանատվությունից:

#### **Խորհրդանշական միջոցների կիրառում**

Եգիպտոսում անցումային արդարադատության գործիքներից առավել հաջողված էր հուշարձանների և հիշատակի վայրերի կառուցումը: Հիշատակման է արժանի Տահիր հրապարակի կառուցումը. այն կառուցվել է այն վայրում, որտեղ տեղի էին ունեցել Փետրվարյան արյունալի ցույցերը:<sup>432</sup>

### **4. Այլ համակարգային բարեփոխումներ**

#### ***Վեթֆինգ***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մուբարակի շուրջ 30 տարի տևած ղեկավարության օրոք բազմաթիվ մարդիկ մեղադրվում էին իշխանական լծակները չարաշահելու համար, վեթֆինգի անհրաժեշտությունը առկա էր: Բայց քանի որ եգիպտական ոստիկանությունը բաղկացած էր ավելի քան կես միլիոն մարդուց, հետևաբար, վեթֆինգի իրականացումը բավականին լուրջ խնդիր էր: Եգիպտոսի վարչապետ Էսսամ Շարաֆը հայտարարեց, որ ցուցարարների հանդեպ բռնություններ կատարելու համար մեղադրվող ոստիկանները պետք է հեռացվեն իրենց պաշտոններից: Արդյունքում 669 բարձրաստիճան պաշտոնյա հեռացվեց պաշտոնից, որոնցից 37-ը մեղադրվում էին ցուցարարների սպանության մեջ:

---

<sup>431</sup>Նույն տեղում:

<sup>432</sup> St' u Fahim, Kareem; El-Naggar, Mana; Stack, Liam; Ou, Ed (8 փետրվար 2011). "Emotions of a Reluctant Hero Galvanize Protesters". The New York Times. Հրապարակվել է 9 փետրվար 2011.

### 3.1.6. Թունիսի Հանրապետություն

2011 թվականի դեկտեմբերին Մուհամեդ Բուզաֆին, որ Սիդի Բուզիդ քաղաքում աշխատում էր որպես մրգավաճառ, ինքնահրկիզվեց տեղական ինքնակառավարման մարմինի շենքի առջև՝ երկրում առկա կոռուպցիայի և ոստիկանական ուժերի կողմից ցուցաբերված վատ վերաբերմունքի պատճառով: Այս իրադարձությունը բողոքի մեծ ակիք բարձրացրեց երկրում և տարբեր շրջաններում բազմահազարանոց ցույցեր սկսվեցին: Ցուցարարները իշխանություններից աշխատանք, ազատություն և ազգային արժանապատվություն էին պահանջում: Այս բողոքի ակցիաները հանգեցրին հեղափոխության, որով ստիպեցին երկրի նախագահ Բեն Ալիին հրաժարվել իր իշխանությունից և իր ընտանիքի հետ միասին փախչել Սաուդյան Արաբիա:<sup>433</sup> Այս դեպքերով Հյուսիսային Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում սկսվեց արաբական գարունը:

Հեղափոխությունը երկրի այն շրջաններում մեծ թափ ստացավ, որոնք տնտեսական առումով ամենաանբարենպաստ պայմաններում էին գտնվում և Բեն Ալիի իշխանության տարիներին դուրս էին մնացել կառավարության առաջնահերթություններից: Այդ շրջաններում երիտասարդության գործազրկությունը ամենամեծ մակարդակի վրա էր: Հեղափոխությանը նախորդող տարիները բնութագրվում էին գործազրկության մեծ ծավալով, գյուղական շրջաններում երիտասարդության զարգացման համար ոչ բարենպաստ պայմանների առկայությամբ: Երկրում գործազրկությունը կազմում էր շուրջ 22 տոկոս:<sup>434</sup> Երիտասարդների շրջանում գործազրկությունը կազմում էր շուրջ 20 տոկոս:<sup>435</sup>

Բարձրաստիճան պետական պաշտոնյաների շրջանում կոռուպցիան ահռելի չափերի էր հասնում: Բեն Ալիի և նրա մերձավորների ընդգրկվածությունը կոռուպցիոն գործարքներում ավելի խորացրեցին հանրային անվստահությունը երկրի իշխանությունների հանդեպ:<sup>436</sup> Դեռ ավելին, կառավարությունը սկսեց ավելի անհանդուրժող դառնալ այլախոհների և քաղաքական հակառակորդների նկատմամբ:

Բեն Ալիի իշխանության տարիներին քաղաքական հակառակորդներին հետապնդելը, բանտարկելը և խոշտանգումների ենթարկելը զանգվածային բնույթ էին կրում:<sup>437</sup>

<sup>433</sup>Տե՛ս <https://www.theguardian.com/world/2011/jan/14/tunisian-president-flees-country-protests>:

<sup>434</sup> Տե՛ս The Revolution in Tunisia: Economic Challenges and Prospects, Désiré J.M. Vencatachellum, հասանելի է՝ [http://www.afdb.org/fileadmin/uploads/afdb/Documents/Publications/North%20Africa%20Quarterly%20Analytical%20Anglais%20ok\\_North%20Africa%20Quarterly%20Analytical.pdf](http://www.afdb.org/fileadmin/uploads/afdb/Documents/Publications/North%20Africa%20Quarterly%20Analytical%20Anglais%20ok_North%20Africa%20Quarterly%20Analytical.pdf):

<sup>435</sup> Նույն տեղում:

<sup>436</sup> Մանրամասն տե՛ս <https://www.aljazeera.com/indepth/features/2014/03/revealing-tunisia-corruption-under-ben-ali-201432785825560542.html>:

<sup>437</sup> Իրավապաշտպան կազմակերպության զեկույցը հասանելի է՝ <https://www.hrw.org/world-report/2010/country-chapters/tunisia>:

Բեն Ալիի իշխանությունից հեռանալուց հետո Թունիսում առաջին քայլերը իրականացվեցին՝ ժողովրդավարական հասարակություն ձևավորելու համար: Երկրում **Վստահության ժողով ընտրվեց**, որի առաջնային նպատակներն էին **սահմանադրական փոփոխություններ իրականացնելը և անցումային արդարադատության վերաբերյալ օրենք ընդունելը**: 2013 թվականի դեկտեմբերին Թունիսի խորհրդարանը **«Անցումային արդարադատության մասին»** օրենք ընդունեց:<sup>438</sup>

Օրենքն անցումային արդարադատության իրականացման համապարփակ շրջանակ ընդունեց, որը անդրադարձ էր կատարում 1955-2013 թվականների ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների զանգվածային խախտումներին: Օրենքի հիման վրա տեղի էր ունենալու ճշմարտության բացահայտման գործընթաց, զոհերը անհրաժեշտ փոխհատուցումներ էին ստանալու և մեղավորները ենթարկվելու էին քրեական պատասխանատվության:

## 1. Քրեական արդարադատություն

Անցյալում տեղի ունեցած հանցագործությունների համար անձանց քրեական պատասխանատվության ենթարկելը շատ կարևոր գործընթաց է՝ արդյունավետ անցումային արդարադատություն հաստատելու տեսանկյունից: Այս տեսանկյունից Թունիսը դեռևս մի շարք անելիքներ ունի՝ երաշխավորելու անցումային արդարադատության արդյունավետ իրականացումը:<sup>439</sup> Անցումային արդարադատության վերաբերյալ օրենք մշակողները, քաջատեղյակ էին այն հանգամանքին, որ Թունիսում դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության աստիճանը բավականին ցածր է, այդ իսկ պատճառով էլ նրանք որոշեցին *Հատուկ պալատներ* ստեղծել, որոնց իրավասության ներքո էր լինելու բռնապետության օրոք մարդու իրավունքների խախտումներով աչքի ընկած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելը: «Անցումային արդարադատության մասին» օրենքի համաձայն՝ **հատուկ պալատները** ստեղծվելու էին, որպեսզի կանխվեին անպատժելիությունը և մեղավորներին ենթարկելի քրեական պատասխանատվության:<sup>440</sup>

«Անցումային արդարադատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ հատուկ պալատները պետք է իրավասություն ունենան հետաքննելու հետևյալ հանցագործությունները՝

- կանխամտածված սպանություններ,
- բռնաբարություններ կամ սեռական բնույթի այլ հանցագործություններ,

<sup>438</sup> Մարդու իրավունքների կոմիտեի գեկույցը հասանելի է՝ <http://www.ohchr.org/Documents/Countries/TN/TransitionalJusticeTunisia.pdf>:

<sup>439</sup> Article 6 of Law 53 dated December 24, 2013, “Establishing and Organizing Transitional Justice”:

<sup>440</sup> Տե՛ս նույն տեղում:

- խոշտանգումներ կամ այլ անմարդակային վերաբերմունք,
- հարկադիր անհետացումներ,
- առանց դատավարության իրականացված մահապատիժներ,
- ընտրակեղծիքներ,
- ֆինանսական հանցագործություններ,
- հանրային ֆինանսների ապօրինի յուրացումներ,
- քաղաքական դրդապատճառներով մարդկանց միգրացիայի հարկադրել:

Ներկա դրությամբ հատուկ պալատները դեռևս չեն սկսել իրենց գործունեությունը, դատավորները դեռևս չեն ընտրվել, դատարանները դեռևս չեն հիմնվել: Որպես միջանկյալ լուծում, իրենց գործունեությունն ակտիվ կերպով ծավալում են ռազմական դատարանները, որոնց քննության կիզակետում են հեղափոխության օրերին կատարված հանցագործությունները:

Մինչև հատուկ պալատներում կսկսեն հանցագործությունների դատավարությունները, անհրաժեշտ է հստակեցնել **Ճշմարտության և արժանապատվության հանձնաժողովի** (Truth and Dignity Commission) դերը՝ հետաքննությունների սկզբնական փուլերում: Համաձայն «Անցումային արդարադատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի՝ հատուկ պալատները իրավասություն են ունենալու քննելու նշյալ հանձնաժողովի կողմից Հատուկ պալատների վարույթին փոխանցված գործերը:<sup>441</sup>

## 2. **Ճշմարտության որոնման գործընթաց**

2014 թվականին օրենք ընդունվեց «**Ճշմարտության և արժանապատվության հանձնաժողով ստեղծելու մասին**»-մ, որի հիման վրա ստեղծվեց համապատասխան հանձնաժողովը: Հանձնաժողովի առաքելություն է բացահայտել 1995 թվականից սկսած տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումները, առաջարկություններ ներկայացնել փոխհատուցումների և համակարգային բարեփոխումների վերաբերյալ, առավել հրատապ դեպքերում փոխհատուցումներ տրամադրել:<sup>442</sup>

2016 թվականի հունիսի դրությամբ՝ հանձնաժողովը ստացել է ավելի քան 65,000 բողոք: Հանձնաժողովը՝ ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբակային բողոքներ է ստանցել, ինչը վկայում է այն մասին, որ հանձնաժողովի իրավասության ներքո են գտնվելու նաև հասարակությանը պատճառված վնասների վերաբերյալ գործերի քննությունը:

<sup>441</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/tunisia>:

<sup>442</sup> Տե՛ս նույն տեղում:



Հանձնաժողովը ներկայումս հանրային լսումներ է իրականացնում, ինչի միջոցով զոհերը հնարավորություն են ստանում կիսվելու իրենց պատմություններով: Հանձնաժողովը ակտիվ համագործակցում է լրագրողների հետ՝ նպատակ ունենալով հանրությանը ներկայացնել անցյալում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ առկա պատմական ճշմարտությունը:<sup>443</sup>

«Անցումային արդարադատության մասին» օրենքում հատուկ անդրադարձ է կատարվում ճշմարտության և արժանապատվության հանձնաժողովի անդամների **ընտրությանը**: Չնայած այն հանգամանքին, որ հանձնաժողովի անդամների ընտրության ընթացքում պահպանվել են օրենքով ամրագրված բոլոր պահանջները, այդուհանդերձ, այդ գործընթացում հանրային մասնակցությունը բավականին ցածր է եղել և հանձնաժողովի գործունեության թափանցիկությունը միշտ չէ, որ ապահովվում է:

Օրենքի հիման վրա ստեղծվել է հանձնաժողովի անդամներին ընտրող կոմիտե, որը պատասխանատվություն է կրում 15 անդամների ընտրությունը պատշաճ կազմակերպելու համար: Օրենքի ընդունումից հետո հայտարարվել է հանձնաժողովի անդամների հաստիքները զբաղեցնելու մրցույթ, որին կարող էին դիմել համապատասխան որակավորում ունեցող անձինք: 2014 թվականի հունիսին հանձնաժողովի անդամները պաշտոնապես սկսեցին իրենց գործունեությունը: Հանձնաժողովի հիմնադրամաբ Թունիսի իշխանությունները բացառիկ հնարավորություն են ստեղծում բացահայտելու նախկին ռեժիմի կատարած հանցագործությունները և վերականգնելու պատմական արդարությունը:

Հանձնաժողովի ներկայիս կառուցվածքն ուսումնասիրելիս նկատում ենք, որ այն բաղկացած է մի շարք կոմիտեներից, որոնք ղեկավարվում են տարբեր անդամների կողմից: Այդ կոմիտեներն են՝

- Ուսումնասիրությունների և հետաքննության կոմիտե,
- Փոխհատուցումների և վերականգման կոմիտե,
- Ազգային հիշողության պահպանման կոմիտե,
- Կանանց հարցերով կոմիտե:<sup>444</sup>

Հանձնաժողովն իր գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու համար ստեղծել է 24 տարածաշրջանային գրասենյակներ, որպեսզի մայրաքաղաքից հեռու բնակվող անձինք հնարավորություն ստանան ներգրավված լինել հանձնաժողովի աշխատանքներում:

<sup>443</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է՝ [https://www.ictj.org/news/Tunisia\\_Truth\\_Commission\\_Media](https://www.ictj.org/news/Tunisia_Truth_Commission_Media)

<sup>444</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/tunisia>:

Տարածաշրջանային գրասենյակները գոհերի համար պետք է հնարավորություն ստեղծեն բարձրաձայնելու իրենց խնդիրները՝ առանց մայրաքաղաք հասնելու:<sup>445</sup>

Ի սկզբանե հանձնաժողովը հանձնարարական ուներ իր գործունեությունը ծավալելու մինչև 2018 թվականը: Հաշվի առնելով հանձնաժողովի կատարած հսկայական աշխատանքը՝ Թունիսի խորհրդարանը որոշում կայացրեց ևս մեկ տարով երկարաձգելու հանձնաժողովի գործունեության ժամկետը:

### 3. Փոխհատուցումներ

Հեղափոխության օրերին նյութական կամ բարոյական վնաս կրած անձինք ռազմական տրիբունալների վճիռների հիման վրա սկսեցին փոխհատուցումներ ստանալ: Հիմնականում այն անձինք էին փոխհատուցումներ ստանում, որոնք հեղափոխության առաջին իսկ օրերից և դրանց հաջորդող ժամանակահատվածում նյութական կամ ֆինանսական կորուստներ էին ունեցել:

Նյութական փոխհատուցումներ տրամադրելուց զատ, երկրի խորհրդարանը «**Համաներման մասին» օրենք** ընդունեց, որի հիման վրա ազատ արձակվեցին բոլոր քաղբանտարկյալները: Փոխհատուցումները հիմնականում 3 ուղղությամբ էր կենտրոնացված՝ ֆինանսական փոխհատուցումների տրամադրում, առողջապահական փաթեթների և սոցիալական ծառայությունների հատկացում գոհերին:

Արդյունավետ կերպով փոխհատուցումների տրամադրումը երաշխավորելու համար ընդունվեցին մի շարք օրենքներ: Համապատասխան նախարարություններում ստեղծվեցին կոմիտեներ՝ փոխհատուցումների պատշաճ գործընթացը երաշխավորելու համար:<sup>446</sup> Այդ օրենքների մեջ հիշատակման են արժանի հետևյալները՝

1. Օրենք-հրամանագիր համար 1-ը փոխհատուցումներ էր նախատեսում 2011 թվականի հեղափոխության օրերին քաղաքական հետապնդման ենթարկված անձանց: Նույն օրենքի այլ դրույթներն շյալ անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքեր էր նախատեսում: Եթե նրանք ազատվել էին աշխատանքից կամ այլ տեսակի վնասներ էին կրել, ապա պետությունը պարտավորվում էր փոխհատուցել այդ վնասները:

<sup>445</sup>Տե՛ս նույն տեղում:

<sup>446</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/tunisia>:

2. Օրենք հրամանագիր համար 91-ը փոխհատուցումներ էր նախատեսում հեղափոխության օրերին զոհված անձանց հարազատներին և տարբեր տեսակի մարմնական վնասվածքներ ստացած անձանց:<sup>447</sup>

Այս օրենքները, համենայնդեպս, աչքի էին ընկնում մի շարք թերություններով: Օրենքների մեջ փոխհատուցումներ տրամադրելու ընթացակարգերի բացակայությունը հանգեցրեց օրենքի կիրառելիության մի շարք խնդիրների: Մասնավորապես, նույն փաստական հանգամանքներում վնասներ կրած անձինք տարբեր մասշտաբների փոխհատուցումներ էին ստանում, ինչը դժգոհությունների մեծ ալիք բարձրացրեց բնակչության շրջանում:

#### 4. Համակարգային բարեփոխումներ

##### *Լյուստրացիա և վեթիինգ*

Լյուստրացիայի և վեթիինգի իրականացումը Թունիսում հիմնականում ընտրական օրենսգրքի միջոցով իրականացվեց: Ընտրական օրենսգրքի մի շարք դրույթներ սահմանափակում էին որոշակի խումբ անձանց քաղաքական գործընթացներին մասնակից դառնալու իրավունքները: Այդ անձանց խումբը կանխորոշվում էր՝ հիմք ընդունելով վերջիններիս ներգրավվածությունը նախկին ռեժիմի կողմից կատարած հանցագործություններին: Նշյալ անձինք իրավունք չունեին հաղորդակից դառնալ Թունիսի անցումային արդարադատության իրականացման գործընթացին<sup>448</sup>:

Բեն Ալիի Սաուդյան Արաբիայում հանգրվանելուց հետո քաղաքական մի ամբողջ համակարգ մնաց առանց առաջնորդի: Նոր իշխանության համար խնդիր էր առաջացել, թե ինչպես լուծել նախկին իշխանության տարիներին պետական պաշտոններ զբաղեցրած անձանց հետագա պաշտոնավարման հետ կապված խնդիրը:<sup>449</sup>

Օրենք-հրամանագիր 35-ը արգելեց նախկին իշխանությունների պատգամավորներին մասնակցել ունենալ ընտրություններին: Օրենքի 35-րդ հոդվածը առանձնացրեց 3 տեսակի պաշտոնյաների, ովքեր իրավունք չունեին մասնակից դառնալ քաղաքական գործընթացներին: Առաջին խմբում այն պաշտոնյաներն էին, ովքեր Բեն Ալիի **կառավարությունում** պաշտոններ էին զբաղեցրել: Երկրորդում՝ նրանք, ովքեր առանցքային մասնակցություն էին ունեցել Բեն Ալիին սատարող **կուսակցության գործունեությանը**: Երրորդում՝ անձինք, ովքեր 2014 թվականի ընթացքում Բեն Ալիի **վերադարձի վերաբերյալ** հրապարակային ելույթներ էին ունեցել:<sup>450</sup>

<sup>447</sup>Տե՛ս նույն տեղում:

<sup>448</sup> Տե՛ս [https://www.researchgate.net/publication/299550761\\_Lustration\\_and\\_Transitional\\_Justice](https://www.researchgate.net/publication/299550761_Lustration_and_Transitional_Justice)

<sup>449</sup>Տե՛ս The Carter Center, *The National Constituent Assembly Elections in Tunisia October 12, 2011: Final Report*, 18.

<sup>450</sup> Տե՛ս [http://www.mei.edu/publications/transitional-justice-and-politics-lustration-tunisia#\\_ftn7](http://www.mei.edu/publications/transitional-justice-and-politics-lustration-tunisia#_ftn7)

### **Հասարակական ակտիվիզմ**

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, այդ թվում նաև զոհված անձիք, էական ազդեցություն են ունեցել սոցիալական փոփոխությունների իրականացմանը հեղափոխությունից առաջ, հեղափոխության ընթացքում և հետո: ՔՀԿ-ները մեծ դեր են ունեցել անցումային արդարադատության վերաբերյալ հանրային իրազեկվածության աստիճանը բարձրացնելու և անցումային արդարադատություն իրականացնելու լոբբինգի գործընթացում: ՔՀԿ-ները ակտիվ ջատագովություն են իրականացրել՝ շեշտելով, որ անցումային արդարադատության հաջող իրականացումը կարող է երաշխավորել երկրում ժողովրդավարության հաստատումը: ՔՀԿ-ները մեծ ազդեցություն են ունեցել «Անցումային արդարադատության մասին» օրենքի նախագծի մշակման հարցում:

Հեղափոխությունից հետո մի շարք քաղաքացիական հասարակության ցանցեր են ստեղծվել, որոնք նպատակ են հետապնդել աջակցելու անցումային արդարադատության արդյունավետ իրականացմանը: Հիշատակման են արժանի հետևյալները.

- **Անցումային արդարադատության ցանց.** քաղաքացիական հասարակության կազմակերպության ներկայացուցիչներից բաղկացած այս կոալիցիան ստեղծվեց հեղափոխությունից անմիջապես հետո և նախնական շրջանում զբաղված էր «Անցումային արդարադատության մասին» օրենքի մոնիթորինգի իրականացմամբ, ինչպես ակտիվորեն համագործակցում էր Ճշմարտության և արժանապատվության հանձնաժողովի հետ՝ մոնիթորինգի ենթարկելով նաև հիշյալ հանձնաժողովի գործունեությունը:<sup>451</sup>
- **Անցումային արդարադատության բարոմետր.** այս նախաձեռնությունն իր սկզբնավորումը գտավ Ալ-Կավակիբի Ժողովրդավարական անցումային կենտրոնում և նպատակ էր հետապնդում չափելու ժողովրդի պատկերացումները՝ անցումային արդարադատության և վերջինիս ինստիտուտների վերաբերյալ, անհրաժեշտության պարագայում իրականացնելով և տրամադրելով անհրաժեշտ վերլուծություններ:<sup>452</sup>

### **3.1.7. Լիբիական Պետություն**

<sup>451</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Tunisia-TJLaw-2015.pdf>

<sup>452</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ KADEM is a nongovernmental regional organization founded in Jordan in 2006, specialized in transferring knowledge and building capacities in the field of democratic transition

Լիբիական առաջին քաղաքացիական պատերազմը, որը հայտնի է նաև **Լիբիական հեղափոխություն** անվամբ,<sup>453</sup> զինված համակամարտություն էր՝ Լիբիայի նախկին նախագահ Մուամար ալ-Կադաֆիի կողմնակիցների և ապստամբ զինված խմբավորումների միջև: Չինված ապստամբները նպատակ էին հետապնդում երկրի իշխանությունից հեռացնել Կադաֆիին: Չանգվածային ընդհարումները սկսվեցին 2009 թվականի օգոստոսին՝ լիբիական Չավիյա քաղաքում սկսված ցույցերով, որոնք հետագայում տարածվեցին նաև Բենգազիում 2011 թվականի փետրվարին: Բենգազիում ցույցերն ունեցան արյունոտ վերջաբան, քանի որ կառավարական ուժերը կրակ բացեցին ցուցարարների վրա:

Չանգվածային ցույցեր սկսվեցին նաև երկրի այլ քաղաքներում, որից հետո խաղաղ ցույցերը վերածվեցին զինված ապստամբության:<sup>454</sup> Կադաֆիի հակառակորդները հիմնադրեցին ժամանակավոր կառավարական մարմին, որը կոչվում էր **Ազգային անցումային խորհուրդ**:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը Լիբիայում ծավալվող իրադարձությունների վերաբերյալ բանաձև ընդունեց, որով սառեցվում էին Կադաֆիին և նրա մերձավորներին պատկանող ակտիվները, նրանց տեղաշարժվելու հնարավորությունները և Միջազգային քրեական դատարանին հանձնարարեց Լիբիայում տեղի ունեցող իրադարձությունները հետաքննության առարկա դարձնել:<sup>455</sup> 2011 թվականի մարտին Կադաֆիի կողմնակիցներին հաջողվեց մի շարք շրջաններ ազատագրել ապստամբների տիրապետությունից, այդ թվում՝ Բենգազի քաղաքը: ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը մեկ այլ բանաձև ընդունեց, որով անդամ պետություններին հնարավորություն ընձեռեց Լիբիայի տարածքը հայտարարել ոչ-թռիչքային գոտի:<sup>456</sup> ՆԱՏՕ-ի ուժերը սկսեցին ուժեղացնել Կադաֆիի բանակին: Կադաֆի կառավարությունը զինադադար հայտարարեց, բայց մարտերը այդուհանդերձ շարունակվում էին: Հակամարտության ողջ ընթացքում ապստամբները մերժում էին Կադաֆիի կառավարության հաշտության կնքման առաջարկները՝ չնայած այն հանգամանքին, որ Աֆրիկական Միության երկրները չէին ցանկանում Կադաֆիին հեռացված տեսնել իշխանությունից:<sup>457</sup>

2011 թվականի օգոստոսին ապստամբները, ակտիվ կերպով ստանալով ՆԱՏՕ-ի աջակցությունը, հարձակվեցին կառավարության կողմից վերահսկվող մի շարք շրջանների վրա և այդ շրջանները իրենց իշխանության տակ վերցրեցին: Վերջիվերջո, ապստամբների

<sup>453</sup> "A Visual Look Back at the Libyan Revolution". *PBS*. 2009 թվականի հոկտեմբեր:

<sup>454</sup> B St' u arker, Anne (24 February 2011). "Time Running Out for Cornered Gaddafi". *ABC News*, սեպտեմբեր, 2011.

<sup>455</sup> St' u Wyatt, Edward (26 February 2011). "Security Council Calls for War Crimes Inquiry in Libya". *The New York Times*. R.

<sup>456</sup> Մանրամասն տե՛ս <https://www.un.org/apps/news/story.asp?NewsID=37808&Cr=libya&Cr1>

<sup>457</sup> St' u հետևյալ հղմամբ՝ <http://www.aljazeera.com/news/africa/2011/04/201141116356323979.html>

հաջողվեց ենթակայության տակ առնել, նաև մայրաքաղաք Տրիպոլին: Կադդաֆիին հաջողվեց փախուստի դիմել պաշարված մայրաքաղաքից՝ շնորհիվ իրեն հավատարիմ մնացած զինվորների:<sup>458</sup> 2011 թվականի սեպտեմբերին Ազգային անցումային խորհուրդը ՄԱԿ-ի կողմից ճանաչվեց որպես Լիբիայի օրինական իշխանություն՝ այդ կերպ փոխարինելով Կադդաֆիի կառավարությանը: Կադդաֆիին հաջողվեց ազատության մեջ մնալ մինչև 2011 թվականի հոկտեմբերը, երբ Սիրտե քաղաքում հայտնաբերվեց և սպանվեց ապստամբների կողմից:<sup>459</sup> Ազգային անցումային խորհուրդը հայտարարեց Լիբիայի ազատագրման մասին և 2011 թվականի հոկտեմբերին պատերազմը հանգեց իր տրամաբանական ավարտին:<sup>460</sup>

## 1. Քրեական արդարադատություն

ՄԱԿ-ի Անվտանգությանը խորհուրդը Միջազգային քրեական դատարանին հանձնարարեց հետաքննել Լիբիայում տեղի ունեցած մարդու իրավունքների զանգվածային խախտումների վերաբերյալ գործերը: 2011 թվականի մարտին Միջազգային քրեական դատարանի նախագահ Ֆաթու Բենսուդան պաշտոնապես սկսեց գործերի քննությունը՝ ուշադրության կենտրոնում ունենալով Տրիպոլիում, Բենգազիում և Միսուրայում ծավալված դեպքերը:

Հատկանշական է, որ Լիբիան Միջազգային քրեական դատարանի անդամ պետություն չէ, բայց ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, հիմք ընդունելով իր կողմից ընդունված **1970 Բանաձևը**, այս գործը հանձնել էր դատարանի իրավասությունը՝ դատապարտելով լիբիական կառավարության կողմից իրականացված մարդու իրավունքների զանգվածային խախտումները, որում ընդգրկված էր Մուամմար ալ-Կադաֆիի կողմից ղեկավարվող բանակի միջոցով խաղաղ ցուցարարների հանդեպ կիրառված ճնշումները, բռնությունների մեծ մակարդակը:<sup>461</sup> Անվտանգության խորհուրդը արձանագրել էր, որ քաղաքացիական բնակչության դեմ իրականացվող պարբերական և լայնամասշտաբ բնույթ կրող հարձակումները մարդկության դեմ ուղղված հանցագործություններ են: Անվտանգության խորհուրդը նաև մտահոգություններ էր հայտել վիրավոր անձանց տրամադրվող բուժօգնության սակավության, հավաքների ազատության և այլ հիմնարար իրավունքների կոպիտ խախտումների վերաբերյալ:

Միջազգային քրեական դատարանը 3 անձի կալանավորման վերաբերյալ որոշում ընդունեց: Մուամմար ալ-Կադաֆիի վերաբերյալ գործի վարույթը կարճվեց, քանի որ

<sup>458</sup>Տե՛ս Chulov, Martin; Harding, Luke; Borger, Julian (25 August 2011). "Street fighting rages in Tripoli as Gaddafi loyalists fight rearguard action". *The Guardian*. London. 2011 թվականի օգոստոսի 15

<sup>459</sup> Տե՛ս "Gaddafi killed as Libya's revolt claims hometown". Reuters Africa.

<sup>460</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ "NTC declares 'Liberation of Libya'". Al Jazeera. 2011 թվականի հոկտեմբերի 23

<sup>461</sup>Տե՛ս [https://www.nato.int/nato\\_static\\_fl2014/assets/pdf/pdf\\_2011\\_02/20110927\\_110226-UNSCR-1970.pdf](https://www.nato.int/nato_static_fl2014/assets/pdf/pdf_2011_02/20110927_110226-UNSCR-1970.pdf)

մեղադրյալը սպանվել էր: Մուամմար ալ-Կադդաֆիի որդուն՝ Սաիֆ ալ-Իսլամ Կադդաֆիին ձերբակալելու վերաբերյալ Միջազգային քրեական դատարանի դատախազը որոշում ընդունվեց 2011 թվականի հունիսի 27-ին: Մինչև օրս գործը դատարանում է գտնվում, քանի որ այդպես էլ չի հաջողվել մեղադրյալին հայտնաբերել:<sup>462</sup>

Ձերբակալելու հաջորդ որոշումը Միջազգային քրեական դատարանի դատախազի կոմից ընդունված վերաբերվում էր Կադդաֆիի ռազմական հետախուզության ղեկավար Աբդուլլահ ալ-Սենուսին, ով մեղադրվում էր հեղափոխության օրերին իրականացված մարդկության դեմ ուղղված հանցագործություններ համար: Լիբիան հաջողությամբ վիճարկեց այս գործի Միջազգային քրեական դատարանի իրավասության ներքո գտնվելու հարցը: Միջազգային քրեական դատարանը այն եզրահանգման եկավ, որ Լիբիայի ազգային դատարաններն արդեն իսկ սույն գործով վարույթ են իրականացնում, ուստի անհրաժեշտություն չկա գործի վարույթը միջազգային քրեական դատարանի քննությանը հանձնել:<sup>463</sup>

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

2012 թվականի փետրվարին Ազգային անցումային խորհուրդը **«Անցումային արդարադատության և ազգային համերաշխության մասին» օրենք** ընդունեց՝ նպատակ ունենալով ապահովել բռնապետական ռեժիմից անցումը դեպի ժողովրդավարական ռեժիմի: Օրենքը անցումային արդարադատությունը օրենսդիր, գործադիր, դատական և վարչական գործընթացների ամբողջություն համարեց, որը նպատակ էր հետապնդում 1969 թվականից, այսինքն՝ Կադաֆիի իշխանության գալու օրվանից տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումները հայտնաբերել և անհրաժեշտ փոխհատուցումներ տրամադրել: Օրենքը նաև հասարակության տարբեր հատվածներին հաշտեցնելու առաքելություն պետք է իրականացներ:<sup>464</sup>

Հատկանշական է, որ օրենքը, կարծես, քննության առարկա էր դարձնելու միայն Կադդաֆիի և նրա կողմնակիցների կողմից իրականացված հանցագործությունները՝ առանց անդրադարձ կատարելու ապստամբների կողմից իրականացված հանցագործություններին: Ակնհատ էր, որ Ազգային անցումային խորհուրդը հետաքննության առարկա չէր դարձնելու ապստամբների կողմից իրականացված վայրագությունները:<sup>465</sup>

<sup>462</sup> Գործի նյութերին ծանոթացիր հետևյալ հղմամբ՝ <https://www.icc-cpi.int/libya>

<sup>463</sup> Տե՛ս <http://www.coalitionfortheicc.org/cases/abdullah-alsenussi>

<sup>464</sup> Տե՛ս "Law no 17 of 2012 on Establishing the Rules of National Reconciliation and Transitional Justice(Libya) art 1, 2.

<sup>465</sup> Transitional Justice Implementation Terms in Libya] (Almanar, 2012) հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.almanarlink.com/press/2012/11/25029/7>

2013 թվականի «Անցումային արդարադատության մասին» նոր օրենք ընդունվեց, որը նպատակ ուներ լրացնելու հին օրենքում առկա օրենսդրական բացերը:<sup>466</sup> Համենայնդեպս, ինչպես նախորդ օրենքը, այս օրենքը ևս անդրադարձ չէր կատարում հեղափոխությունից հետո ծավալված դեպքերին: Օրենքի հիման վրա պետք է ստեղծվեր **Ճշմարտության և համերաշխության հանձնաժողով**, որը նպատակ էր հետապնդելու բացահայտել Կադաֆիի ռեժիմի կողմից իրականացված հանցագործությունները:<sup>467</sup>

Օրենքը սահմանափակեց նաև Ճշմարտության հանձնաժողովի գործունեության մանդատի ժամկետը, նախատեսելով, որ հանձնաժողովը իր գործունեությունը պետք է ավարտեր հիմնադրումից հետո 5 տարի անց: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ նման ժամկետը բավականին կարճ է արդյունավետ գործունեություն իրականացնելու համար, ուստի հանձնաժողովին հնարավորինս ճկուն ժամկետ պետք է հատկացվեր:<sup>468</sup> Լիբիայում Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովը ի վիճակի չեղավ իրականացնել իր առջև դրված նպատակները, քանի որ հեղափոխությունից հետո կենտրոնական իշխանության թուլացման հետևանքով երկրի փաստական կառավարումը գտնվում է ոչ միայն կենտրոնական իշխանության, այլև մի շարք ռազմական խմբավորումների, տարբեր ցեղերի ձեռքում: «Իսլամական պետությունն» իր ազդեցության գոտիներն է ընդլայնել երկրի որոշ շրջաններում: Այս գործոնները առկայությունը Լիբիայի կենտրոնական իշխանություններին զրկում է անցումային արդարադատության արդյունավետ իրականացման հնարավորությունից:

### 3. Փոխհատուցումներ

#### *«Քաղաքական մեկուսացման մասին» օրենքը*

Լիբիայի ժամանակավոր կառավարությունը օրենք ընդունեց, որով նախկին ռեժիմի որոշակի խումբ պաշտոնյաների արգելվում էր քաղաքական գործունեությամբ զբաղվել կամ պաշտոններ զբաղեցնել պետական մարմիններում: Համաձայն այդ օրենքի՝ *«Յուրքանցյուր ոք, ով մասնակցություն է ունեցել որոշակի գործընթացների, իրավունք չի ունենալու քաղաքական պաշտոն զբաղեցնել կամ ղեկավարել որևէ պետական մարմին, պաշտոն զբաղեցնել պետության կողմից հիմնված կազմակերպություններում կամ էլ քաղաքական կուսակցություն հիմնադրել»:* Օրենքի գործունեությունը տարածվում է այն անձանց վրա, ովքեր.

<sup>466</sup> Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [Law no 29 of 2013 on Transitional Justice] (Libya) art 32

<sup>467</sup> 5 Priscilla B Hayner, *Unspeakable Truths: Confronting State Terror and Atrocity* էջ 72

<sup>468</sup> Priscilla B Hayner, *Unspeakable Truths: Confronting State Terror and Atrocity* (Routledge, 2001) 72.



- մասնակցություն են ունեցել 1969 թվականին տեղի ունեցած ռազմական հեղափոխությանը,
- երկրում վարչապետի պաշտոն են զբաղեցրել,
- զբաղեցրել են նախարարի կամ համայնքապետի պաշտոն,
- խորհրդարանի նախագահի պաշտոն են զբաղեցրել,
- երկրի գլխավոր դատախազի պաշտոն են զբաղեցրել,
- Լիբիայի կենտրոնական բանկի նախագահի պաշտոնն են զբաղեցրել,
- օտարերկրյա պետությունում հանդես են եկել որպես երկրի դեսպան կամ պետության ներկայացուցիչն են հանդիսացել միջազգային կազմակերպություններում,
- հանրային թերթի խմբագիր են հանդիսացել,
- հանրային հեռուստաընկերության կամ ռադիոյի նախագահ են հանդիսացել,
- արտակարգ կամ հեղափոխական դատարաններում աշխատել են որպես դատավոր,
- հանդիսացել են բանակի գլխավոր հրամանատար:<sup>469</sup>

Այս օրենքի կիրառելիությունը բավականին մեծ դժվարություններ առաջացրեց Լիբիայում: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները իրենց մտահոգություններ էին հայտնում օրենքում առկա կամայական տարբերակումների վերաբերյալ՝ շեշտելով այն հանգամանքը, որ դրանով նոր կառավարությունը փորձում էր երկրի ողջ իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնել և քաղաքական հակառակորդներին մեկուսացնել քաղաքական գործընթացներից:

Լիբիայում չեն կիրառվել անցումային արդարադատության այնպիսի կարևորագույն գործիքներ, ինչպիսիք են՝ փոխհատուցումները: Մա պայմանավորված էր այն հանգամանքով, որ փոխհատուցումներ տրամադրելու գործընթացը պետք է իրականացվեր ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովի կողմից: Նշյալ հանձնաժողովն էլ ի վիճակի չէր լուծելու իր առջև դրված խնդիրները՝ երկրում ուժգնացող քաղաքացիական պատերազմի պարագայում:

### 3.1.8. Հարավաֆրիկյան Հանրապետություն

Հարավաֆրիկյան Հանրապետությունում տեղաբնակների և եկվորների միջև հակամարտությունը սկզբնավորվել էր դեռևս 1652 թվականից: Եկվորների կողմից ծանր հարկերի սահմանումը, տեղաբնակներին քաղաքական գործընթացներից հեռացնելը, հետագա

<sup>469</sup> Տե՛ս ‘Clashes outside Libyan Foreign Ministry over Political Isolation Law’, Al Arabiya News (online), 2013 թվականի մայիսի 10:

տարիների ընթացքում էլ ավելի մեծացրեց եկվորների և տեղաբնակների միջև առկա հակասությունները<sup>470</sup>:

Հակամարտության սկզբնական շրջանում հակակառավարական ցույցերը խաղաղ բնույթ էին կրում, մինչև որ 1961 թվականին արգելվեցին մի շարք ազատագրական խմբերի գործունեությունը: Այս իրադարձությունների հետևանքով ազատագրական խմբերը սկսեցին պայքար մղել կառավարության դեմ, որն էլ զինված հակամարտության վերածվեց: 1960, 1970 և 1980-ական թվականներին պարտիզանական մի շարք խմբեր հարձակումներ էին իրականացնում ոստիկանական զորքերի և կառավարական բանակի վրա: Կառավարության անվտանգության ուժերը և ոստիկանությունն անմիջականորեն ներգրավված էին ազատագրական խմբերի դեմ մղվող պայքարում: Հակամարտության ընթացքում բախումներ էին տեղի ունենում նաև ռազմական խմբերի միջև:

Երկրում մեծ խնդիր էր հանդիսանում ապարտեիդը, որը իրենից ենթադրում էր օրենսդրական մակարդակով սևամորթների նկատմամբ սպիտակների առավելությունը: Այդ պատճառով 1980-ականներին ռազմական բախումները ավելի լայնամասշտաբ բնույթ սկսեցին կրել, որի հետևանքով հակամարտության աշխարհագրությունը ընգրկում էր ոչ միայն Հարավաֆրիկյան Հանրապետության տարածքը, այլ նաև հարևան պետությունները: Միայն 1990-ական թվականների սկզբներին հնարավոր եղավ խաղաղության բանակցություններ սկսել ապարտեիդին իրավական կարգավիճակ ընձեռած Ազգային կուսակցության և ազատագրական խմբերի միջև: 1991 թվականին Նելսոն Մանդելային ազատ արձակելուց մեկ տարի անց կնքվեց **Ազգային հաշտեցման համաձայնագիրը**:<sup>471</sup>

## 1. Քրեական արդարադատություն

Խաղաղության համաձայնագրի ստորագրումից հետո Մարդու իրավունքների խախտումներ թույլ տված անձինք ընտրողաբար ենթարկվեցին քրեական պատասխանատվության: Օրենսդրական մի շարք դրույթների խախտմամբ անձանց նկատմամբ քրեական հետապնդումներ էին իրականացվում: Հետաքննություններն աչքի էին ընկնում մի շարք թերություններով, ինչի հետևանքով հետագայում այդ գործերը չէին ուղարկվում դատարան: Դատարանները մեծամասամբ կանխակալ մոտեցում էին ցուցաբերում ազատագրական շարժման մասնակիցների նկատմամբ: Իրավիճակը փոքր-ինչ փոխվեց 1994 թվականին, երբ երկրում իշխանության եկավ նոր կառավարությունը:

<sup>470</sup> Sté u Eybers (1917). Select constitutional documents illustrating South African history 1795–1910, 455–463 էջեր:

<sup>471</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը տե՛ս սույն հղմամբ՝ <http://ictj.org/sites/default/files/ICTJ-DDR-South-Africa-CaseStudy-2009-English.pdf>:

Նոր կառավարության իշխանության գալուց հետո որոշ դատական գործերի քննությունը օրենսդրական տեսանկյունից աննպատակահարմար դարձավ, որովհետև այդ գործերի քննությունը հանձնվեց նորաստեղծ **Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովի** իրավասությանը:

Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովը համաներում կիրառելու իրավասությամբ էր օժտված: Սա երբեմն խնդիրներ էր առաջացնում, քանի որ հանձնաժողովն իրավասություն ուներ որոշելու, թե կիրառելի՞ է արդյոք համաներում շնորհելու վերաբերյալ իր լիազորությունը, թե՞ ոչ:

## 2. **Ճշմարտության որոնման գործընթաց**

1995 թվականին օրենք ընդունվեց, որի հիման վրա ստեղծվեց **Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովը**: Պատմական ճշմարտությունը հայտնաբերելու նպատակով, հանձնաժողովը պետք է իրականացներ հետևյալ գործողությունները.

- հայտնաբերել 1960-1994 թվականներին տեղի ունեցած մարդու իրավունքների զանգվածային խախտումների հնարավոր պատճառները:<sup>472</sup> Խախտումներ իրականացրած անձանց շարժառիթները, շահերը և դրդապատճառները նույնպես պետք է բացահայտվեին այդ հանձնաժողովի կողմից:<sup>473</sup>
- Կազմել համապարփակ զեկույց, որտեղ նշված էին լինելու 1960-1994 թվականների ընթացքում տեղի ունեցած մարդու հիմնարար իրավունքների խախտումները:

Ճշմարտության հայտնաբերման գործընթացը ենթադրում էր մեծ դժվարություններ, քանի որ հանձնաժողովի անդամները ստիպված էին լինելու հազարավոր ապացույցներ հավաքագրել՝ ճշմարտությունը բացահայտելու համար: Երբեմն անդամները ապացույցներ էին հավաքագրում այնպիսի անձանցից, ովքեր տարբեր համայնքների ներկայացուցիչներ էին: Իր գործունեության ընթացքում հանձնաժողովը հարցաքննեց ավելի քան 22,000 տուժածների:

Այս հարցաքննություններին հաջորդում էին հետաքննությունները, որոնք նպատակ էին հետապնդում հաստատելու հարցազրույցների ժամանակ ստացված տեղեկությունները: Հանձնաժողովի անդամները երբեմն ստիպված էին լինում քննելու, այսպես կոչված, **«պատուհանային գործեր»**: Այսպիսի գործերի քննությունը բացատրվում էր այն հանգամանքով, որ հանձնաժողովը երբեմն թեթև ծանրության հանցագործությունների քննություն էր իրականացնում՝ բացահայտելու ավելի մեծ հանցագործություններ:

<sup>472</sup> Promotion of National Unity and Reconciliation Act, 1995, գլուխ 2, մանրամասն տես՝ [http://www.fas.org/irp/world/rsa/act95\\_034.htm](http://www.fas.org/irp/world/rsa/act95_034.htm):

<sup>473</sup> Տե՛ս [http://www.fas.org/irp/world/rsa/act95\\_034.htm](http://www.fas.org/irp/world/rsa/act95_034.htm):

Իր գործունեության ընթացքում հանձնաժողովը քննեց ավելի քան 300 գործ: Հանձնաժողովի ձեռք բերած տեղեկությունները հետագայում կարող էին դատավարությունների ժամանակ օգտագործվել: Իր մանդատն իրականացնելիս նշյալ հանձնաժողովը դժկամությամբ էր համագործակցություն իրականացնում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, քանի որ չէր ցանկանում սասանել իր անաչառության վերաբերյալ պատկերացումները:<sup>474</sup>

Բացի այս հանձնաժողովից՝ գոյություն ունեին նաև այլ հանձնաժողովներ, սակայն նրանք գործունեության լայն շրջանակներ չունեին և այլ դեպքերի իրավիճակային քննություններ էին իրականացնում: Հիշատակման են արժանի **Գոլդսթոնի հանձնաժողովը** (Goldstone Commission) և **Սթեյնի Հանձնաժողովը** (Steyn Commission), որոնք ոստիկանության կողմից իրականացված չարաշահումները բացահայտելու առաքելություն ունեին:

Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում էր 3 կոմիտեների միջոցով: Այդ կոմիտեներն էին՝

- **Մարդու իրավունքների խախտումները քննող կոմիտեն**, որը հանձնարարական ուներ քննելու 1960-1994 թվականների ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումները:
- **Փոխհատուցումների և վերականգնման կոմիտեն**, որը հանձնառություն ուներ զոհերին և նրանց հարազատներին անհրաժեշտ փոխհատուցումներ տրամադրել և նրանց վերինտեգրել հասարակությանը:
- **Համաներման կոմիտեն**, որը մանդատ ուներ քննելու մարդու իրավունքների խախտումներ կատարած անձանց համաներում շնորհելու հարցերը:

Մարդու իրավունքների խախտումները քննող կոմիտեն և Համաներման կոմիտեն հանրային լսումներ էին իրականացում երկրի տարբեր շրջաններում: Համաներման կոմիտեն իրավասություն ուներ անձանց համաներում շնորհելու, էթե նրանք ապացուցում էին, որ իրենց կատարած հանցագործությունը քաղաքական դրդապատճառներ է ունեցել, և նրանք իրենց կատարած հանցագործության վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հայտնում էին հանձնաժողովին: Անաչառությունն ապահովելու համար հանձնաժողովը լսում էր երկու կողմերին, որից հետո միայն որոշում կայացնում: Իր գործունեության ողջ ընթացքում հանձնաժողովը համաներում կիրառելու ավելի քան 5,392 հայտ մերժեց և ընդունեց 849 համաներման որոշում:<sup>475</sup>

<sup>474</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/south-africa>:

<sup>475</sup> St' u Department of Justice and Constitutional Development of the Republic of South Africa, The Truth and Reconciliation Official Website, Justice.gov.za:

Հանձնաժողովը մշակվեց և հրապարակեց ամբողջական զեկույցը, որը 20 դոլարով վաճառքի հանվեց երկրի տարածքում: Հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ զեկույցը լուրջ հետազոտման ենթարկվեց միայն գիտնականների և սահմանափակ թվով անձանց կողմից:<sup>476</sup>

### 3. Փոխհատուցումներ

Հակամարտությանը զոհ դարձած գրեթե բոլոր անձինք ստացան 6,417 դոլարին համարժեք խորհրդանշական փոխհատուցումներ,<sup>477</sup> որոնք անմիջականորեն փոխանցվեցին նրանց կամ նրանց հարազատների բանկային հաշիվներին:<sup>478</sup>

Հանձնաժողովը տուժող համարեց այն անձանց, որոնց իրավունքները խախտվել էին 1960-1994 թվականների ռազմական բախումների ընթացքում: Մի շարք բանակային ծառայողներ կարող էին դասակարգվել որպես տուժողներ: Համենայնդեպս, օրենքի ընդունման պահին նրանք կամ տեղյակ չէին այդպիսի հնարավորության մասին, կամ էլ չէին ցանկանում փոխհատուցումներ ստանալու համար գրանցվել որպես «տուժող»: Հատկանշական է, որ տուժողները սկսեցին փոխհատուցումներ ստանալ միայն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից ակտիվ իրականացրած քարոզարշավից հետո:

### 4. Համակարգային բարեփոխումներ

Համակարգային բարեփոխումները, կամ տրանսֆորմացիան հիմնականում իրականացվեց սպիտակների գերակայությունը ոստիկանությունում, պետական կառավարման ապարատում և այլ պետական ինստիտուտներում վերացնելու նպատակով:<sup>479</sup> Համակարգային բարեփոխումներ իրականացնելիս սևամորթները հիմնականում ինտեգրվեցին ռազմական ուժերի անձնակազմերում, սկսեցին բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում: Ապարտեիդյան ժամանակահատվածի «սպիտակային գերակայությանը» փոխարինելու եկավ *սևամորթների և սպիտակամորթների ավելի բալանսավորված ներկայացվածության ժամանակահատվածը*:

<sup>476</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Media-T.J.-2016.pdf>:

<sup>477</sup> This was in addition to initial interim reparations of between R2,000 and R4,000 provided during the TRC.

<sup>478</sup> Տե՛ս Christopher J. Colvin, “Overview of the Reparations Program in South Africa,” in *The Handbook of Reparations*, Pablo de Greiff (New York: Oxford University Press, 2006), 176–214 էջեր:

<sup>479</sup> Տե՛ս նույն տեղում:

Հարավաֆրիկյան Հանրապետությունում համակարգային վեթից չիրականացվեց, քանի որ սահմանադրությամբ ամրագրված նորմերը հնարավորություն չէին ընձեռում նմանատիպ նախաձեռնությամբ հանդես գալ: Բազմաթիվ անձինք, ովքեր նախկինում մարդու իրավունքների խախտումներով էին աչքի ընկել, շարունակում էին պաշտոններ զբաղեցնել: Այս երևույթը ամենավաղ դրսևորումը ոստիկանական համակարգում էր արտահայտված: Այդ իսկ պատճառով էլ ոստիկանական համակարգում շարունակվում էին մարդու իրավունքների խախտումները: Խոշտանգումներ և այլ անմարդային վերաբերմունքի դրսևորումներ մինչ օրս առկա են Հարավաֆրիկյան Հանրապետության ոստիկանական համակարգում:

### ***Հասարակական ակտիվիզմ***

Հարավաֆրիկյան Հանրապետությունում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները մեծ դեր խաղացին ճշմարտության հայտնաբերման գործընթացի ժամանակ: Մասնավորապես, նրանք ճշմարտությունը բացահայտելու ջատագովությամբ հանդես եկան:<sup>480</sup> Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները արձանագրել էին նախկինում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ պատմական ճշմարտությունը, և այդ արձանագրությունները հետագայում օգտագործվեցին ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովի կողմից:

---

<sup>480</sup> Sťu Lydia Levin, Polly Dewhirst, and Brandon Hamber, “The Use of EVSYS for Preparing a Human Rights Database for Presentation to the Truth and Reconciliation Commission in South Africa” 1997 թվական:

## 3.2. Անցումային արդարադատության մեխանիզմները և գործիքները ասիական երկրներում

### 3.2.1. Նեպալի Դաշնային Դեմոկրատական Հանրապետություն

Պատմականորեն Նեպալը միահեծան բռնապետություն էր, և միայն 20-րդ դարի սկզբներին երկիրը սկսեց քայլեր իրականացնել դեմոկրատական պետություն կառուցելու ուղղությամբ: 1996-2006թթ. ընթացքում քաղաքացիական պատերազմ սկսվեց կառավարության և Մաոիստ ապստամբների միջև, որոնք հրաժարվում էին ենթարկվել կառավարությանը: Հակամարտության ընթացքում զոհվեց 17,265 մարդ, շուրջ 1,327 մարդանհետացավ: Այս ժամանակահատվածում արձանագրվեցին խոշտանգման, բռնաբարության, կամայական ձերբակալությունների հազարավոր դեպքեր:<sup>481</sup> Երկու կողմում էլ վայրագություններ իրականացվեցին: Համապարփակ հաշտության համաձայնագրի կնքմամբ 2006թ-ի հակամարտությունը հասավ իր ավարտին:<sup>482</sup> Համապարփակ հաշտության համաձայնագրի համաձայն՝ Նեպալը միահեծան կառավարման համակարգից անցում էր կատարելու դեմոկրատական կառավարման համակարգ: Սույն համաձայնագրում դրոյթներ կային Նեպալում ստեղծելու **հանձնաժողով**, որը կոչված էր լինելու քննելու **պատերազմի տարիներին տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումները**: Նախատեսվում էր նաև **հատուկ հանձնախումբ ստեղծել**, որի քննության ներքո էին գտնվելու միայն **հարկադիր անհետացման գործերը**:

Համաձայնագրում նախանշված նպատակներից ոչ բոլորը կյանքի կոչվեցին: Կառավարությունը բավականին դժվարությամբ էր իրականացնում իր առջև դրված նպատակները: Եվ արդյունքում կառավարությունը միայն սահմանափակ հաջողություններ կարողացավ գրանցել:

Անցումային արդարադատություն իրականացնելու ընթացքում ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնք թերություններով էին աչքի ընկնում: Այդ օրենքները պարունակում էին բազմաթիվ բացեր և միայն դատական մեկնաբանություններով էր հնարավոր լինում ճիշտ մեկնաբանել:<sup>483</sup>

<sup>481</sup> St' u Mahendra Lawoti and Anup K. Pahari, "The Maoist Insurgency in Nepal: Revolution in the twenty-first century", էջ 978:

<sup>482</sup> St' u [http://www.usip.org/sites/default/files/file/resources/collections/peace\\_agreements/nepal\\_cpa\\_20061121](http://www.usip.org/sites/default/files/file/resources/collections/peace_agreements/nepal_cpa_20061121):

<sup>483</sup> St' u Suman Adhikari et al. v. Government of Nepal, (decision dated 26 February 2015), NKP 2071, p. 2071; Madhav Kumar Basnet for JuRI-Nepal et al. v. Office of the prime minister et al. and Ram Kumar Bhandari et al. v. Government of Nepal et al. (decision dated April 1, 2013) NKP 2070, P.1101:

## 1. Քրեական արդարադատություն

Քրեական պատասխանատվության միջոցներ կիրառելիս շատ քիչ հաջողություններ արձանագրվեցին, քանի որ երկու կողմն էլ իշխանություն ունեին: Բանակը և ոստիկանությունը դեմ էին բարեփոխումներ իրականացնելուն: Հարկ է նշել, որ քրեական պատասխանատվության ենթարկելու հարց քաղաքական օրակարգում չկար:

Մինչ օրս նեպալյան դատարանները միայն սահմանափակ հաջողություններ են արձանագրել մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հարցում: Համենայն դեպս, զոհերը և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները մի քանի գործեր են ներկայացրել նեպալյան դատարաններ՝ Մաոիստ առաջնորդներին և կառավարության մի շարք պաշտոնյաների քրեական պատասխանատվության ենթարկելու համար:<sup>484</sup>

## 2. Ճշմարտության որոնում

Անհետ կորած անձանց հարցերով հանձնաժողով ստեղծումը նեպալյան իշխանությունները ձգձգեցին այնքան ժամանակ, մինչև հանցագործություններ իրականացրած անձինք համաներման ենթարկվեցին: 2015 թվականին Նեպալի խորհրդարանն օրենք ընդունեց, որի հիման վրա ստեղծվեցին **Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովը**, ինչպես նաև **Անհետ կորած անձանց վերաբերյալ հետաքննություններ իրականացնող հանձնաժողովը**:

Երկրորդ հանձնաժողովի հիմնական գործառույթն էր հետաքննությունների իրականացումը և անհետ կորած անձանց մասունքների հայտնաբերումը:<sup>485</sup> Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովի գործառույթներն էին՝ ստանձնել առևանգումների, գերեվարման, անձանց հաշմանդամության հասցնելու, մտավոր և ֆիզիկական խոշտանգումների, բռնաբարության և սեռական ոտնձգությունների և սեփականության իրավունքին վնաս հասցնելու գործերի քննության իրականացումը: Շատ զոհեր և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ սուր քննադատության էին ենթարկում նշյալ հանձնաժողովների գործունեությունը՝ նշելով, որ հանձնաժողովները պարբերաբար հանդես են գալիս մեղադրյալների նկատմամբ համաներում կիրառելու խնդրանքներով: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և զոհերը նաև համոզմունք ունեին, որ հանձնաժողովը չունի փաստական անկախություն և չի գործում արդյունավետ:

2014 թվականին մի խումբ զոհեր դիմեցին Նեպալի սահմանադրական դատարան՝ խնդրելով վիճարկել Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովի կողմից

<sup>484</sup> Աշխատությունը տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://www.biicl.org/files/6912\\_nepal\\_transitional\\_justice\\_-\\_bingham\\_centre\\_working\\_paper\\_2014-02.pdf](https://www.biicl.org/files/6912_nepal_transitional_justice_-_bingham_centre_working_paper_2014-02.pdf):

<sup>485</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://ictj.org/selecting-commissioners-nepal>:



հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ *ներում կիրառելու իրավասության սահմանադրականությունը*: Սահմանադրական դատարանն իր որոշմամբ եկավ այն եզրահանգմանը, որ նշյալ գործառությունը հակասահմանադրական է և Նեպալի խորհրդարանին պարտադրեց հիշյալ հանձնաժողովի հիմնադրման վերաբերյալ օրենքը փոփոխությունների ենթարկել: Համենայնդեպս, օրենքը մինչ օրս գտնվում է խորհրդարանում և ենթարկվել է բազմաթիվ քաղաքական փոխզիջումների, սակայն մինչ օրս էական փոփոխությունների չի ունեցել:

Երկու հանձնաժողովների գործունեությունն էլ մտահոգություններ էր առաջացրել Նեպալում:<sup>486</sup> Պետք է փաստել, որ երկու հանձնաժողովների գործունեության կիզակենտրոնում չէին զոհերին պաշտպանություն առաջարկելու վերաբերյալ դրույթները, քանի որ հանձնաժողովները չունեին անհրաժեշտ ֆինանսավորում: Հանձնաժողովականները տարբեր քաղաքական կուսակցությունների անդամներ են և շատ դեպքերում կանխակալ մոտեցում են դրսևորում իրենց գործունեությունն իրականացնելիս:<sup>487</sup>

Անցած 3 տարիների ընթացքում հանձնաժողովի անդամները ավելի քան 64,000 բողոք են ստացել՝ պատերազմի տարիներին տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ: Ցավոք, այստեղ ևս երկու հանձնաժողովներն էլ թերացել են և ի վիճակի չեն եղել պատշաճ հետաքննություններ անցկացնել ու պարզել գործերի փաստական հանգամանքները:<sup>488</sup>

### 3. Փոխհատուցումներ

Կառավարությունն ընդունեց **Ժամանակավոր մեղմացման ծրագիր**(Interim Relief Program - IRP), որը որոշակի ծավալով փոխհատուցում էր տրամադրում զոհվածների ընտանիքներին: Ծրագիրը փոխհատուցումներ չէր տրամադրում այն տուժողներին, ինչպիսիք, օրինակ, գենդերային բռնության ենթարկվածներն էին: Շատերը մտավախություն ունեին, որ այս ծրագիրը կարող է միակ աջակցությունը լինել զոհերին, թեև այն, ի սկզբանե, նախատեսված էր որպես ժամանակավոր միջոց, և ոչ թե համապարփակ փոխհատուցման եղանակ: Կառավարությունն ընդունեց նաև **հոգեբանասոցիալական աջակցման ծրագիրը**, որն այդպես էլ կյանքի չկոչվեց: Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ քաղաքական տարբեր շրջանակներում սահմանափակ ընկալումներ գոյություն ունեին անցումային արդարադատության տարբեր մեխանիզմների վերաբերյալ, սակայն մեծամասնության կարծիքով, բացի նյութական փոխհատուցումներից, պետությունը պետք է պաշտոնապես

<sup>486</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Paper-Nepal-Ordinance-Dec-2012-ENG.pdf>:

<sup>487</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/news/rights-group-nepal-concerned-about-independence-transitional-justice-bodies>:

<sup>488</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Briefing-Nepal-Justice-Truth-Reparations-Workshop-Feb-2018.pdf>:

ներողություն խնդրի անցյալում կատարված մարդու իրավունքների խախտումների համար: Հիշատակի վայրերի կառուցումը նույնպես կարող էր մեկուսացված համայնքների համար հարգանքի նշան լինել:

#### 4. Այլ համակարգային բարեփոխումներ

##### Հասարակական ակտիվիզմ

Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը, համագործակցելով «Հավասար մատչելիություն» հասարակական կազմակերպության հետ, ներկայացրեց **NIkaas կանոնավոր հեռարձակվող ռադիո ծրագիրը**, որը հանրության շրջանում բարձրացնում էր անցումային արդարադատության մասին իրազեկվածությունը: Հաղորդման հյուրերն էին տարբեր քաղաքական գործիչներ, որոնք մանրամասնություններ են ներկայացնում բողոքարկման գործընթացի վերաբերյալ և ներկայացնում են անցումային արդարադատության հիմնական մարտահրավերները:

Քանի որ իրավական ակտերը պատշաճ կարգով անդրադարձ չէին կատարում զոհերի իրավունքների պաշտպանությանը, մի շարք զոհեր և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ որոշեցին **Զոհերի պաշտպանության ընդհանուր հարթակ ստեղծել**:<sup>489</sup>

Վերջերս «Ամենաթի Ինթերնեյշնլ»-ը, Իրավաբանների միջազգային հանձնաժողովը և «Թրայլ Ինթերնեյշնլ»-ը հանդես են եկել նախաձեռնությամբ, որով առաջարկվում են փոփոխություններ իրականացնել երկու հանձնաժողովների գործունեությունը կարգավորող օրենքներում: Ըստ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների՝ Նեպալի կառավարությունը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝

1. Օրենքում այնպիսի փոփոխություններ կատարել, որոնք կնպաստեն ժողովրդի վստահության բարձրացմանը հիշյալ հանձնաժողովների գործունեության նկատմամբ: Հանձնաժողովի անդամների ընտրության ընթացակարգը նույնպես պետք է փոփոխությունների ենթարկել:
2. Իրականացնել հանձնաժողովների լիազորություններն ընդլայնող օրենսդրական բարեփոխումներ, որպեսզի նրանք ավելի լայն լիազորություններ ունենան՝ ապացույցներ հավաքելու և պահպանելու տեսանկյունից:
3. Հանձնաժողովները պետք է քաղաքացիներին փոխհատուցումներ տրամադրեն ինչպես նրանց կրած նյութական, այնպես էլ ոչ նյութական վնասի համար: Բարոյահոգեբանական վնասները նույնպես պետք է ենթակա լինեն փոխհատուցման:

<sup>489</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Preliminary comments of Conflict Victims' Common Platform (CVCP) on proposed TJ Act to amend Commission of Inquiry on Enforced Disappearances, Truth and Reconciliation Act, published by the Conflict Victims' Common Platform (17 July 2018); See also, the CVCP's briefing paper "Transitional Justice in Nepal: Way Forward, 2018", էջ 5:

4. Փոխհատուցումներ տրամադրելու գործընթացն իրականացնելիս հաշվի առնել գոհերի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարծիքը:

### 3.2.2. Ինդոնեզիայի Հանրապետություն

Ինդոնեզիայում 1965-1998թթ. գեներալ Սուհարտոյի<sup>490</sup> գործունեության ժամանակ տիրել են բռնապետական կարգեր: Այս ժամանակահատվածում իրականացված ռեպրեսիաները զանգվածային բնույթ էին կրում, այդ թվում՝ Տիմոր-Լեստեում, Աչեում և Պապուայում:<sup>491</sup> Անմեղ մարդկանց իրավունքների զանգվածային խախտումներ են տեղի ունեցել Սուհարտոյի իշխանության ներքո, այդ թվում Ջակարտայում 1984թ-ի Թանջինգ փրիակյան կոտորածը,<sup>492</sup> որտեղ տասնյակ մահմեդական ցուցարարներ են սպանվել, 1991թ-ի Դելիի ջարդը, երբ դաժանաբար սպանվեց ավելի քան 200 թիմորցի (East Timor genocide):<sup>493</sup> Պատերազմական գործողություններով զուգորդված և քաղաքական մի շարք զարգացումներով պայմանավորված՝ 1998թ-ի մայիսին 32 տարի ավտորիտար կարգերով ղեկավարող նախագահ Սուհարտոն հրաժարական տվեց:<sup>494</sup> Հաջորդող կառավարություններն օրենսդրական հիմքեր ստեղծեցին և՛ ճշմարտությունների և հաշտեցման հանձնաժողովների համար, և՛ տուժողների ու վկաների պաշտպանության ապահովման, և՛ մարդու իրավունքների գործերով դատարանների համար, և՛ հատուկ գործերի համար, և՛ մի շարք հարցումներ իրականացնելու համար: Այսինքն, Ինդոնեզիան սկսեց պայքարել՝ բարձրաձայնելով նախկին ռեժիմի իշխանության շրջանում չարաշահումների հետևանքով ստեղծված ժառանգության համար<sup>495</sup>: Եվ հենց այս պայմաններում անցումային արդարադատության մեխանիզմների ներդրումը սկսվեց:

Պետք է փաստել, որ բարեփոխումների կամ բարեփոխումների նախնական պլանավորման ժամանակահատվածում՝ 1998-2000թթ., մի շարք կարևոր մեխանիզմներ լուրջ վտանգի էին ենթարկվել: Քրեական հետապնդումներ իրականացնելու փորձը ձախողվեց, իսկ 2006թ-ին սահմանադրական դատարանն իր հերթին չեղյալ համարեց 2004թ-ին ընդունված «Ճշմարտության և հաշտության հանձնաժողով ստեղծելու մասին» օրենքը (A law establishing Truth

<sup>490</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.britannica.com/biography/Suharto>, Սուհարտոն Ինդոնեզիայի ռազմական և քաղաքական ղեկավարն էր:

<sup>491</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/indonesia> :

<sup>492</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.theguardian.com/cities/2016/nov/22/glodok-jakarta-recover-indonesia-1998-riots-chinatown>:

<sup>493</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Quoted in Turner, էջ 207:

<sup>494</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/indonesia>:

<sup>495</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://ictj.org/sites/default/files/ICTJ-Kontras-Indonesia-Derailed-Summary-2011-English.pdf> էջ 3:

and Reconciliation Commission - TRC):<sup>496</sup> Դեռ ավելին, զոհերի և հանցագործությունների վերաբերյալ պաշտոնական հարցումներ էին սկսվել, որոնք նույնպես անարդյունք էին:

Սակայն սկզբնական շրջանում՝ 1998-2000թթ., մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենսդրության իմպլեմենտացում է սկսվում ազգային համակարգում, ինչպես նաև վավերացվում են միջազգային անվտանգության ուժերի օրենսդրությունը, միջազգային կոնվենցիաներ և այլ կարևորագույն փաստաթղթեր:

## 1. Քրեական արդարադատություն

Բարեփոխումների ժամանակաշրջանում 2000թ-ին 26-րդ օրենքի (Law 26 of 2000)<sup>497</sup> հիման վրա ազգային իրավական համակարգում ամրագրվեցին դրույթներ, որոնք ուղղված էին մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությանը և ցեղասպանության կանխարգելմանը: Ինչպես նաև, այս օրենքի հիման վրա պետք է ստեղծվեին **չորս մշտական տարածաշրջանային իրավապաշտպան դատարաններ**: Այնուամենայնիվ, միայն 13 տարի անց ստեղծվեց նմանատիպ դատարան (Մակասարի դատարան, High Court of Makassar in South Sulawesi<sup>498</sup>)՝ պարզելու Պապուայի գործը (*գործի մասին տեղեկությունը ներառված է Ինդոնեզիայի Հանրապետության «Ճշմարտության որոնում» բաժնում*):<sup>499</sup>

Բացի այդ, ստեղծվեցին **ad-hoc դատարաններ**՝ քննելու այն դեպքերը, որոնք տեղի էին ունեցել օրենքի ընդունումից առաջ: **Հատուկ դատարաններ** են ստեղծվել Արևելյան Թիմորում<sup>500</sup> և Թանջին Պրիոկում<sup>501</sup> տեղի ունեցած մասսայական ջարդերի դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի քննության համար:

2007-2011թթ. Ինդոնեզիայի անցումային գործընթացները բնութագրվում են որպես «քաղաքական վերադարձ» անվամբ, երբ նախկին անվտանգության ուժերի անդամների զանգվածային հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկվելու հարցը դարձավ առաջնային: Այնուամենայնիվ, գլխավոր դատախազությանը (The Attorney General's Office<sup>502</sup>) չի հաջողվել դատարանի քննությանը հանձնել մի քանի կարևորագույն գործեր: Հայտնի դեպքերից է *ակտիվիստ Մունիր Սայիդ Թալիբի (Munir Said Thalib<sup>503</sup>) սպանությունը* միջազգային չվերթի ժամանակ: Այս ամենը վկայում է քաղաքացիական անձանց դեմ

<sup>496</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/indonesia>, 4th and 5th paragraph:

<sup>497</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ [http://www.ilo.org/dyn/natlex/natlex4.detail?p\\_lang=en&p\\_isn=58745](http://www.ilo.org/dyn/natlex/natlex4.detail?p_lang=en&p_isn=58745):

<sup>498</sup>Տե՛ս <https://www.lexadin.nl/wlg/courts/nofr/oeur/lxctine.htm>, <http://www.pt-makassar.go.id/new/>:

<sup>499</sup>Դեպքի մասին ավելի մանրամասն ներկայացված է Ճշմարտության որոնում վերստառությամբ կետում:

<sup>500</sup> Տե՛ս Douglas Kammen, *Three Centuries of Conflict in East Timor*, Rutgers University Press:

<sup>501</sup>Տե՛ս <http://www.theindonesianarmy.com/?p=259>:

<sup>502</sup>Տե՛ս <https://asiafoundation.org/projects/attorney-generals-office-of-indonesia>:

<sup>503</sup>Տե՛ս Munir murder conviction quashed BBC News :

հանցագործությունների բացահայտման մեջ պետական կառույցների ներգրավման կամքի շարունակական բացակայության մասին: Տարբեր բնույթի դատական գործերով մեղադրվող 34 անձանցից միայն 18-ը դատապարտվեցին:<sup>504</sup> Այս արդյունքներից կարելի է եզրակացնել, որ, ընդհանուր առմամբ, մեղավորների դատապարտման գործընթացը հաջողություններ չի գրանցել:

**Մարդու իրավունքների ազգային հանձնաժողովը** (National Commission on Human Rights - կարճ՝ Komnas HAM<sup>505</sup>) ներկայացնում է Ինդոնեզիայի մարդու իրավունքների ազգային ինստիտուտը (National Human Rights Institute): Նրա հիմնական գործառնություններն են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը: Ստորև Գծապատկեր 3-ում ներկայացված են խոշոր հանցագործությունների (Tanjung Priok<sup>506</sup>, Abepura<sup>507</sup>, East Timor<sup>508</sup>, and Trisakti/Semanggi I and II<sup>509</sup>) վերաբերյալ մի քանի վիճակագրական տվյալներ:

### Գծապատկեր 3

---

<sup>504</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույցը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://ictj.org/sites/default/files/ICTJ-Kontras-Indonesia-Derailed-Summary-2011-English.pdf>;

<sup>505</sup> Տե՛ս <http://www.pacta.fi/national-human-rights-commission-indonesia-komnas>:


<sup>506</sup> Տե՛ս "The Jakarta Post 2009", Victims report to UN:

<sup>507</sup> Մանրամասն տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումներով՝ <https://www.insideindonesia.org/torture-in-papua>, [https://law.yale.edu/system/files/documents/pdf/Intellectual\\_Life/West\\_Papua\\_final\\_report.pdf](https://law.yale.edu/system/files/documents/pdf/Intellectual_Life/West_Papua_final_report.pdf):

<sup>508</sup> Տե՛ս [https://law.unimelb.edu.au/\\_\\_data/assets/pdf\\_file/0003/1680222/Saul.pdf](https://law.unimelb.edu.au/__data/assets/pdf_file/0003/1680222/Saul.pdf):

<sup>509</sup> Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ "Enam Tahun Tragedi Mei: Mahasiswa Trisakti Turun ke Jalan". Gatra. , Mohamed, Herry, Akmal Nassery Basral, and Andi Zulfikar Anwal. "Selamat Jalan Pahlawan Reformasi". Gatra. 23 May 1998. էջեր 36–37:

Մարդու իրավունքների ոտնահարման ծանր խախտումները մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մարմիններում: Ընդ որում կասկածյալների թվաքանակը նշված է Komnas HAM-ում<sup>498</sup>:



- Մարդու իրավունքների ազգային հանձնաժողովի հարցումներին համապատասխան
- Մեղադրվել են գլխավոր դատախազության կողմից (AGO)
- Դատապարտվել են դատարանում
- Դիմումի հիման վրա

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

Ինդոնեզիայում ռեֆորմների հետևում նվաճումներով, քաղաքացիները մեծ հույսեր էին կապում, ակնկալելով, որ մարդու իրավունքների խախտումների երկարատև անպատժելիությանը վերջ կդրվի: 1998թ-ին մայիսին տեղի ունեցած **բռնությունների հետաքննության համար ստեղծված թիմը** կատարեց հետազոտություններ և առաջարկեց սկսել մի շարք դատական գործեր անվտանգության ուժերի վերնախավի դեմ: Մեկ այլ հարցաքննություն իրականացնող խումբ՝ **«Բռնության վերաբերյալ հետաքննության անկախ հանձնաժողովը Աչեում»** (Independent Commission for the Investigation on Violence in Aceh) հաղորդեց, որ ռազմական գործողությունների ժամանակ իրականացված բռնության դրսևորումները համարվում են պետական բռնության տեսակներ:<sup>510</sup> Սա նշանակում է, որ բռնությունները հասարակության կողմից խստորեն ընկալվում են որպես պետության կողմից ձեռնարկված միջոցառումներ՝ ապահովելու բնական պաշարների շահագործումը Աչեի կենտրոնական կառավարության և ազգային ու տեղական էլիտաների շահերի օգտին:

Ճշմարտության որոնման նպատակով մեկ այլ ստեղծված հանձնաժողովի օրինակ է **երկրի նախագահի նախաձեռնությամբ հիմնված հանձնաժողովը**: 2001թ-ին Պապուանի բնիկ առաջնորդ Թեյսու Էլուայը<sup>511</sup> սպանվեց Բանակի հատուկ զորքերի հրամանատարության

<sup>510</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույրը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://ictj.org/sites/default/files/ICTJ-Kontras-Indonesia-Derailed-Summary-2011-English.pdf>, էջ 4:

<sup>511</sup> Տե՛ս Ipenburg, At. "The life and death of Theys Eluay". Inside Indonesia, էջ 90:

(Կոպասուս) (Special Forces Command: Kopassus) գործողություններից: Ինդոնեզիայի նախագահ Մեգավատին Սուկառնոպուտրիի<sup>512</sup> կողմից ստեղծվեց հարցաքննության խումբ, որը ղեկավարում էր ոստիկանության արդեն թոշակի անցած բանակի գլխավոր գնեերալը: Այս ամենի արդյունքում ռազմական տրիբունալը յոթ զինվորի ճանաչեց մեղավոր, բայց հիմքում դնելով անձանց նկատմամբ վատ, դաժան կամ անբարյացակամ, ոչ իրավաչափ վարքագիծը և ոտնձգություն իրականացնելը:<sup>513</sup>

Դեռ ավելին, 2002թ-ին նախագահ Մեգավատին ստեղծեց Մալուկուի կրոնական բռնության հետաքննությամբ զբաղվող խումբ, որն, ի վերջո, 5000 զոհերի մասին ուսումնասիրություն իրականացրեց: Զեկույցը, սակայն, երբեք չի հրապարակվել: Մինչդեռ այն կարող էր լույս սփռել անվտանգության ուժերի ունեցած դերի վրա, աջակցեր բռնության դեմ պայքարի գործում: Նույն կերպ 2006թ-ին տեղի ունեցած Թանահ Ռապուսու՝ Պոսո, Կենտրոնական Սուլավեզի (Tanah Runtuh, Poso, Central Sulawesi) միջադեպը հետաքննելու համար նշանակված զինվորական, ոստիկանության և պետական պաշտոնյաներից բաղկացած թիմը ոչ մի շոշափելի արդյունքի չի հասել:<sup>514</sup> Այս միջադեպը 1998թ-ից ի վեր տեղի ունեցած բռնության մի դրսևորում էր, որի հետևանքով հազարավոր մարդիկ մահացան:

Հարկ է նշել, որ օրենսդրական բարեփոխումների ուղով ևս ճշմարտության հանձնաժողովների և փաստահավաքման գործընթացներ են իրականացվել: 2004թ-ին ընդունվեց **«Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողով ստեղծելու մասին» օրենքը** (Truth and Reconciliation Commission (TRC)): Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները և զոհերի ներկայացուցիչները մտահոգություն էին հայտնել օրենքի մի կետի վերաբերյալ, որը թույլ է տվել համաներում կիրառել ծանր հանցագործությունների մեղավորների համար և պահանջել զոհերից՝ ներել մեղավորներին: Ի պատասխան վերոնշյալին՝ 2006թ-ին Ինդոնեզիայի սահմանադրական դատարանը որոշում կայացրեց ուժը կորցրած ճանաչել վիճահարույց օրենքը: Նույն որոշմամբ սահմանադրական դատարանը Պապուայում և Աչեում ստեղծեց տեղական ճշմարտության հանձնաժողովներ:

Ինդոնեզիայի կառավարությունը ներկայումս գտնվում է TRC նոր օրենքի մշակման գործընթացում:<sup>515</sup> Ինդոնեզիայում ստեղծվեցին նաև *Մարդու իրավունքների ազգային*

<sup>512</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.newworldencyclopedia.org/entry/Megawati\\_Sukarnoputri](http://www.newworldencyclopedia.org/entry/Megawati_Sukarnoputri):

<sup>513</sup> Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույր տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://ictj.org/sites/default/files/ICTJ-Kontras-Indonesia-Derailed-Summary-2011-English.pdf>, էջ 4:

<sup>514</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույր տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://ictj.org/sites/default/files/ICTJ-Kontras-Indonesia-Derailed-Summary-2011-English.pdf>, էջ 4:

<sup>515</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույր տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/indonesia>:

*հանձնաժողովը* (The National Human Rights Commission)<sup>516</sup>, *Կանանց նկատմամբ բռնության հարցերով հանձնաժողովը* (The Commission on Violence Against Women) և *այլ պետական մարմիններ*, որոնք տրամադրում էին տեխնիկական օժանդակություն՝ փաստաթղթերի, փոխհատուցման, ինչպես նաև իրականացնում էին այլ նախաձեռնություններ:

### 3. Փոխհատուցումներ

Փոխհատուցումների մասին խոսելիս պետք է նշել, որ հիմնական բարեփոխումների շրջանում ընդունված օրենքները իրավական հիմք են ծառայել փոխհատուցումների համար:

2006թ-ին ստեղծվել է **Վկաների և զոհերի պաշտպանության գործակալությունը** (The Witness and Victim Protection Agency: LPSK)<sup>517</sup>: Այնուամենայնիվ, կրկին հասարակական զանգվածների աջակցության և իրականացման ցանկության պակասի հետևանքով իրավական բարեփոխումների և մեխանիզմների ստեղծման և ներդրման գործընթացը կամ տեղի չի ունեցել կամ թերի է իրականացվել: Գործակալությունը ստացել է միայն սահմանափակ ռեսուրսներ՝ իր մանդատի արդյունավետ գործունեության իրականացման համար, իսկ մարդու իրավունքների կոպիտ խախտումների զոհերին պարբերաբար մերժում էին տրամադրել փոխհատուցում:<sup>518</sup> Այնուամենայնիվ, բացառություններ եղել են: Մասնավորապես, վերաինտեգրման գործակալությունը (a reintegration agency established as part of the Aceh peace process), որը ստեղծվել է որպես Աչեում խաղաղասիրական գործընթացի մի մաս, տրամադրում էր օգնություն համայնքներին և անհատներին, ովքեր հակամարտության ավարտից հետո բնակվում էին Աչեում: Գործակալությունը նաև տարածեց իսլամական փոխհատուցման մի ձև, որը հայտնի էր *diyat*<sup>519</sup> անվամբ: Այն Աչեում զոհերի զգալի թվով մարդկանց ուղղված միանվագ վճար էր: Սա բավականին կարևոր քայլ էր, սակայն կրկին խախտումների և իրավիճակը ամբողջովին չգնահատելու հետևանքով ծրագիրը ամբողջությամբ չիրականացավ:

Հարկ է նաև նշել, որ զոհերին թիրախավորելու փոխարեն, դրամական միջոցները, որոնք գոյանում էին ֆոնդերից, ընդհանուր առմամբ բաժանվում էին համայնքների միջև՝ որպես համայնքների զարգացման ներդրումներ:<sup>520</sup>

Այսինքն, կարող ենք փաստել, որ փոխհատուցումների տեսակներից կոմպենսացիան չի գործել, քանի որ զոհերի նկատմամբ մոտեցումը չի եղել անհատական, ուստի նաև չի

<sup>516</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.pacta.fi/national-human-rights-commission-indonesia-komnas->:

<sup>517</sup>Տե՛ս զեկույալ հղմամբ՝ <https://www.un.org/victimsofterrorism/en/node/929>:

<sup>518</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://ictj.org/sites/default/files/ICTJ-Kontras-Indonesia-Derailed-Summary-2011-English.pdf>, էջ 8:

<sup>519</sup>Տե՛ս Anver M. Emon, *Religious Pluralism and Islamic Law: Dhimmis and Others in the Empire of Law*, Oxford University Press, 34-235 էջեր:

<sup>520</sup>Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի զեկույը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://ictj.org/sites/default/files/ICTJ-Kontras-Indonesia-Derailed-Summary-2011-English.pdf>, էջ 8:



իրականացվել գույքի հատուցում, սեփականության ձևերի վերադարձ իրական սեփականատերերին: Դեռ ավելին, չեն գործել նաև սեփականության վերականգնողական ձևերը:

### **Խորհրդանշական միջոցների կիրառումը**

Մարդու իրավունքների թանգարանն (A Human Rights Museum) ստեղծվել է 2011թ-ին Աչեում, որտեղ ցուցադրված են զոհերի նկարները: Այն նաև գործում է որպես Մարդու իրավունքների դպրոց (A Human Rights School):<sup>521</sup>

Մեկ այլ հիշատակի թանգարան է ստեղծվել Մալանգում՝ իրավապաշտպան Օմահ Մունիրի տանը: Մունիրը մահացել է 2004թ-ի թոհյքի ժամանակ, պետությանը պատկանող «Գառուդա» ինքնաթիռում, թունավորման հետևանքով: Թանգարանը նպատակ չի հետապնդում Մունիրին փառաբանել, այլ ներկայացնում է նրա՝ 1990-ականներին մարդու իրավունքների համար պայքարողի կերպարը:

Վերջին տարիներին ավելի շատ է պիզրաֆներ և փոքր հուշարձաններ են ստեղծվում զոհերի հիշատակին:<sup>522</sup> Խորհրդանշական միջոցների շարքին է դասվում Ջոշուա Օփենհեյմերի և անանուն իսլամականների կողմից նկարահանված միջազգային ֆիլմը՝ The Killing Act-ը,<sup>523</sup> որը վերահաստատում է 1965թ-ին սպանությունների դեպքերը և ներկայացնում իրական մեղավորներին:

2013-2014թթ. «Արդարություն և ճշմարտություն» կոալիցիան, որը բաղկացած է 47 կազմակերպությունից, «Ճշմարտության տարի» քարոզարշավն իրականացրեց: Նրանք կազմակերպեցին հասարակական լսումներ հինգ մարզում և Ջակարտայում՝ ազգային մակարդակով: Այս լսումների արդյունքները հրապարակվել են 2014թ-ին հոկտեմբերին հրապարակված զեկույցում:

## **4. Համակարգային բարեփոխումներ**

### **Վեթիինգ**

Անցումային արդարադատության մեխանիզմներից վեթիինգը ընդհանուր առմամբ չի գործել: Դա պայմանավորված էր նրանով, որ անցումային արդարադատության ներդրման նախնական փուլում գրանցված առաջընթացը հետընթաց ապրեց: Ինդոնեզիան միջոցներ պետք է ձեռնարկի գործադիր և օրենսդիր մարմինների, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական

<sup>521</sup> Տե՛ս <https://www.impunitywatch.org/docs/IndonesiaCountryExploration.pdf>, էջ 7:

<sup>522</sup> Տե՛ս <https://www.impunitywatch.org/docs/IndonesiaCountryExploration.pdf>, էջ 7:

<sup>523</sup> Տե՛ս Catherine "The Act of Killing – review". The Guardian:

վերահսկողության ապահովման ուղղությամբ: Վեթիինգի բացակայությունը նշանակում է, որ անվտանգության աշխատակիցները կապված են լուրջ հանցագործությունների հետ՝ ներառյալ այն անձնակազմը, որը մեղադրվում էր ՄԱԿ-ի աջակցությամբ Արևելյան Թիմորում ստեղծված ad-hoc դատարանի<sup>524</sup> կողմից: Նույնիսկ Ինդոնեզիայի ռազմական դատարանների կողմից որոշ դատապարտվածներ շարունակում էին ծառայել՝ շատ դեպքերում ստանալով աջակցություն և հասնելով մասնագիտական աճի:

Հարկ է նշել, որ վերստուգման և վեթիինգային գործունեության բացակայությունը չի կարող առանձնացվել հաշվետվողականության սկզբունքից: Այն կազմում է քրեական արդարադատության մաս:Չէ որ ակնհայտ է, որ վեթիինգային հանձնաժողովներ ստեղծելու արդյունքում սկսվում են դատական գործընթացները, բացահայտվում են մեղավորները, իսկ քրեական արդարադատությունում հաշվետվողականությունը ապահովում է հասարակության հետևողականությունը՝ դիտարկելու մեղավորներին վերջնական պատասխանատվության ենթարկելու և քաղաքական պաշտոններին կրկին վերադարձը կանխելու գործընթացը:

### **Հասարակական ակտիվիզմ**

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) և գոհերի շահերը ներկայացնող կազմակերպությունները նույնպես իրականացրել են որոշակի նախաձեռնություններ: Սակայն, ընդհանուր առմամբ, կոմունիստական և աթեիստական սպառնալիքները հասարակությունը քանդում են: Վախի մթնոլորտում արդյունավետ քարոզչության շատ հաճախ չի իրականացվել: :

Քաղաքացիական ակտիվության դրսևորում է եղել, երբ քաղաքացիական հասարակության խմբերը, վրդովված դատարանների և TRC-ի մարդու իրավունքների ոլորտում առաջընթացի բացակայությունից, պահանջեցին նախագահ Սուսիլո Բամբանգ Յուդոյոնոյին<sup>525</sup> ներողություն խնդրել անցյալ ռեժիմի ընթացքում մարդու իրավունքների խախտումների համար: Արդյունքում 2012թ-ի ամռանը Ինդոնեզիայի կառավարությունը հայտնեց, որ խոստանում է պաշտոնապես ներողություն խնդրել՝ 1965-1966թթ. սպանությունների և 1998թ-ի մայիսին տեղի ունեցած անկարգությունների համար:<sup>526</sup> Սակայն այդ խոստումներն այդպես էլ չիրագործվեցին և պաշտոնական ներողությունների հայցում տեղի չունեցավ:

Այսպիսով, անցումային արդարադատությունը, մի կողմից կարծես հաջող կերպով անցել է ծանրակշիռ ավտորիտար պետությունից ժողովրդավարական ռեժիմի: Մյուս կողմից,

<sup>524</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.globalpolicy.org/international-justice/international-criminal-tribunals-and-special-courts/adhoc-court-for-east-timor.html>:

<sup>525</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.britannica.com/biography/Susilo-Bambang-Yudhoyono> :

<sup>526</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://transitions.foreignpolicy.com/posts/2012/05/07/indonesia\\_s\\_president\\_prepar](http://transitions.foreignpolicy.com/posts/2012/05/07/indonesia_s_president_prepar) :

պետական և ներկա վարչակարգը Ինդոնեզիայում անհերքելիորեն ուժեղ կապեր ունի անցյալի հետ, ուստի ակտիվորեն ձգտում է կանխել այդ անցյալը հաշվի առնելու փաստը:

### 3.2.3. Իրաքի Հանրապետություն

Թեև Իրաքում անհաջող են եղել անցումային արդարադատության հիմնական հայեցակարգային ուղղվածությունների ներդրումը, այնուամենայնիվ, դրանք Իրաքում կարևոր դեր են ունեցել: Նախ, դրանք վերաբերում են այդ կարգերից թողնված ժառանգության մասին բարձրաձայնելուն, միառժամանակ գործող ամբողջատիրական ռեժիմը վերացնելուն: Դեռ ավելին, անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիությունը կարևոր է եղել պետության ներքին կայունության և վերականգնման համար:<sup>527</sup> Սակայն ազգային հաշտեցմանն ուղղված մեխանիզմների կիրառումը կարող էր նպաստել Իրաքում հասարակական համերաշխության հաստատմանը՝ հատկապես սունիների, շիաների և քրդական բնակչության մասը կազմող այլ փոքրամասնությունների միջև:

Այսօր Իրաքում դեռևս շարունակվում են բռնությունները, քաղաքական անկայունությունը, չնայած, որ ներկայիս իշխանությունները որոշակի քայլեր ձեռնարկում են մարդու իրավունքների խախտումների կանխարգելման ուղղությամբ: Նախկինում հիմնական պայքարը տարվում էր նախկին Բահաթի կուսակցության դեմ (Ba'ath Party):<sup>528</sup> Բահաթի կուսակցության դեմ շարժումը իրականացվում էր Իրաքի Կոալիցիոն ժամանակավոր իշխանության (Coalition Provisional Authority - CPA) կողմից՝ Իրաքի հետագա կառավարությունների գործունեության և Իրաքի քաղաքական կյանքի վրա դրա ազդեցությունը վերացնելու համար:<sup>529</sup> Բահաթի կուսակցությունը սկզբում բաղկացած էր մեծամասամբ շիա մուսուլմաններից, քանի որ կուսակցության հիմնադիրներից Ֆաուդ ալ-Ռիկաբին<sup>530</sup> հիմնականում հավաքել էր իր ընկերներին ու ընտանիքին, բայց հետագայում կուսակցությունում հիմնականում իշխող դարձան սունիները: Սրան հակառակ՝ շիաների մեծ մասը միացավ Իրաքի կոմունիստական կուսակցությանը (Iraqi Communist Party):<sup>531</sup> Այնուհետև, Իրաքի Բահաթ կուսակցության ղեկավար և երկրի նախագահ դարձավ Սադամ Հուսեյնը

<sup>527</sup>Տե՛ս հետևյալ զեկույցը՝ JAMES A. BAKER, III & LEE H. HAMILTON, THE IRAQ STUDY GROUP REPORT 19 (“The security situation cannot improve unless leaders act in support of national reconciliation”, 2006թ.):

<sup>528</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ Ghareeb & Dougherty, “*Historical Dictionary of Iraq*” The Scarecrow Press, Ltd., 2004թ., էջ 194:

<sup>529</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ [http://www.iraqcoalition.org/regulations/20030516\\_CPAORD\\_1\\_De-Ba\\_athification\\_of\\_Iraqi\\_Society\\_.pdf](http://www.iraqcoalition.org/regulations/20030516_CPAORD_1_De-Ba_athification_of_Iraqi_Society_.pdf):

<sup>530</sup>Ֆուադ ալ Ռիկաբին 1948 թ. հիմնել է Բահաթ կուսակցության Իրաքի տարածաշրջանային մասնաճյուղը (Sheffer & Ma'oz 2002թ., էջ 174.):

<sup>531</sup> Dawisha 2005թ., էջ 174:

(Saddam Hussein Abd al-Majid al-Tikriti):<sup>532</sup> Նրա կուսակցությունը 35 տարի իշխում էր երկրում, որի ընթացքում Իրաքը բռնազավթված պետություն էր: Այն դարձել էր խոշտանգումների, արտադատական եղանակով մահապատիժների, կամայական խափանման միջոցների կիրառման, բռնության և հարկադրանքի պետություն: Մոտ 300,000 իրաքցի անհետացավ և այս անհետացումներն արդեն սովորական երևույթ էին դարձել երկրում:<sup>533</sup> Հուսեյնի իշխանությունը բնութագրվում էր որպես Իրաքի էթնիկ և կրոնական համայնքների դեմ բռնություններ իրականացնող: Այն ընդգրկում էր Իրաքի մաս կազմող Քրդստանի լեռներում գտնվող Անֆալ (Anfal) ցեղասպանական քարոզչությունը:<sup>534</sup> Այս քարոզարշավը ուղղված էր նաև Շաբաքսի և Եզիդիսի ազգերի, ասորիների, թուրքմենների, մանդենների դեմ, և հանցագործությունները տեղի էին ունենում այդ էթնիկ խմբերով բնակեցված բազմաթիվ գյուղերում: Human Rights Watch կազմակերպությունը գնահատում է, որ 50,000-100,000 մարդ սպանվել է այս գործողությունների հետևանքով:<sup>535</sup>

Ներքին բախումները Իրաքի ազգային փոքրամասնությունների միջև անընդհատ էր: Այսպես, հարավում շիաների դեմ ճնշումները ներառում էին մոտավորապես 500,000 մարդկանց դուրս բերում դեպի Իրան, դեռ ավելին՝ 50,000-70,000 քաղաքացիների ազատագրվումը կամ անհետացումը, 1991թ-ի ապստամբության ժամանակ կոպիտ ճնշումները, որի ընթացքում անհայտ անձինք ձերբակալվեցին, անհետացան կամ վերջնականապես դատապարտվեցին, այս ամենը ավելի էր սրում բախումների ընթացքը:<sup>536</sup> Ռեժիմի դաժանությունը, կրկնվող հակամարտության արդյունքում թողած ժառանգությունը և շարունակվող բռնությունները, չարաշահումները դարձնում են անցումային արդարադատությունը ոչ կիրառելի:

Իրաքում անցումային արդարադատության ներդրմանն ուղղված բոլոր նախաձեռնությունները ձախողվել են՝ վատ պլանավորման և իրականացման, լեգիտիմության մարտահրավերների, հանրային հաղորդակցության բացակայության, հակասական նպատակների ու ներքին բախումների հետևանքով:

## 1. Քրեական արդարադատություն

Սադամ Հուսեյնի և նրա վարչակարգի ավագ ու բարձրաստիճան անդամների դատավարությունները կարող էր երկրում արդարության վերականգնման հնարավորություն ընձեռել, սակայն այդ գործընթացը, ի վերջո, խափանվեց՝ լուրջ թերությունների պատճառով:

<sup>532</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.britannica.com/biography/Saddam-Hussein>:

<sup>533</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/iraq>:

<sup>534</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ The Anfal Campaign Against the Kurds. A Middle East Watch Report: Human Rights Watch 1993թ.:

<sup>535</sup>Տե՛ս հետևյալ աշխատությունը՝ "Iraqi Anfal, Human Rights Watch, 1993". Hrw.org. Retrieved 20 September 2013թ.:

<sup>536</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/iraq>:

Վարչակարգից տուժածների հետ ոչ մի պաշտոնական խորհրդակցություն չի եղել: Ինչպես նաև գործընթացը չի համապատասխանել արդար դատավարությունների վերաբերյալ միջազգային չափանիշներին:<sup>537</sup>

## 2. Համակարգային բարեփոխումներ

### Վեթիինգ

Բահաթ կուսակցության իշխանության ազդեցությունից դուրս գալու փորձերը ձախողվեցին: Բահաթ կուսակցության անդամներից անհայտ թվով մարդիկ հեռացվել են պետական համակարգից և նրանց արգելվել է պետական մարմիններում պաշտոններ զբաղեցնելը: Սակայն, նշվածը գրեթե չի անդրադառնում այն դեպքերին, որի ժամանակ վարչական, քաղաքական և անվտանգության ծանր հետևանքներ ունեցող գործընթացներ են տեղի ունեցել: Ապաբահաթացման (de-Ba’lithification) գործընթացում Բահաթ կուսակցության անհայտ անդամներ հեռացվել են պետական աշխատանքից և զրկվել են հանրային իշխանությունների ոլորտում հետագայում աշխատելու հնարավորությունից՝ ուշադրություն չդարձնելով գործընթացի պատշաճ կազմակերպման, վարչական, քաղաքական և անվտանգության հետ կապված ծանր հետևանքներին: Որպես արդյունք, մի շարք պետական կառույցների գործունեություն գնահատվեց անարդյունավետ: Գործընթացը շատ իրաքցիների կողմից ընկալվում էր բացառապես քաղաքական ուղղվածություն ունեցող փոփոխություններ:<sup>538</sup> Ապաբահաթացման (de-Ba’lithification) գործընթացը իրականացնում է Իրաքի Ապաբահաթացման Խորհուրդը (Baathification Council), որը հիմնադրվել է 2003թ-ի մայիսի 25-ին՝ Ամերիկյան վերահսկող կարգի կողմից:<sup>539</sup>

Հարկ է նաև նշել, որ վեթիինգային ոչ մի հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ իրավական ակտ չի ընդունվել և արդյունքում վերը նշված խորհրդի ստեղծումը ոչ մի կիրառական նշանակություն չունեցավ:<sup>540</sup>

### 3.2.4. Կամրոջայի Թագավորություն

<sup>537</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/iraq>, No Transitional Justice, paragraph 2. :

<sup>538</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.ictj.org/our-work/regions-and-countries/iraq>:

<sup>539</sup>Տե՛ս CPA Order No. 5: Establishment of the Iraqi De-Ba’athification Council (May 25, 2003), հետևյալ հղմամբ՝ <http://library.rumsfeld.com/doclib/sp/2848/2003-1209%20from%20Coalition%20Provisional%20Authority%20re%20De-Baathification-%20an%20Iraqi%20Process%20with%20Attachments.pdf> :

<sup>540</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.csis.org/analysis/new-details-us-strategy-iraq-and-syria>:

1975-1979 թվականներին բռնապետ Պոլ Պոտի ռեժիմի կողմից Կամբոջայում գեղասպանություն իրականացվեց: Ըստ Պոլ Պոտի գաղափարի՝ «պայծառ ապագայի» համար պետք է ընդամենը մեկ միլիոն «նվիրված մարդիկ», մնացածը պետք է ոչնչացվեն: Հենց այս գաղափարախոսության հետևանքով է, որ ավելի քան վեց միլիոն մարդ ենթարկվել է դաժան տանջանքների և ֆիզիկական ոչնչացման: Տասնյակ հազարավոր մարդիկ ուղարկվել են Թոուլ Սլենգ բանտ (այժմյան Ցեղասպանության թանգարան): Միայն տասներկու հոգու է հայտնի, թե ի՞նչ է կատարվել այնտեղ, քանի որ նրանք այն անձիք էին, ովքեր անցել էին այդ կոտորածների միջով և ողջ մնացել միայն երջանիկ գուգադիպությամբ (ժամանակ չի եղել նրանց գնդակահարելու համար):

568,663 մարդ համարվում է անհետ կորած կամ մահացած, շատերն էլ թաղված են գանգվածային գերեզմաններում, այդ թվում՝ Կամփոնգ Չանգ (Kampong Chnang) օդանավակայանի հարևանությամբ Սիեմ (Siem) տարածքում և Դենգրեկում (Dangrek): Այստեղ 3,374,768 մարդ սպանվել է սվինների հարվածներից, պայթյուններից, այրվելուց և այլ վայրագություններից:

Պոլ Պոտի վարչակարգի հետևանքով 141,848 անձ հաշմանդամություն է ձեռք բերել, ավելի քան 200,000-ը որբացել են, շատերն այրիացել ու կորցրել իրենց ընտանիքներին:

Պոլ Պոտի վարչակարգի հետևանքով ավերվել է 634,522 շինություն, այդ թվում՝ 5,857 դպրոց և 796 հիվանդանոց, առաջին բժշկական օգնության կենտրոններ և լաբորատորիաներ, 1,968 եկեղեցիներ և 108 մզկիթներ կա՛մ ոչնչացվել են, կա՛մ փոխակերպվել պահեստների և բանտերի: Ըստ տարբեր աղբյուրների՝ սպանվել է 1-3 միլիոն մարդ:

## 1. Քրեական արդարադատություն

2001 թվականին Կամբոջայի Ազգային ժողովն օրենքով ստեղծեց **արտակարգ դատարաններ**՝ նպատակ ունենալով քննելու 1975-1979 թվականների բռնապետական ռեժիմի ժամանակ սովից, խոշտանգումներից, հարկադիր աշխատանքի գոհ գնացած 1,7 միլիոն մարդկանց մահվան դեպքերով հարուցված քրեական գործերը:<sup>541</sup> Նշյալ դատարանները կոչվեցին **Կամբոջայի դատարանի արտակարգ պալատներ**:<sup>542</sup> Այս պալատների գործունեությունը նպատակ էր հետապնդում հաստատելու արդարադատություն, բացահայտելու պատմական ճշմարտությունը, ինչպես նաև հաստատելու հանրային համերաշխություն:<sup>543</sup>

<sup>541</sup>Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.eccc.gov.kh/en/about-eccc/introduction>:

<sup>542</sup>Տե՛ս Dicklitch, Susan (9 January 2010). "Justice, Human Rights, and Reconciliation in Postconflict Cambodia". Springer Science+Business Media B.V, էջ 526:

<sup>543</sup>Բույն տեղում:

Պալատների նպատակն էր ապագա սերունդներին հաղորդակից դարձնել անցյալում տեղի ունեցած վայրագություններին և բացառել նմանատիպ հանցագործությունների ապագայում կրկնվելու հավանականությունը: Դատարանն իր գործունեությունն իրականացնելիս ակտիվ կերպով համագործակցում էր ՄԱԿ-ի հետ և ստանում վերջինիս աջակցությունը:<sup>544</sup>

Կամբոջայի մայրաքաղաք Պնոմպենում դատարանը կարմիր կիներների նախկին երկու ղեկավարների դատապարտել է ցմահ ազատազրկման՝ մարդկության դեմ գործած ցեղասպանության համար: Կարմիր կիներների վարչակարգում Պոլ Պոտից հետո երկրորդ դեմքը համարվող Նուոն Չեան և երկրի նախկին պաշտոնական ղեկավար Կիսեու Սամպխանը մեղավոր են ճանաչվել մարդկության դեմ գործած հանցանքների համար և, ըստ կամբոջական օրենքների, դատապարտվել ցմահ կալանքի: Սա կարմիր կիներների գործով առաջին դատավճիռն է: Շարժման կողմից կատարած հանցագործությունների հետաքննությամբ զբաղվում է ՄԱԿ-ի աջակցությամբ 2006թ-ին հիմնադրված՝ **Կամբոջայի Արտակարգ տրիբունալը**: Քանի որ կարմիր կիներների առաջնորդ Պոլ Պոտը մահացել է 1998թ-ին, իսկ մյուս առաջնորդը՝ Իենգ Սարին՝ 2013թ-ին, ապա դատարանի առջև կանգնեցին նրանց ողջ մնացած համախոհները:

## 2. Ճշմարտության որոնման գործընթաց

1994 թվականին ՄԱԿ-ը դիրքորոշում հայտնեց, որ Կարմիր կիներներին շատ դժվար կլինի պատասխանատվության ենթարկել:<sup>545</sup> Իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց այդ դիրքորոշման իրավաչափությունը: Կամբոջայի նորընտիր իշխանությունները չէին խոսում անցյալում տեղի ունեցած իրադարձությունների մասին մեկ պարզ պատճառով. նրանք ցանկանում էին մոռանալ անցյալը:<sup>546</sup>

Հատկանշական է, որ Կամբոջայի իշխանությունները պատրաստակամ չէին բացահայտել պատմական ճշմարտությունը: Այս ամենի հետևանքով հասարակությունը շարունակում է պառակտված մնալ: Զոհերի հարազատներին դեռ հետաքրքրում է անցյալում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ ճշմարտությունը:<sup>547</sup>

<sup>544</sup>Տե՛ս <https://www.theguardian.com/world/2014/jun/24/truth-justice-reconciliation-civil-war-conflict>:

<sup>545</sup>Տե՛ս Hayner, Priscilla (2011). *Unspeakable Truths: Transitional Justice and the Challenges of Truth Commissions* (2nd ed.). New York: Routledge, էջ 205:

<sup>546</sup>Տե՛ս Hayner, Priscilla (2011). *Unspeakable Truths: Transitional Justice and the Challenges of Truth Commissions* (2nd ed.). New York: Routledge., էջ 205:

<sup>547</sup>Տե՛ս Doung, Virorth; Ear, Sophal (2009). "Transitional Justice Dilemma: The Case of Cambodia". *The Peace and Conflict Review*:

Չնայած արտակարգ պալատների առկայությանը՝ Կամբոջայում այդպես էլ չստեղծվեց ճշմարտության բացահայտման հանձնաժողով, որը կբացահայտեր բռնատիրական ռեժիմի իրականացրած վայրագությունները և երևան կհաներ պատմական ճշմարտությունը:

### 3. Փոխհատուցումներ

Կամբոջայում փոխհատուցումները հիմնականում արտակարգ պալատների կողմից էին հատկացվում, և սահմանափակված էին «խմբային և բարոյական փոխհատուցումներ» տրամադրելով, որոնցով ճանաչվում էին պետության կողմից անձանց վնասներ պատճառելու վերաբերյալ փաստերը:<sup>548</sup>

Քաղաքացիները հիմնականում խմբակային հայցեր էին ներկայացնում պալատներ և, որպես կանոն, դատարանում նրանց շահերը նույն իրավաբաններն էին պաշտպանում: Դատարանը ծայրահեղ դեպքերում էր ի վիճակի կողմերին համարժեք փոխհատուցումներ տրամադրել:

Այնուամենայնիվ, անգամ սիմվոլիկ փոխհատուցումներ տրամադրելը դրական ընկալվեց միջազգային հանրության կողմից, քանի որ պատմության մեջ առաջին անգամ, տուժողները միջազգային դատավարությանը ներգրավվեցին որպես քաղաքացիական հայցվորներ:<sup>549</sup>

Կամբոջայում չեն օգտագործվել անցումային արդարադատության իրականացման այնպիսի կարևորագույն մեխանիզմներ, ինչպիսիք են՝ վերթինգը և լյուստրացիան:

---

<sup>548</sup> Տե՛ս <https://www.opensocietyfoundations.org/sites/default/files/PositionPaper-ECCC-reparations>:

<sup>549</sup> Տե՛ս <https://news.un.org/en/story/2011/10/392092-un-backed-tribunal-cambodia-hears-reparations-wish-list-khmer-rouge-victims>



## **ՀԱՎԵԼՎԱԾ 2. «ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ» ԽՈՐԱԳՐՈՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում Իրավաբանների հայկական ասոցիացիան՝ ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ, 2018 թվականի նոյեմբերի 28-ին կազմակերպել էր Քաղաքացիական հասարակություն-Կառավարություն համաժողով՝ **«Անցումային արդարադատության մեխանիզմների ներդրման հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո»** խորագրով:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ կառավարության և պետական մարմինների ներկայացուցիչներ, Հայաստանում օտարերկրյա պետությունների դեսպաններ, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնատար անձինք, փաստաբաններ, փորձագետներ և լրագրողներ:

Համաժողովի օրակարգային հարցերն էին անցումային արդարադատության միջազգային փորձի ներկայացումը, դրա առանձին մեխանիզմների վերաբերյալ թեմատիկ քննարկումների անցկացումը, ինչպես նաև ՀՀ-ում այդ մեխանիզմների ներդրմանն ուղղված առաջարկությունների քննարկումը: Համաժողովի ընթացքում քննարկվեցին նաև «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից հեղինակած «Անցումային արդարադատության մեխանիզմների ներդրման հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո» զեկույցում ներկայացված առաջարկությունները, որոնք լրամշակվել են համաժողովի նարկումների արդյունքում և տեղ են գտել սույն զեկույցում:

Հրավիրված բանախոս-փորձագետները համաժողովի թեմատիկ քննարկումների ընթացքում մանրամասն ներկայացրեցին անցումային արդարադատության առանձին մեխանիզմները, դրանց կիրառման դրական և բացասական միջազգային փորձը և ամենակարևորը՝ ներկայացրեցին ՀՀ-ում անցումային արդարադատության իրականացման հնարավորությունները և հիմնական մեխանիզմների ներդրմանն ուղղված առաջարկությունները:

Ստորև ամփոփ ներկայացվում է հրավիրված փորձագետների կողմից ներկայացված առաջարկություններն՝ ըստ թեմատիկ քննարկումների.

- **Քրեական արդարադատություն**

**Փորձագետներ՝ Վահե Գրիգորյան, Աննա Վարդապետյան, Նիկոլայ Բաղդասարյան, Նարեկ Ենոքյան**

**Վարդ՝ Կարեն Զադոյան**

1) Անցումային արդարադատությունը առարկայանում է ներպետական կոնստեքստում և բխում է տվյալ երկրի ներպետական միջավայրից: Այն երբեք չպետք է հատի սահմանադրականության եզրագիծը և չպետք է դուրս գա տվյալ երկրի ստանձնած միջազգային պարտավորություններից: Անցումային արդարադատությունը Սահմանադրությամբ սահմանված նպատակներին հասնելու միջոց է, որին հնարավոր չէ հասնել այլ կոնվենցիոնալ համակարգերի միջոցով, և դրա կիրառման շրջանակները պետք է ուրվագծվեն Սահմանադրության ընձեռած հնարավորությունների և երկրի կոնվենցիոն պարտավորությունների սահմաններում:

2) ՀՀ-ում քրեական արդարադատությունը պետք է իրականացվի բացառապես գործող արդարադատության համակարգի միջոցով և անցումային արդարադատության կիրառվող մեխանիզմները պետք է ոչ թե այլընտրանք հանդիսանան գործող համակարգին, այլև փոխլրացնող և աջակցող ֆունկցիա ունենան: Հարկ է նշել, որ սույն դիրքորոշման վերաբերյալ մասնակիցները ունենին միմյանցից տարբերվող մոտեցումներ: Մասնավորապես, անցումային արդարադատության գաղափարը կայանում է նրանում, որ ներպետական իրավապահ, դատական և այլ պետական մարմինները ի վիճակի չեն ամբողջ ծավալով իրականացնել իրանց վրա դրված լիազորությունները: Ի լրումն, անցումային արդարադատության իրականացումը ենթադրում է նոր համակարգերի ներդրում՝ նոր արժեհամակարգ կրող հասարակության մասնակցությամբ՝ երաշխավորելով օրենքի գերակայություն, մարդու իրավունքների պաշտպանություն և կոռուպցիայից զերծ հասարակություն: Հետևապես, անցումային արդարադատությունը չի կարող միայն փոխլրացնող և աջակցող ֆունկցիա ունենալ:

3) Անցումային արդարադատության շրջանակներում քննել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված որոշակի շրջանակի հանցագործությունները: Մասնավորապես, սահմանադրական կարգի դեմ ուղղված հանցագործությունները (օրինակ՝ կոռուպցիոն հանցագործությունները, Մարտի 1-ի գործը, կյանքի իրավունքի, խոշտանգումներից զերծ լինելու իրավունքի նկատմամբ ոտնձգությունների գործերը, ինչպես նաև սեփականության դեմ ուղղված հանցագործությունները):

4) Սահմանել (ավարտված, կասեցված) քրեական գործերի վերանայման իրավական հիմքերը, ճշգրտել այն իրավասու անձանց շրջանակը, ովքեր վերանայման արդյունքում դատարանում պետք է այդ քրեական գործերը ներկայացնեն:

5) Անցումային արդարադատության կիրառման ժամանակ անհրաժեշտ է նախապես պատկերացում ունենալ այն անձանց հնարավոր շրջանակի մասին, որոնց նկատմամբ քրեական հետապնդում պետք է իրականացվի:

6) Անցումային արդարադատության մեխանիզմների ներդրման պարագայում առաջնային դիտարկել ՄԻԵԴ-ի կայացրած վճիռների կատարման թելադրանքով քրեական գործերի վերաբացման անհրաժեշտությունը:

7) Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության ժամանակ անհրաժեշտ է ՄԻԵԴ խորհրդատվություններից ակտիվորեն օգտվելու պրակտիկա ձևավորել:

8) Անհրաժեշտության դեպքում քննարկել մասնագիտացված դատարանների ստեղծման նպատակահարմարության հարցը (օրինակ՝ Հայաստանյան մարդու իրավունքների դատարանի ստեղծում, որի իրավագործությունը պետք է լինի օրենքով նախատեսված սահմանափակ թվով գործերի քննությունը, սակայն այնպիսի գործերի, որոնք կոնվենցիոնալ արդարադատության և իրավապահ համակարգի մարմիններն ի վիճակի չեն լուծում տալ): Հարկ է նշել, որ սույն դիրքորոշման վերաբերյալ համաժողովի մասնակիցները ունեին նաև միմյանցից տարբերվող մոտեցումներ:

9) Քննարկել արդարադատությանը սպասարկող մարմիններում առանձին մասնագիտացված ստորաբաժանումների ստեղծման անհրաժեշտությունը, որոնք կօժանդակեն քրեական արդարադատության իրականացմանը (օրինակ՝ կասեցված քրեական գործերով օպերատիվ հետախուզական գործողությունների իրականացման առանձնացված ստորաբաժանում):

10) Կապիտալի ամնիստիա (մեղքի ընդունման գործարք) կիրառել և ներպետական մակարդակում գործարք առաջարկել ապօրինի հարստացածներին՝ առաջնորդվելով և՛ իրավական, և՛ քաղաքական գործընթացներով:

#### - **Ճշմարտության որոնման գործընթաց**

#### **Փորձագետներ՝ Վահե Գրիգորյան, Զարուհի Մեջլումյան, Լուսինե Նալբանդյան**

#### **Վարդո՝ Սյուզաննա Սողոմոնյան**

1) Ճշմարտության որոնումը որևէ մարմնի կողմից իրականացնելու դեպքում այն փաստագրման գործընթացից այն կողմ չպետք է անցնի: Այդ մարմինը պետք է միայն իրականությունը վեր հանող և արձանագրող գործառույթներ ունենա:

2) Ճշմարտության հանձնաժողովի կեսից ավելին պետք է լինեն իշխանության թևերը ներկայացնող ներկայացուցիչներ, մյուս մասը՝ քաղաքացիական հասարակության

ներկայացուցիչներ՝ նախապես սահմանելով հանձնաժողովի անդամների ընտրության հստակ մեխանիզմներ և չափորոշիչներ:

3) Հանձնաժողովի աշխատանքներում պետք է ներգրավվեն փորձագետներ, օտարերկրյա դատավորներ և հետաքննող լրագրողներ:

4) Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մարմին, որը կգրադվի ավարտված, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայմամբ, նպատակ ունենալով նաև ուսումնասիրել դատական սխալների պրակտիկան:

**- Փոխհատուցումներ**

**Փորձագետներ՝ Գևորգ Դանիելյան, Կարապետ Բաղայան, Արա Խզմայան, Մարիամ Զադոյան**

**Վարող՝ Քարլ Ուլբրիխտ**

1) Ստեղծել փոխհատուցումների համար անհրաժեշտ օրենսդրական հիմքեր և իրականացնել համապատասխան կազմակերպչական միջոցառումներ:

2) Փոխհատուցումների տրամադրումը դիտարկել որպես համալիր իրականացվող միջոցառումներ և այդ նպատակով հատկացնել բավարար դրամական միջոցներ:

**- Համակարգային բարեփոխումներ**

**Փորձագետներ՝ Կարեն Զադոյան, Արտյոմ Գեղամյան, Արմեն Մազմանյան, Արման Զրվանդյան, Արտյոմ Մեսրոպյան**

**Վարող՝ Մարատ Ատովյան**

1) Լյուստրացիոն գործիքների կիրառությունը ներկայումս համարվում է ռիսկային, քանի որ դրա կիրառության ժամանակ գործ ենք ունենում «կոլեկտիվ մեղքի» և «կոլեկտիվ պատասխանատվության» հետ, և բուն գործընթացն ուղեկցվում է անհատական իրավունքների զանգվածային խախտումներով: Այդ առումով վեթինգի գործիքների կիրառությունը պակաս ռիսկային է համարվում, քանի որ այդ գործընթացի ժամանակ գործ ենք ունենում կոնկրետ անձանց հետ և նրանց նկատմամբ անհատական պատասխանատվության միջոցներ են կիրառվում:

2) ՀՀ-ում վեթինգի գործիքների կիրառման անհրաժեշտություն առկա է հատկապես իրավապահ մարմիններում և դատական համակարգում: Մասնավորապես, դատական համակարգում վեթինգ իրականացնելիս առաջարկվում է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով՝

- վեթթինգ կիրառել այն դատավորների նկատմամբ, որոնց կողմից կայացված դատավճիռներով ՄԻԵԴ-ը արձանագրել է փաստերի ճշտման և իրավունքի կիրառման կոպիտ խախտումներ՝ այդ թվում Մարտի 1-ի գործերով,

- վեթթինգի իրականացման ժամանակ դատավորները մանրամասն հաշվետվություն պետք է ներկայացնեն իրենց ֆինանսական միջոցների, գույքի և ունեցվածքի առկայության և դրանց աղբյուրների մասին, վեթթինգի գործընթացի ժամանակ իրականացնել դատավորների մասնագիտական համապատասխանության ստուգում:

3) Վեթթինգի իրականացման գործընթացում վեթթինգ իրականացնող մարմինը պետք է առաջնորդվի բացառապես պատշաճ իրավական ընթացակարգերով՝ իրականացնելով իրավիճակային վեթթինգ և երաշխավորելով անհատական իրավունքների պաշտպանություն:

4) Անհրաժեշտ է վեթթինգ իրականացնող մարմնի գործունեության համար ստեղծել օրենսդրական հիմքեր:

5) Վեթթինգ իրականացնող մարմնի կողմից քննվող գործերի ընթացքում պետք է կիրառվի անմեղության կանխավարկածը և, համապատասխաբար, ապացուցման բեռը պետք է կրի վեթթինգ իրականացնող մարմինը:


6) Իրականացնել հակակոռուպցիոն համակարգային բարեփոխումներ, ստեղծել հակակոռուպցիոն անկախ ունիվերսալ մասնագիտացված մարմին, որը կգրադվի կոռուպցիոն գործերի նախաքննությամբ, կոռուպցիայի կանխարգելմամբ, այդ թվում՝ թալանված ակտիվների վերադարձման ուղղությամբ, ինչպես նաև հակակոռուպցիոն կրթությամբ

7) Քաղաքացիական հասարակական կազմակերպությունների (ՔՀԿ) կողմից ստեղծել անցումային արդարադատության կոալիցիա, կամ գործող և զարգացած ՔՀԿ-ների կոալիցիայի կազմում ստեղծել անցումային արդարադատության հարցերով զբաղվող ՔՀԿ-ների մասնագիտացված հանձնաժողով՝ անցումային արդարադատության գործընթացի աջակցությանը հանրային իրազեկության և մշտադիտարկման ապահովման համար:

### ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԻՆՖՈԳՐԱՖԻԿԱՆԵՐ

## Անցումային արդարադատություն (ԱԱ)

ԱԱ-ն գործընթացների և մեխանիզմների ամբողջություն է, որը հասարակության դեմ **անցյալում** կատարված օրինախախտումները շտկելու, արդարությունը վերականգնելու, անպատժելիությանը վերջ դնելու և հանրային համերաշխություն հաստատելու նպատակ ունի:



Քրեական արդարադատություն	Ճշմարտության որոնում	Փոխհատուցման ծրագրեր	Համակարգային բարեփոխումներ՝ անցյալը չկրկնելու մասին
<p>Քրեական արդարադատության իրականացումը ներառում է <b>քրեական հետապնդում՝ նախաքննություն և դատական քննություն</b> այնպիսի լուրջ <b>հանցագործությունների դեպքում</b>, ինչպիսիք են, օրինակ, կոտորածը, սեռականության դեմ ուղղված հանցագործությունները, մարդու իրավունքների համառոտաբար խախտումները, և այլն:</p> <p>Դա նպաստում է օրենքի զերականության սկզբունքի ամրապնդմանը, որով վերջ է դրվում անպատժելիության սթանդորտին և վերականգնվում է քաղաքացիների հավանք քրեական արդարադատության հանդեպ:</p>	<p>Ճշմարտության որոնման գործընթացներն իրականացվում են <b>ճշմարտության և հարստեման հանձնաժողովների</b> կողմից:</p> <p>Ճշմարտության որոնումը ընդունվում է <b>ճշմարտության իրավունքից</b>, յուրաքանչյուր անձ, ով զոհ է դարձել հանցագործության և մարդու իրավունքների համատարած խախտման, ունի անքննարկելի իրավունք իմանալ, թե ով է պատասխանատու դրա համար, և հասարակությունը, որտեղ տեղի են ունեցել այդ հանցագործությունները, ունի իրավունք սույնով իր պատմությունը՝ առանց ստի կամ ծիսուման:</p>	<p>Փոխհատուցումները դասակարգվում են մի քանի չափանիշի հիման վրա:</p> <p>Դրանք կարող են լինել դրամական-նյութական և ոչ նյութական քննյթի:</p> <p><b>Փոխհատուցման (reparation) ծրագրերը ներառում են</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Նախնական իրավիճակի վերականգնում,</li> <li>• Կոմպենսացիա,</li> <li>• Ռեսիլիտացիա,</li> <li>• Աստիճանագիտ.</li> <li>• Կրկնված արգելքի երաշխիքների տրամադրում:</li> </ul>	<p><b>Համակարգային բարեփոխումներն</b> իրականացվում են, որպեսզի ստեղծվեն երաշխիքներ, որ նախնական կատարված իրավախախտումներն այլևս չեն կրկնվի:</p> <p>Ինստիտուցիոնալ բարեփոխումներ անելիս հիմնականում նկատի է առնվում <b>լրացողացիա (մաքրագործում), վերփոխում (պետական և քաղաքական գործիչների զտում), և քաղաքացիական ակտիվիզմ</b>:</p>



# Համակարգային բարեփոխումներ (Անցումային արդարադատության համատեքստում)

Ստեղծվում են երաշխիքներ, որ նախկինում կատարված իրավախախտումներն այլևս չեն կրկնվի: Հիմնականում իրականացվում է 3 մեխանիզմով՝

- ★ Լյուստրացիա (մաքրագործում)
- ★ Վեթօինգ (պետական և քաղաքական գործիչների գտում)
- ★ Ոլորտային բարեփոխումներ
- ★ Հասարակական ակտիվիզմ

Լյուստրացիան օրենսդրական սահմանափակման տեսակ է, որը նպատակ ունի սահմանափակել նախկին իշխանությունների օրոք կոռուպցիայի, մարդկանց հիմնարար իրավունքների և ազատությունների խախտման համար մեղադրվող անձանց մասնակցությունը քաղաքական գործընթացներին և այդպիսի անձանց համար օրենսդրական արգելքներ է ստեղծում՝ պետական մարմիններում պաշտոններ զբաղեցնելու համար:

Վեթօինգ իրականացնելու ընթացքում հետաքննություններ են կատարվում՝ պարզելու համար, թե արդյոք պետական պաշտոնյաները պաշտոն զբաղեցնելիս չարաշահել են իրենց պաշտոնական դիրքը, թե՛ ոչ: Վեթօինգի հիմնական նպատակն է մաքրել պետական կառավարման համակարգը հակաօրինական վարքագիծ դրսևորած պաշտոնյաներից: Վեթօինգի թիրախումկարող են լինել դատական, իրավապահ մարմինների, ազգային անվտանգության ծառայությունների, բանակի, և այլ պաշտոնյաներ:

Անցումային արդարադատություն իրականացրած երկրների փորձը ցույց է տալիս, որ արդյունավետ վեթօինգ և լյուստրացիա իրականացնելուց հետո անհրաժեշտ է ձեռնամուխ լինել դատական համակարգում և իրավապահ մարմիններում բարեփոխումներ անցկացնելուն, այդ թվում՝ օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն:

Հասարակական ակտիվիզմը անկյունաքարային նշանակություն ունի արդյունավետ անցումային արդարադատության կիրառման համար՝ հատկապես ճշմարտության որոնման, հանրությանը իրազեկելու և օրենսդրության մշակման հարցում:





# Ճշմարտության որոնում

(Անցումային արդարադատության համատեքստում)



«Յուրաքանչյուր անձ, ում խոշտանգելու վախճառությունների են ենթարկել, անբավարար իրավունք ունի հիմնադրված և պատասխանատու դրա համար: Յուրաքանչյուր հասարակություն, որտեղ տեղի են ունեցել այդ հանցագործությունները, ունի իրավունք սովորել իր պատմությունը առանց ստիկամ ժխտման»:

1



## Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովների ստեղծում

Պաշտոնական, ժամանակավոր, ոչ դատական մարմիններ, որոնք պետք է լինեն անկախ և վայելեն հասարակության վստահությունը:

## Ճշմարտության հանձնաժողովները իրականացնում են՝

- \* Փաստերի հավաքագրում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ,
- \* Հաշվետվողականության բարձրացման խթանում,
- \* Ապացույցների պահպանում,
- \* Մեղավորների բացահայտում,
- \* Առաջարկում են տուժողներին հատուցման եղանակներ,
- \* Ձեռնամուխ են լինում ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանը:

2

Չոհերը հնարավորություն են ունենում խոսելու իրենց պատմությունների մասին, հանրային քննարկումներ են սկսվում:

Արդյունքում արդարության վերականգնման և ճշմարտության բացահայտման դիմաց առաջարկվում է ներել մարդու իրավունքները խախտողներին, վերականգնել հանրային համերաշխությունը:



powered by





# Փոխհատուցման ծրագրեր (Անցումային արդարադատության համատեքստում)

Մարդու իրավունքների համատարած խախտումների զոհերն ու հասարակությունն իրավունք ունեն փոխհատուցման: Եվ պետությունը պետք է համարժեք փոխհատուցման ծրագրեր իրականացնի:

## Նախնական իրավիճակի վերականգնում

Նախնական իրավիճակի վերականգնման օրինակներից են ազատության վերականգնումը, մարդու իրավունքների, ինքնությունից, ընտանեկան կյանքից և քաղաքացիությունից օգտվելը, սեփական բնակության վայր վերադառնալը, աշխատանքում վերականգնվելը և գույքի վերադարձը: Կարևոր է նաև պետությունից գողացված ակտիվների վերականգնումը և դրանց օգտագործումը հանրօգուտ նպատակներով՝ սոցիալական, կրթական, առողջապահական և այլ ոլորտներում՝ հատուկ այդ նպատակով պետության կողմից ստեղծված հիմնադրամների միջոցով:

## Ռեաբիլիտացիա

Ռեաբիլիտացիան ներառում է բժշկական և հոգեբանական խնամքը, ինչպես նաև իրավական և սոցիալական ծառայությունները:

## Կոմպենսացիա

Ֆինանսական փոխհատուցում, որը պետք է տրամադրվի տնտեսապես չափելի վնասի դեպքում և համաչափ լինի դրան: Այն կարող է ծագել նյութական կամ բարոյական վնասից, բաց թողնված օգուտից: Ֆինանսական փոխհատուցումները կարող են լինել ինչպես անհատական, այնպես էլ՝ կոլեկտիվ՝ ուղղված որևէ կոնկրետ խմբի: Կոմպենսացիայի տրամադրման եղանակներ են միանվագ փոխհատուցումները, կենսաթոշակների տրամադրումը, որոշակի երաշխիքների սահմանումը և այլն:

## Սատիսֆակցիա

Միջոցառումների լայն շրջանակ է՝ ներառյալ փաստերը ստուգելը և ճշմարտության լիարժեք բացահայտումը (ճշմարտության հանձնաժողովներ), զոհերի արժանապատվությունը, հեղինակությունը և իրավունքները վերականգնող դատական ակտերի կայացումը ( քրեական արդարադատություն), անհայտ կորած անձանց որոնումը, մարդու իրավունքների ուսուցումները և **խորհրդանշական միջոցների օգտագործումը**: Դրանք ջանքեր են՝ ուղղված հանրային հիշողության պահպանմանը՝ հետագայում դրանց կրկնությունը կանխելու նպատակով և կարող են արտահայտվել հետևյալ տեսքով՝

- հրապարակային ներողությունների հայցում,
- հիշատակի և տոն օրերի սահմանում,
- հուշակոթողների և թանգարանի կառուցում և ցուցադրությունների կազմակերպում:

## Կրկնման արգելքի երաշխիքների տրամադրում

Կրկնման արգելքի երաշխիքների տրամադրումը վերաբերվում է որպես առանձին մեխանիզմ կիրառվող համակարգային բարեփոխումներին՝ դատական համակարգում, իրավապահ մարմիններում, հանրային ծառայությունում և այլն:



# Քրեական արդարադատություն

(Անցումային արդարադատության համատեքստում)



Քրեական հետապնդում և պատիժ այն անձանց հանդեպ, ովքեր անցյալում հանցագործություն են կատարել և մնացել անպատիժ:

Վերջ է դրվում անպատժելիության մթնոլորտին:  
Վերականգնվում է մարդկանց հավատը քրեական արդարադատության հանդեպ:

## Իրականացման 3 եղանակ

### Միջազգային քրեական դատարան (The International Criminal Court (ICC))

Միջազգային քրեական դատարանը բազմաֆունկցիոնալ դատարան է, որը գտնվում է Ֆրանսիայում և կազմակերպում է քրեական պատասխանատվության ենթարկել անձանց, ովքեր մեղադրվում են ճեղքատարության, պատերազմական հանցագործություններ, մարդկության դեմ հանցագործություններ և ազդեցիկ իրականացնելու համար:

Դատարանին անդամակցում է 123 երկիր: Հայաստանը ներկայումս չաչլ է իրականացնում դատարանին անդամակցելու համար:



### Ad hoc / Իրավիճակային և հիբրիդային դատարաններ

\* Ad hoc դատարանները, հիմնադրվում են ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից: Լատինացի կոնկրետ տարածաշրջանում տեղի ունեցած մարդու իրավունքների համաքննությունն է:

Այս դատարանները հիմնադրվում են, քանի որ ներպետական դատական ատյաններն ի վիճակի կամ պատրաստակամ չեն լինում անպատժելիություն իրականացնելու:

Ad hoc դատարանները բաղկացած են լինում միայն միջազգային դատարաններից, իսկ նրանց գործունեությունը հիմնված է լինում միջազգային իրավունքի վրա:

Ի տարբերություն ad hoc դատարանների, հիբրիդային դատարանները բաղկացած են լինում տեղացի և միջազգային դատախոսներից: Դրանք իրենց գործունեությունը ծավալում են՝ հիմք ընդունելով և՛ ներպետական, և՛ միջազգային իրավունքը:

Այս դեպքում ազգային դատախոսները համագործակցում են միջազգային դատախոսների հետ՝ առավել արդյունավետ դատաքննություն իրականացնելու համար:

### Ներպետական դատական համակարգ

Եթե ներպետական դատական ատյանները ունեն անհրաժեշտ ներուժ և պատրաստակամություն անպատժելիության իրականացնելու համար, ապա միջազգային քրեական դատարանին դիմելու կամ իրավիճակային և հիբրիդային դատարաններ հիմնադրելու փոխարեն գործերի քննությունը իրականացվում է ներպետական դատական ատյանների միջոցով:

Լատինացիանան այն է, որ ներպետական դատարանները լինեն անվախ, անապառ և պաշտպանեն կողմերի հավասարության սկզբունքը:

Հաճախ այս փուլը համակցվում է համաներումների մասին օրենսդրության ընդունմամբ, որը հիմնականում տարածվում է նախկինում ոչ իրավապահ կերպով դատապարտված անձանց նկատմամբ, օրինակ, քաղաքական քանտարկյալների:





Սույն հրապարկումն իրականացվում է «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորում է Եվրոպական Միության կողմից: Հրապարակման բովանդակության համար պատասխանատու է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետը: